

Հ ԱՃԱՌՅԱՆ

**ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
ԱՌՏԻԱԼԻ ԲԱՐԲԱՌԻ**

ԵՐԵՎԱՆ 1963



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА

№ 1 ДИАЛЕКТЫ АРМЯНСКОГО ЯЗЫКА № 1

Р. АЧАРЯН

ИССЛЕДОВАНИЕ АРДИАЛЬСКОГО ДИАЛЕКТА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1953

3112
[Signature]

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԼԵՂՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

№ 1 ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌՆԵՐ № 1

Հ. ԱՃԱՌՅԱՆ

ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՌՏԻԱԼԻ ԲԱՐԲԱՌԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ

ԾՐԵՎԱՆ

1953

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ի. Վ. Ստալինը «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանճարեղ աշխատության մեջ ցույց տվեց, որ տեղական (տեղի-տորիալ) բարբառները հանդիսանում են հասարակության ընդհա-նուր, միասնական լեզվի ճյուղավորումները, ունեն իրենց բերակա-նական կառուցվածքն ու բառային հիմնական ֆոնդը, որոնց շնոր-հիվ կարող են հիմք դառնալ ազգային լեզուների կազմավորման համար:

Ազգային լեզուների կազմավորումից հետո, այդպիսի լեզու-ների մնացած բարբառները աստիճանաբար կորցնում են իրենց ինֆորմակոությունը, ձուլվում են այդ լեզուներին և անհետանում դրանց մեջ:

Բարբառների անհետացման այս ճանապարհն են բռնել նաև հայ բարբառները, որոնց լեզվական իրողությունների ուսումնասի-րումը հնարավորություն կտա ամբողջացնել հայոց լեզվի պատմու-թյունը: Ահա այս տեսակետից հայ բարբառների ուսումնասիրու-թյունը այժմ դարձել է հայագիտության կարևոր հարցերից մեկը: Պրոֆ. Հր. Անաոյանի «Քննություն Առտիալի բարբառի» աշխատու-թյունը, որ տպագրության է հանձնվում լեզվի ինստիտուտի գիտա-կան խորհրդի որոշմամբ, այդ խնդրից է բխում և տալիս է հայե-րեն բարբառներից մեկի՝ Առտիալի բարբառի հնչյունաբանության և ձևաբանության ուսումնասիրությունը:

Առտիալի բարբառը՝ Լեհաստանի, Հունգարիայի, Ռումինիայի հայերի բարբառը, հայոց լեզվի ֆիչ ուսումնասիրված բարբառնե-րից մեկն է. անցյալ դարում (1866 թ.) լեհ հայագետ Հանուշի կողմից կատարվել է այդ բարբառի մի ճյուղի՝ լեհահայերի խոս-վածքի ուսումնասիրությունը:

Սույն աշխատությունը հանդիսանում է այդ բարբառի ամ-բողջական ուսումնասիրությունը: Պրոֆ. Հր. Անաոյանը հմուտ-բայամբ հավաքել, դասդասել և ուսումնասիրել է ոչ միայն այդ բար-բառի տառքեր ճյուղերի ընդհանուր լեզվական իրողությունները,

այլև այդ նյութերի լեզվական իրողությունների տարբերություններն ու առանձնահատկությունները: Հեղինակը մանրակրկիտ ֆենոթիպան է առել բարբառի հնչյունաբանությունը, ձևաբանությունը և բառարանը: Բարբառի լեզվական իրողությունների փաստական նյութերի հարուստ կուտակումը, դրանց ճիշտ վերլուծումն ու ֆենաթիպը հեղինակին հնարավորություն են տվել հիմնականում հանգելու ճիշտ եզրակացությունների:

Հրատարակելով պրոֆ. Հր. Անաոյանի այս աշխատությունը՝ ինստիտուտն անհրաժեշտ է համարում նշել, որ հեղինակի լեզուն պարունակում է որոշ հնարանություններ, ինչպես նաև այնպիսի տերմիններ (ձայնաբանություն, թրթուռ, բացասական և այլն), որոնք հնացած են և դրանց համապատասխանող ժամանակակից տերմինները (հնչյունաբանություն, ձայնեղ, ժխտական և այլն) վաղուց ի վեր հաստատուն հիմք ու լայն գործածություն են գտել մասնագիտական գրականության մեջ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ԳԱ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Աճառեան Հ.—Քննութիւն Սուշավայի բարբառի, Բագմ., 1899, էջ 112, 218, 325, 516, 557 (շարունակելի):

Աճառեան Հ.—Classification des Dialectes arméniens, Paris, 1909, էջ 79—80:

Աճառեան Հ.—Հայ բարբառագիտութիւն, Մոսկուա-Նոր Նախիջևան, 1911, էջ 270—279:

Այվազեան Գ. եպս.—Նիկոլ եպիսկոպոս և պատմ. դարձին Հայկազանց Լեհաստանի, Վրդշպտ., 1877:

Անեցի Յովն.—Ճաշակ Հունգարահայոց լեզուէն, ՀԱ, 1888, էջ 84—86:

Այտրեմեան Հ. Ա.—Քննական քերականութիւն, էջ 180—193:

Անեցի Յովն.—Եղիսաբեթուպոլսոյ մասին յօդուածներ, ՀԱ, 1896, էջ 65—69, 133—7, 1897, էջ 89—92, 115—8, 161—8, 197—203, 238—243, 1898, էջ 33—8, 1899, էջ 263—8 (չեմ գնում այն հոգիւածները, որոնք արտատպւած են առանձին գրքերում. տես Գովրիկեան):

Աշխարհաբար լեզուի վրայ, Բագմ., 1843, էջ 108—111 (չնգ.):

Աստուածաբան Խ.—Հունգարահայոց ժողովրդական երգեր, Բանաս., 1905, էջ 255:

Բժշկեան Հ. Մ.—Ճանաչարհորդութիւն ի Լեհաստան, Վենետ., 1830, էջ 165—183. լուսնի Հ. Լյուբովիւրքի լեհ իշխանի 1751 թ. հրովարտակի լեհահայ թրգմ. նույն թվից:

Bittner M.—Einige Kuriosa aus dem arm. Dialekte d. Walachei und d. Moldau. Յուշարձան, 361—8 (Սչ. ունի նաև երկու փոքր բնագիր):

Gawronski.—Լեհահայերէնի մասին, ի Język polski i jego historya, II Cracovie, 1915 (Գիտ. ակադեմիա). (չեմ տեսած):

Գիրք աղօթիցիի պէտս հայոց բնակչոց յԱռտեալ, Վենետ., 1798:

Գովրիկեան Հ. Գ.—Հայք յեղիսաբեթուպոլիս Դրանսիլուանիոյ, Վիեննա, Ա, 1893, Բ, 1899, Գ, 1905 (չնգ.):

» —Դրանսիլուանիոյ մետրապոլիսը կամ նկարագիր Կերլայ Հայաքաղաքի, Վիեննա, 1896:

» Հայ արձանք կամ յիշատակարաններ հին և նոր Եղիսաբեթուպոլսոյ հայաքաղքէն, Վիեննա, 1904 (Հավաքածու Հ. Անեցու, ՀԱ, 1900—04 տպւած հոգիւածների):

» Եկեղեցական երգարան ի պէտս Հայոց Թրանսիլուանիոյ, Վիեննա. 1889:

Թուիիկեան.—Հանուշ լեհացի հայադէտ և կալիցիոյ հայոց գաւառակեղուն, ՀԱ, 1887, էջ 22—24:

» Կանոնագիր հարսանեաց Տրանսիլուանիոյ ազգայնոց, Բագմ., 1890, էջ 272—4.

Kraeplitz—Greifenhorst.—Sprachprobe eines arm-tatar. Dialectes in Polen, WZKM, 26, էջ 307—324, թրգմ., ՀԱ, 1912, էջ 705—12.

՝ Հայնակ ու նեմեցնակ այբուբենի թուղթ, վասն պիտոյութեան հայ ազոց թրանսիլլանիոյ երկրին, Թրեստը, 1788:

՝ Հայնակ ու մաճրոնակ այբուբենի թուղթ, շարագրած է Հայաբաղաբն, Վիեննա, 1834:

Hanusz, Beiträge zur arm. Dialectologie, WZKM, I (181—197, 281—313, II, 63—70, 124—132, 291—308, III, 38—50, որից արտատպւած է՝

Hanusz, Lautlehre der Polnisch—arm. Mundart von Kutu in Galizien, Wien, 1889.

Hanusz, Sur la langue des Arméniens polonais, I, Mots recueillis à Kutu, Cracovie, 1886.

Hanusz, Einige slavische Namen arm. u. türk. Herkunft. Archiv. für slav. Philologie, IX, 472—7 (1886) (չեմ տեսած):

Մաճիկոնեան Պ. քն.—Ռումանայոց ներկայն և ապագայն, Կալաց, 1895 (էջ 81—82, ունի ոմ. բառեր):

Յովհաննիսեան Խ.—Բանիճճիք քաղուած (լեհահայ զրկած ջնեքից), ՀԱ, 1895, էջ 203—7:

Szongott ch.

— Siebenbürgisch armenische Sprichwörter. SA I, 108—9, 118—9.

— Siebenbürgisch armenische Volksmärchen, SA I, 117—8, 183—6.

— Szamosújvár, 1893.

— Märchen aus Siebenbürgen, բնագիր և թարգմ. 1896:

— K—Armenisches Märchen aus Siebenbürgen (երեք բնկույղը), Ethn. Mitth. aus Ungarn, V, 58 f.

— K—Huzai örméyck vezetétes Keresztnevei Klausenb. 1884.

Վոյթեան Ա.—Հաւաքածոյ թրանսիլլանիոյ հայոց գաւառական բառերուն, ՀԱ, 1897, էջ 186—7, 249—50, 281—2, 304, 1898, էջ 46—51, 105:

Voith A.—Siebenbürgisch—arm. (ոտանաւոր), SA I, 306—7, 2, 8—10:

Տիքեան Հ. Ա.—Առտիալի հայերուն ներկայ վիճակը, Բաղմ., 1922, էջ 279—283: Տօնացոյց տարեկան վասն հայոց Առտիալի, Վենետիկ, 1824:

Տօնացոյց տարեկան վասն հայոց թրանսիլլանիոյ, Թրիեստ, 1778:

Փիլաթս Ա.—Դրանսիլլանիոյ նդիսարեթուպօլիս քաղքին հայոց 14 օրէնսդիր իշխանութիւնն, Բաղմ., 1891, էջ 104—8, 172—5, 373—81, 1893, էջ 335—340, 387—91, 429—433, 475—9, 526—9, 577—81:

Օրինակ խոստմնագրի խնամեխօսութեան հայոց Դրանսիլլանիոյ, Բաղմ., 1873, էջ 126—8:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Առտիալի բարբառի մասին խոսել է նախ Այտընյանը՝ իր Քննական քերականության մեջ (Վիեննա, 1866, էջ 166), ուր այս բարբառը կոչում է երրորդ գավառական (Լեհաստան, Առտիալ) և ավելի մանրամասն՝ էջ 180—193, իսկ էջ 234-ում դնում է 8 տողանոց մի հատված՝ իր թարգմանությամբ հանգերձ (դնում եմ այս գրքում իմ նմուշների շարքում)։

Երկրորդ անգամ բարբառիս մասին խոսում եմ ես իմ Բարբառագիտության մեջ, տպ. Մոսկվա—Նոր-Նախիջևան, 1911, էջ 270—279, «Ավստրո-Հունգարիոյ բարբառ» վերնագրի տակ։

Առտիալի բարբառը պատկանում է Կը ճյուղին և համաձայն իմ Բարբառախոսության մեջ ընդունված դասակարգության՝ գրավում է 21-րդ տեղը։

Առտիալի բարբառը ունի 4 ճյուղ. Լեհաստան, Հունգարիա, Սուչավա և Ռումինիա. առաջին երկուսը իրար նման են, վերջին երկուսը՝ իրար նման. Խոսք չկա այն մասին, թե Բուլղարիայի հիմ հայ գաղութն էլ, որ վերջին դարում տաճկախոս էր, պատկանում էր այդ խմբին, թե ոչ. ես կարծում եմ, որ ոչ. բուլղարահայերը, ինչպես տաճկախոս լինելուց իմացվում է, շարունակություն են կազմում Սիլիվրիի, Չոլուլի և Ադրիանուպոլսի հայության, որ ամբողջովին տաճկախոս է։ Բուլղարահայերը անցյալ դարի վերջում հայախոս դարձան. բայց այդ հայերենը հին բուլղարահայ բարբառը չէր և չէր կարող լինել, այլ Պոլսից և Փոքր-Ասիայից 1890-ական թվերին գաղթած հայերի բարբառը, որ նրանք էլ սովորեցին և օրինակեցին։

Առտիալի բարբառի գլխավոր հատկանիշներն են՝

1. Ձայնական դրություն մեջ ա, ե, ի, օ, երկբարբառները, որոնք սակայն գոյություն ունեն միայն Սուչավայում և չկան Հունգարիայում. Լեհահայ բարբառի մասին կիսովի ստորև։

2. Պայթուցիկ բաղաձայնները ունեն 3 աստիճան, այն է՝ թրթռուն, շնչեղ թրթռուն (որ սակայն մոտենում է խուլի) և թավ։

3. Բայական ժամանակների մեջ կատարյալը վերացվում է և նրա փոխարեն գալիս է հարակատարը՝ ինչպես է արդի եվրոպական լեզուներում։

4. Շարունակական ձև չկա։

5. Սահմանական ներկա և անկատար ձևերը կազմվում են զի (= էի) մասնիկով, իսկ ապառնին լեհաստանում և Հունգարիայում քի մասնիկով, որ Սուչավայում բիդոր ձևով է։

6. Հղյուման մեջ պահել է հայցականի գ նախդիրը։

Բարբառը ամենից ավելի նման է Նոր-Նախիջևանի բարբառին։

Նոր-Նախիջևանի (Ղրիմի) բարբառի հետ նմանություններն են.

1) Թուրք-թաթարական բառեր, որոնք երկու կողմերի համար էլ նույն են, իսկ մյուս հայ բարբառներում կամ չկան և կամ, եթե կան, իմաստով տարբեր են. օր.

ազբար լհ. ննխ. «բակ, հայաթ».

սոյ լհ. ննխ. «ազգական» (ուրիշ բարբառներում սոյ «տեսակ, ցեղ»)։

2) Անցյալ դերբայի և սրա պատճառով հարակատարի և գերակատարի վերջավորությունն է -իլ. օր. ասել բայից՝ ասիլ, ասիլ իմ, ասիլ էի և այլն։

3) Բայց ամենից կարևորն է գասական թվականը, որ երկու կողմերումն էլ ունի -ում ձևը, ինչ. երկրորդ = էրգուսում, Սչ. ննխ. = էրգուսումը լհ., որ և նույն է Նոր-Ջուղայի բարբառի հետ։

Ա. Մ Ա Ս

ՉԱՅՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Սուչավայի բարբառի ձայնական գրությունը պարունակում է ընդամենը 45 ձայն, հետևյալ ձևով.

Ձայնավորներ 8 հատ.

ա, է, ը, ի,

օ, ու, էօ, իւ

Երկբարբառներ 6 հատ.

աւ, էւ, իւ, օւ, ե, իը

Եռաբարբառ՝ 1 հատ, որ է եւ (և).

Բաղաձայններ 30 հատ.

բ, բ', գ, գ', դ, դ', թ, ժ, ը, խ, հ, ձ, ձ',

ղ, մ, յ, ն, շ, չ, ջ, ջ', ո, ս, վ, բ, ց.

փ, ք, ֆ

Այս ձայները հնչվում են հետևյալ ձևով. ա, է, ը, ի, օ, ու հայերենի սովորական հնչույթն ունեն.

էօ, իւ հնչվում են գերմ. *Ö, ü* ձայնավորների նման և գտնվում են սովորաբար օտար բառերի մեջ, օր. Սչ. գ'ոհօյդ'օր «գեր-ձակ», որ փոխառյալ է ռում. *croitoriu* հոմանիշ ձևից.— հայկական ծագում ունի միայն Սչ. շէօն, որ գործածական է միայն Աւ-ված շէօն բաճէ բարեմաղթության մեջ, որը հյ. «Աստուած շէն պահէ» ձևն է. ուրեմն շէօն ծագում է հյ. շէն «ուրախ» բառից, բայց ազդվելով գերմ. *schön* «գեղեցիկ» համանուն բառից, այս ձևն է ստացել. Ուրիշ տեղ այս շէօն բառը չի գործածվում: Լեհահայ բարբառում կա շէն, որ Հանուշը մեկնում է «լեհ. *otyly me-ny*, ֆրանս. *gros, gras* խոշոր, գեր», և որից առաջանում է նաև շէնութին «զարդ, գեղեցկություն»:

Երկրաբառներից չորսը (աւ, էւ, իւ, օւ) ունեն քողոր հայ քարբառների մեջ անսովոր և բացառիկ մի հնչուժ, որ սակայն հնագույն հայերենում շատ սովորական էր: Այսպես աւ հնչվում է իբր գերմ. օւ կամ հյ. օու արագ արտասանված. օր. պառաւ > Սչ. բառաւ, գերմ. baŕau (հյ. հնչմամբ բառօն), հաւ > Սչ. հաւ, գերմ. háu, հյ. հա'ու ևն: Մյուսները՝ էւ, իւ, օւ հնչվում են ճիշտ այս աւ հնչման համեմատ, այսինքն նախաձայն է, ի, օ ձայների վրա ավելացնելով ս, կամ արագ արտասանված ու. ըստ այսմ՝

էւ=գերմ. éu, հյ. էու. օր. գրբ. և (շաղկապը) > Սչ. յեւ yéu, հյ. յեւ.

իւ=գերմ. iu, հյ. ի'ու, ի'յու. օր. պատիւ > Սչ. բաղիւ, որ հնչվում է ոչ թե իբր badiv, այլ badiu, հյ. բաղի'ու, բաղիյու: Նմանապես եղջիւր (պտուղը) > Սչ. յէխչիուր, աղնիու, գրբիու «կոթիւ»:

օւ=գերմ. ou, հյ. օու. օր. հով > Սչ. հօ «դով» (հնչել հօ'ու) նաւով > Սչ. նավօւ (հնչել նավօն):

Երկրաբառ է հնչվում է ճիշտ մշեցոց է հնչման համաձայն, որ ավելի դանդաղ կամ երկարաձիգ է, քան վանեցոց համապատասխան է երկրաբառը, այն է եվր. ie կամ հյ. իյէ, իե՝ արագ արտասանված: Օր. լապտեր > Սչ. լաբդեր, որ է lapdier, հյ. լաբդիյէր:

Գալով Իր երկրաբառին, այս էլ արագ արտասանված իր ձայնախմբի հնչուժն ունի, որի մեջ սակայն ը խուլ ու խուսափուկ հնչում ունի. օր. սիրտ > Սչ. սիրդդ, si'erd, հագիւր > Սչ. հաքիւր, ha kiær.

գրբ. ատեան > աշխ. ատեն «ժամանակ» > Սչ. ադեն adien աղիյեն.

գրբ. պատուել > Սչ. բադվել badviel, բադվիյէլ.

գրբ. սերտ > Սչ. սերդ «խիտ» (օր. սանտր), հնչել sierd, սիյէրդ.

Միակ եռաբառառը՝ եւ կազմված է է երկրաբառին ավելացնելով լ և կիսաձայնը. օր. սեաւ > Սչ. սև sieu, սիյէու, տեւիւ > Սչ. դեւիւ derieu, գէրիյէու ևն:

Քողոր այս երկրաբառների և եռաբառառի մեջ շեշտը դրվում է միշտ նախաձայն լիարժեք ձայնավորի վրա և ոչ թե երկրորդի վրա, որ ունի կիսատ հնչում. ինչ. սիյէ'ու, հաւու, սի'բրդ և այլն:

Գիսաձայնը (ւW), որ գտնվում է վերոհիշյալ երկբարբառների մեջ, Սուչավայի բարբառում առանձին գոյություն չունի, ուստի չնշանակեցինք ձայնական գրության մեջ՝ անկախ ձևով: Բայց նա գտնվում է անկախ ձևով Տիգրանակերտի և մանավանդ Մարաղայի բարբառում: Ընդհանրապես, սակայն, այս բարբառներում չկան աւ, և և այլն երկբարբառները, որոնք գրությունում ենք Սուչավայի բարբառում:

Այժմ անցնենք լեհահայ բարբառի ձայնավորների և երկբարբառների քննության:

Լեհահայ բարբառն էլ Սուչավայի և այլ հայ բարբառների նման ունի ա, է, ի, ք, օ, ու ձայնավորները, չունի սակայն էօ, իւ ձայնավորները, որոնք ընդհանրապես հատուկ են օտար լեզուներից փոխառյալ բառերին: Միավորական լեզուները (լեհերեն, ռուսերեն, ուկրաիներեն), որոնցից լեհահայ բարբառը շատ բառեր ունի փոխ առած, չունեն էօ, իւ ձայնավորները: Նույնիսկ թուրք-թաթարական լեզուներից փոխառյալ բառերի մեջ ծ, ն ձայնավորների տեղ գտնում ենք օ, ա. այսպես böyrek > Լհ. բուրյադ՝ «երկամ»:

čürük > Լհ. չուրուգ «վատ»

döšek > Լհ. դօշագ՝ «անկողին»

özge > Լհ. Սջ. օզգա «ուրիշ»:

Հանուշիկագամ լեհահայ այբբենարանի մեջ (էջ 13), ինչպես և նրա բառացանկում, չկան ծ, ն ձայնավորներով բառեր:

Կարևոր է ճշտել, թե լեհահայ բարբառը ունի՞ Ե (≡ ie) երկբարբառային հնչումը, որ ինչպես տեսանք, ունի Սուչավայի բարբառը:

Հանուշը լավ տեղեկացած չլինելով առհասարակ հայ բարբառների ձայնական գրության, չի կարողացել ճիշտ գաղափար կազմել այս մասին: Համաձայն լեհերենի ուղղագրության, նա Ե երկբարբառը մերթ գրում է je, մերթ նախորդ բաղաձայնի վրա դնում է մի նշան (իբր նշան քմային լինելու) և երբեմն էլ գրում է ie:

Համտ. հետևյալ օրինակները՝ իր տառադարձությամբ.

irjekh երեք (3), kərjer գ՛րբեր

maz'er մազեր, meher մէներ

mjedz < մեծ, mjeγr մեղր, meyrer մէղրեր

pariev' բարև, vjer վեր, vjerə վերը
 vərpijer վըրբ'եր (որբեր), mahjer մահեր
 mamjer մամեր (տատեր), marjer <մայրեր
 ad'en ադեն (ատեն, ժամանակ են են):

Այս բավական չէ. Հանուշը, Lautlehre 81, ասում է, թե Ի
 քաղաքայնը քմայնանալով հաճախ դառնում է իյ, մանավանդ
 վերջավանկի e ձայնավորից առաջ. և օրինակ է բերում՝

derjèv, բայց derevnèr
 arjev-jèlkh արևելք.

harjer «հայրեր», բայց harerèn և այլ նմաններ, որոնք պետք
 էր հասկանալ արեվ, արեվներ, արևելք, հարեր, հարէրէն և այլն:

Այս զանազան գրչությունները ցույց են տալիս, որ լեհա-
 հայ բարբառն էլ Սուչավայի նման գիտե ե երկբարբառը: Ուս-
 տի ես էլ անվերապահ կերպով, բոլոր նման ձևերը գրում եմ ե:

Ե-ի հետ սերտորեն կապված է ե ձայնավորը: Սուչա-
 վայի բարբառում, ընդհանուր օրենքով, e ձայնը շեշտի տակ
 հնչվում է ե, իսկ շեշտից դուրս՝ է: Այս օրենքը գիտե նաև Հա-
 նուշը լեհահայ բարբառի համար (տես Lautlehre): Բայց Սուչա-
 վայի բարբառում օրենքը միշտ և ճիշտ գործադրված չէ. Լեհահայ
 բարբառի համար էլ պետք էր ասել նույնը: Իսկ ես, թյուրիմա-
 ցության տեղիք չտալու համար, ամեն անգամ, որ Հանուշը
 գրում է e, տառադարձում եմ է:

Եթե լեհահայ բարբառը գիտե ե և է ձայնավորների զանա-
 զանությունը Սուչավայի նման, գիտե նաև արդյոք չ W կիսա-
 ձայնը, որով կարող պիտի լիներ կազմել երկբարբառների շար-
 քը՝ նման Սուչավայի բարբառի:

Թեև Հանուշը այբուբենի մեջ չի դնում ոչ կիսաձայն չ W,
 ոչ էլ որևէ երկբարբառ, բայց իր բառացանկը ծայրից ծայր կար-
 դալով, գտա ես հինգ լեհահայ բառ, որոնց մեջ կան երկու երկ-
 բարբառ (աւ) և երեք եռաբարբառ (եւ): Այս բառերն են՝

derjeu=դէրև «տերև»

ed'eu=էդև «հետև»

haugid=հաւգիդ, հգ. haugdən'er=հաւգդըներ «հավկիթ
 հավկիթներ»

haunelu=հաւնէլու «հավանիլ»

hjeukh=հեք «շունչ», հգ. heukher

Սրանով հաստատվում է ալ, նաև էլ երկրարբառի և եւ
ձոռարբառի գոյութիւնը լեհահայ բարբառում. սակայն իւ,
օւ, ինչպես նաև իը երկրարբառի համար ոչ մի օրինակ չեմ
գտել:

Հանուշի բառացանկում գտնում եմ նաև լեհահայ բարբա-
ռին հատուկ մի նոր ձայնավոր. այն է y, որ թեև այբուբենի
մեջ նշանակված չէ, բայց գտնվում է մի քանի փոխառյալ բա-
ռերի մեջ. օր.

լհ. šynka<լեհ. szynka „jambon, խոզի ապուխտ».

լհ. rynka<լեհ. rynka «տապակ որի մեջ բան են տապա-
կում».

նաև հատուկ անունների մեջ.

լհ. Rypka=Հոբիսիմէ

սկրնպկա «ջութակ»

լհ. Szymonowicz=Շիմոնովիչ, Սիմոնյան:

Այս ձայնի հնչումը նման է սլավոնական (ռուսական) Ե-ի
հնչմանը, որ Ը-ի մի տեսակն է: Ոչ միայն օտար բառեր, այլև
մի խումբ հայերեն բառեր էլ ի ձայնի փոխարեն ստացել են
այս Ե ձայնը. ինչ. Ավետաք, Զատեկեիչ, ՄարտԵրոսեիչ:

Սուչավայի բարբառի պայթուցիկ բաղաձայնները ունեն երեք
աստիճան.

Թրթռուն.—բ, գ, դ, ձ, ջ

շնչեղ Թրթռուն.—բ', գ', դ', ձ', ջ'

շնչեղ խուլ (թավ).— փ, ք, թ, ց, չ:

Առաջին և վերջին շարքի բաղաձայնների հնչումը հանրա-
ժանոթ է. նրանք համապատասխանում են գիտական տառադար
ձության Խ, ց, ձ... ք', կ', տ'... շարքերին: Երկրորդ շարքի բա-
ղաձայնները, թեև կոչեցինք շնչեղ Թրթռուն, բայց որոշ չափով
տարբեր են օր. Երևանի, Կարինի, Մուշի շնչեղ Թրթռուններից.
Երևի Սուչավայի, մանավանդ լեհահայ այս կարգի բաղաձայն-
ների մեջ շունչը Թրթռուն չէ. այդ պատճառով էլ նրանք
նման են հնչում Ֆրանսիական և սլավոնական ք, կ, տ... ձայնե-
րին: Սրա համար էլ Հանուշը դրանք տառադարձում է ք, կ, տ...
Իրենք՝ սուչավացիք և լեհահայերը եվրոպական ք, կ, տ ձայները
ներկայացնում են հայերեն այբուբենի բ, գ, դ տառերով, ինչ-
պես արել են Կիլիկիայի հայերը և ինչպես անում են այժմ էլ

բանաստեղծական արվեստահայերը (բայց ոչ փ, ք, ք, որոնց մեջ շուրջը
ավելի ուժեղ է): Ըստ այսմ Լեհաստանի Kutu քաղաքի անունը
գրվում է հյ. Գուդի կամ Գուդեր:

Հանուշը, շփոթելով նաև ք, կ, տ ձայների պարզ խուլը և
շնչեղը (այսինքն ք և ք', կ և կ', տ և տ', ինչպես նաև հյ. ձ' և ց,
ջ' և չ) մանավանդ բառավերջում, թույլ է տալիս այսպիսի սխալ-
ներ, ինչ.

Լհ. չար', հգ. չար'եր (փոխանակ չափ, չափեր), բայց չափե-
լու, գի չափիմ, գի չափէի, չափիլ իմ.

Նմանապես գրում է hac, xac (այսինքն հաձ', խաջ'), փո-
խանակ ասելու հաց, խաշ: Հյ. քիշ բառը գրում է գ'իշ (kidž)!
Սրանք հայտնապես սխալ են:

Վերջացնելու համար բաղաձայնների նկարագրությունը
պետք է խոսել նաև խ, ո, լ բաղաձայնների մասին:

Սուղավայի բարբառում, տեղ տեղ բառավերջի խ հնչվում է
ավելի թույլ, քան բառամիջի խ, ուրիշ խոսքով բառամիջի խ
ունի հայերենի սովորական հնչումը, իսկ բառավերջում սլավոնա-
կան խ ձայնի նման է. այսպես է վախ և ուրախ բառերի վեր-
ջաձայն խ: Սուղավայի բարբառում: Ես իմ աշխատություն մեջ խ
ձայնի այս նրբությունը չեմ նշանակում, ինչպես որ Հանուշի
մոտ էլ որեւէ ակնարկ չկա նման խ-ի մասին:

Հայերենը գիտե երկու տեսակ ռ. առաջինը թույլ (ր), երկ-
րորդը ուժեղ (ռ). այս տարբերությունը գտնում եմ նաև Սու-
ղավայի բարբառում, ինչպես նշանակված է բառացանկում:
Բայց Հանուշը չգիտե այդպիսի տարբերություն լեհահայ բար-
բառի համար: Նա, թեև գրաբարի համար զանազանում է (էջ 13
ռ (ր) և ք (ռ), բայց լեհահայ բարբառի համար ոչ մի խտրո-
թյուն չի գտնում. երկուսն էլ հավասարապես գրում է ռ:
Lautlehre աշխատության մեջ էլ (էջ 81) ասում է, թե լեհահա-
յոց արդի բարբառում ռ և ք ձայների միջև տարբերություն
չկա. երկուսն էլ հնչվում են միակերպ. բայց չի ասում թե հն տ-
կապես որ ձևով: Սակայն որովհետեւ ասում է թե միայն մի բառ
է գտել տարբեր հնչումով, այն է գառ(ն), որ գրում է karr,
ուստի պետք է ընդունել թե բացի այս մի գառ բառից, մյուս-
ները բոլորը դարձել են ք ռ: Երևույթը նման է Թբիլիսիի հայ
բարբառին, ուր ք և ռ միացել և հավասարապես դարձել են ք:

Թբիլիսիի բարբառում այս երկու ձայները դարձել
են ք, որովհետեւ վրացերենն էլ գիտե միայն ք, իսկ լեհերենը չու-

նի ք, այլ միայն ո. ուստի ինչ՞եւ լեհահայերը բոլորը պիտի հըն-
չեին ք, և մի բառ միայն ո:

Ի նկատի ունենալով այս անորոշ կետը, հս.լալագույն հա-
մարեցի լեհահայ բարբառի բառերի մեջ ո, ք ձայները պա-
հել պատմական ուղղագրության համաձայն:

Հանուշը (էջ 13) լեհահայ բարբառի այբուբենի մեջ դնում
է երկու տեսակ լ (լ և լ) և ըստ այսմ էլ՝ իր ամբողջ բառացան-
կում: Կարծում եմ, որ այստեղ էլ Հանուշը հետևում է լեհական
արտասանության և նրա համաձայն էլ դնում է լ-ի և լ-ի տար-
բերությունը հայերենի մեջ: Ծայրահեղ դեպքում կարելի է են-
թադրել, որ այն անձը՝ որից քաղել է Հանուշը իր բառերը, ու-
ներ այդպիսի արտասանություն:

Բ. Մ Ա Ս

ՁԱՅՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՁԱՅՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ա.

— Ա ձայնավորը բառասկզբում մնում է ա. օր.

ազի > Սչ. աքի, իհ. ագի
աթոռ > Սչ. աթօռ, իհ. աթըռ
ածիլել > Սչ. ածըլել, իհ. ածէլէլու
ամառն > Սչ. իհ. ամառ
ասեղն > Սչ. իհ. ասեղ
արիւն > Սչ. իհ. արուն և այլն:

— Նախածայն ա ընկել է հետևյալ բառերի մեջ.

ալիւր > Ռմ. լուր (Սչ. իհ. ալուր)
ականջապուր > իհ. գանջաբուր
անկանիլ > իհ. ըննէլու:

— Բառամիջում ա նմանապես մնում է ա. ինչ.

բամբակ > Սչ. բ'ամբագ
բանալ > Սչ. բ'անալ, իհ. բ'անալու
գարի > Սչ. իհ. գ'արի
գրացի > Սչ. իհ. գ'րացին
իմանալ > Սչ. իմանալ, իհ. իմանալու
հազար > Սչ. իհ. հազար
պատկեր > Սչ. բադգեր, իհ. բադգէրք
տաւար > Սչ. իհ. դավար
քամի > Սչ. իհ. քամի և այլն:

— Երեք և ավելի վանկանի բառերի մեջ ա ձայնավորի
աղման օրինակներն են.

ադանիլ>Սչ. հաքնել, Լհ. հագ՛նէվէլու

ադալ>Սչ. ախցել, Լհ. աղնալու (առաջանում էն աղացել,
աղանալ ձևերից)

ադքատանալ>Սչ. ախքըդնալ

ամաչել>Սչ. ամընչնալ, Լհ. ամունչնալու

ամաչկոտ>Սչ. ամընչգօդ

ամսական>Սչ. ամսըգան (ռոճիկ)

անագան>Սչ. Լհ. անգ՛ան «ուշ»

անալի>Սչ. ալլի (*անլի)

անկանիլ>Լհ. բննէլու

անցանիլ>Սչ. անցնել «մարիլ ճրագի»

անցուցանել>Սչ. անցընել «մարել»

ապասպարել>Սչ. աբըսբըրել

առաջին>Սչ. առչի, առչինը

արածիլ>Սչ. արձել, Լհ. արձէլու

արձակել>Սչ. արցագել, Լհ. ացգ՛ըրէլու

արթնանալ>Սչ. արթընալ

աւետարան>Լհ. ավէդրան

բաժանել>Սչ. բ՛աժնել, Լհ. բ՛աժնէլու

բաղանիք>Սչ. բ՛աղնիք

բանալի-ք>Սչ. բ՛ալլինք, Լհ. բ՛ալինք

բողարած>Սչ. բօզդրած (մարդ)

գանգատիլ>Սչ. գ՛անգըդվել

գողանալ>Սչ. գ՛օղնալ, Լհ. գ՛օղնալու

գտանել>Սչ. գ՛ըգնուլ, Լհ. գ՛ըգնէլու

դադարիլ>Սչ. դ՛ադ՛րել «հանգչել»

դադարած>Սչ. դ՛ադ՛րած «ծուլ»

դատաստան>Սչ. դ՛ադասդ՛ան, Լհ. դ՛ադըսդ՛ան

դարձուցանել>Լհ. դ՛արցընէլու

ելանել>Սչ. յէլել, Լհ. էլէլու

երազել>Սչ. էրձել, Լհ. էրձէվէլու

երիցակին>Սչ. իրիցգ՛ին

երկաթեայ>Սչ. յէրգըթէ

զարկանել>Սչ. զարնել, Լհ. զարնէլու (*զարկնել)

թաթախել>Սչ. թաթխել

թեթեանալ>Սչ. թէթեվնալ

թուլանալ > Սչ. թուլնալ
 թքանել > Սչ. թքնել
 ժամակոչ > Սչ. ժանգոչ
 իմացուցանել > Սչ. իմաց/նել, իհ. իմացնելու
 իջեցուցանել > Սչ. ընչէց/նել
 իջանել > Սչ. ընչնել, իհ. ընջ'նէլու
 լաւանալ > Սչ. լալիւալ
 լաւացուցանել > Սչ. լաֆցընել
 լոգանալ > իհ. լօգնէլու
 խածանել > Սչ. խածնել
 խաղարան > իհ. խաղրան «vestibule»
 ծակծակել > Սչ. ձագձըգել
 ծանրանալ > Սչ. ձանդրընալ
 ծառանոց > Սչ. ձառնօց «ծառաստան»
 կախանոց > Սչ. գախնօց «կախաղան»
 կակազել > Սչ. գազըզդալ
 կայանալ > Սչ. գենալ, իհ. գէնալու
 կարկատել > Սչ. գարգըդել
 կարճանալ > Սչ. գարջընալ
 կարօտանալ > Սչ. գարօդնալ
 կնքահայր > Սչ. գընդըհար
 կնքամայր > Սչ. գընքըմար
 կորուսանել > Սչ. գօրսընել, իհ. գօրսընէլու
 կտրատել > Սչ. գըգըրդել
 հազարանոց > Սչ. հազարնօց
 համարիլ > Սչ. համբրել, իհ. համբրէլու
 հառաչել > Սչ. հառչել
 հասանիլ > Սչ. հասնել, իհ. հասնէլու
 հասկանալ > Սչ. հասգ'ընալ, իհ. հասգ'ընալու
 հասունանալ > Սչ. հասընալ, իհ. հասըննէլու
 հատանիլ > Սչ. հադնել
 հարսանիք > Սչ. իհ. հարսնիք
 հարցանել > Սչ. հարցընել
 հաւանիլ > Սչ. հալինել, իհ. հալնէլու
 հեծանիլ > Սչ. հէձնել, իհ. հէձնէլու
 հիւանդանալ > իհ. հիվանդցիլ իմ
 հիւանդոտ > Սչ. հիվընդըդ
 հիւանդութիւն > Սչ. հիվընդութիւն, իհ. հիվանդութիւն

հնադուցանել > Սչ. հընացնել
 հովանալ > Սչ. հօփալ
 հպարտանալ > Սչ. հարարդնալ
 հօրաքոյր > Սչ. Լհ. հօրքուր
 ճանապարհ > Սչ. Լհ. ջամփա
 ճանապարհորդ > Սչ. ջամփօրթ, Լհ. ջամփօրդ
 ճանաչել > Սչ. ջանջնալ, Լհ. ջանջնալու
 ճանաչուր > Սչ. ջանջնօր
 ճրագակալ > Սչ. ջիրախգալ, Լհ. ջիրախգալ
 մատանի > Սչ. Լհ. մաղնի
 մեծանալ > Սչ. մէձնալ, պտճ. Լհ. մէձցընելու
 մեղքանալ > Սչ. մեխքընալ
 մեռանիլ > Սչ. մէռնել, Լհ. մէռնելու
 մկրատել «խուզել» > Սչ. կրավ. մըգըրզիլ, Լհ. մըգ-
 րըզիլու
 մոռանալ > Սչ. մօռնալ, Լհ. մօռնալու
 մտանել > Սչ. մըդնուլ
 մօրաքոյր > Սչ. Լհ. մօրքուր
 յստակել > Սչ. րսդ'ըզել
 յօրանջել > Սչ. օրընջիալ, Լհ. դօրօնջդ'ըդալու
 շիտակել > Սչ. շըդգել, Լհ. շիդգէցնելու
 ողջացուցանել > Սչ. լօխչընցընել
 ոտնալուայ > Սչ. լօդընլըվա
 ուղարկել > Սչ. խըրգել, Լհ. խըրգելու
 չափչափել > Սչ. չափչըփել
 չորացուցանել > Լհ. չօրցընելու
 պագտնել > Սչ. բաքնել, Լհ. բաքնելու
 պակասիլ > Սչ. բագ'սել, Լհ. բագ'սելու
 պապանձիլ > Սչ. բաբընձել
 պառակիլ > Սչ. բառգել, Լհ. բառգելու
 պատառել > Սչ. բադընել, կրկ. բադըրզիլ
 պատարագ > Սչ. բադարագ, Լհ. բադրագ
 պարապել > Սչ. բարբել
 սանահայր > Սչ. սանըհար
 սանամայր > Սչ. սանըմար
 ստտակիլ > Սչ. սագգել
 սեռնալ > Սչ. սելնալ
 վստտակիլ > Սչ. վասդ'ըզել, Լհ. վասդ'ըզելու

վարդապետ>Սչ. Լհ. վարբեդ
 վերանալ>Սչ. վերնալ, Լհ. վերնալու
 վերացուցանել>Սչ. վերցնել, Լհ. վերցընելու
 տապակել>Սչ. դարգել
 տասանոց>Սչ. դասնոց
 տաքանալ>Սչ. դաքնալ
 տեսանել>Սչ. դեսնուլ, Լհ. դէսնէլու
 ցամաքել>Սչ. ցամքել
 ցուցանել>Սչ. ցըցընել, Լհ. ցըցնէլու
 փաթաթել>Սչ. փաթել, Լհ. փաղդէլու
 փախուցանել>Սչ. փախցընել
 փեսայացու>Սչ. փէսացու
 քաղել>կրկ. Լհ. քախքըղէլու
 քառասուն>Սչ. Լհ. քառսուն
 քարշել>Սչ. կրկ. քաշքըշել
 քացախել>Սչ. քացխել
 օրհասարակ>Լհ. օրհասըրագ՝ «կեսօր»։

Այս բոլորի գումարն է 125. կարելի էր մի քիչ էլ ավելացնել դրանց թիվը՝ դնելով մի խումբ պատճառական բայեր ևս, բայց այնուամենայնիվ պետք է ասել, որ միջին աւերի, ինչպես և ուրիշ ձայնավորների սղումը չի հասել այն աստիճանին, ուր գտնվում է օր. պոլսահայ բարբառը, կամ մի ուրիշ Փոքր-Ասիական բարբառ։ Օր. աշակերտ, հաւատալ, շարշարել, սզաւոր և մի խումբ ուրիշ բառեր, որոնք սզված են պոլսահայ բարբառում (աշկերտ, հաւտալ, շարշըրել, սըզվոր), այստեղ մնում են ամբողջական։ Կարող ենք ասել ուրեմն, որ Սուչավայի բարբառը այս կողմից բոնում է երևանի բարբառի և պոլսահայ բարբառի միջին տեղը։

— Մասնավոր դեպքեր ա ձայնավորի ձայնափոխության.

ա>ու

ածան>Սչ. ածուն (հավ). ոչ թե ա փոխված է, այլ -աճ մասնիկի փոխարեն դրված է -ուն. ինչ. եփում և այլն։
 ամաչել>Սչ. ամընչնալ, Լհ. ամունչնալու (նախ ձևացած է ամընչնալ, որտեղից ը հետևելով վերջահար -ու մասնիկին՝ դարձել է ու)։

արտասուք>Սչ. արդասունք, ին. արդուսունք (ծիշտ նույն ճամփով արդըսունք ձևից)։

ա>ե

ապասպարել>Սչ. արբսրբրել, ին. արբսր'երէլու (նախորդ-
ներին նման, բայց այս անգամ ը նմանությամբ հաջորդ
է-ի դարձել է է, ինչպես պատահում է հաճախ լեհահայ
բարբառում)։

դարիվայր>Սչ. դ'արնիվար, դ'էրիվար, ին. դ'արնիվար

դարիվեր>Սչ. դ'էրիվեր։

(նախ դարիվեր բառի մեջ ա դարձել է է՝ հետևելով հաջորդ
վանկի ե ձայնավորին, ապա սրա նմանությամբ ձևափոխվել է
և առաջին բառը)։

հրամանք>ին. հրէմանքըդ', հրէմանքներ (է սասցված է
հոգնակի -ներ ձևի ազդեցությամբ)։

նապաստակ>ին. լարէսդ'ադ' (անցնելով լարբսդ'ազ ձևից,
հմմտ. վերը ապասպարել)։

յաղթել>Սչ. էիդ'ել

ջրադացք>Սչ. ջ'էդացք, ին. ջ'ադացք։

ա>ի

տարգալ>ին. դ'իդ'ալ

Մանուշակ>Սչ. Մանուշիգ (իգ. անուն, փոխված է միայն
մասնիկը, ինչպես կոծիկ=Սչ. գըոջուգ)։

ա>օ

ողացկան>Սչ. դըղօցգան (այս երկու ձևերից սրն է նախ-
նականը)։

շաղախ բառն էլ կրճատվելով դարձել է ին. շախ։

—Բառավերջումն էլ ա մնում է ա. սակավաթիվ բառերից հի-
շենք (բացի հրամայականներից՝ ասն, գնն)։

ահա>Սչ. ահա

հապա>Սչ. հաբա «այո» (չկա հն)։

— Բառասկզբում և միավանկ բառերի մեջ գտնուում է յէ.
եղած օրինակներն են՝

եղն>Սչ. Լն. յէզ
եղի>Սչ. յէղմ «գոյ» (ազդված մեղմ բառից)
եռք>Սչ. յէռք «քոր, մարմաջ»
ես>Սչ. Լն. յէս
երբ>Սչ. Լն. յէփ, որից յէփօր «երբ որ»:

— Բազմավանկ բառերի սկզբում և տալիս է մերթ յէ.
մերթ է.

ա) յէ ունեն՝

- 1) եկեղեցի>Սչ. յէգէղէցի
եղանակ>Սչ. յէղանագ (երգի)
եպիսկոպոս>Սչ. յէրիսգօրօս
երևելի>Սչ. յէրէվէլի
երկնաւոր>Սչ. յէրգնավօր
- 2) երանի>Սչ. յէրանի
երկինք>Սչ. յէրգինք, Լն. էրգինք
երկիր>Սչ. յէրգիր, Լն. էրգիր
- 3) եղջիւր>Սչ. յէխշիուր (պտուղը)
երգումն>Սչ. յէրգում
ելանել>Սչ. յէլել, Լն. էլէլու
երազ>Սչ. յէրազ, Լն. էրաձ
երկաթ>Սչ. յէրգաթ, Լն. էրգաթ
երկայն>Սչ. յէրգան, Լն. էրգան
եփել>Սչ. յէփել, Լն. էփէլու

բ) է ունեն՝

երազել>Սչ. էրձել, Լն. էրձէվէլու
երդնուլ>Սչ. էրՓընալ, Լն. էրգվընալու
երէկ>Սչ. էրէգ, Լն. էրէգ՝
երես>Սչ. Լն. էրես
երեսուն>Սչ. Լն. էրսուն
երերալ>Սչ. էրէրալ

երևիլ>Սչ. էրէֆալ, իհ. էրէֆալու

երթալ>Սչ. էրթալ, իհ. էթալու

երկու>Սչ. իհ. էրգու

երկուշարթի>Սչ. էրգուշարթի, իհ. էրգուշարդի:

Օրինակներից երևում է, որ լեհահայ բարբառը բազմա-
վանկ բառերի սկիզբը դնում է միշտ է, միայն Սուչավայի բար-
բառն է, որ տատանվում է յէ և է ձայների միջև. ա ՆՁ 1 խումբը
ամբողջովին գրականից է փոխառյալ, ՆՁ 2 նույնպես կարող է
փոխառյալ լինել, իսկ ՆՁ 3, ինչպես և բ փոխառյալ չեն: Ինչո՞ւ
ուրեմն մի կողմից տեսնում ենք յեքազ, յեղո՛ւմ, մյուս կող-
մից երծել, երթբնալ:

— Բառասկզբում մասնավոր դեպքեր են հետևյալները.

1) եղբայր համաձայն միջ. հյ. աղբայր ձևի՝ դառնում է
Սչ. իհ. ախբ'ար:

2) եղունգն բառի նախաձայն է՝ հաջորդ դ-ի պատճառով
դառնում է ք, որ ապա ու ձայնավորի ազդեցությամբ դառնում
է օ (Սչ. չնգ. օղունգ, իհ. օնունգ):

3) երեք բառի մեջ ե տարանմանությամբ դառնում է Սչ.
իհ. իրեք:

4) երիցակին և երեկոյ (մհյ. երիկուն) բառերի մեջ նախա-
ձայն ե հետևելով հաջորդ ի ձայնավորին դառնում է ի (իրից-
դին, իրգուն):

5) եռալ «քոր գալ» բայը «եփել» իմաստից զանազանվե-
լու համար ստացել է գ նախահավելվածք, որ սահմանական կ
մասնիկն է՝ կզած բային. նրա գոյականը (եռք>Սչ. յէռք) չունի
այդ հավելվածք:

6) երևի լեղի բառի ազդեցությամբ էլ եղին բուսանունը
դարձել է Սչ. լեղիջ, որից և լեղիջել «եղիճով ծեծել» բայը:

— Բառամիջում ե ձայնավորը շեշտի տակ գտնված ժամա-
նակ ընդհանուր կանոնով դառնում է երկբարբառային ե (ie),
իսկ շեշտից դուրս՝ ե թե՛ Սուչավայի, և թե՛ լեհահայ բարբա-
ռում. օր.

ասեղն>Սչ. ասեխ, իհ. ասեղ

աւելի>Սչ. իհ. ավէլի

բերան>Սչ. իհ. բ'էրան

բերել>Սչ. բ'էրել, իհ. բ'էրէլու

գետին>Սչ. գ'էդին
 եկեղեցի>Սչ. յէգէղէցի
 թեթև>Սչ. թէթեֆ, Լհ. թէթև
 հեծելաւոր>Սչ. հէձէլվօր «գինվոր»
 հրամայեցէք>Սչ. Լհ. հրամէցէք
 ջրհեղեղ>Սչ. ջ'ըրէղեղ
 փեսայ>Սչ. Լհ. փէսա
 քերել>Սչ. քէրել
 քեռի>Սչ. Լհ. քէռի և ալին, և ալին:

— Վերևում ասացինք, որ ե ձայնավորը երբ որեւէ ձևով մնում է շեշտից զուրկ, դառնում է է. այսպես օր. հոգնակիւում.

մեղր>Լհ. մեղր, մէղրեր
 բերդ>Լհ. բ'երդ' «բաղ», հգ. բ'էրդ'եր
 զեան>Լհ. զեն «ֆուսս», հգ. զէներ
 բեմ>Լհ. բ'եմ «եկեղեցու բեմը», հգ. բ'էմեր
 երես>Լհ. էրես, հգ. էրէսներ
 վարդապետ>Լհ. վարդ'աբեդ, վարդ'աբէդներ
 վարպետ>Լհ. վարբեդ, վարբէդներ
 հեւք>Լհ. հեւք, հգ. 'հէւքեր.

նույնը նաև հոլովման ժամանակ. ինչ. երես>Լհ. էրես, սեռ. էրէսին և ալին:

— Ընդհանուր կանոնի դեմ կան մի խումբ բացառութիւններ. դրանք երկու կարգի են բաժանւում. ա) նրանք, որ բնորվերջին վանկում գտնվելով պետք է ե մնային, բայց դառնում են է. բ) նրանք, որ բառի միջին վանկում գտնվելով է պիտի դառնային, բայց մնում են է: Հավաքում եմ այստեղ այդ բացառութիւնները միայն Սուշավայի բարբառից, որովհետեւ լեհահայ բարբառի ե և է ձայները պետք եղած չափով ճշտված չեն:

— Առաջին խումբ. վերջավանկի ե>է.

անխելք>Սչ. անխէլք
 գիշեր>Սչ. Լհ. գ'ըշեր
 դեռ>Սչ. Լհ. դ'էռ
 հեա>Սչ. հէդ
 ձեռք>Սչ. ձ'էռք
 ձմեռն>Սչ. ցմէռ

յեա>Սչ. յէդ, յեաք>Սչ. յէդգ'ը
նեբ>Սչ. նէր
շեռ>Սչ. շէռ.

— Երկրորդ խումբ. միջավանկի Ե>Ե.

բարեկամ>Սչ. բ'արեգամ
դեկտեմբեր>Սչ. դ'եզդէմբ'եր
երեքշաբթի>Սչ. իրեքշաբթի
ծեփել>Սչ. ձեփել
կենաց>Սչ. գենաց (խմել)
կենդանի>Սչ. գենդ'անի
կեռաս>Սչ. Լհ. գեռաս
կերի>Սչ. գերա «կերա»
կերակուր>Սչ. գերագուր
կերոն>Սչ. գերօն
կերպարանք>Սչ. գերբարանք
համբերել>Սչ. համբ'երել
հայրենիք>Սչ. հայրենիք
հեռանալ>Սչ. հեռանալ (թեև ունենք արմատը հետի>Սչ.

հէռու)

մեծամեծ>Սչ. մեծամեծ
մեծաւոր>Լհ. մեծըվոր
մեղադրել>Սչ. մեղադ'րել
մեղայ>Սչ. մեղա
մեղաւոր>Սչ. մեղավօր
մեղքանալ>Սչ. մեխքընալ
նեղանալ>Սչ. նեղանալ
ոսկեղէն>Սչ. վօսգեղէն
սեպտեմբեր>Սչ. սէրգեմբ'եր
սեղան>Սչ. սեղան
սկեսուր>Սչ. քսքեսուր
ստեղծել>Սչ. քսդեղծել
վայելել>Սչ. վայելել
վերացուցանել>Սչ. վերցնել
տեսանել>Սչ. գեսնուլ
փետրուար>Սչ. փեդըրվար

— Թե առաջին և թե երկրորդ կարգի բացառութիւնները մի քանիսը բացատրվում են որոշ կանոնով. այսպէս՝

1) Շեշտյալ ե գտնվելով ո բաղաձայնի առաջ՝ դառնում է է. վերևում, առաջին խմբի մեջ ունենք այսպիսի 4 օրինակ (դեռ, ձեռք, ձմեռն, շեռ), որոնց վրա կարող ենք այժմ ավելացնել նաև՝

եռք > Սշ. յէռք (մարմնի)

լեռն > Սշ. լեռ

կշիռք > Սշ. գըշէռք:

Օրինակների թիվը բարձրանալով 7-ի և չունենալով ոչ մի բացառութիւն, կանոնը հաստատվում է:

2) Կ > գ բաղաձայնը գտնվելով բառասկզբում և ունենալով հաջորդական անշեշտ ե, չի թույլ տալիս, որ այդ անշեշտ ե ձայնավորը վերածվի է ձայնավորի: Սրա համար վերի ցանկում ունենք 7 օրինակ, որոնց վրա պետք է այժմ ավելացնենք

կիսակատար > Սշ. գեսագադար,

որ թեև կէս > Սշ. գէս բառից է, բայց, զարմանալի կերպով, է վերածում է ե-ի:

Կ բաղաձայնի այս հատկութիւնը, կարծում եմ, պետք է բացատրել ե-ի մոտ ունեցած իր քմային հնչումով:

3) Մի խումբ բառեր էլ կան, որոնք հետեւելով իրենց արմատական ձևին, պահել են ե հնչումը. ինչ.

մեծամեծ > Սշ. մեծամեծ (արմատը մեծ)

նեղանալ > Սշ. նեղանալ (արմատը նեղ)

մեղքանալ > Սշ. մեխքընալ (արմատը մեխք)

արեւելք > Սշ. արեւելք (արմատը արեւ) և այլն:

— Ձայնափոխութեան մասնավոր դեպքեր են՝

ե > ի

արդելու > Սշ. արքիլեւ

արեգակն > Սշ. արեքազ, ին. արիգ՝ազ

կերակուր > Սշ. գերագուր, ին. գիրագուր

դարեջուր > ին. գ՝արիջ՝ուր (արմատը գ՝արի)

լեզու > Սշ. ին. լիզու (բայց սեռ. լէզվի)

դեհ > գի, որից ին. թիհէն «կողմից»

հրեշտակ > Սշ. հրէշգազ, ին. հրիշդ՝ազ

համբերել > Սշ. համբ՝երել, ին. համբ՝իրէլու

ե>ու

ուղեղ>լհ. օղուղ

աւելել>Սչ. աւրելի, լհ. աւուելու.

ե>օ

ցերեկ>Սչ. ցօրեղ (այսպէս և Պլ. կարծում էմ օր բառի ազդեցությամբ. հաճախ ասվում է՝ օրը ցօրեկին):

ե>ա

կա միայն թերեհաւատ>Սչ. թերահավաղ (կամ բարդությունների մեջ սովորական ա հոգեկապը վերականգնելով և կամ հաջորդ կրկնակ ա-երի ազդեցությամբ):

>

խելքով>Սչ. խէլքօւ. լհ. խըլգ'օվ

վերայ>Սչ. լհ. վըրա

ճեղքել>Սչ. ջըխքել

խեղդել>Սչ. խըխթել, լհ. խըխդ'ըվելու.

ե>ի

Այս ձայնափոխությունը գտնում ենք միայն երեկոյ>մհյ. երիկուն բառի մեջ, ուր ապա նախաձայնը միջաձայնի նմանությամբ դառնալով ի, ստացվել է իրիկուն և հետո էլ միջին ի կրճատվելով՝ առաջացել է Սչ. իրզուն:

— Եռավանկ բառերի մեջ միջին ե ձայնավորի սղման կամ կրճատման օրինակներն են՝

ածելու>Սչ. ածըլել

աւելել>Սչ. աւըլել, լհ. աւուելու

գիտենալ>Սչ. գ'իդնալ, լհ. գ'իդնալու

երգուիլ>երգվենալ>լհ. էրդ'վընալու, Սչ. էրֆընալ

երեսուն>Սչ. լհ. էրսուն

կարենալ>Սչ. գարնալ, լհ. գարնալու

հայելի>Սչ. լհ. հայլի

պարծենկոտ>Սչ. բարձընգօդ

վախենալ>Սչ. վախնալ, լհ. վախնալու

ձմերել>լհ. ձ'ըմըռնելու

— Միակ բառը, որ այս բարբառում սկսվում է է ձայնավորով, եշ բառն է, որ թէ՛ Սուչավայի և թէ՛ լեհահայ բարբառում մնում է անփոփոխ։— Թուրքերենից է փոխառյալ եշեզ, որ զործածվում է իրեն ածական։

— Մի բարբառ, որ բառամիջում եղած է և է ձայները գիտե զանազանել, բայց այնուամենայնիվ է ունեցող բառերից ոմանց մեջ է դարձնում է է, չէր կարող չպահել բառամիջի է ձայնավորը։

Մեր բառացանկում կա 34 բառ, որոնք միջավանկում ունեն է ձայնավորը. սրանք ամենամեծ մասամբ պահում են այս է ձայնը. նրանցից է դառնում է և հետևյալ բառերում.

աղուէս > Սշ. աղվէս, Լհ. աղվես

աստուածատէր > Լհ. ասդ'վածասեր։

ծէս > Սշ. ձես

գէր > Սշ. գ'եր, Լհ. գ'էր։

Ի նկատի ունենալով է և է ձայների անորոշ դրությունը լեհահայ բարբառում և նրանց տառադարձության անճշտությունը, Սուչավայի բարբառից մնում է միայն ծէս > ձես, որ ունի է > Ե. մինչդեռ ուրիշ նմանատիպ բառեր (կէս > Սշ. գէս, պէս > Սշ. րես) պահում են է ձայնը անփոփոխ։

— Շէն բառը Սուչավայի բարբառում դարձել է շէօն, ուր է > էօ գործածվում է միայն «Աստված շէօն պահէ» բարեմադ-թության մեջ և ուրիշ տեղ չկա. կարծում եմ, որ ժողովրդական ստուգաբանությունը կապել են գերմ. schön «զեղեցիկ» բառի հետ, որից և՛ այս անսովոր ձայնափոխությունը։— Լեհահայ բարբառում, ըստ Հանուշի, բառն է շէն և նշանակում է «խոշոր, գեր», որից և Լհ. շէնուֆին «զարդ, զեղեցկություն»։— Սուչավայի բարբառում շէնք մնում է անփոփոխ (և չի դառնում շէօնք)։

— Բառավերջում է գտնվում է միայն քէ (թէ որ), մարգարէ, շէ բառերի մեջ և մնում է անփոփոխ։— Իսկ կիրակէ, ինչպես ուրիշ բարբառներում, նույնպես և այստեղ, նոր հունարենի համաձայն դառնում է կիրակի։

— Բառասկզբում մնում է ընդհանրապես ք, ինչ.

ընծայիլ > Սշ. ընձակել, Լհ. ընձայէլու նշ. «ծնիլ».

ընկերել > Լհ. ընգէրէլու «օգնել»

քնտրել>Սչ. ընդերել, և՛. ընդրելու «քարերը մաքրել»
քնտանիք>Սչ. ընդանիք:

Միայն ընկոյզ բառի մեջ նախաձայն ը ազդվելով ոյ>ու
փրկարբառից, տալիս է՝

ընկոյզ>Սչ. ունգուզ, և՛. օնգուզ:

— Բառամիջուկ, բաղաձայնների խճողման դեպքում ներ-
մուծվում է ը ձայնավորը, որ սովորաբար համաձայն է մյուս
բարբառներին, բայց երբեմն էլ տարբեր է: Այսպես՝

իջեցուցանել>Սչ. ընչէց/նել (չկա ը)

զարթնուլ>Սչ. զարթընել, և՛. զարդ'ըվելու

Պլ. լրմընցընել=և՛. լրմընցընելու, իսկ Սչ. լրմընց/նել (չկա ը)

երև. լցնել=Սչ. լրցընել

սկանջ>և՛. անգաջ, հգ. անգըջըներ

զարթնուլ>երև. զարթնել, Սչ. զարթընել, և՛. զարդ'ըվելու

(երկուսն էլ ունեն ը իսկ երև. չունի).

երգնուլ>Պլ. էրթվըննալ, Սչ. էրֆընալ, և՛. էրդ'վընալու
(գրաբար չունի ը, բայց երեքն էլ ունեն ը)

դեղնութիւն>Պլ. դեղնութին. բայց Սչ. դ'էղընություն
(ունի ը)

ոջլոտ>Պլ. օշլօդ=Սչ. օջ'ըլօդ (ունի ը)

կղմինար>և՛. գողըմինդր:

— Հաճախ լեհահայ բարբառը այս կարգի ը ձայնավորի
փոխարեն դնում է է. ինչ.

ազանիլ>և՛. հագ'նէվելու=երև. հագնվել

ածիլել>Սչ. աձըլել=և՛. աձէլելու

ապսպարել>Սչ. արըսըրել=և՛. արըսը'էրելու, որից և
արըսը'էրօնք «ապսպրանք»

աւերել>և՛. ավէրելու (կարծում եմ անցնելով ավըրելու
ձևից):

և՛. օգվէնու հագ'նիչ «կոշիկ, ոտնաման» (փխ. օգվընու).

աղանիլ>աղվընիկ>և՛. աղվէնիք

երազել>Սչ. էրձել, բայց և՛. երձէվելու, որ կրավորակերպ
ձև է փխ. երազուիլ.>էրձըվելու

խիդճ մտաց>գր. խդճմտանք>Սչ. խըխջմըդանք=և՛. խըշ-
մէդանք

ծիծ>ԼՆ. ձէձեր (իբր անեղական ձե)
ծնողք>ՍՀ. ձընօխք, ԼՆ. ձէնօխք
կպիլ, կպչիլ>պտճ. ՍՀ. գըըցընել, ԼՆ. գըբ'ցէնէլու
ջրվաթ>ՍՀ. ջի'րէվադ' «շեռ»
քթուիլ>ՍՀ. քթֆել, ԼՆ. քէդ'վըդվէլու:

— Երբ միավանկ մի բառ վերջանում է ր բաղաձայնով, որից առաջ կա մի կամ երկու բաղաձայն հս, արտասանության դյուրության համար ավելացվում է թարմատար ր, որով բառը վերածվում է երկվանկի: Այսպես՝

բարձր>ՍՀ. բ'արցըր, ԼՆ. բ'արձ'ր
թանձր>ՍՀ. դ'րանձը, ԼՆ. թանձր
ծանր>ՍՀ. ձ'անդըր, ԼՆ. ձանդր
դուստր>ՍՀ. դ'ուսդըր, դ'ըուսդ, ԼՆ. դ'ուստր
մանր>ՍՀ. մանդըր, ԼՆ. մանդր
մեղր>ՍՀ. մեղըր, ԼՆ. մեղր
սանտր>ՍՀ. սանդըր
տագր>ՍՀ. դ'ագըր
քաղցր>ՍՀ. քախցըր, քրախցըր, ԼՆ. քաղցր:

Ինչպես տեսնում ենք օրինակներից, թարմատար ր-ի հավելումը հատուկ է Սուշավայի բարբառին, իսկ լեհահայ բարբառը կարողանում է տանել բաղաձայնների հանդիպումը:

— Թարմատար ր-ի հավելում տեղի է ունենում մի քանի ուրիշ դեպքերում էլ. այն է՝

ասող>ՍՀ. ասթիւ, ԼՆ. ասդ'ըդ հգ. ասդ'ըդեր
լի, լիք>ՍՀ. լինքը, ԼՆ. ըլինք. որից՝
լնուլ>ԼՆ. ըլինքցընէլու
լուսկայ>ՍՀ. լուսնիգա, ԼՆ. լուսնըգան
կշռել>ՍՀ. գըշըռել
հասունանալ>ՍՀ. հասընալ, ԼՆ. հասըննէլու
ոզջ>ՍՀ. վօխչ, ԼՆ. վըղըջ:

— Նույն ր ձայնավորը հաջորդ ու ձայնավորի ազդեցությամբ դառնում է ու՝ հետևյալ բառերում.

ամաչել>ՍՀ. ամընչնալ, ԼՆ. ամուչնալու
արտասուք>ՍՀ. արդասուք, ԼՆ. արդուսուք (անցնելով արդրսունք ձևից):

աւելել>Սչ. աւելել, և՛. աւելելու.
բռնկիլ>պտծ. և՛. բ՛րբռնցնէլու «վառել (հրագը)», բ՛օ-
ռռնցնէլու

զրոյցք>և՛. զուրուցք
զրուցել>Սչ. զուրուցել, և՛. զուրուցէլու
թթու>Սչ. թթութ, և՛. թութութ
իննսուն>Սչ. նրսուն, և՛. նսւսուն
կծու>Սչ. գրծու և՛. գուծու
կռուիլ>կրկ. Սչ. գըռվըղել, և՛. գըռվըղէլու
ճնճուղ>Սչ. ջունջուլութ, և՛. ջուլունջութ
մթութիւն>և՛. մութնութին (կարող է լինել մութ արմա-
տից, կամ թերեւ հաջորդ ու-ից):
մնջութիւն>և՛. մունջութին (նախորդի նման կարող է
լինել մութ արմատից և կամ՝ հաջորդ ու ձայնավորի ազդեցու-
թյամբ):

սնդուկ>Սչ. սընդուգ, և՛. սունդուգ

խլանալ>Սչ. խուլանալ, նոր կազմություն է խուլ արմատից:

— Ը-ի փոխարեն երբեմն էլ գրվում է օ. ախպես՝

գլուխ>Սչ. գլուխ, գլօխ, և՛. գ՛լօխ

գլորել>Սչ. գօլօրել (գ-ով)

կլորիկ>Սչ. գօլօրիգ, և՛. գօլօրիգ՝, գուլուրիգ՝ «գետնա-
խնձար»

եղունգն>Սչ. օղունգ, և՛. օհունգ (անցնելով ըղունգ ձևից),
ախպես և և՛. բ՛օռռնցնէլու «բրբռնկցնել» և օղուղ<ըղուղ<
ուղեղ:

խառա աճել, խառաւել>Սչ. խօլօղել

սրտոտ>Սչ. սօրգօղել «բարեկանալ»:

— Երբեմն էլ Ը-ի տեղ տեսնում ենք ի. ախպես են՝

գժուար, գժար>և՛. գ՛իժար

կշտանալ>Սչ. գիշդ՝անալ

կշտացնել>Սչ. գիշգ՝ացնել

ձկել>և՛. ջիգէլու, կրավ. ջիգվէլու

պնդանալ>Սչ. բինդանալ (համաձայն բիճղ արմատի)

ջրհոր>Սչ. ջ՛բբհօր, և՛. ջ՛իշվբբ

սկիհ>Սչ. սիգի

վճարել>Սչ. վիջարել, և՛. վիջարէլու (գինը)

վճարք > ԼՅ. վիջարք
 տարգալ > դգալ > ԼՅ. դ'իգ'ալ
 իսկ նշան > ԼՅ. նիշան (ՍՆ. նշան)
 նշանուիլ > ԼՅ. նիշանէլու (ՍՆ. շանվել) ազգւոժ են թուր-
 քերենից:

— Վերջապէս հայարա բառի դեմ ունենք ը-ի տեղ ա ձայ-
 նավորով՝

հպարտ > ՍՆ. ԼՅ. հարարդ
 հպարտանալ > ՍՆ. հարարգնալ
 հպարտութիւն > ԼՅ. հարարդութիւն (ՍՆ. հրբարդութիւն՝
 գրականից):

Ի

— Բառասկզբում ի մնում է ընդհանրապէս ի. օր.

իւ > ՍՆ. ԼՅ. իլիդ
 իմանալ > ՍՆ. իմանալ, ԼՅ. իմանալու
 ինն > ՍՆ. ԼՅ. ինը
 իշխել > ՍՆ. իշխել, ԼՅ. իշխելու
 ինքն > ՍՆ. ԼՅ. ինքը և այլն:

— Բառասկզբի ի (լեհահայ բարբառում) հաջորդ ց ձայ-
 նի ազդեցութեամբ դառնում է է՝ իրեն, իրենց > էրեն, էրենց բա-
 ռերի մեջ:

— Ջնջված է իննսուն > ՍՆ. նըսուն, ԼՅ. նուսուն բառի մեջ,
 իսկ ը-ի է վերածված երևի հաջորդ ց-ի պատճառով՝

իջանել > ՍՆ. ընչնել, ԼՅ. ընջ'նէլու
 իջեցուցանել > ՍՆ. ընչէցնել
 բառերի մեջ:

— Բառամիջում ընդհանրապէս մնում է ի. բազմաթիվ օրի-
 նակներից հիշենք մի քանիսը.

աղջիկ > ՍՆ. ախչիք, ԼՅ. ախչիդ
 ամիս > ՍՆ. ԼՅ. ամիս
 անիծ > ՍՆ. ԼՅ. անիծ
 բանալիք > ՍՆ. բ'ալլիք, ԼՅ. բ'ալիք
 բրինձ > ՍՆ. բ'րինց, ԼՅ. բ'րինձ

գիտել > Սչ. դ՛իզնալ, և՛. դ՛իգնալու
 գարիվայր > Սչ. և՛. գ՛արնիվար
 գեղին > Սչ. և՛. գ՛էղին
 խալկին > Սչ. և՛. խալգին
 կնիկ > Սչ. և՛. գընիգ
 կարիճ > Սչ. և՛. գըդըիջ
 հարսանիք > Սչ. և՛. հարոնիք
 հիմա > Սչ. և՛. հիմրի
 հինգ > Սչ. և՛. հինգ
 մարգարիտ > Սչ. մարգ՛արիդ, և՛. մարգ՛իդ
 յիսուն > Սչ. և՛. իսուն
 շապիկ > Սչ. շարիգ, և՛. շարիդ
 շինել > Սչ. շինել, և՛. շինէլու
 օջիւ > Սչ. և՛. օջիւ
 քրտինք > Սչ. և՛. քըրգինք և այլն:

— Բառամիջում, բայց վերջավանկում, շեշտի տակ և միայն
 ք բաղաձայնից առաջ գտնված ի դառնում է ի՛ը. եղած բոլոր
 •րինակներն են՝

գիր > Սչ. գ՛իրը, և՛. գ՛իր
 գիրկ > Սչ. գիրրգ
 գիրք > Սչ. գիրրք
 երկիր > Սչ. յէրգիրը
 լիր > Սչ. լիրր՝
 սիրտ > Սչ. սիրրդ, և՛. սիրդ
 խնդիրք > Սչ. խընգիրրք.

այսպես է նաև հրամայականների մեջ. օր. հագի՛րը > Սչ. հալիրը,
 հագաղիրը, մըգիրը, գէսիրը.

Շեշտից առաջ գտնված վանկերում նման ձայնափոխություն
 չկա. ինչ. իրեն, իրենց, կիրակի, անիրաւ, սիրել, սիրելի, սի-
 րուն, համբերող (> և՛. համբ՛իրող), տիրացու, տիրութիւն, գի-
 րանալ.— Կարմիր բառը թեև վերջավանկում ունի ի, բայց վե-
 րածված լինելով ե-ի (Սչ., և՛. գարմեր), նույնպես գերծ է ֆում
 նույն ձայնափոխությունից: Ավելի ևս կշիռք > Սչ. գըշէռք, որ
 ունի ո և ի դարձել է է:

Նկատելի է, որ այս ձայնափոխությունը գոյություն ունի
 միայն Սուշավայի բարբառում և չկա լեհահայոց մեջ, ուր ի՛ը
 երկրարբան էլ չկա:

— Բառամիջուժ տեղի ունեցած մյուս մասնակի փոփոխութիւններն են.

1) Ի ձայնալուրը ընկած կամ վերածված ը-ի.—

ածիլել>Սչ. աճըլել, և՛. աձէլէլու
գիշեր>Սչ. և՛. գ'ըշէր
գիպչել>Սչ. թըբչել
լիգել>Սչ. ւըգել, և՛. ւըգէլու
լինել>Սչ. ըլալ, և՛. իլալ, իլալու
ծիծաղ>Սչ. ձըձաղ, և՛. ձիձախ
ծիծաղիլ>Սչ. ձըձաղել, և՛. ձիձաղէլու
հանգիպիլ>Սչ. հանգըբել, և՛. հանգըբէլու
շիտկել>Սչ. շըդգել, և՛. շիդգէցնէլու
պղինձ>Սչ. բըղինձ, և՛. բըղընձ
տանտիկին> Սչ. դանդըգին:

2) Ի դառնում է է հետևյալ բառերի մեջ.

ջիղ>Սչ. ջ'էղ
աղիք>և՛. աղէք „saucisson“
կշիռք>Սչ. գըշէռք
գիրանալ>Սչ. գ'էրանալ, և՛. գ'էրացնէլու
դիզել>Սչ. դ'էզել
կիսակատար>Սչ. գէսագագար:

Առաջին երեքի մեջ եթե ի> է ձայնափոխութիւնը ձայնական է, հաջորդ երեքի մեջ վերագարձ է արմատական ձևին: Սուշա-վայի բարբառը ունենալով իր մեջ զէր, դէզ, կէս բառերը և գի-տակցելով որ այն երեքը ծագում են այս արմատներից, խախտել է ամանցման հին օրենքները և նորից նոր ամանցել:

Այս երեւոյթը, որ ինքնին շատ բնական է, սկսել է դուր-ծաղրվել զանազան բարբառներում: Օրինակ՝ Պոլսի բարբառում չեն ասում ջրոտ, պնդերես, սրտոտ, այլ ջուրոտ, պինդերես, սիր-տոտ են (տես Քնն. Պլ. բարբ., էջ 101): Մինչև իսկ նրևանի բժիշկները չեն ասում այլևս միզել այլ՝ մէզել այսինքն պահում են արմատի ձևը, ինչ որ հակառակ է հայերենի ամ-անցման օրենքներին:

3) Ի>ու ունենք միայն

կռճիկ>Սչ. գըոջուգ.

Քայց այս էլ ձայնական չէ, այլ իկ նվագական մասնիկը փոխանակված է իր համազոր ունի մասնիկով:

— Բառավերջում ի մնում է սնփոփոխ. ինչ.

ագի>Սչ. աքի, ևն. ագի

այդի>ևն. էգի

անալի>Սչ. ալլի

գարի>Սչ. ևն. գարի

գինի>Սչ. ևն. գինի

գօտի>Սչ. ևն. գօդի

գրացի>Սչ. ևն. գրացին

կաշի>Սչ. ևն. գաշի

հայելի>Սչ. ևն. հայլի

հոգի>Սչ. ևն. հօգի

ձի>Սչ. ցի, ևն. ձի

մատանի>Սչ. ևն. մագնի

ոսկի>Սչ. ևն. օսգի

օրդի>Սչ. ևն. օրդի

տարի>Սչ. ևն. դարի

քամի>Սչ. ևն. քամի

քեռի>Սչ. ևն. քէռի և այլն:

Միայն հետի բառն է, որ Սչ. ևն. դարձել է հէռու, բայց իբրև ասոցված ասվում է Սչ. հէռի յէդիցի Քամ լիցի:

Միջ. հյ. ալլուի> ևն. ալվը Շնորհց բառի մեջ ի դարձել է ը:

Ո

— Միավանկ բառերի սկզբում դառնում է վօ. օրինակներն

են՝

ո՞ «ո՞վ»>Սչ. վօ, հյց. ըզվօ

ողջ>Սչ. վօխշ, ևն. վըզըջ՝

ոռ>ևն. վըռ

ո՞վ>Սչ. ևն. վօվ

ոռք>Սչ. վօդգ՝, ևն. վըդ

ո՞ր>Սչ. վօը, ևն. վը՞ր

որբ>Սչ. ևն. վօըբ՝

որդն>Սչ. վօրդ՝

(իսկ որք բառը դառնալով հորք, այնուհետև վերածվել է Մշ-
ֆօրթ, ֆըրթ, և՛. ֆըրդ՝ իսկ Հնգ. ֆըրթ):

— Երկու և ավելի վանկով բառերի սկզբում ա գտնում է
օ. այսպես են ցույց տալիս հեռեկալ օրինակները.

ուրեկ > Մշ. օւրեկ

ոչխար > Մշ. և՛. օչխար

ոջիլ > Մշ. և՛. օջիլ, նաև Հնգ.

ոջլոտ > Մշ. օջլլօդ

ոսկօր > Մշ. Հնգ. օսգ'օր, և՛. օսգ'ըր

օրբեայրի > Մշ. օրբ'օվարի:

— Միավանկի և բազմավանկի այս տարբերությունը այն-
պես զգալի է, որ հաճախ երբ միավանկ բառը հղովմամբ կամ
այլ պատճառով բազմավանկ է դառնում, վօ նախաձայնը վար-
ձնում է օ. այսպես՝

ոռ > և՛. վըռ, օռուն, օռօվ

ոտք > և՛. վըդ, հգ. օգվըներ, որից և օղվէնու հաղ'նիչ «կո-
շիկ, ոտնաման», և ոտնաւոր > և՛. օդըմվըր «garçon
de noccs».

օրբ > Մշ. և՛. վօրբ՝, բայց օրբեայրի > Մշ. օրբ'օվարի:

Նմանապես որս միավանկ բառը ստանալով ա հավելվածը,
իրրև բազմավանկ դառնում է և՛. օրսա էթալու «որոտալ» և օր-
սուքին «որսորդություն»:

— Առաջին օրենքի համար բացառություն չկա Սուչավայի
բարբառում, բայց յեհահայ բարբառը ունի երկու ձև՝

ոչ > և՛. օչ

օր > և՛. օ «որ, օրպեսզի»,

որոնք հակասում են օրենքին, թերևս իբր շատ գործածական
բառեր՝ սզված ու մաշված:

Երկրորդ օրենքի համար պիտի հիշենք նախ այն բառերը,
որոնց նախաձայնը՝ ո, ստացել է թե օ և թե վօ ձևը. սրանք են՝

ոսկի > Մշ. օսգ'ի, վօսգ'ի, և՛. օսգ'ի

*ոսկերեկ > Մշ. օսգ'ըրեկ, վօսգ'ըրեկ «ոսկեջրեկ»

*ոսկերած > Մշ. օսգ'ըրած, վօսգ'ըրած «ոսկեջրած»

օրդի > Մշ. օրդ'ի, վօրդ'ի, և՛. օրդ'ի

ողորմեկ > Մշ. վօղօրմեկ, և՛. օհօրմըլի

ողորմութիւն > Մշ. վօղօրմություն, և՛. օհօրմութիւն

Սրանց մեջ Սուչախան ներկայացնում է օ, վօ, իսկ լեհահայ բարբառը՝ միայն օ. սա ցույց է տալիս, որ բարբառային ձևն է օ, իսկ վօ գրական փոխառություն է:

Երկրորդ՝ պիտի հիշենք այն ձևերը, որոնք ունեն վօ նախադասիկը և որոնց արմատը կա բարբառում միավանկ վօ ձևով. այսպես՝

ողջացուցանել > Սչ. վօխչընցընել, արմատը ողջ > Սչ. վօխչ
սրբնոտ > Սչ. վօրգ'նօդ, արմատը սրգն > Սչ. վօրդ:

Սրանք հետևել են արմատական ձևին և պահել արմատի վօ ձայնը:

Երրորդ՝ պիտի հիշենք այն բառերը, որոնք բարբառային կազմություն չունեն. այն է՝

ողբալ > Սչ. վօխբ'ալ
ոտնլուալ > Սչ. վօդընլըվա
ոսկեղէն > Սչ. վօսգեղէն
ոչինչ > Սչ. վօչինչ:

Սրանք էլ հայտնապես գրական փոխառություն են:

— Բառամիջում և դասնում է ընդհանրապես օ. ինչ.

բոկ > Սչ. ին. բ'օբիդ
գողանալ > Սչ. գ'օղնալ, ին. գ'օղնալու
գոռգոռալ > Սչ. գ'օռգ'օռալ, ին. գ'օռգ'օռալու
գովել > Սչ. գ'օվել, ին. գ'օվէլու
թողուլ > Սչ. թօղուլ, ին. թօղէլու
ժողովուրդ > Սչ. ին. ժօղօվուրդ'
խոնարհ > Սչ. ին. խօնար
կորեակ > Սչ. ին. գօրեգ
կորուսանել > Սչ. գօրսընել, ին. գօրսընէլու
հոգալ > Սչ. հօգ'ալ, ին. հօգ'ալու
հոգի > Սչ. ին. հօգ'ի
մոռանալ > Սչ. մօռնալ, ին. մօռնալու
մորթել > Սչ. մօրթել, ին. մօրթէլու
սլորել > Սչ. օլօրել
ցորեան > Սչ. ին. ցօրեն
փռչի > Սչ. ին. փօչի և ալլն և ալլն:

— Վերջավանդի ու ձայնավորը գտնվելով որոշ բաղաձայն-
ներից առաջ՝ գառնում է որոշ չափով Սուհավայի, բայց ավելի
շատ լեհահայ բարբառում, շեշտյալ ը'։ Այսպես՝ Բ-ից առաջ՝

բոլոր>Սչ. բ'օլօր, և՛. բ'օլըր «չուրջը»

բոր>Սչ. բ'օր, բ'ըր

գորտ>՛և՛. օգ'ըրդ

խմոր>Սչ. խմօր, խմըր, և՛. խըմէր (նչ թե խըմբր)։

խնձոր>Սչ. խընձօր, Սչ. և՛. խընձըր

խստոր>Սչ. սըխգ'ըր, սըխգ'օր, և՛. սըխգ'ըր

կտոր>Սչ. գըդօր, գըդրր, և՛. գըդըմ (ըստ իս<կտորմր),
որից և և՛. գըդըրվանք.

ոսկր=ոսկոր>Սչ. օսգ'օր, և՛. օսգ'ըր

շնորհք>Սչ. շնօրք, շընըրք

նոր>Սչ. նօր, և՛. նրր

որդն>Սչ. վըրդ'

որթ, հորթ>Սչ. ֆօրթ, ֆըրթ, և՛. ֆըրդ'

որ>և՛. վըր, վըրօնք

չոր>Սչ. չօր, և՛. չօր, չըր, չվըր

չորս>Սչ. չօրս, և՛. չօրս, չըրս

պորտ>Սչ. բօրդ, բըրդ, և՛. բըրդ

ջրհոր>Սչ. ջ'ըրհօր, ջ'ըրֆըր, և՛. ջ'իշվըր

սալոր>Սչ. սալըր, սալօր, և՛. սալըր

փոր>Սչ. փօր, փըր և՛. փըր

(Այս ձայնափոխությունից ազատ են մնում երբոր, թէ որ, խո-
շոր, կլոր և պղտոր բառերը, որոնք սակայն միայն Սուհավայի
բարբառում գոյություն ունեն)։— Խոր բառը, որ Պլ. դառնում է
խօրունգ, այստեղ ունի և՛. խըրուգն ձևը։

— Այստեղ առանձին շարքում ենք գնում առոր մասնի-
կով կազմված բառերը, որոնք են.

գլխաւոր>Սչ. և՛. գ'ըլխավօր

երկնաւոր>Սչ. յէրգնավօր

թագաւոր>Սչ. թաքավօր, և՛. թագ'ավօր

կամաւոր>Սչ. գամավօր

կարգաւոր>Սչ. գարքավօր

հարսնաւոր>Սչ. հգ. հարսնավօրաք

հեծելաւոր>Սչ. հէձէլվօր, և՛. հէձէլվըր

հոգևոր>Սչ. հոգեւոր
 հարկեւոր>Լհ. հարգեւոր (բայց հարգեւորութիւն)
 ձայնաւոր>Սչ. ցայնավոր «տիրացու»
 ձիաւոր>Սչ. ցիավոր, Լհ. ձիավոր
 ձանաչւոր>Սչ. ջանջֆօր
 ճգնաւոր>Սչ. ջրգնավոր
 մեծաւոր>Լհ. մեծըվոր
 մեղաւոր>Սչ. մեղավոր
 նշանաւոր>Սչ. նշանավոր
 շնորհաւոր>Սչ. շնորհավոր, շքնըրհավոր
 օտնաւոր>Լհ. օգրմվոր
 ուխտաւոր>Սչ. ուխդավոր
 ունեւոր>Սչ. ունավոր, Լհ. ունեւոր
 պարտաւոր>Սչ. բարդավոր
 սղաւոր>Սչ. սըքավոր
 փառաւոր>Սչ. փառավոր:

Նկատելի է, որ Սչ. հիշված է 20 անգամ և միշտ -վոր ձևով, իսկ Լհ. հիշված է միայն 7 անգամ, որից 5-ը -վոր ձևով:

— Ռ-ից առաջ՝

աթոռ>Սչ. աթօռ, Լհ. աթրո
 թոռն>Սչ. թօռ, Լհ. դֆուր, դֆըր:

— Ս-ից առաջ՝ բարբառումն կա միայն 3 բառ, որոնք են.

ափսոս>Սչ. ափսօս, ափսըս
 սաղմոս>Սչ. սաղմօս
 փոս>Սչ. Լհ. փօս, փըս:

Երկրորդ բառը իբրև զրական փոխված չէ, իսկ մյուսները՝ ներկայացնում են ո>ը ձայնափոխությունը:

— Տ-ից առաջ գտնված դեպքում ո ձայնավորը բնդհան-
 քապես փոխվում է, մի մասն էլ ֆիռւմ է օ.

աղատո>Սչ. աղդօդ, աղդըդ
 ամաչկոտ>Սչ. ամընչգօդ, ամընչքըդ
 բորոտ>Սչ. բօրօդ, բըրըդ
 թեփոտ>Սչ. թէփօդ (ցորեն և այլն), թէփըդ
 խլնքոտ>Սչ. խլինքօդ
 խոտ>Սչ. Լհ. խօդ

կորկոս > ՍՀ. գորգօգ
 կրակոտ < ՍՀ. գըրլադօգ
 ոջլոտ > ՍՀ. օջ'ըլօգ, օջ'ըլըդ
 որդնոտ > ՍՀ. վօրդ'նօգ, վըրդ'նըդ
 պարծենկոտ > ՍՀ. բարձընգօգ, բարձընգըդ
 հիւանդոտ > ՍՀ. հիվընդըդ
 հոտ > ՍՀ. ֆըդ, հօգ, Լհ. ֆըդ (բայց հոտիլ > ՍՀ. հօգեի, Լհ.
 հօգալու)
 ոտք > Լհ. վըդ, ՍՀ. վօդ'գ', վըդ'գ'
 սրտոտ > Լհ. սըրդդդ «բարկացիկոտ» (բայց ՍՀ. սօրդօգեի
 «բարկանալ»)
 վախկոտ > ՍՀ. վախքըդ:

— Վերջավանկի խ, դ ձայներից առաջ ո ձայնավորը գառ-
 նում է ը' հեռեյալ բառերում.

առողջ > ՍՀ. առօխչ, Լհ. առօխջ'
 առըխջ', (սրից Լհ. առըխջ'ըխ'ին, առօխչնալու, գառօխչնամ).

բողկ > ՍՀ. բ'օխդ, բ'ըխդ, Լհ. բ'ըխդ
 գող > ՍՀ. գ'օղ, Լհ. գ'օղ, գ'վըղ
 հող > ՍՀ. Խմ. հօղ, ֆըղ
 սոխ > ՍՀ. սօխ, Լհ. սըխ
 խաղող > ՍՀ. խափօխ, խափըխ
 փոխ > ՍՀ. փօխ, փըխ,

որոնց վրա պետք է ավելացնել նաև բառասկզբից ողջ > ՍՀ. վօխչ,
 վըխչ, Լհ. վըղըջ', իսկ անփոփոխ են մնում «դժոխք, թող տալ, ծնողք,
 կող, կողք» բառերի մեջ: Նմանապես ներկա գերբայը, ինչ. խըմօղ,
 սօրվօղ, հազացօղ, էփօղ «խոհարար», համբ'իրօղ և այլն:

— Բառավերջի ց-ից առաջ միայն երկու բառ ունենք, ուր
 ո գառնում է ը. այդ է՝

կապոց > ՍՀ. գարօց, Լհ. գարրց
 կախանոց > ՍՀ. գախնօց, գախնըյ «կախաղան».

մյուս բոլոր բառերում -ոց մնում է -օց. այս բառերն են՝

արտաքնոց > ՍՀ. արդաքնօց (անշուշտ գրականից փոխ-
 առյալ)
 գոց > Լհ. դ'օձ' «փականք»
 ծածկոց > ՍՀ. ձաձգօց «խուփ»

ծառանոց>Սչ. ձառնոց
 ծոց>Սչ. ձոց
 հաղարանոց>Սչ. հաղարնոց
 վզնոց>Սչ. վրզնոց «հմայակ»
 տառանոց>Սչ. դոսնոց:

— Այս կարգի ձայնավորություն համար ունենք եւ երկու
 բառ, որոնք իրենց տեսակի համար միակ օրինակներն են:
 Սրանք են՝

մոմ>Սչ. մրմ, մօմ, և՛. մրմ
 կոկ>Սչ. գօգ, և՛. գվրգ:

Վ. քաղաձայնի ներմուծումը վերջինիս մեջ, որ տեսանք վերը
 մի քանի տեղ էլ, ըստ իս ֆնացորդ է հնագույն ուօ=wo երկ-
 բարբառային հնչման, որ ունենա Առախալի բարբառը՝ ե=իե (ie)
 երկբարբառային հնչման հետ համընթաց, որ և ավելի ուշ վե-
 րացավ:

— Ո ձայնավորի փոփոխության անկանոն դեպքեր են
 ներկայացնում հետևյալ օրինակները.

ծոմ>Սչ. ձում (ո>ոյ)
 ուղեորեկ>և՛. աղավըրէլու, գաղավուրիմ, գաղավօրիմ (ո>
 ր, ու, օ)
 կլորեկ>Սչ. գօլօրիգ, իսկ և՛. գօլօրիգ, գուլուրիգ՝ «գեա-
 նախնձոր» (ո> օ, ու)
 լսդ տալ>Սչ. լեդ դալ, և՛. լէդ գալու
 շնորհակալ>Սչ. շնօրհաղալ, իսկ և՛. շնահաղա, սրից և
 շնահաղան իմ «շնորհակալ եմ», որոնց մեջ ո>ա հետևե-
 լով հաջորդ վանկերի ա ձայնին (հմմտ. Պլ. շնօրհաւոր>
 շնահաւօր):

— Բառամիջի ո ձայնավորի անկման սակավադեպ օրի-
 նակներից են՝

խորովել>Սչ. խօրվել, և՛. խօրվելու
 խորոված>և՛. խօրված
 խորովուհի>Սչ. խօրվրվել
 հոտոտել>Սչ. հօգ՝ֆրդալ
 ճանկոտտել>Սչ. ջանքըռթել
 շնորհաւոր>Սչ. շընըրհաւօր

կատարել>Սչ. գօգրել, Լհ. գօգրէլու:
կոխոտել>Սչ. գօխքըդել
սոզորիլ>Սչ. սօրզել:

ուրիշ գեպքերում ու մնում է. ինչ.

բոլորիլ>Սչ. բ'օլօրել «շուրջը դառնալ»
ժողովուրդ>Սչ. Լհ. ժօզովուրդ՝
լուսաւորիչ>Լհ. լուսավօրիչ
խոստովանանք>Լհ. խօսդ'օվանանք
կայծոռիկ>Սչ. դաձօռիդ
մալորիլ>Սչ. մօլօրել
ոլորել>Սչ. օլօրել
փոթորիկ>Սչ. փօթօրիդ.

Իսկ պատահոտել>Սչ. բաղբըդել բառի մեջ ու դարձել է ք:

— Շատ աշխատաւած է կոզպէք բառը, որ դարձել է այս-
տեղ Սչ. զըմդագ, իսկ խոր-խորունկ ձեւի դեմ ունենք Լհ. խը-
րուզն:

ՈՒ

— Բառասկզբում ընդհանրապես ու մնում է անփոփոխ. ինչ.

ութ>Սչ. Լհ. ութը
ութսուն>Սչ. ուցուն, Լհ. ութսուն
ուլ>Սչ. Լհ. ուլ
ունել>Սչ. ունէնալ, Լհ. ունէնալու
ուտել>Սչ. ուդել, Լհ. ուդէլու
ուրախ>Սչ. Լհ. ուրախ և այլն:

— Երբ նախաձայն ու գտնվում է դ բաղաձայնից առաջ,
տեղի են ունենում զանազան փոփոխություններ. ու կա-
րող է դառնալ օ կամ ա, կարող է նաև ջնջվել. այսպես՝

ուդեղ>Լհ. օդուղ (զլխի) նաև Հնգ.
ուդևորել>Լհ. աղավըրէլու
ուդարկել>Սչ. խըրգել, Լհ. խըրգէլու
ուդդորդել>Լհ. խօրդ'էլու.

Իսկ բաղաձայնից առաջ (ինչ. ուխտ, ուխտաւոր) նման փոփո-
խություն տեղի չի ունենում:

— Բառամիջում ու մնում է նմանապես ու. ինչ.

անասուն>Սչ. Լն. անասուն «թռչուն»

ամուր>Սչ. Լն. ամբուր

անուն>Սչ. Լն. անուն

ապուր>Սչ. Լն. արուր

արտասուք>Սչ. արդասունք, Լն. արդուսունք

բուրդ>Սչ. Լն. քուրդ

գուն>Սչ. Լն. գուն

գուրս>Սչ. գուրս, Լն. գուս

եղունգ>Սչ. օղունգ, Լն. օնունգ

զրուցել>Սչ. զուրուցել, Լն. զուրուցելու

թուղթ>Սչ. Լն. թուխթ

իննսուն>Սչ. նըսուն, Լն. նուսուն

ծունկ>Սչ. Լն. ձունգ

կարկուտ>Սչ. Լն. գարգուդ

կուրծք>Լն. գրուծք

հում>Սչ. Լն. հում

մօրուք>Սչ. միրուք, Լն. միրուդ

խսուն>Սչ. Լն. իսուն

շուն>Սչ. Լն. շուն

ուրուր>Լն. ուլուր «արծիվ»

սկեսուր>Սչ. քսքեսուր, Լն. սգ'էսուր

տուն>Սչ. Լն. դուն

ցուրա>Սչ. Լն. ցուրդ

քառասուն>Սչ. Լն. քառսուն և այլն:

— Բացառաբար գլուխ>Սչ. գ'ուխ, գ'լօխ, Լն. գ'օլօխ բառի մեջ ու>օ, բայց նման վերջավորությամբ ուրիշ բառեր չեն ներկայացնում այդպիսի ձայնափոխություն. ինչ.

թուխ>Սչ. թուխ «գնչու»

կակուղ>Սչ. Լն. դագուղ (Պլ. գագող)

կանուխ>Սչ. Լն. գանուխ

սանդուղք>Լն. սանդուխդ:

— Մի քանի տեղ ու դառնում է բ. այսպես են՝

առուտուր>Լն. առըդուր

հասունանալ>Սչ. հասընալ, Լն. հասընէլու

մուշտակ>Լն. մըշդ'ախ

և հատկապես պատճառական բայերը. ինչ.

անցուցանել>Սչ. անցընել

ցուցանել>Սչ. ցրցընել, և՛. ցրցնէլու

վերացուցանել>Սչ. վերցնել, և՛. վէրցընէլու և այլն:

— Բառավերջում գտնված ու նույնպես մնում է անփոփոխ.
այսպես՝

երկու>Սչ. էրգու, և՛. էրգու, էրգուս

թթու>Սչ. թրթու, և՛. թութու

լեզու>Սչ. և՛. լիզու

կծու>Սչ. գըծու, և՛. գուծու «օղի»:

— Կան մի քանի բառեր, որոնք վերջածայն ու-ի վրա մի
նոր բաղաձայն էլ են ավելացնում. այսպես են՝

երկու>Սչ. էրգու, և՛. էրգու, էրգուս

լու>և՛. լուհ, հգ. լուվեր

հերու>Սչ. հէրու, և՛. հէրուս (զանազանելու համար հե-
ռու>Սչ. և՛. հէռու համանուն բառից):

մեղու>Սչ. մէղուն, սեռ. մէղունին:

— Անկանոն ձայնափոխություններ են ներկայացնում՝

հնուց>Սչ. հրնօց «վաղուց»

առաւօտու>Սչ. առվագու (ն), Ռմ. առվագանց

գարուն>Սչ. առչի գ'արուն, և՛. առջի-գ'արու կամ առջի
գ'արի:

ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՉԱՅՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

այ

— Գտնվելով բառասկզբում և բաց վանկի մեջ՝ դառնում է
Է. որա համար ունենք երեք օրինակ, որոնք են՝

այգի>և՛. էգի, հգ. էգ'ըսդան

այր-իկ>և՛. էրիգ-մարդ՝

այրել>Սչ. էրել, և՛. էրէլու, որից էլ՝ այրուածք>և՛. էր-
վացք «ջերմախտ, տենդ»:

Այրի բառը մտած լինելով որբեայրի բառի մեջ՝ դուրս է
մնում այս շարքից:

Այսօր բառը թեև ունի բաց վանկով այ, բայց բարդված լինելով այսօր բառերից, մանուկ է փակ վանկով բառերի շարքը:

Ծան.—Պոլսի բարբառի փնտթյան մեջ (§ 44) այ երկրաբբառի զրությունը լավ որոշված չէր. ներկա օրինակներով զրությունը պարզվում է:

— Այ երկրաբբառը գտնվելով բառասկզբում՝ փակ վանկի մեջ, դառնում է ա. օրինակներն են՝

այս, այդ, այն>Սչ. Լն. առ, ադ, ան (և սրանցից կազմված բառերը՝ այսպես>Սչ. ասքէս, այսօր>Սչ., Լն. ասօր, այդպէս>Սչ. արքէս, Լն. ադէս, այնպէս>Սչ. Լն. ամքէս):

այլ>Սչ. Լն. ալ և սրանից կազմված՝ այլուր>Լն. անլըր հնորից».

այծ>Սչ. այց, սեռ. ամի, Լն. ամ:

— Բառամիջում այ գտնվելով բաղաձայնից առաջ՝ դառնում է ա. այսպես՝

գայլ>Սչ. Լն. գալ

դարիւայր>Սչ. Լն. դարնիւար, Սչ. դէրիւար

եղբայր>Սչ. Լն. ախրար

երկայն>Սչ. յերգան, Լն. էրգան

լայն>Սչ. Լն. լան

կայծ>Սչ. Լն. դաձ

կայծակն>Սչ. Լն. դաձադ

կայծոռիկ>Սչ. գաձօռիկ

կայծքար>Սչ. դաձքար

հայր>Սչ. Լն. հար

հօրեղբայր>Սչ. Լն. հօրար

ձայն>Սչ. Լն. ձան

մայր>Սչ. Լն. մար

մայրապետ>Լն. marabetka

մայրիլ>Սչ. մարեւ Վնվադիլ»

իվայր>Սչ. Լն. վար

փայտ>Սչ. Լն. փադ

քայլել>Սչ. քալել, Լն. քալէլ

— Բառամիջի այ գտնվելով ձայնավորից առաջ՝ մնում է այ, իսկ ձայնավորը կտրող է ջնջվել. այսպես՝

հայելի > Սչ. Լհ. հայլի
նայիլ > Սչ. նայել, Լհ. նայելու
վայելել > Սչ. վայելել:

Մի քանի բառ ունենք, որոնց մեջ այ երկբարբառը չի ենթարկվում այս երկու կանոններին. սրանք են՝

ձայնել > Լհ. ձէնէլու
կայանալ > Սչ. գենալ, Լհ. գէնալու
վայթել > Սչ. վոթել
փայլիլ > Սչ. փայլել, Լհ. գի փայլէ «փայլատակում է»
փայլումն > Լհ. փայլում «փայլակ»
փայռուն > Սչ. փայռուն:

Սրանք արդյոք փոխառություն են՝ առաջինը մի ուրիշ բարբառից, վերջին երեքը գրականից:

— Գրականից փոխառյալ բառերի մեջ այ մնում է անփոփոխ. այսպես՝

հայրենիք > Սչ. հայրենիք
ձայնաւոր > Սչ. ցայնաւօր «տիրացու»
մայրական > Լհ. մայրագան
յայտնել > Սչ. հայդնել:

Այց բառը (այցելութուն) «այց առնուլ» սձով գործածական է հունգարահայ բարբառում: Այստեղ երկբարբառը անկորուստ պահվել է. արդյոք գրականից փոխառություն է:

— Բառավերջում այ գտնում է ա. ինչ.

սկամայ > Սչ. ագամա
բակլայ > Սչ. Լհ. բ'ագլա
լուսնկայ > Սչ. լուսնիգա, Լհ. լուսնըգան
խաբերայ > Սչ. խափէփա
ձառայ > Սչ. Լհ. ձառա
ծնծգայ > Սչ. ցընձա
մեղայ > Սչ. մեղա
շուկայ > Սչ. շուգա
սատանայ > Սչ. Լհ. սադանա

ի վերայ>Սչ. ևն. վրա
 վկայ>Սչ. ևն. վրդա
 փեսայ>Սչ. ևն. փէսա
 քահանայ>Սչ. քահանա, ևն. գ'ահանա
 տղայ>Սչ. ևն. դըղա:

— Միավանկ հայ բառի ծայրին այ մնում է անփոփոխ
 (Սչ. հայ):

աւ

— Բառասկզբում աւ գտնվելով ձայնավորից առաջ՝ դառ-
 նում է ավ. ինչ.

աւազան>Սչ. ավազան
 աւել (գյ.)>լն. ավել
 աւելել>Սչ. ավըլել, ևն. ավուլէլու
 աւելի>Սչ. ևն. ավէլի
 աւերել>լն. ավէրէլու
 աւետիս>լն. ավէդիս «Ծնունդի տոն»
 աւետարան>լն. ավէդրան:

— Բառասկզբում աւ գտնվելով բաղաձայնից առաջ՝ դառնում
 է օ. ինչ.

աւթել>լն. օթէլու «գիշերել»
 աւծ>Սչ. օց, ևն. օծ'
 աւղ>Սչ. ևն. օղ
 աւտար>Սչ. ևն. օդար
 աւր>Սչ. ևն. օր և այլն:

— Բառամիջում աւ գտնվելով ձայնավորից առաջ՝ դառ-
 նում է ավ. ինչ.

գաւաթ>Սչ. գ'ավաթ, ևն. գ'ավադ'
 թագաւոր>Սչ. թաքավօր, ևն. թագ'ավօր
 հաւատալ>Սչ. հավաղալ, ևն. հավադալու
 սաւան>Սչ. ևն. սավան
 տաւար>Սչ. ևն. դավար
 ցաւիլ>Սչ. ցավել, ևն. ցավէլու և այլն:

— Կան սակավաթիվ բառեր, որոնց մեջ առ ձայնավորից կամ բաղաձայնից առաջ, բառամիջուժում մնում է առ. այսպես՝

զաւակ>Սչ. զաւագ, Լն. զավագ
հաւանիլ>Սչ. հավնել, Լն. հաւնէլու
հաւկիթ>Սչ. հաւգիթ, Լն. հաւգիգ

(ընդամենը 3 բառ):

— Կան գեպքեր, երբ առ երկբարբառի միջից առ ձայնավորը ընկնում է, և նրանից մնում է վ, որ կարող է հաջորդ խուլ բաղաձայնի մոտ դառնալ ֆ. այսպես են՝

առաւօտու>Սչ. առվագու, Ռմ. առվագանց
լաւանալ>Սչ. լաֆնալ
լաւացուցանել>Սչ. լաֆցընել
ճանաչաւոր, ճանչւոր>Սչ. ջանջ'ֆօր
մեծաւոր>Լն. մեծըվըր:

— Բառամիջի առ գտնվելով բաղաձայնից առաջ՝ դառնում է օ. այսպես՝

ամօթ>Սչ. Լն. ամօթ
այսօր>Սչ. Լն. ասօր
գօտի>Սչ. Լն. գ'օգի
եօթն>Սչ. Լն. օխդ'ը
խօսիլ>Սչ. խօսել, Լն. խօսէլու
կօշիկ>Սչ. գօշիգ, Լն. գօշիգ'
հօրեղբայր>Սչ. Լն. հօբ'աբ
մօտ>Սչ. Լն. մօգ, մօգիգ
յօնք>Սչ. Լն. օնք
յօրանջել>Սչ. օրընջդալ, Լն. գօրօնջ'գ'ըդալու
տօն, տօնել>Սչ. Լն. դօն:

— Կանոնից շեղվում են հետևյալ բառերը.

առաւօտու>Սչ. առվագու, Ռմ. առվագանց
թափօր>Սչ. թափուր
մօրուք>Սչ. միրուք, Լն. միրուգ:

Անկանոն է նաև աղաւնի բառը, որ ստանալով -իկ փաղաքշահան մասնիկը՝ դարձել է Լն. աղվենիք:

— Բառավերջում ան դառնում է ավ, ան (որ հորովման մեջ կարող է դառնալ վ, ֆ). եղած օրինակներն են՝

ազոաւ>Սչ. աքոավ

անիրաւ>Սչ. անիրավ

թաթաւ «սնձրե»>Սչ. Ռմ. քաթաւ, սեռ. քաթֆու, իսկ Լհ.

թաթավ

կտաւ>Սչ. գըգաւ, Լհ. գըգավ

հաւ>Սչ. հաւ, Լհ. հավ

նաւ>Սչ. Լհ. նավ

պառաւ>Սչ. բառաւ, բառավ

ցաւ>Սչ. ցաւ, ցավ, Լհ. ցավ:

եա

— Բառամիջում ունենք միայն հետեյալ ձևերը, որոնց մեջ եա դառնում է ե, ե.

ատեան>Սչ. Լհ. ադեն

դեան>Սչ. Լհ. զեն

լեան>Սչ. Լհ. լեն

կորեակ>Սչ. Լհ. գորեգ

հեծեակ>Սչ. Լհ. հէձեկ «զորք, բանակ»

մեռեակ>Սչ. մէռեկ

ցորեան>Սչ. Լհ. ցօրեն:

— Գրականից փոխառյալ են՝

կեանք>Սչ. Լհ. գյանք

յաւիտեան>Լհ. հավիդյան,

որոնց մեջ եա դարձել է յա:

եայ

— Այս եռաբարբառով ունենք միայն՝

երկաթեայ>Սչ. յէրգըթէ

հրեայ>Սչ. հրէյա

պաշտօնեայ>Սչ. բաշդօնյա

քրիստոնեայ>Սչ. քրիսդօնյա (իսկ Լհ. խրիսդօնա օտար է):

Բացի առաջինից, որ բացառականի ձև է, մյուսները բոլոր գրականից փոխառյալ բառեր են:

եաւ

Այս եռարարբառով ունենք միայն երկու բառ՝

բարեաւ>Սչ. բ'արեվ, և՛. բ'արև

սեաւ>Սչ. սև, սեվ, և՛. սեվ,

իսկ բառասկզբում ունենք միայն՝

եաւթն>Սչ. և՛. օխդ'ը

եաւթանասուն>Սչ. օխթանասուն, և՛. օխդ'անասուն:

և

— Բառասկզբում կա միայն և շաղկապը, որ հնչվում է Սչ. յէւ (yeu, յէու), հաև յօւ, յօ.— և՛. չկա:

— Բառամիջում գտնվում է թե՛ ձայնավորից և թե՛ բաղաձայնից առաջ և դառնում էվ, եվ, ավ:

ամենեին>Սչ. ամէնէվին

արեւիք>Սչ. և՛. արեվելք, որից և արեւըդելք «արեւմուտք»

երեւի>Սչ. էրէջլալ, և՛. էրէվնալու

երեւի>Սչ. յէրէվէլի

թեթեանալ>Սչ. թէթեջլալ

հարկեր>Սչ. հարգէվօր, և՛. հարգէվըր

հետեակ>և՛. հէդէվազ'

հեալ>Սչ. հէվալ, և՛. հէվալու

հոգեր>Սչ. հօգ'էվօր

ձեւ>Սչ. ցէվել

որբեայրի>Սչ. օրբ'օվարի (հետեւելով հախաձայնին)

ուղերել>Սչ. աղավըրէլու

ուներ>Սչ. ունավօր, և՛. ունէվըր

սեանալ>Սչ. սեջլալ:

— Բառավերջում եղած օրինակներն են.

անձրև>Սչ. անձրեվ

թեթև>Սչ. թէթեֆ, և՛. թէթև

թև>Սչ. թեֆ, սեռ. թեվի

իւն>Սչ. իւէֆ, և՛. իւէվ

հեք>Սչ. հեֆք, և՛. հեքք, հգ. հէւքեր

ձև>Սչ. ցեզ

յետև>Սչ. յեդէզ, Լհ. էդև

հերքսև>Լհ. մէդ'սեզ «ստամոքս»

տերև>Սչ. Լհ. դէրև, հգ. գէրէզներ:

Սրանց մեջ բառավերջի և դարձել է ուրեմն և, եզ, եֆ, էֆ, էզ, բայց հոլովման մեջ կարող է դառնալ նաև -էւ. ինչ. թէթեֆ, սեռ. քէթեիմ:

Առևտուր բառը լեհահայ բարբառում դարձել է նախ առուտուր (ըստ որում և շաղկապը ջնջված է), որից ու ձայնավորի սղումով՝ աղբուր:

իա

Այս երկրարբանով բառ շատ քիչ կա. ընդամենը ունենք՝

ձիաւոր>Սչ. ցիաւօր, Լհ. ձ'իաւլըր

միամիտ>Սչ. միամիդ «խոնարհ»,

իսկ միակ>Սչ. Լհ. մէգ

միայնս>Սչ. մէնս «միայն ես», Լհ. մէն.

իւ

— Բառասկզբում ունենք՝

իւզ>Սչ. յէլս, սեռ. յէզի, Լհ. յէզ

իւրեան>Սչ. իրեն, Լհ. իրեն, էրեն

իրենք, իրօնք, հգ. Լհ. իրենց, էրենց:

Առաջինի մեջ իւ>ե, ապա՝ յէ ձայնափոխությունը դիպատճառով է, ինչպես կտեսնենք քիչ հետո, իսկ մյուսները ավելի բնական են. իւ>ի, միայն Լհ. երեմ, էրեմց ձևերի մեջ ի դարձել է է՝ նմանությամբ հաջորդ վանկի ե ձայնավորի:

— Բառամիջում իւ հաջորդ բաղաձայնից առաջ դառնում է ու. այսպես՝

ալիւր>Սչ. Լհ. ալուր, Ռմ. լուր

արիւն>Սչ. Լհ. արուն

հարիւր>Սչ. Լհ. հարուր

հիւսել>Սչ. հուսել, Լհ. հուսէլու

հիւթ>Լհ. հուդ' «խոնավ», որից՝

*հիւթութիւն>Լհ. հուդ'ութիւն «խոնավություն»

իսկ ղ բաղաձայնից առաջ դառնում է ե կամ ե.

գիւղ>Սչ. գ'եղ, Լհ. գ'էղ

գիւղացի>Սչ. գ'եղացի

ծիւղ>Սչ. ձեղ «ցողուն», Լհ. ձէղ «հարդ».

— Վերացական -ուրիւն վերջավորութիւնը զարմանալի կերպով պահպանւած է Սչ. ուրջուն ձևով, իսկ Լհ. ուրիշ բարբառների նման ունի -ուրիւն ձևը. օր.

հիւանդութիւն > Սչ. հիվընդութիւն, Լհ. հիվանդութիւն
և այլն.

— Առանձին պատկեր են ներկայացնում՝

եղջիւր>Սչ. յէխշիուր (պտուղը). նման է -ուրիւն>-ուրջուն

վերջավորութեան և արդյոք գրականից է փոխառու

կիւրակէ>Սչ. Լհ. գիրագի (նոր հունարենից)

միւռոն>Սչ. մէռօն:

— Ձայնավորից առաջ իւ դառնում է իվ՝ ինչպէս ցույց է տալիս՝

հիւանդ>Սչ. Լհ. հիվանդ:

— Բառավերջի իւ երկրարբառի համար սենեք երեք իրարից տարբեր ձայնավորութիւն. այն է.

ազնիւ>Սչ. ազնիու

կոիւ>Սչ. գոիու, Լհ. գոիվ

պատիւ>Սչ. բագիու (հին հայերենի երկրարբառային հընչման համաձայն),

վաղիւ>Սչ. վաղը, Լհ. վաղ (վերջավորութիւնը ջնջված):

Վերոհիշյալ իւ հանգող բառերը հոգնակիում, -ներ մասնիկից առաջ երկրարբառը դարձնում են -իվ. այսպէս՝ ազնիվներ, գոիվներ, բաղիվներ, իսկ եզակիում, հոլովման ժամանակ, սըղմամբ դառնում են վ. ինչ. սեռ. բաղվի, գրծ. զըրվօւ և այլն:

Ծանոթ.—Վերը տեսանք, որ Սուչավայի բարբառում, վերացական -ուրիւն մասնիկը, ճիշտ արդի գրականին նման ստանում է -ուրջուն ձևը, բայց այս քչ ձայնախմբի մեջ ք չի բաժանվում գնում միանալու նախորդ վանկին, ինչպէս է մեր արդի գրական արտասանութեան մեջ, այլ միշտ անանջատ միացած է քնում յ կիսաձայնի հետ: Ըստ այսմ՝ պետք է հնչել հիվընդութիւն և ոչ թե հիվընդութ-յուն:

— Օրինակները գտնվում են բառի մեջ՝ բաղաձայնից
ստաց հետևյալ են տալիս ոյ>ու ձայնափոխությունը. սրանք են՝

անդամավոյձ>Սչ. անթամավուց

անոյձ>Սչ. ևն. անուձ

բոյն>Լն. բուն

գոյն>Սչ. գուն

զրոյցք>Լն. զուրուցք

ընկոյզ>Սչ. ունգուզ, ևն. օնգուզ

թոյլ>Սչ. թուլ

լոյս>Սչ. ևն. Լուս

կապոյա>Սչ. ևն. գաբուդ

կոյր>Լն. գուր

հօրաքոյր>Սչ. ևն. հօրքուր

ձկոյթ>Սչ. ևն. ջգութ

մօրաքոյր>Սչ. ևն. մօրքուր

ողկոյզ>Սչ. գուզ

սովորոյթք>Սչ. սօրվուդ՝գ՝, ևն. սօրվուդ՝ք

վարագոյր>Սչ. վարաքուր

քոյր>Սչ. ևն. քուր:

Ծանոթ.— Երեկոյ բառը նախ ստացել է Ե հափելվածը և ապա երեկայն դարձել
է իրիկուն>Սչ. ևն. իրզուն:

— Գրականից փոխառյալ ձևեր են՝

ճրագալոյց>Սչ. ջրաքալուլից, ապա՝ ծողովրդական ստու-
գաբանությամբ ջրաքալուիս:

յոյս>Սչ. հուիս, ևն. հույս:

Մասնիկի ձևափոխությամբ կազմված է՝

ուռոյցք>Սչ. ուռաց՝ (ինչպես որ այլուր ունենք ուռեցք):

ուռ, ուէ, ուռ...

— Ու ձայնավորը կցվելով հաջորդ ձայնավորի հետ, դառ-
նում է վ, երբեմն էլ ֆ. օրինակները հետևյալներն են՝

աստուած>Սչ. ասված, ևն. ասդ՝ված

բռնուածք>Լն. բ՛րննված՝ք

լուանալ>Սչ. լվանալ, ին. լըվանալու
 լուացք>ին. լըվացք
 ձուածեղ>Սչ. ցեվածեղ
 չուան>Սչ. ին. չուվան
 պատուական>Սչ. բադվադան
 պիտուական>Սչ. բիդվազան «պիտանի»
 երգուիլ>երգվենալ>ին. էրգ'վընալու, Սչ. էրֆընալ
 ինչուան>ին. ինչվան, Սչ. ինչֆանի.

ուե.—

թօթուել>Սչ. թօթֆել «շարժել»
 պատուել>Սչ. բադվել
 պատուելի>ին. բադվելի
 ցօղուել>Սչ. ցօղվել (ամանը)
 քթուել>Սչ. քթֆել, որից և ին. քեդ'վըդվելու.

ուէ.—

աղուէս>Սչ. աղվէս, ին. աղվես.

ուի.—

զգուիլ>Սչ. զըզվել
 թթուիլ>Սչ. թըթֆել
 թուիլ>Սչ. ութֆէնալ, ին. գուդ'վի
 կծուիլ>Սչ. գըծվել
 կռուիլ>Սչ. գըռվել
 ցցուիլ>ին. ցըցվելու
 յօնք>Սչ. օնքֆի, ին. օնքվի.

ուո.—

բանուոր>Սչ. բ'անվօր
 ճանաչուոր>Սչ. ջանջ'ֆօր.

ուու.—

կծուութիւն>Սչ. գըծություն, որի մեջ մի ու ջնջված է: Իսկ
 դժուար բառը հին գավառական ձևով պահված է ին. դ'իժար:

— Բառակզրում ք դառնում է բ'. օր.

բերան > Սչ. և՛. բ'երան
բերել > Սչ. բ'երել, և՛. բ'երելու
բամբակ > Սչ. և՛. բ'ամբակ
բանալ > Սչ. բ'անալ, և՛. բ'անալու
բուրդ > Սչ. և՛. բ'ուրդ'
բոնել > Սչ. բ'բոնել, և՛. բ'բոնելու
բոկ (բոկիկ) > Սչ. և՛. բ'օբիկ
բողկ > Սչ. և՛. բ'բխկ և ալին.

— Չորս դեպքում նախաձայն ք մնացել է ք. այս բառերն են՝

բաշխել > Սչ. բաշխել, և՛. բաշխելու
բեղ, բեղեր > Սչ. բելի
բզզալ > Սչ. բբզբզալ
բու (թռչուն) > Սչ. բունու, բունա:

Հունգարահայ բարբառում գտնում ենք փախել «կոտրել», ըստ ՀԱ, 1898, էջ 105, (եթե վրիպակ չկա). այս բառը անշուշտ պետք է գնել զրբ. բախել բառից, որով գտնում ենք նախաձայն ք > փ:

Այս չորս բառերից առաջինը պարսկերենից է փոխառյալ, երկրորդը՝ թուրքերենից, չորրորդը՝ ռուսերենից, իսկ երրորդը բնաձայն է: Այս պատճառով չորսի մեջ էլ ք մնում է ք:

— Բառամիջում գտնված անկախ օրինակները շատ քիչ են և կարելի է դրանք համարել միայն երկու, որոնք են.

{ խաբել > Սչ. խափել, և՛. խափելու
խաբերայ > Սչ. խափեփա
խաբէութիւն > Սչ. խափէություն

{ շաբաթ > Սչ. և՛. շաբ'աթ
շաբաթական > Սչ. շաբ'աթագան
երկուշաբթի > Սչ. երգուշափթի, և՛. էրգուշաբ'դ'ի
երեքշաբթի > Սչ. իրեքշափթի, և՛. իրեքշաբ'դ'ի

Այս երկու օրինակներից առաջինը հայտնի կերպով ներկայացնում է բառամիջումը >փ ձայնափոխությունը: Երկրորդը (շաբաթ), մանավանդ նրա բարդ ձևերը տատանվում են բ' և փ ձայների միջև, նախ գրական ազդեցության տակ (օրերի անուններն էլ կրոնական գույն ունեն) և երկրորդ՝ բթ ձայնախմբի պատճառով:

— Կախյալ օրինակներից առաջին խմբում բ գտնվում է անգականից (մ) հետո, ուր ըստ օրինի գառնում է բ. այսպես զուտ ժողովրդական բառերի մեջ, այն է՝

ամբար>Սչ. ամբար, համբար
բամբակ>Սչ. լհ. բ'ամբագ
բամբասել>Սչ. բ'ամբասել
բամբասանք>Սչ. բ'ամբասանք,

իսկ երբ բառը ենթարկված է գրական ազդեցության, բ գառնում է բ' կամ նույն իսկ փ. այսպես են՝

համբերել>Սչ. համբ'երել, լհ. համբ'իրելու
համբերող>լհ. համբ'իրող
համբերություն>Սչ. համբ'ություն, լհ. համբ'իրություն
ամբարտաւան>Սչ. ամբ'արդավան
անբան>Սչ. ամբ'ան գենդ'անի
անհամբեր>Սչ. անհամփեր
սեպտեմբեր>Սչ. սէրգէմբ'եր
գեկտեմբեր>Սչ. դ'եգգէմբ'եր:

— Երկրորդ խմբում բ գտնվում էր ք-ից հետո, ուր տալիս է բ' կամ փ. այսպես են՝

արբենալ>Սչ. հարփել, լհ. հարբ'ելու
որբեայրի>Սչ. օրբ'օվարի
ուրբաթ>Սչ. ուրբ'ադ', լհ. ուրբ'աթ
սրբել>Սչ. զըրբ'ել
երբոր>Սչ. յէփօր:

— Երրորդ խմբում բ. գտնվում էր >խ բաղաձայնից հետո և գառնում է բ'. այսպես են՝

եղբայր>Սչ. լհ. ախբ'ար
ողբալ>Սչ. փօխբ'ալ

— Բառավերջում ք անկախ օրինակ չունի բնավ. գտնվում է միայն մ ռնգականից հետո, ուր տալիս է ք. այսպես՝

թամբ>Սչ. քամբ (բայց և Սչ. և՛. քամբ, որ ծագում է քամբք ձևից՝ բ-ի անկումով)

և կամ բ-ից հետո, ուր տալիս է փ կամ ք՝. ինչ.

երբ>Սչ. յէփ, և՛. յէր՝

լիբբ>Սչ. լիբբր՝

որբ>Սչ. և՛. Վորբ՝

սուրբ>Սչ. սուրփ, և՛. սուրբ՝

Կ

— Բառասկզբում սովորաբար դառնում է զ՝. ահա մի քանի օրինակ.

գազան>Սչ. և՛. գ՛ազան

գալ (բայլ)>Սչ. իգ՛ալ, և՛. իգ՛ալու

գայլ>Սչ. և՛. գ՛ալ

գառն>Սչ. և՛. գ՛առ

գարի>Սչ. և՛. գ՛արի

գիւղ>Սչ. գ՛եղ, և՛. գ՛էղ

գետին>Սչ. և՛. գ՛էդին

գինի>Սչ. և՛. գ՛ինի

գիշեր>Սչ. և՛. գ՛ըշեր

գլուխ>Սչ. գ՛լօխ, և՛. գ՛օլօխ

գողանալ>Սչ. գ՛օղնալ, և՛. գ՛օղնալու

գոռգոռալ>Սչ. գ՛օռգ՛օռալ, և՛. գ՛օռգ՛օռալու

«ամպի որոտալ»

գորտ>և՛. օգ՛ըրդ

գօտի>Սչ. և՛. գ՛օդի

գտանել>Սչ. գ՛ըդնուլ, և՛. գ՛ըդնէլու և այլն:

— Գրական լեզվից վերցված մի քանի բառ ունեն նախաձայն ք. այսպես են՝

գաղափար>Սչ. քաղափար «գրատախտակ»

գարշելի>Սչ. քարշէլի

գերեզման>Սչ. քէրէզման.

այդպիսի են նաև՝

դթալ>Սչ. քթալ (բայց գուր լինում է գ'ուք, որից երևում է, որ գ>ք հաջորդ ք բաղաձայնի ազդեցությամբ է, ինչպես որ ունենք տարգալ>լհ. դ'իգ'ալ, Պլ. թքալ, Ղրբ. քթօլ)։

գզել>քզել Սչ. որի պատճառը հայտնի չէ, մանավանդ որ ք և գ իրար հետ անհարիր ձայներ են։

— Բառասկզբի գ մնում է գ' հակառակ օրենքի, միայն գլորել>Սչ. գօլօրել բառի մեջ, որ անշուշտ կլոր, կոլոր, կլորակ բառերի նմանությամբ է։

— Բառամիջում, երկու ձայնավորի միջև, գ դառնում է գ' կամ ք. օր.

ազահ>Սչ. աքահ

ադի>Սչ. աքի, լհ. ագ'ի

ահագին>Սչ. ահաքին «չաս»

այգի>լհ. եգ'ի

արեգակն>Սչ. արեքագ, լհ. արիգ'ագ

գագաթն>լհ. գ'աքադ'ը

թագաւոր>Սչ. քաքավօր, լհ. քագ'ավօր

թագունի>Սչ. Թաքունի (անուն)

ծագիլ>Սչ. ձաքել

հոգալ>Սչ. հոգ'ալ, լհ. հօգ'ալու

հոգեւոր>Սչ. հոգ'էվօր

հոգի>Սչ. լհ. հօգ'ի

հազուստ>Սչ. հաքուսդ, լհ. հագ'ուսդ'

ճառագայթ>Սչ. շառագ'այդ'

ճրագալոյց>Սչ. ջրաքալուից

շոգել>լհ. շօքելու «քրտնիլ»

վարագոյր>Սչ. վարաքուր։

Այստեղ պետք է դնել նաև՝

ձգել>Սչ. ցրքել

սգաւոր>Սչ. սրքավօր

տարգալ>լհ. դ'իգ'ալ։

— Ը բաղաձայնից հետո գ դառնում է ք կամ գ'.

արգել>Սչ. արքել

արգելու>Սչ. արքիլել

կարգաւոր>Սչ. գարբավօր
կարգել>Սչ. գ'արքել, Լհ. գ'արգ'ելու
մարգարէ>Սչ. մարգ'արե
մարգարիտ>Սչ. մարգ'արիդ, Լհ. մարգ'իդ:

— Ն ռնգականից հետո բառամիջի գ մնում է գ կամ գառ-
նում է գ'.

անագան>Սչ. Լհ. անգ'ան
անգամ>Սչ. անգ'ամ
անգին>Սչ. անգ'ին
գանգատիլ>Սչ. գ'անգըղվել
գանգակ>Սչ. գանգագ', Լհ. ժանգագ
ժանգառի>Լհ. ժանգառի «երկնագույն»
կանգուն>Սչ. Լհ. գանգուն «արշին»
հանգիստ>Սչ. հանգ'իսդ'
հանգչիլ>Սչ. հանգ'չել, Լհ. հանգ'ջէլու
հանգստանալ>Սչ. հանգ'ըսդ'անալ
հանգստութիւն>Սչ. հանգ'ըսդ'ություն:

— Երբ նգ ձայնախումբը գտնվում է ն ռնգականից առաջ,
միջին գ ջնջվում է, ուրիշ խոսքով նգն ձայնախումբը դառնում
է նն. սրա համար ունենք միայն մի օրինակ, որ է՝

կանգնիլ>Սչ. գաննել, Լհ. գաննէլու:

— Բառամիջի գ գտնվելով հաջորդական ն-ից առաջ, գառ-
նում է գ'.

ագանիլ>Սչ. հաքնել, Լհ. հագ'նէվէլու
ճգնաւոր>Սչ. ջըգ'նավօր
ճգնիլ>Սչ. ջըգ'նել
օգնել>Սչ. օգ'նել
բայց՝ պագանել >Սչ. բաքնել, Լհ. բաքնէլու:

Միայն լոգանալ>Լհ. լօգնէլու «լիպք անել» բայի մեջ գ
մնում է գ՝ ռնգականից առաջ:

— Մյուս բաղաձայններից իբր օրինակ ունենք միայն.

ադռալ>Սչ. աքռալ
մզլիլ>Սչ. մըգ'լել, մըգ'լած
աագր>Սչ. գաքրը

ստորագրել>Սչ. ըսգ'օրագ'րել
օգտել>Լհ. գօգ'դ'իք «բավական է» բառերը,
որոնց մեջ գ դառնում է դարձյալ գ' կամ ք:

— Նույն ձայնափոխությունը գտնում ենք նաև ա-ից հետո. այսպես՝

անզգամ>Սչ. անըսքամ
զգեստ>Սչ. ըսգ'եսգ'.

— Հետաքրքրական է նրազ բառը, որ պրս. čirāy հոմանիշի հետ խաչաձևվելով (հմմտ. ննի. չիրաիս) դարձել է Սչ., Լհ. չիրաիս. սրանից բարդված ունենք հյ. նրագալոյց և նրագակալ: Առաջինը իբրև կրոնական բառ՝ պահել է իր ինքնությունը և դարձել է ջրաքալույից կամ ժողովրդական ստուգաբանությամբ՝ ջրաքալուիս (իբր թե լոյս բառից): Երկրորդը իբրև ժողովրդական բառ՝ վերակազմվելով դարձել է Սչ. չիրաիսգալ, Լհ. չիրաիսգ'ալ:

— Բառավերջում գ գտնվելով ձայնավորից հետո, դառնում է ք, գ', կամ մնում է գ. այսպես՝ թագ>Սչ. թաք, ձագ>Սչ., Լհ. ձագ, Վվառեկ>, պատարագ>Սչ. բագարաք, Լհ. բագրաք, փափագ>Սչ. փափագ:—Ռնգականից հետո դառնում է գ, գ' եղունգ>Սչ. օղունգ, Լհ. օնունգ, ժառանգ>Սչ. ժառանգ' հինգ>Սչ., Լհ. հինգ, սպունգ>Սչ. ըսք'ունգ, իսկ ք-ից և ա-ից հետո ք. ինչ. կարգ>Սչ. կարք, Լհ. gark, ազգ>Սչ. ասք «ազգական»:

Դ

— Բառասկզբում դ դառնում է դ'.

օր. դանակ>Սչ. Լհ. դ'անագ
դեզիւն>Սչ. Լհ. դ'էզիւն
դեռ>Սչ. Լհ. դ'էռ
դնել>Սչ. դ'ընել, Լհ. դ'ընէլու
դուռն>Սչ. Լհ. դ'ուռ
ի դուրս>Սչ. դ'ուրս, Լհ. դ'ուս և այլն:

Ունենք միայն երկու բառ, որոնց մեջ նախաձայն դ դառնում է ք. սրանք են՝

դի, դէն>Լհ. բցռ. թիմէն «կողմից» (որ պետք է ենթադրել
ասդ'իմէն ձևից, ա-ի ազդեցությամբ)
դիպչել>Սչ. թըբչել (այս էլ՝ ձևացած շ-ի ազդեցությամբ):

— Բառամիջու՞մ անկախ ձև գրեթե չկա. ընդհանրապես դ գտնվում է ն կամ ք բաղաձայնից հետո. քիչ թե շատ անկախ համարելի բառերն են՝

գդակ>Սչ. Լհ. գ՛րդագ
դադարիլ>Սչ. դ՛ադ՛րեյ «հանգչիլ»
դադարած>Սչ. դ՛ադ՛րած «ծուլ»
մեղադրել>Սչ. մեղադ՛րել.

սրանց մեջ դ մնում է դ կամ դառնում է դ՛.

— Բառամիջու՞մ ն-ից հետո գտնված օրինակներն են՝

անդադար>Սչ. անքաքար «չարաձճի» (երեխա)
անդամալոյձ>Սչ. անթամալուց
անդունդ>Սչ. անթունթ
ընդունիլ>Սչ. ընդ՛ունել
խնդալ>Սչ. խընդալ, Լհ. խընդալու «ուրախանալ»
խնդիրք>Սչ. խընդ՛իրք
խնդրել>Սչ. խընդ՛րել, Լհ. խընդրելու
կաղանդել>Սչ. գաղանդ՛ել
կենդանի>Սչ. գենդ՛անի «ողջ»
հանդարտ>Սչ. հանդ՛արդ
հանդիպիլ>Սչ. հանդըրել, Լհ. հանդըրելու
հիւանդանալ>Լհ. հիվանդցիլ իմ
հիւանդոտ>Սչ. հիվընդըդ
հիւանդութիւն>Սչ. հիվընդություն, Լհ. հիվանդութին
պնդանալ>Սչ. քինդանալ
սանդուղք>Լհ. սանդուխդ՛
սնդուկ>Սչ. սնդուկ, Լհ. սունդուգ
քանդել>Սչ. քանդել:

Սրանց մեջ դ երևում է դ, դ՛, ք ձևերի տակ, որոնցից բարբառի համար հարազատ ձևն է դ:

— Ր բաղաձայնից հետո գտնված օրինակներն են՝

արդար>Սչ. արքար, որից Լհ. արդ՛արեղ «կարագ»
բրդել>Սչ. բ՛ըրդ՛ել, Լհ. բ՛ըրդ՛ելու
երգնուլ>Լհ. էրգ՛վընալու, Սչ. էրֆընալ
երդուհն>Սչ. յէրդ՛ում
զարդարանք>Սչ. զարդ՛արանք

զարդարել>Սչ. զարդարել
 կարդալ>Սչ. գարդալ, և՛. գարդալու
 հաղորդութիւն>Սչ. հաղորթություն
 հաղորդել>Սչ. հաղորթվել
 մարդասէր>Սչ. մարդասէր
 մարդավար>Սչ. մարդավարի
 որդնոտ>Սչ. վորդնօդ
 որդի>Սչ. և՛. օրդի
 ուղղորդել>լ՛. խօրդէլու
 վարդապետ>Սչ. և՛. վարդաբեդ
 վարդավառ>Սչ. վարդավառ
 վարդենիք>լ՛. վարդէնիք «վարդ»։

Սրանց մեջ դ դառնում է թ կամ դ՛, որոնցից բարբառի հարազատ ձևն է դ՛։

— Բառամիջի դ ունեցող ձևերից ֆնում է հիշել միայն՝ խեղդել>Սչ. խըխթել, և՛. խըխդ՛ըվէլու։

— Բառավերջում դ բաղաձայնի անկախ օրինակներն են՝
 այդ>Սչ. ար, ադ (սեռ. ադօր,) և՛. ադ
 բադ>Սչ. բ՛աթ, և՛. բ՛ադ՛
 օդ>Սչ. օթթ։

Բոլորի մեջ էլ դ դարձել է թ՝ բառավերջում գտնվելու պատճառով խլանալով։

— Ռեզականից հետո գտնված օրինակներն են՝
 անդունդ>Սչ. անթունթ
 կաղանդ>Սչ. գաղանդ՛
 հիւանդ>Սչ. և՛. հիվանդ
 հնազանդ>Սչ. հնազանդ՛
 ունդ>Սչ. և՛. ունդ
 պինդ>Սչ. և՛. բինդ։

Սրանցից բարբառին հարազատ ձևն է դ, մյուսները գրականից։

— Ր բաղաձայնից հետո գտնված օրինակներն են՝
 բերդ>Սչ. բ՛երթ, և՛. բ՛երդ՛ «բակ»
 բուրդ>Սչ. և՛. բ՛ուրդ՛ «փետուր»
 ժողովուրդ>Սչ. և՛. ժօղօվուրդ՛

ծաղկազարդ > Սչ. զաղգազարդ՝
կախարդ > Սչ. գախարդ՝
մարդ > Սչ. իհ. մարդ՝
որդն > Սչ. վորդ՝

Սրանց մեջ բարբառի հարազատ ձևն է դ՛:

2

— Բառասկզբում մնում է գ. ինչ.

զատիկ > Սչ. զադիգ, իհ. զադիգ՝
զարթնուլ > Սչ. զարթընել, իհ. զարդըվելու
զարկանել > Սչ. զարնել, իհ. զարնելու
զաւակ > Սչ. զաւագ, իհ. զավագ
զրուցել > Սչ. զուրուցել, իհ. զուրուցելու և այլն:

— Երկու բացառություն ունենք այս կանոնի համար. առաջինն է զանգակ, որ թեև Սչ. լինում է զանգագ՝, բայց իհ. դառնում է ժանգագ, որի մեջ ժ ձայնը ըստ Հանուշի (Lautlehre, էջ 73) ժամ «եկեղեցի» բառի ազդեցությամբ է:

Երկրորդն է զգեստ «եկեղեցական հանդերձ» > Սչ. ըսգ՝եսդ՝, որի մեջ ս մի կողմից դ՛, մյուս կողմից վերջավանկի ս ձայնի ազդեցությամբ է:

— Բառամիջում գ ընդհանրապես մնում է գ. օր.

ազատել > Սչ. ազագել, իհ. ազագելու
բզզալ > Սչ. բբզբբզալ
գազան > Սչ. իհ. գ՛ազան
գաւազան > իհ. գ՛աւազան
գերեզման > Սչ. քէրէզման
դիզել > Սչ. դ՛էզել
զզուիլ > Սչ. զբզվիլ
լեզու > Սչ. իհ. լիզու
լիզել > Սչ. լբզել, իհ. լբզելու
հազար > Սչ. իհ. հազար
մէկ-զմէկ > Սչ. մէգբզմէգ
վազել > Սչ. վազել
վզնոց > Սչ. վբզնոց «հմայակ»

— Երկու բառ ունենք, որոնց մեջ գ, խլանալով հաջորդ բաղաձայնի ազդեցությամբ, դառնում է ա. սրանք են՝

ազգ>Սչ. ասք «ազգական»

անզգամ>Սչ. անըսքամ (կնոջ համար):

— Բառավերջում գ մնում է գ. օր.

բոզ>Սչ. բ'օզ

դէզ>Սչ. դ'էզ

եզն>Սչ. լհ. յէզ

ընկոյզ>Սչ. ունգուզ, լհ. օնգուզ

թիզ>Սչ. թիզ

խոզ>Սչ. լհ. խօզ

կուզ>լհ. գուզ

հազ>Սչ. հազ

մազ>Սչ. լհ. մազ

ողկոյզ>Սչ. գուզ

վիզ>Սչ. լհ. վիզ

քարոզ>Սչ. լհ. քարօզ

— Միայն երազ բառի վերջածայնը դառնալով ձ, ստացվում է լհ. էրաձ, սակայն Սչ. մնում է յէրազ. իսկ բայական ձևը՝ երազել, տալիս է Սչ. էրձել, լհ. երձէլէլու:

— Քանզ նախադրության վերջածայնը դառնալով ց և կըց՝ վելով արմատին, ստացվում է քանց:

Թ

— Բառասկզբում ք մնում է ընդհանրապես ք. օր.

թանկ>Սչ. Ռմ. քանգ

թաթաւ «անձրեւ»>Սչ. Ռմ. քաթաւ, լհ. քաթավ

թաղել>Սչ. թաղել, լհ. թաղէլու

թամբ>Սչ. լհ. թամբ

թաց>Սչ. լհ. թաց

թեթեւ>Սչ. թէթեֆ, լհ. թէթև

թել>Սչ. թել, լհ. թէլ

թթու>Սչ. թըթու, լհ. թութու

թողուլ>Սչ. թօղուլ, լհ. թօղէլու

թուղթ>Սչ. լհ. թուխթ

թռչիլ>Սչ. թռչել, լհ. թռէլու և ալլն:

— Մի քանի բառ ունենք, որոնց մեջ ք նախաձայնը Սու-
չավայի և լեհահայ բարբառում վերածվում է դ'-ի. այսպես են՝

թանձր>լհ. քանձր, բայց Սչ. դ'քանձր, որից էլ Սչ. դ'քան-
ձանալ «թանձրանալ»

թոռ>Սչ. թոռ, բայց լհ. դ'ֆուր, դ'ֆր

թուիլ>Սչ. ութֆէնալ, բայց լհ. գուդ'վի ինձի «ինձ այն-
պես է թվում».

թըջել>լհ. թըրջ'էլու, բայց Սչ. դ'ըրջ'ել, որով տարբերու-
թյուն է գրվում քոշել և քըջել համանունների միջև:

Թվում է թե այստեղ է պատկանում նաև Հնդ. դ'աբար
«դատարկ», որից դ'աբրուրյուն «դատարկություն» (ՀԱ, 1897,
էջ 281), եթե սրանք ծագում են հյ. թափուր բառից: Այս գեպքում
փ բաղաձայնն էլ վերածված պիտի լինի բ-ի:

— Բառամիջում ք ֆիում է ընդհանրապես ք. օր.

աթոռ>Սչ. աթոռ. լհ. աթըռ

գթալ>Սչ. քթալ

երթալ>Սչ. էրթալ, լհ. էթալու

զարթուն>Սչ. զարթուն

թաթալ>Սչ. Ռմ. թաթալ, լհ. թաթալ «անձրև»

թեթև>Սչ. թէթեֆ, լհ. թէթև

թթու>Սչ. թըթու, լհ. թութու

կանթեղ>Սչ. գանթեղ

կթել>Սչ. գթել, լհ. գըթէլու (կաթ)

մորթել>Սչ. մօրթել, լհ. մօրթէլու

փաթաթել>Սչ. փաթել

փնթի>լհ. փընթի

օթել>լհ. օթէլու «գիշերը անց կացնել»:

— Առանձնապես պետք է հիշել -ուրիւն մասնիկը, որով
կազմվում են բազմաթիվ բառեր. ինչ.

երկայնութիւն>լհ. էրգանութին

ընկերութիւն>լհ. ընգէրութին

իշխ(ան)ութիւն>լհ. իշխութին «համարձակութիւն»

լայնութիւն>Սչ. լանություն, լհ. լանութին

լեղիութիւն>Սչ. լէղություն

ձանրութիւն>ԼՅ. ձանդրություն, ԼՅ. ձանդրութին
կարողութիւն>ԼՅ. գարնութին
համբերութիւն>ՍՀ. համբ'երություն, ԼՅ. համբ'իրութիւն
և այլն և այլն:

— Նկատելի է, որ հաճախ Հանուշը լեհահայ բարբառում
լսում է դ'= է այնտեղ, ուր հայերենը ունի ք. օր.

զարթնուլ>ՍՀ. զարթընել, ԼՅ. զարդ'ըվէլու
երեքշաբթի>ՍՀ. իրեքշաբթի, ԼՅ. իրեքշաբ'դ'ի
երկուշաբթի>ՍՀ. էրգուշաբթի, ԼՅ. էրգուշաբ'դ'ի
քթուիլ>ՍՀ. քըթֆել, ԼՅ. քէդ'վըդվէլու.

այսպես և բառավերջում. ինչ.

գագաթն>ԼՅ. գ'աքադ'ը
գաւաթ>ԼՅ. գ'ավաթ, ԼՅ. գ'ավադ'
հաւկիթ>ՍՀ. հաւգիթ, ԼՅ. հաւգիդ!
հիւթ>ԼՅ. հուդ' «խոնավ», որից էլ հուդ'ութին «խոնավու-
թյուն»
որթ, հորթ>ՍՀ. ֆօրթ, ֆըրթ, ԼՅ. ֆըրդ'
ուրբաթ>ՍՀ. ուրբ'ադ', ԼՅ. ուրբ'աթ
ջրվաթ>ՍՀ. ջ'էրէվադ' «մեզ»
սովորոյթ-ք>ՍՀ. սօրվուդ'դ', ԼՅ. սօրվուդ'ք, նշանակում են
«ուսում», «ինչդեռ գրականում բառը նշանակում է
«վարժություն»:

— Բառամիջում թ+ս ձայնախումբը Սուշավայի բարբա-
ռում դառնում է ց, թեև լեհահայ բարբառում ֆնում է անփո-
փոխ: Այսպես են՝

վաթսուն>ՍՀ. վացուն, ԼՅ. վաթսուն
ութսուն>ՍՀ. ուցուն, ԼՅ. ութսուն:

— Խ հնչումից հետո գտնված ք ձայնը դառնում է դ'. այս-
պես՝

յաղթել>ՍՀ. էխդ'ել
եօթն>ՍՀ. ԼՅ. օխդ'ը
եօթնասուն>ԼՅ. օխդ'անասուն, բայց ՍՀ. օխթանասուն
այսպես և թղթել>ՍՀ. քըխթել «թղթից տետրակ շինել»:

— Բառավերջում գտնված ք մնում է ք. օր.

աղօթք>Սչ. և. աղօթք
ամօթ>Սչ. և. ամօթ
արծաթ>Սչ. և. արձաթ
գութ>Սչ. գ'ութ
երկաթ>Սչ. յերգաթ, և. երգաթ
թուղթ>Սչ. և. թուխթ
խանութ>Սչ. խանութ
կաթն>Սչ. գաթը, և. գաթ
կոթ>Սչ. գօթ
ձկոյթ>Սչ. ջգութ
մութ>Սչ. և. մութ
շարաթ>Սչ. և. շար'աթ
ութ>Սչ. և. ութը
քիթ>Սչ. և. քիթ:

Մնացյալ օրինակները տես նախորդ հատվածում.

Ժ

Ամեն գիրքով էլ ժ մնում է ժ.

— Բառասկզբում՝

ժամ>Սչ. և. ծամ «եկեղեցի»
ժամակոչ>Սչ. ժանգոչ «ժամհար»
ժամանակ>Սչ. և. ժամանագ
ժանգառի>և. ժանդառի
ժառանգ>Սչ. ժառանգ
ժողովուրդ>Սչ. և. ժողովուրդ:

— Բառամիջում՝

արժան>Սչ. աժան
արժեւ>Սչ. աժեւ, և. աժէ
բաժանեւ>Սչ. բ'աժնեւ, և. բ'աժնէլու
բաժին>Սչ. բ'աժին
գժոխք>Սչ. դ'ըժօխք
գժուար>և. դ'իժար
ժում>և. նիժումըս «այժմ»

- շարժել > Սչ. շարժել
 շարժում > Սչ. շարժում «երկրաշարժ»
 ուժով > Սչ. ուժով
 պատժել > Սչ. բաղժել
 վարժապետ > Սչ. վարժաբեղ
 վարժիկ > Սչ. վարժըվել:
 — Բառավերջում՝
 կարժ (թելի) > Լհ. գաժ
 ոյժ > Սչ. Լհ. ուժ
 պատիժ > Սչ. Լհ. բաղիժ
 միայն վատոյժ բառի մեջ (> Լհ. վաղուշ) ժ գարձել է շ
 (խլացման օրենքով):

Լ

- Ամեն գիրքով էլ մնում է Լ. ինչ.
 — Բառասկզբում՝
 լալ > Սչ. լալ, Լհ. լալու «լաց լինել»
 լայն > Սչ. Լհ. լան
 լաց > Սչ. Լհ. լաց
 լեզու > Սչ. Լհ. լիզու
 լեղի > Սչ. Լհ. լեղի (ած. 𐎎𐎡 Գյ.)
 լեառն > Սչ. Լհ. լէռ
 լի > Սչ. լինքք, Լհ. ըլինք
 լիզու > Սչ. լրզել, Լհ. լրզելու
 լծել > Սչ. լրծել, Լհ. լրծելու
 լոյս > Սչ. Լհ. լուս և այլն:
 — Բառամիջում՝
 ալիւր > Սչ. Լհ. ալուր, Ռմ. լուր
 ածիւել > Սչ. ածըլել, Լհ. ածէլիւ
 արեւելք > Սչ. Լհ. արեվելք
 աւելել > Սչ. ավըլել, Լհ. ավուլելու
 բաղլայ > Սչ. Լհ. բ'ազլա
 գլխաւոր > Սչ. Լհ. գ'ըլխավոր
 գլուխ > Սչ. գ'լուխ, գ'լօխ, Լհ. գ'օլօխ
 ելանել > Սչ. յէլել, Լհ. հլելու

խաղիւն>Սչ. Լհ. խաղիւն

հայելի>Սչ. Լհ. հայի

հեծեաւոր «զինվոր»>Սչ. հէծելվոր, Լհ. հէծելվոր

ոլորել>Սչ. օլօրել

սալոր>Սչ. սալօր, Լհ. սալրօր

փայլիլ>Սչ. փայլել, Լհ. գի փայլէ «փայլատակում է»

քայլել>Սչ. քալել, Լհ. քալի գյ. «քայլվածք» և այլն.

— Բառավերջում՝ (օրինակները ամբողջական են).

այլ>Սչ. Լհ. ալ

աւել (գյ.)>Լհ. ավել

առ-աւել, աւելի>Սչ. Լհ. ավելի

գայլ>Սչ. Լհ. գ'ալ

գուլ>Սչ. գ'օլ «ապակու վրայի շոգիւն»

գուլ>Սչ. գ'ուլ «բուլթ»

թել>Սչ. թել, Լհ. թիլ

թոյլ>Սչ. թուլ

իլ (մանեւու)>Սչ. Լհ. իլիգ

խուլ>Սչ. Լհ. խուլ

կաթիլ «կայլակ»>Սչ. գաթիլ

կուլ տալ>Սչ. գուլ դալ

հալ>Սչ. հալ «հիհար»

հեծեալ «զորաբանակ»>Սչ. Լհ. հեծել

մեռեալ>Սչ. մէռել

շիլ>Սչ. շիլ

ուլ>Սչ. Լհ. ուլ

սխալ>Սչ. սքիալ

տալ (գյ.)>Սչ. դալ, սեռ. դալօշ

տարգալ (գդալ)>Լհ. դ'իգ'ալ:

— Միայն շնորհակալ բառն է, որ թեւ Սչ. լինում է շնորհա-
գալ, բայց Լհ. վերջածայնի կորուստով դառնում է շնահագա
որից էլ շնահագան իմ «շնորհակալ եմ»:

և

Մնում է ամեն գիրքով էլ իս. ինչ.

— Բառասկզբում՝

խաբել>Սչ. խափել, Լհ. խափելու

խաղալ>Սչ. խաղալ, Լհ. խաղալու

խառնել>Սչ. խառնել, և՛. խառնելու
 խելք>Սչ. խելք, և՛. խելք
 խեղդել>Սչ. խրխրել, և՛. խրխրելու
 խնձոր>Սչ. և՛. խրնձոր
 խող>Սչ. և՛. խօզ
 խոտ>Սչ. և՛. խօզ
 խուլ>Սչ. և՛. խուլ
 խստոր>Սչ. սրխդ՝օր, և՛. սրխդ՝ըր և այլն:

— Բառամիջուկ

աշխատել>Սչ. աշխադել, և՛. աշխադելու
 աշխարհ>Սչ. և՛. աշխարք
 բախտ>Սչ. բախդ «ամուսին»
 բաշխել>Սչ. բաշխել, և՛. բաշխելու
 գլխաւոր>Սչ. և՛. գլխավօր
 դժոխք>Սչ. դժօխք
 թաթախել>Սչ. թաթխել
 իշխել «համարձակել»>Սչ. իշխել, և՛. իշխելու
 ձախել>Սչ. ձախել, և՛. ձախելու
 ծխել>և՛. ձրխելու
 կախել>Սչ. գախել, և՛. գախելու
 ոչխար>Սչ. և՛. օչխար
 ուխտ>Սչ. ուխդ՝
 սլատասխան>Սչ. բաղասխան
 սխալ>Սչ. սրխալ
 տախմակ>Սչ. և՛. դախդ՝ագ
 փախչիլ>Սչ. փախչել, և՛. փախչելու և այլն:

— Բառավերջում (դնում եմ բոլոր օրինակները).

գլուխ>Սչ. գլուխ, գլօխ, և՛. գլօլու
 թուխ>Սչ. թուխ «գնչու»
 կանուխ>Սչ. գանուխ, և՛. գանուխ նշ. «առավոտ»
 մուխ>Սչ. և՛. մուխ «ծուխ»
 շաղախ>և՛. շախ
 ուրախ>Սչ. և՛. ուրախ
 սեխ>Սչ. սեխ
 սոխ>Սչ. սօխ, և՛. սրխ
 փոխ>Սչ. փօխ
 քաջախ Սչ. քաջախ:

— Միայն հյ. ջուխտ «զույգ» բառը պրս. *جفت* ձևի խա-
չաձևամբ դարձել է Սչ. ջուֆդ՝ և Լհ. ջուվդ՝, որի մեջ խ դար-
ձել է ֆ, վ.—նախաձայնն էլ պարսկականի նման դարձել է ջ
(յ), փոխանակ ըստ օրինի վերածվելու ջ-ի:

Մ

— Բառասկզբում ծ դառնում է ձ. օր.

ծախել > Սչ. ձախել, Լհ. ձախելու

ծածկել > Սչ. ձածգել, Լհ. ձածգելու

ծանր > Սչ. ձանդրը, Լհ. ձանդր

ծառ > Սչ. Լհ. ձառ

ծառայ > Սչ. Լհ. ձառա

ծեր > Սչ. ձեր, Լհ. ձէր

ծեփել > Սչ. ձեփել, Լհ. ձէփելու

ծիծ > Սչ. ձիձ, Լհ. ձէձեր

ծիծաղ > Սչ. ձրձաղ, Լհ. ձիձախ

ծծել > Սչ. ձրձել, Լհ. ձրձելու

ծնողք > Սչ. ձրնօխք, Լհ. ձէնօխք

ծով > Սչ. Լհ. ձով

ծուկ > Սչ. Լհ. ձուկ և ալն:

— Իբր բացառություն ունենք երկու բառ՝ ծաղկազարդ >
Սչ. զաղզազարդ՝ և ծնծղայ > Սչ. ցրնծա: Առաջինում նախաձայն
ծ դարձել է զ՝ հետևելով երկրորդ եզրի նախաձայն զ-ին (ճիշտ
ինչպես ուրիշ բարբառներում նման ձևով ծառզարդար դարձել է
զարզարդար): Երկրորդի մեջ նախաձայն ծ դարձել է ց՝ ազդե-
ցությամբ կամ նմանությամբ ցնծա բայի, բայց այստեղ ամ-
բողջ բառը ձևափոխվելով դարձել է ցրնծա «ուրախացիր»:

— Բառամիջում ծ դառնում է նմանապես ձ. օր.

ածիլել > Սչ. աձրլել, Լհ. աձլլելու

արածել > Սչ. արձել, Լհ. արձլլու

արծաթ > Սչ. Լհ. արձաթ

ընծայել > Սչ. ընձայել, Լհ. ընձայլլու «ծնիլ մարդու»

լծել > Սչ. լրձել, Լհ. լրձլլու

ծիծաղ > Սչ. ձրձաղ, Լհ. ձիձախ

ծծել > Սչ. ձրձել, Լհ. ձրձլլու

կայծակն>Սչ. Լն. գաձագ
կծու>Սչ. գըձու, Լն. գուձու
հեծեալ>Սչ. Լն. հէձել
հեծելաւոր>Սչ. հէձէլվոր, Լն. հէձէլվըր
մածուն>Սչ. Լն. մաձուն
ստեղծել>Սչ. ըսդեղձել, Լն. ըսդ'էդձէլու և այլն:

— Այն օրենքը, որով ծ ձայնը գտնվելով ուրիշ բաղաձայնից առաջ վերածվում է գ-ի ուրիշ բարբառներում (օր. ծածկել>Պլ. ձագգէլ), գոյություն չունի այստեղ: Սուչավայի և Լեհահայ բարբառում սովորական կարգով ասվում է՝

ծածկել>Սչ. ձաձգել, Լն. ձաձգէլու
խածանել>Սչ. խաձնել
խծպել>Սչ. խըձբել, Լն. խըձբէլու
կծկել>Սչ. գըձգել, Լն. գըձգէլու
ծեծել>Սչ. փոխ. ձէձգըվել
հեծանիլ>Սչ. հէձնել, Լն. հէձնէլու
մեծանալ>Սչ. մէձնալ, Լն. մէձնալու
հեծկլտալ>Սչ. հէձգըդալ
կծուիլ>Սչ. գըձվել կծու համ ստանալք.

նույնիսկ ունենք Սչ. գըձմըքել, որ առաջացած է կծմքել ձևից ավելին տես Գլոս. բռ. կսմքտել բառի տակ):

— Բառավերջում ծ դառնում է նույնպես ձ, որ բառի վերջում գտնվելու պատճառով կարող է խլանալ և լսվել իբր ց, ձ', բայց հենց որ հղումվի, կդառնա սովորական ձ. օր.

այծ>աց, սեռ. աձի, աձու, Լն. աձ, աձեր
աստուած>Սչ. ասվաձ, Լն. ասդ'վաձ
անիծ>Սչ. Լն. անիձ
գիծ>Սչ. գ'իձ
գործ>Սչ. գ'օրձ
ծիծ>Սչ. ձիձ', սեռ. ձըձի, Լն. ձէձեր
կայծ>Սչ. Լն. գայձ
կսկիծ>Սչ. գըսգիձ
ծեծ>Սչ. ձեձ
մեծ>Սչ. Լն. մեձ
ցած>Սչ. ցաձ, Լն. ցաձ'
քած>Սչ. քաձ «անամոթ աղջիկ»
յանկարծ>Սչ. հանգարձ

անցյալ դերբայի ~ած վերջավորութիւնը, ինչ. Սչ. քախցած,
լհ. գ'ախցած և այլն. նմանապէս՝

անդամալոյծ>Սչ. անթամալուց
անէծք>Սչ. անէցք
բռնուածք>լհ. բ'ըռնված'ք
կուրծք>լհ. գըռւծ'ք:

Կ

— Բառասկզբում դառնում է գ. օր.

կաթն>Սչ. գաթը, լհ. գաթ
կակուղ>Սչ. լհ. գագուղ
կաղին>Սչ. լհ. գաղին
կանաչ>Սչ. լհ. գանանչ
կանգնիլ>Սչ. գաննել, լհ. գաննելու
կանուխ>Սչ. լհ. գանուխ
կապոց>Սչ. գաբօց, լհ. գաբըց
կարել, կարենալ>Սչ. գարնալ, լհ. գարնալու
կարկուտ>Սչ. լհ. գարգուդ
կարմիր>Սչ. լհ. գարմեր
կերակուր>Սչ. գերագուր, լհ. գիրագուր
կթել>Սչ. գըթել, լհ. գըթելու
կնիկ>Սչ. լհ. գընիգ
կով>Սչ. լհ. գօվ
կորեակ>Սչ. լհ. գօրեգ
կրակ>Սչ. լհ. գրրագ
կօշիկ>Սչ. գօշիգ, լհ. գօշիգ':

— Երկու բառ միայն ունենք, որոնց մեջ նախաձայն կ.
փոխանակ դառնալու գ, հաջորդ վանկի ք, դ' ձայների ազդեցու-
թյամբ դառնում է գ'. սրանք են՝

կարգել>Սչ. գ'արքիլ, լհ. գ'արգ'ելու
կարգալ>Սչ. գ'արդ'ալ, լհ. գ'արդ'ալու:

— Բառամիջում ընդհանրապէս դառնում է նույնպէս գ. օր.

ականջ>Սչ. լհ. անգաջ
ակռայ>Սչ. լհ. ագռա

բակլայ>Սչ. Լն. բ'ազլա
 երեկոյ>Սչ. Լն. իրգուն
 երկաթ>Սչ. յէրգաթ, Լն. էրգաթ
 ընկոյգ>Սչ. ունգուգ, Լն. օնգուգ
 լուսնկայ>Սչ. լուսնիկա, Լն. լուսնըգան
 կերակուր>Սչ. գերագուր, Լն. գիրագուր
 հաւկիթ>Սչ. հաւգիթ, Լն. հաւգիդ
 հեծկլտալ>Սչ. հէձգըգալ
 յստակել>Սչ. ըսդ'ըգել
 շիտկել>Սչ. շըդգել, Լն. շիդգէցնէլու
 սղարկել>Սչ. խըրգել, Լն. խըրգէլու
 պատկեր>Սչ. բադգեր, Լն. բադգէրք
 սատակիլ>Սչ. սադգել և ալլն:

Այս բոլոր օրինակներում կ'գտնվում է երկու ձայնավորի միջև և կամ թրթռուն բաղաձայնից հետո:

— Խուլ բաղաձայնի մոտ կ'գտնուի է հաճախ գ' կամ ք, բայց երբեմն էլ մնում է գ. այսպես՝

չ-ից հետո.—Սչ. ամբնչգոդ, ամբնչքըդ. ուրիշ օրինակ չկա.

խ-ից հետո.—վախկոտ>Սչ. վախքըդ
 ճրագկալ>Սչ. ջիրախգալ, Լն. ջիրախգ'ալ:

ռդկոյգ բառի մեջ, առաջին վանկը ընկած լինելով, մնում է Սչ. գուգ.

ց-ից հետո.—մուրացկան>Սչ. մուրացգան
 տղացկան>Սչ. դըղօցգան
 երիցակին>Սչ. իրիցգ'ին
 արձակել>Սչ. արցագել, Լն. ացգ'ըրէլու.

առաջին երկուսի մեջ ունենք գ, վերջի երկուսի մեջ գ':

շ-ից հետո.—կօշկակար, կրճատ կօշկար>Լն. գօշգ'ար. ուրիշ օրինակ չկա:—աշակերտ բառը չի կորցնում միջին ա ձայնը:

ս-ից հետո.—եպիսկոպոս>Սչ. յէրիսգօբօս
 կսկիծ>Սչ. գըսգիձ, բայը՝ գըսգըձել:

Այս բառերի մեջ գ մնում է. կիսակատար, այժմ կիսկատար բառի մեջ ա հոդակապը պահվելով (Սչ. գեսագադար) սկ հանդիպումը տեղի չի ունեցել. այսպես նաև սկիհ>Սչ. սիգի բառի

մեջ՝ ներմուծված ի ձայնավորի պատճառով:—Ոսկեղէն>Սչ. վօս-
գեղէն բառի մեջ գ մնում է (ենթադրում եմ, որ գրական փոխա-
ռություն է), իսկ ոսկի բառի և նրա ածանցների, ինչպես նաև
մյուս սկ ունեցող բոլոր բառերի մեջ սկ դառնում է սգ՝ կամ
սք. այսպես՝

ոսկի>Սչ. վօսգ՛ի, Սչ. Լն. օսգ՛ի

Սչ. օսգ՛ըրել, վօսգ՛ըրել «ոսկեջրել»

Սչ. օսգ՛ըրած, վօսգ՛ըրած «ոսկեջրած»

ոսկը>Սչ. օսգ՛օր, Լն. օսգ՛ըր

հասկանալ>Սչ. հասգ՛ընալ, պտճ. հասգ՛ըցնել, Լն. հասգ՛ը-
նալու

ուսկից>Լն. ուսգ՛ից

սկեսուր>Սչ. քսքեսուր, Լն. սգ՛էսուր

պակաս>Սչ. Լն. քագաս բառի մեջ գ մնում է, իսկ պակա-
սիւ>Սչ. քագ՛սել, Լն. քագ՛սելու բառի մեջ հաջորդ ա-ի պատճա-
ռով դառնում է գ՛:

մէկդի «մի կողմ»>Սչ. մեգ՛թի բառի մեջ ք-ի պատճառով
գ դարձել է գ՛, իսկ ճանկոտել>Սչ. ջանքըռթել բառի մեջ կմ
նույն պատճառով և կամ սաստկության համար գ դարձել է ք:

— Անկանիւ>Լն. ըննելու բառի մեջ նկն խումբը սղվելով
տվել է զույգ ն, ճիշտ ինչպես կանգնիւ>Սչ. գաննել, Լն. գան-
նելու:

Գրք. բոկ «բոկոտն» դառնում է նախ -իկ փաղաքշական
մասնիկի հավելումով բոկիկ, ապա միջին կ նախաձայնի ազդե-
ցությամբ՝ բ, որով լինում է Սչ. Լն. բօբիգ:

— Բառավերջում կ ձայնի սովորական ձևն է գ. օր.

աղէկ>Սչ. Լն. աղէգ «լավ»

արեզակն>Սչ. արեքագ, Լն. արիգ՛ագ

բամբակ>Սչ. Լն. բ՛ամբագ

բարակ>Սչ. Լն. բ՛արագ

բոկ>Սչ. Լն. բ՛օբիգ

գդակ>Սչ. Լն. գ՛ըդագ

գիրկ>Սչ. գի՛րրգ

դանակ>Սչ. Լն. դ՛անագ

եղանակ>Սչ. յէղանագ

զաւակ>Սչ. զաւագ, Լն. զավագ

թանկ>Սչ. Ռմ. թանգ
ծածուկ>Սչ. ձաձուգ «ծածկոց»
ծունկ>Սչ. Լն. ձունգ
ձուկն>Սչ. ցուգը, Լն. ձուգ
շալակ>Լն. շալագ
շիտակ>Սչ. Լն. շիդագ
պատիկ>Սչ. Լն. բիզդիգ
պտուկ>Սչ. բդուգ, Լն. բուդուգ
պոռնակ>Սչ. բըրունգ «շուրթն»
սնդուկ>Սչ. սընդուգ, Լն. սունդուգ
ստակ>Սչ. ըսդ'ագ
բողկ>Սչ. բ'օխգ, Սչ. Լն. բ'ըխգ և այլն:

— Ստկայն երբեմն էլ իբրեւ վերջաձայն՝ տատանվում է
զ, գ՝ ձայների միջև. այսպես են՝

աղջիկ>Սչ. ախչիք, սեռ. ախչիգան, Լն. ախչիգ
երէկ>Սչ. էրէգ, Լն. էրէգ՝
զանգակ>Սչ. զանգագ՝, սեռ. զանգագին, Լն. ժանգագ
զատիկ>Սչ. զադիգ, Լն. զադիգ՝
կլորիկ>Սչ. գօլօրիգ (ած.), իսկ Լն. գօլօրիգ՝, գոլլուրիգ՝
«գետնախնձոր»
կոկ (կոկիկ)>Սչ. գօգ, Լն. գվըգ՝
կօշիկ>Սչ. գօշիգ, Լն. գօշիգ՝
հետեակ>Լն. հէդէվագ՝
յստակ>Սչ. իսդագ, Լն. իսդ'ագ՝
նապաստակ>Լն. լարէսդ'ագ՝
պարտակ>Լն. բարդագ՝ «գաղտնի»:

— Հետաքրքրական է այն ձայնական երևույթը, որ ցույց
է տալիս լեհահայ բարբառը՝ բառավերջի կ գարձնելով երբեմն
դ. այս ձայնափոխության պատճառը անհայտ է. եղած օրինակ-
ներն են՝

մուկն>Սչ. մուգ, Լն. մուդ
մուշտակ>Լն. մըշդ'ախ
շապիկ>Սչ. շաբիգ, Լն. շաբիգ:

Սրանց մոտիկ է նմնուդ, նմնուկ բառը, որ տարօրինակ
ձևափոխությամբ դարձել է Սչ. ջուճուլուխ, Լն. ջուլուճուխ. վեր-
ջինս ունի ընդհանուր «թռչուն» նշանակությունը: Ուրիշ բար-

բառներից միակ ձևը, որ մոտենում է սրանց, կարելի է համարել Ագլ. Զդ. ճընջուխ, որի վերջածայն խ՝ խլացած ձևն է ղ-ի:

— Անսովոր ձև է նաև եղկ ռգոր՝ բառը, որ այստեղ դարձել է Սչ. յէղմ. ուրիշ բարբառներում չկա նման ձև, բայց կա Կր. էղկումէղկ = Ախց. յէղկումէղկ, որ բարդված է եղկ + մեղկ բառերից: Այս բանը թույլ է տալիս մեզ կարծել, թե եղմ ձևն էլ առաջացած է մեղմ բառի նմանությունով. մի քիչ հնից ունենք միայն եղմիկ «մեղմիկ»։ Բառ. Երեմ., էջ 86:

Հ

— Բառակցքում և մեում է ընդհանրապես և. հիշենք մի քանի օրինակ.

հազալ > Սչ. հազալ, Լհ. հազէլու
հազար > Սչ. Լհ. հազար
հալել > Սչ. հալել, Լհ. հալէլու
համար > Սչ. Լհ. համար «վասն»
հայելի > Սչ. Լհ. հայլի
հայր > Սչ. Լհ. հար
հարիւր > Սչ. Լհ. հարուր
հարսանիք > Սչ. Լհ. հարսնիք
հերու > Սչ. հէրու, Լհ. հէրուս
հինգ > Սչ. Լհ. հինգ
հպարտ > Սչ. Լհ. հաբարդ
հօրեղբայր > Սչ. Լհ. հօբ'ար
հում > Սչ. Լհ. հում և այլն:

— Միավանկ բառերի մեջ, երբ և գտնվում է ո ձայնավորից առաջ, դառնում է ֆ. այսպես են՝

հոդ > Սչ. Ռմ. ֆըդ (բայց և հօդ)
հոտ > Սչ. հօդ, ֆըդ, Լհ. ֆըդ
հորթ, որթ > Սչ. ֆօրթ, ֆըրթ, Լհ. ֆըրդ:

(հոգի բառը բազմավանկ լինելով չի կրել փոփոխություն. հոգ գոյությունն չունի բարբառիս մեջ, իսկ հօվ չի փոխված վ-ի պատճառով): Հոր, թեև գոյությունն չունի բարբառիս մեջ, բայց նրանից են Սչ. ջ'ըրֆըր, Լհ. ջ'իշվըր:

— Հեղ «անգամ» բառը Սուչավայի բարբառում անփոփոխ է, իսկ լեհահայոց բարբառում դարձել է յէղ, օր. էրզու յէղ «երկու անգամ», իրեք յէղ «երեք անգամ»:

— Բառամիջուում հ մուում է նույնպես հ. օրինակներից մի մասը գրականից է փոխառյալ. ինչ.

անա՛ > Սչ. անա

անադին՝ > Սչ. անաքին «շատ»

անուելի՛ > Լհ. անուէլի «սոսկալի»

թագունհի՛ > Սչ. թաքունհի (անուն)

թերեհաւատ > Սչ. թերահավադ

քահանայ > Սչ. քահանա, Լհ. գ'ահանա.

մի մասը կազմված է հ-ով սկսվող բառերից. ինչ.

անհամ > Սչ. անհամ

անհամբեր > Սչ. անհամբեր

կնքահայր > Սչ. գընգըհար

սանահայր > Սչ. սանըհար.

իսկ անկախ բառերից հիշելի են՝

գահել (միջ. հյ.) > Լհ. գ'ահէլու «ծեծել»

սահիլ > Սչ. սահել

պահել > Սչ. բահել, Լհ. բահէլու

օրհասարակ > Լհ. օրհասըրագ' «կեսօր»

շնորհակալ > Սչ. շնօրհագալ, Լհ. շնահագա

շնորհաւոր > Սչ. շնօրհավօր:

— Մի քանի բառի մեջ հ թույլ հնչվելով կորչում է. այսպես են՝

խոնարհութիւն > Լհ. խօնարութին

խոնարհիլ > Սչ. խօնարել

ջրհեղեղ > Սչ. ջ'ըրէղեղ.

իսկ ամպփոխանի բառի մեջ պ և հ միանալով ձևանում է փ (Սչ. ամփօվանի), հմմտ. գրք. սեպհական > սեփական:

— Երկու բառ ունենք, որոնց մեջ սովորական կարգից շեղվում է հ ձայնը. սրանք են՝

օրհնել > Սչ. օրխնել, ուր հ > խ

ջրհոր, ուր հ թեև մոււմ է Սչ. ջ'ըրհօր ձևի մեջ, բայց Լհ.

իջվըր ձևի մեջ դառնում է վ:

— Բառավերջում և կարճ բառերի մեջ մնում է. այսպես՝
 ան>Սչ. և. ան
 ման>Սչ. և. ման
 շան>Սչ. և. շան
 ջան>Սչ. ջան
 ագան>Սչ. ագան
 դեն>բցո. և. թիկն «կոզմից»:

Ուրիշ դեպքերում, հատկապես ր-ից հետո և ք-ից առաջ և կորչում է. ինչ.

խոնարհ>Սչ. և. խոնար
 աշխարհ-ք>Սչ. և. աշխարք
 շնորհ-ք>Սչ. շնորք
 պահք, պահս>Սչ. բաս
 սկիհ>Սչ. սիգի
 ճանապարհ>Սչ. և. ջամփա, որից և ճանապարհորդ>Սչ.
 ջամփորթ, և. ջամփորդ:

Հունգարահայ բարբառում բառասկզբի և դարձել է իս՝
 հեւք>խեւքս բառի մեջ (ՀԱ, 1897, էջ 304).

2

— Բառասկզբում, եղած օրինակների մեջ, ձ դառնում է միշտ լեհահայ բարբառում ձ', իսկ Սուչավայի բարբառում՝ մերթ ձ, մերթ ց, առանց որոշ կանոնի: Այսպես՝

ձ' ձայնով

ձագ>Սչ. և. ձագ՝
 ձայն>Սչ. և. ձան, և. ձէնէլու «կանչել»
 ձեռք>Սչ. ձէռք, և. ձէռ.

ց ձայնով

ձայնաւոր>Սչ. ցայնավոր «տիրացու»
 ձգել>Սչ. ցքել
 ձև>Սչ. ցել
 ձեւել>Սչ. ցէվել (զգեստը)
 ձի>Սչ. ցի, և. ձի
 ձիաւոր>Սչ. ցիավոր, և. ձիավոր

ձմեռն>Սչ. ցըմէն, իհ. ձ'ըմէն

ձուածեղ>Սչ. ցելածեղ

ձուկն>Սչ. ցուգը, իհ. ձ'ուգ:

— Բառամիջուոմ անկախ օրինակ չկա. գտնվում է միայն
ն և ր բաղաձայններից հետո:

Այս դեպքում ն-ից հետո դառնում է ձ. այսպես են՝

անձրե>Սչ. անձրեմ

թանձր>Սչ. դ'րանձը, իհ. թանձր

թանձրանալ>Սչ. դ'րանձանալ

խնձոր>Սչ. խընձօր, խընձըր, իհ. խընձըր

նախանձիլ>Սչ. նախանձել

պապանձիլ>Սչ. բարընձել:

— Բառամիջուոմ ր-ից հետո դառնում է ց. օր.

արձակել>Սչ. արցագել, իհ. արգ'ըրէլու

բարձր>Սչ. բ'արցըր, իհ. բարձ'ր

բարձրանալ>Սչ. բ'արցրանալ

համարձակ>Սչ. համարցագ

վարձել>Սչ. վարցել

փորձել>Սչ. փօրցել

փորձանք>Սչ. փօրցանք:

Միայն վրձին>Սչ. վըրձին բառի մեջ ձ ֆիգուր է ձ և ոչ թե
դառնում է ց. դերձան բառն էլ լինում է իհ. դ'էրձ'ան.— իսկ դար-
ձուցանել>իհ. դ'արցընէլու բառի մեջ ր-ից հետո ունենք ց, որ
կարող ենք բացատրել թե դարձ(ուցա)նել և թե դար(ձու)ցանել:

— Բառավերջում անկախ է միայն օձ>Սչ. օց, իհ. օձ' ուր
տալիս է ձ>ց=ձ':

Մյուս օրինակներում ձ գտնվում է նմանապես ռնգակա-
նից կամ ր բաղաձայնից հետո:

Առաջին դեպքում ունենք ց կամ ձ.

բրինձ>Սչ. բ'րինց, իհ. բ'րինձ

նախանձ>Սչ. նախանց

պղինձ>Սչ. բըղինձ, իհ. բըղընձ

տանձ>Սչ. իհ. դանձ:

Երկրորդ դեպքում, քից հետո ունենք $g = \delta'$. այսպես՝
 բարձ > Սչ. բարց, Լհ. բարձ՝
 վարձ-ք > Սչ. վարցք
 փորձ > Սչ. փորց՝

Ղ

Բառասկզբում չկա ղ և եթե լիներ պիտի տար խ, ինչպես
 ցույց են տալիս՝

ուղարկել > Սչ. խըրգել, Լհ. խըրգելու
 ուղղորդել > Լհ. խօրդ'ելու:

Բառամիջում, երկու ձայնավորի միջև ղ մուտ է դ. օր.

աղի > Սչ. աղի
 աղէկ > Սչ. Լհ. աղէգ
 աղաման > Սչ. աղաման
 աղիք > Լհ. աղէք „saucisson“
 աղօթք > Սչ. Լհ. աղօթք
 աղօթել > Սչ. աղօթել
 գաղափար > Սչ. քաղափար «գրատախտակ»
 գիւղացի > Սչ. գ'եղացի
 դեղել > Սչ. դ'էղել «անմաքուր պատրաստել»
 դեղին > Սչ. Լհ. դ'էղին
 դեղնութիւն > Սչ. դ'էղընություն «դալուկ»
 դողալ > Սչ. դ'օղալ
 եկեղեցի > Սչ. յէգէղէցի
 եղանակ > Սչ. յէղանագ (երգի)
 եղիճ > Սչ. լէղիջ, որից լէղիջել «ձեռները եղիճով արյունել»
 եղունգ > Սչ. օղունգ
 թաղել > Սչ. թաղել, Լհ. թաղելու
 թաղումն > Սչ. Լհ. թաղում
 թողութիւն > Սչ. թօղություն
 թողուլ > Սչ. թօղուլ, Լհ. թօղելու
 ժողովուրդ > Սչ. Լհ. ժօղովուրդ՝
 լեղի > Սչ. Լհ. լէղի, որից Սչ. լէղություն
 խաղալ > Սչ. խաղալ, Լհ. խաղալու
 խաղալիք > Սչ. խաղալիք

խաղաղ>Սչ. խաղաղ, Լհ. խաղափ
 ծաղիկ>Սչ. ձաղիգ «ծաղկախտ»
 ծիծաղիլ>Սչ. ձըձաղել, Լհ. ձիձաղէլու
 կազամար>Սչ. գաղամար
 կաղանդ>Սչ. գաղանդ, որից գաղանդել
 կաղին>Սչ. Լհ. գաղին
 կղմինդը>Լհ. գողմինդը
 հաղորդիլ>Սչ. հաղօրթիլել, որից հաղօրթություն
 մաղել>Սչ. մաղել
 մեղադրել>Սչ. մեղադրել
 մեղայ>Սչ. մեղա
 մեղաւոր>Սչ. մեղաւօր
 մեղու>Սչ. մէղուն
 յաջողիլ>Սչ. աջօղել, Լհ. աջօղէլու
 նեղանալ>Սչ. նեղանալ
 ողորմիլ>Սչ. վօղօրմել
 ողորմութիւն>Սչ. վօղօրմություն
 ոսկեղէն>Սչ. վօսգեղէն
 ուղեղ>Լհ. օղուղ
 ուղեւորել>Լհ. աղաւլըրէլու
 պաղիլ>Սչ. բաղել «մրսիլ»
 պղինձ>Սչ. բըղինձ, Լհ. բըղընձ
 ջրաղացք>Սչ. ջէղացք, Լհ. ջաղացք
 ջրհեղեղ>Սչ. ջըրէղեղ
 սաղաւարտ>Սչ. սաղաւարդ
 սեղան>Սչ. սեղան (եկեղեցու)
 վաղիւ>Սչ. վաղը, Լհ. վաղ
 տղայ>Սչ. Լհ. դըղա
 տղացկան>Սչ. դըղօցգան
 քաղաք>Սչ. Լհ. քաղաք
 քաղել>Սչ. քաղել, Լհ. գաղէլու,

— Երբ բառամիջի դ ընկնում է թրթռուն բաղաձայնից
 առաջ, նույնպէս մնում է ղ, օր.

աղալ>աղանալ>Լհ. աղնալու
 աղանի>Լհ. աղվէնիք
 աղուէս>Սչ. աղվէս, Լհ. աղվէս
 աղտոտ>Սչ. աղղօղ

բաղանիք>Սչ. բ'աղնիք
 գողանալ>Սչ. գ'ողնալ, Լհ. գ'ողնալու
 եղկ=եղմ>Սչ. յէղմ «գոլ»
 թողուլ>Սչ. թօղնուլ
 խաղարան>Լհ. խաղրան „vestibule“
 ծաղկազարդ>Սչ. զաղդազարդ'
 կողմ>Սչ. զօղմ
 մատղաշ>Սչ. մագղաշ
 մեղր>Սչ. մեղրը, Լհ. մեղր
 պղտոր>Սչ. բըղգօր
 սաղմոս>Սչ. սաղմօս
 սեղծել>Սչ. ըսգեղծել, Լհ. ըսգ'էղծէլու
 ցողուիլ>Սչ. ցողվել «ամանը ողողել»
 քաղուիլ>Սչ. քաղվել:

— Երբ, ընդհակառակը, բառամիջի ղ ընկնի խուլ բաղաձայնի մոտ, ինչ էլ լինի այս վերջինի ծագումը, ղ դառնում է խ. օր.

աղալ, աղացել>Սչ. ախցել, Լհ. ախցիլ իմ
 աղջիկ>Սչ. ախչիք, Լհ. ախչիգ
 աղտ>Սչ. ախթ, սեռ. ախդ'ի
 աղքատ>Սչ. ախքադ, Լհ. ախդ'ադ, որից Սչ. ախքըդնալ,
 Լհ. ախդ'ադութին
 առողջ>Սչ. առօխչ, Լհ. առօխչ, առըխչ
 եղբայր>Սչ. Լհ. ախբ'ար
 եղջիւր>Սչ. յէխչիուր (պտուղը)
 զղջալ>Սչ. զըխչալ
 թղթել>Սչ. թըխթել «թղթից տետր շինել»
 թուղթ>Սչ. Լհ. թուխթ
 խեղդել>Սչ. խըխթել, Լհ. խըխդ'ըվէլու
 ճնողք>Սչ. ձընօխք, Լհ. ձէնօխք
 ճեղքել>Սչ. ջըխքել
 մեղք>Սչ. մեխք, որից մեխքընալ «խղճալ»
 յաղթել>Սչ. էխդ'ել
 ողբալ>Սչ. վօխբ'ալ
 ողջ>Սչ. վօխչ (բայց Լհ. վըղըջ', ըստ որում
 երկու ձայնավորի միջև է)
 ողջացուցանել>Սչ. վօխչընցընել
 սանդուղք>Լհ. սանդուխդ'

քաղել>կրկ. ԼՆ. գ'ախգ'ըղէլու
 քաղցած>Սչ. ԼՆ. քախցած
 քաղցր>Սչ. քախցրը, քրախցը (բայց ԼՆ.
 քաղցր):

— Մի քանի տեղ կանոնը խախտվում է և թրթռունի մոտ
 գտնում ենք իս և խուլի մոտ՝ ղ. օր.

բողկ>Սչ. բ'օխգ, բ'ըխգ, ԼՆ. բ'ըխգ
 գաղտ-ուկ>Սչ. գ'ախդուգ
 գաղանի>Սչ. գ'ախդնի
 խիղճ մտաց>Սչ. խըխջմըգանք, ԼՆ. խըջ-
 մէդանք
 կողք>Սչ. գօղք
 քաղցր>ԼՆ. քաղցր (թեև Սչ. քախցրը),

Կարծում եմ, որ սրանց մեջ թրթռունները մասնակի կեր-
 պով խուլ են և խուլերն էլ թրթռուն:

— Բառավերջում ղ-ի բնական ձևն է ղ, բայց հաճախ լըս-
 վում է իս, որ սակայն հոլովման կամ խոնարհման մեջ նորից
 վերածվում է ղ-ի. օր.

աղ>Սչ. ախ, ԼՆ. աղ
 ասեղն>Սչ. ասեխ, ասեղ, ԼՆ. ասեղ
 ասող>Սչ. ասթխ, սեռ. ասթխի, ԼՆ. աս-
 գ'ըղ, հգ. ասգ'ըղեր
 [բեղ, բեղեր>Սչ. բեխ (թրք. բառ է)]
 գիւղ>Սչ. գ'եղ, ԼՆ. գ'էղ
 գող>Սչ. գ'օղ, ԼՆ. գ'օղ, գ'վըղ
 թող տալ>Սչ. թօխ դալ
 իւղ>Սչ. յէխ, սեռ. յէղի, ԼՆ. յէղ
 լող տալ>Սչ. լեղ դալ, ԼՆ. լէղ դալու
 խաղ>Սչ. խաղ «խաղ, երգ»
 խաղաղ>Սչ. խաղաղ
 խաղող>Սչ. խավօխ
 ծիծաղ>Սչ. ձըձաղ, ԼՆ. ձիձախ
 ծիւղ, ծեղ>Սչ. ձեղ, ԼՆ. ձէղ
 կակուղ>Սչ. ԼՆ. գագուղ
 կաղ>Սչ. ԼՆ. գաղ
 կանթեղ>Սչ. գանթեղ

կող>Սչ. Լհ. դող
 հեղ «անգամ»>Սչ. հեղ, Լհ. յէղ
 հող>Սչ. հող, ֆըղ (նաև Ռմ.)
 ձուածեղ>Սչ. ցեղածեղ
 մաղ>Սչ. Լհ. մաղ
 մտտաղ>Սչ. մադաղ
 նեղ>Սչ. նեղ
 ուղեղ>Լհ. օղուղ
 պաղ>Սչ. Լհ. բաղ
 պտուղ>Սչ. բըղուղ (միւրգ)
 ջիղ>Սչ. ջեղ
 ջրհեղեղ>Սչ. ջըրէղեղ
 տաշեղ>Սչ. դաշեղ, Լհ. դաշէլս
 տեղ>Սչ. Լհ. դեղ
 ցեղ>Սչ. Ռմ. ցեղ
 օղ>Սչ. Լհ. օղ.

կարելի է սրանց վրա ավելացնել՝

ճնճուղ>Սչ. ջունջուլուխ, Լհ. ջուլունջուխ:

Հիշելի է հատկապես ներկա դերբայի -ռղ վերջավորությունը՝ ինչ.

եփող>Լհ. էփօղ
 համբերող>Լհ. համբ'իբօղ
 կտրող>Լհ. գըգբօղ և այլն.
 ճար անող>ջարանօխ «բժիշկ»:

— Լեհահայ բարբառում մի քանի տեղ ու նման սլավոնականի, վերածվում է հ-ի, որ երևի ուկրաիներենի նման թրթռուն է. այսպես են՝

եղունգ>Լհ. օհունգ (Սչ. օղունգ)
 խաղալ>Սչ. խաղալ, Լհ. խաղալու, խախալու
 ողորմելի>Լհ. օհօրմըլի
 ողորմութիւն>Լհ. օհօրմութիւն
 տեղ, տեղբանք>Սչ. Լհ. դեղ, հդ. Լհ. դէհրանք «անկողին»:
 — Երբ ձայնավորի անկումով ու ընկնի բառասկիզբը՝ դառ-

նում է խ. այսպես են՝

ուղարկել>Սչ. խըրգել, Լհ. խըրգէլու
 ուղղորդել>Լհ. խօրդէլու:

— Ղ-ի անկման օրինակներ են ներկայացնում հետեյալ
բառերը.

խիղճ մտաց, խղճմտանք>Լհ. խըջմէգանք
ծնծղայ>Սհ. ցընճա
կարողութիւն>Լհ. գարնութին (կարնալ=
կարենալ ձեից)
հօրեղբայր>Սհ. Լհ. հօ'բար
շաղախ>Լհ. շախ
ողկոյղ>Սհ. գուզ:

— Կրկին Ղ-երի տարանմանության օրինակ են՝
խաղող>Սհ. խավօխ
խաղաղ>Լհ. խաղավ, որից էլ խաղավութին, խաղավուց-
նէլու «մանկիկին լռեցնել»:

— Վերջապես Ղ-ի տեղափոխության օրինակ է՝
կողպէք>Սհ. գըմղաք:

Ճ

— Բառակցքում դառնում է միշտ ջ. ինչ.
ճակատ> Սհ. Լհ. ջագտդ
ճանապարհ>Սհ. Լհ. ջամփա
ճանապարհորդ>Սհ. ջամփօրթ, Լհ. ջամփօրդ՝
ճանաչել>Սհ. ջանջ'նալ, Լհ. ջանջ'նալու
ճար> Սհ. Լհ. ջար
ճերմակ>Սհ. Լհ. ջէրմագ և այլն:

— Բառամիջում և դառնում է նույնպէս ջ. եղած օրինակ-
ներն են՝

աճիլ>Սհ. աջիլ
աճուկ>Սհ. աջուկ
խիղճ մտաց>խղճմտանք>Սհ. խըխջմըգանք
կարճանալ>Սհ. գարջընալ
կոճիկ, կոճուկ>Սհ. գըռջուկ
ճնճղուկ>Սհ. ջուռջուլուխ, որ և Լհ., իսկ Լհ. ջուլուռջուլ-
«թռչուն»

վաճառական>Սչ. վաջառագան
վիճակ>Սչ. վիջագ (Համբարձման խաղը)
վճարել>Սչ. վիջարել, Լհ. վիջարելու
վճարք>Լհ. վիջարք
տաճիկ>Սչ. Լհ. դաջիգ.

Խսկ պարսկերենից նորը փոխառությամբ՝

փճանալ>Սչ. փըջանալ (որ է Երև. փշանալ):

— Այն ձայնական օրենքը, որով բառամիջում, բաղաձայնից առաջ գտնված ջ վերածվում է Ժ-ի, չի գործադրվում այստեղ, ինչպես ցույց են տալիս՝

վիճակ>Սչ. վիջագ, սեռ. վիջգի
տաճիկ>Սչ. Լհ. դաջիգ, սեռ. դաջգի.

սակայն ունենք և՛

խղճմտանք, որ թեև տալիս է Սչ. խըխջմըղանք, բայց Լհ. խըջմեղանք, ուր և՛ դարձել է բաղաձայնից առաջ շ (և ոչ թե Ժ):

— Բառավերջում և ձայնի բոլոր օրինակներն են՝

եղիճ>Սչ. լեղիջ (լ հավելվածով)
կարճ>Սչ. Լհ. դարջ
կտրիճ>Սչ. Լհ. գրգրիջ
ճանճ>Սչ. Լհ. ջանջ
պարկուճ>Լհ. բարգուջ «պայուսակ»
փուճ>Սչ. փուջ «ի գուր» (Երև. փուշ):

Բոլորի մեջ էլ վերջաձայն և>ջ:

Մ

Ամեն դիրքով էլ մնում է մ. ինչ.

— Բառակզրուս՝

մազ>Սչ. Լհ. մագ
մածուն>Սչ. Լհ. մաձուն
մայր>Սչ. Լհ. մար
մանել>Սչ. մանել, Լհ. մանելու

մատն>Սչ. Լհ. մաղ
մատանի>Սչ. Լհ. մաղնի
մեծ>Սչ. Լհ. մեծ
մեղր>Սչ. մեղրը, Լհ. մեղր
մեռանիլ>Սչ. մեռնել, Լհ. մեռնելու
մուկն>Սչ. մուգ, Լհ. մուղ
մօրաքոյր>Սչ. Լհ. մօրքուր և ալլն:

— Բառամիջու՞մ՝

աման>Սչ. Լհ. աման
ամաչեւ>Սչ. ամընչնալ, Լհ. ամունչնալու
ամառն>Սչ. Լհ. ամառ
ամուր>Սչ. Լհ. ամբուր
բամբակ>Սչ. Լհ. բամբազ
դիմանալ>Սչ. դիմանալ, Լհ. դիմանալու
թամբ-ք>Սչ. Լհ. բամբ
թմբիլ>Սչ. թմբբիլ
խիղճ մտաց>Սչ. խըխմըդանք, Լհ. խըշմեդանք
խմոր>Սչ. խըմօր, Լհ. խըմէր
կարմիր>Սչ. Լհ. գարմեր
էղմինար>Լհ. գողմինդր
մարմին>Սչ. Լհ. մարմին
նմանիլ>Սչ. նմանել
շամփուր>Սչ. շամփուր
քամի>Սչ. Լհ. քամի և ալլն:

— Բառավերջու՞մ՝

անգամ>Սչ. անգամ
անզգամ>Սչ. անըսքամ (ասում են լատ կնոջ համար)
բարեկամ>Սչ. բարեգամ, Լհ. բարեգամ
բեմ (եկեղեցու)>Սչ. Լհ. բեմ
գամ (մեխ)>Լհ. գամ
երդումն>Սչ. յէրդում
թաղումն>Սչ. Լհ. թաղում
ժամ (եկեղեցի)>Սչ. Լհ. ժամ
ծոմ>Սչ. ձում
կամ (շաղկապ)>Սչ. Լհ. գամ
կողմ>Սչ. գողմ

համ>Սչ. համ

հում>Սչ. իհ. հում

մամ (տամ)>Սչ. իհ. մամ

մոմ>Սչ. մոմ, իհ. մրմ

փարթամ>Սչ. փարթամ (անպարկեշտ կին) և այլն:

— Միայն մի դեպքում, բառամիջի մ դառնում է հ. այն է ժամկոչ>Սչ ժանգոչ:

3

— Բառամիջում և բառավերջում կազմում է երկրարրառ. անկախ է միայն բառակազմում, ուր բնիկ բառերի մեջ կորչում է. ինչ.

յաջողիլ>Սչ. աջողել, իհ. աջողելու

յառաջ>Սչ. առաջ

յիշել>իհ. իշելու, Սչ. հիշել

յիսուն>Սչ. իհ. իսուն

յուզել>Սչ. ուզել, իհ. ուզելու

յստակ>Սչ. իսդագ, իհ. իսդ'ագ'

յստակել>Սչ. քսդ'ըգել

յօնք>Սչ. իհ. օնք

յօրանջել>Սչ. օրբնջդալ, իհ. գօրօնջ'դ'ըդայու:

— Յա նախավանկը տալիս է է, որի համար ունենք միայն մի օրինակ, որ է՝

յաղթել>Սչ. էխդ'ել:

— Գրականից փոխառյալ բառերի մեջ նախաձայն յ դառնում է հ. եղած օրինակներն են՝

յայտնել>Սչ. հայդնել

յանկարծ>Սչ. հանգարծ

յանկարծակի>Սչ. հանգարծագի (հմտ. Պլ. անգըրծագ)

յաւիտեան>իհ. հավիդյան

յիշատակ>Սչ. հիշագագ

յիշել>Սչ. հիշել (բնիկ է իհ. իշելու)

յոյս>Սչ. հուիս, իհ. հույս

յունվար, յունիս, յուլիս>իհ. հունվար, հունիս, հուլիս:

— Ըստ այսմ բառակազմում ե ձայնավորից առաջ բնիկ պիտի համարենք յ. այսպես են՝

յեա>Սչ. յէդ

յետե>Սչ. յէդէվ (բայց իհ. էդե)

յետք>Սչ. յէդդ'ը:

— Բառասկզբում մնում է ն. ինչ.

նայիլ>Սչ. նայել, ին. նայելու

նայ>Սչ. ին. նայ

նշան>Սչ. նշան (ին. նիշան թրք.)

նոր>Սչ. նոր, ին. նոր

նստիլ>Սչ. նստել, ին. նստեցիլու և այլն:

— Դառնում է չ՝ միայն մի բառի մեջ, որ է՝

նապաստակ>ին. լաբէսդ՝ադ՝:

Դառնում է մ միայն մի բառի մեջ, որ է՝

ին. մէգսեմ «ստամոքս», որ ծագում է ներքս բառից:

— Ջնջված է բառասկզբում միայն մի բառում, որ է՝

նշանուիլ>Սչ. շանվել, որից և Սչ. շանվօք «նշանտուք»,

թեև նշան Սչ. (=ին. նիշան, որից ին. նիշանելու) պահում

է ն ձայնը:

— Բառամիջում նմանապես մնում է ն. շատ բազմաթիվ օրինակներից հիշում ենք հետևյալ շարքերը.

ա) Անկախ բառեր.

աիանջ>Սչ. ին. անգաջ

անիծ>Սչ. ին. անիծ

անկանիլ>ին. ըննելու

անձրե>Սչ. անձրեմ

անոյշ>Սչ. ին. անուշ

առնել>Սչ. առնել, ին. անելու

բաղանիք>Սչ. բ՛աղանիք

դանակ>Սչ. ին. դ՛անակ

կանաչ>Սչ. ին. դանանչ

կոնակ>Սչ. ին. գըռնակ

հանգչիլ>Սչ. հանգ՛չիլ, ին. հանգ՛ջիլու

ճանճ>Սչ. ին. ջանջ

մանր>Սչ. մանդրը, ին. մանդր

շինել>Սչ. շինել, ին. շինելու

պղինձ>Սչ. բըղինձ, ին. բըղընձ

սպանել>Սչ. բսբ՛անել, ին. բսբ՛անելու

տանձ>Սչ. ին. դանձ

ցանել>Սչ. ցանել, ին. ցանելու

քանի>Սչ. ին. քանի և այլն:

բ) Մասնիկների և վերջավորությունների մեջ.

անասուն>Սչ. Լհ. անասուն

ազանիլ>Սչ. հաքնել, Լհ. հաք'նէվէլու

գողանալ>Սչ. գ'օղնալ, Լհ. գ'օղնալու

մոռանալ>Սչ. մօռնալ, Լհ. մօռնալու

վախենալ>Սչ. վախնալ, Լհ. վախնալու

տեսանել>Սչ. գեսնուլ, Լհ. գէսնէլու

հազարանոց>Սչ. հազարնօց և այլն:

— Մասնավոր դեպքեր՝

ն>մ շրթնային բաղաձայնից առաջ.

այնպէս>Սչ. Լհ. ամբէս

անբան>Սչ. ամբ'ան (կենդանի)

ճանապարհ>Սչ. Լհ. ջամփա

ճանապարհորդ>Սչ. ջամփօրթ, Լհ. ջամփօրդ՝

ոտնաւոր>Լհ. օդըմվըր „garçon de noccs“.

Բացառաբար նաև՝

խնջել>Սչ. խըմջել «քիթը մաքրել» (ըստ որում այդ մի-
ջոցին բերանը փակված լինելով քթից դուրս եկած
շունչը լինում է խմ և ոչ թե խն. հմմտ. նաև Պլ. խըմ-
ջել և խըմ ըրէ՝ հորդորանք մանուկին, որ քիթն է ու-
զում մաքրել):

նլ>լլ.

անալի>Սչ. ալլի (անցնելով անլի ձևից)

բանալիք>Սչ. բ'ալլինք, Լհ. բ'ալինք

(նախ և-ի հափելումով եղել է բանալիք, տպա միջին ւ ձայնա-
վորի սովորական սղումով բանլիք, ապա նլ խոււմբը դառնա-
լով լլ՝ բ'ալլինք, ինչպես ունենք նաև Պլ. բալլիք, բալլիք. վեր-
ջապես կրկին լ-երից մեկը սղվելով՝ Լհ. բ'ալլիք): Նման օրինակ
է ելանել>Պլ. էլլալ, լինել>Պլ. րլլալ, լնուլ>Ախց. լլէլ, որոնց
մեջ ունենք լն ձայնախումբը: Այս բառերը դառնում են Սչ.
լյէլել Լհ. էլէլու, Սչ. ըլալ, իլալ=Լհ. իլալու, իսկ լնուլ>Սչ.
ըցընել, Պլ. լէցունել, Լհ. լընէլու:— Թուլանալ>Սչ. Պլ. թուլնալ,
խլանալ>Սչ. խուլանալ, Պլ. խուլնալ և նմանները մնում են ան-
փոփոխ՝ արմատի ազդեցությամբ:

— Բառավերջում և միում է ն. ինչ.

աման>Սչ. ևն. աման
անագան>Սչ. ևն. անգ'ան
անուն>Սչ. ևն. անուն
արին>Սչ. ևն. արուն
բերան>Սչ. ևն. բ'էրան
գետին>Սչ. ևն. գ'էգին
դեղին>Սչ. ևն. դ'էդին
իննսուն>Սչ. նըսուն, ևն. նուսուն
լայն>Սչ. ևն. լան
կաղին>Սչ. ևն. գաղին
կացին>Սչ. ևն. գացին
չուան>Սչ. ևն. չուվան և այլն:

— Գրաբարի այն բառերը, որոնք ունեն վերջահար և, որին նախորդում է մի բաղաձայն, սովորական կարգով այստեղ էլ զրկվում են այդ և-ից. ինչ.

ամառն>Սչ. ևն. ամառ
ասեղն>Սչ. ևն. ասեղ
գառն>Սչ. ևն. գ'առ
դուռն>Սչ. ևն. դ'ուռ
եզն>Սչ. ևն. յէզ
եղունգն>Սչ. օղունգ, ևն. օհունգ
լեռն>Սչ. ևն. լէռ և այլն:

Միւսի բառը, որ պահել է նույն և հանգը, է խառն>Սչ. խառն:

— Ուրիշ դեպքերում նույն և հանգը դառնում է ը. եղած բոլոր օրինակները հետևյալներն են.

գազաթն>ևն. գ'աքադ'ը
եօթն>Սչ. ևն. օխդ'ը
ինն>Սչ. ևն. ինը
ինքն>Սչ. ինքը, ևն. ինքը, ինքն
կաթն>Սչ. գաթը (սեռ. գաթնի), ևն. գաթ
ձուկն>Սչ. ցուգը, ևն. ձ'ուգ (թեև մուկն>
Սչ. մուգ, ևն. մուղ)
տասն>Սչ. ևն. դասը

— Երկու դեպքում, սխալմամբ, բառավերջի և վերջահար կարծվելով՝ ջնջված է. այն է՝

անօրէն>ԼՅ. անօրէ, հգ. անօրէներ «հրեա»

գարուն>ՍՀ. առչի դ'արուն, ԼՅ. առջի գարուն, որ և առ-
ջի-գարի (թրգմ. թրք. ilk bahar ձևից):

— Այլուր, բառի ծայրին ավելացել է մի ավելորդ և՛ իբրև արմատի մաս. այսպես են հետևյալ բառերը.

*գիտացու>ԼՅ. գիդացուն (այսպես և ՊԼ. գիդացուն, իսկ
ԼՅ. գիդացութիւն «ծանոթություն»).

դու>ՍՀ. դուն (ազգվելով Գ. դեմքի վերջնայինից. ես,
դուն, ան, իսկ ԼՅ. դու, դուք).

դրացի ՍՀ. ԼՅ. դրացին (հմմտ. ՊԼ. դրացին, ՆՆԽ. դի-
րացին)

երեկոյ>ՍՀ. ԼՅ. իրգուն

լի>ՍՀ. լինքը, ԼՅ. ըլինք (նախ իլի, իլին, ապա ք-ի հա-
վելումով)

մեղու>ՍՀ. մէղուն (սեռ. մէղունին):

Շ

Ամեն դիրքով էլ մնում է շ.

— Բառակզբում՝

շաբաթ>ՍՀ. ԼՅ. շաբ'աբ

շահ>ՍՀ. ԼՅ. շահ

շապիկ>ՍՀ. շաբիգ, ԼՅ. շաբիդ

շատ>ՍՀ. ԼՅ. շադ

շաքար>ՍՀ. ԼՅ. շաքար

շինեի>ՍՀ. շինել, ԼՅ. շինելու

շնորհակալ>ՍՀ. շնօրհագալ, ԼՅ. շնահագա

շուն>ՍՀ. ԼՅ. շուն

շուք>ՍՀ. ԼՅ. շուք և ալլն:

— Բառամիջում՝

աշխարհ-ք>ՍՀ. ԼՅ. աշխարք

աշուն>ՍՀ. ԼՅ. աշունք

բուշտ «միզափամփուշտ»>ՍՀ. բ'ուշդ, ԼՅ. բ'ուշդ'

գիշեր>ՍՀ. ԼՅ. գ'ըշեր

դաշտ>Սչ. դ'աշդ, և՛. դ'աշդ'
 իշխել>Սչ. իշխել, և՛. իշխելու «համարձակվել», և՛. իշխան
 «համարձակ», և՛. իշխութիւն «համարձակություն»
 խոշոր>Սչ. խօշօր
 կաշի>Սչ. և՛. գաշի
 կօշիկ>Սչ. գօշիգ, և՛. գօշիգ'
 կօշկակաւ>և՛. գօշգ'աւ
 մուշտակ>և՛. մըշդ'ախ
 տաշել>Սչ. դաշել, և՛. դաշելու
 տաշեղ>Սչ. դաշեղ, և՛. դաշելիս
 փոշի>Սչ. և՛. փօշի
 քարշել>Սչ. քաշել, և՛. քաշելու և այլն:

— Բառակերջում' (դնում եմ բոլոր օրինակները).

անոյշ>Սչ. և՛. անուշ
 գէշ>Սչ. գ'էշ
 էշ>Սչ. և՛. եշ
 թուշ>Սչ. թուշ
 լաւաշ>Սչ. լավաշ (սալորից պատրաստած)
 կոտորշ>Սչ. գօղօշ
 մատղաշ>Սչ. մաղղաշ
 փուշ>Սչ. փուշ:

Չ

Ամեն դիրքով էլ մնում է չ. ինչ.

— Բառակերջում'

չաման>Սչ. չաման «գինձ»
 չամիչ>Սչ. չամիչ
 չաւ>Սչ. և՛. չաւ
 չաւչաւել>Սչ. չաւչաւիլ
 չափ>Սչ. չափ, և՛. չափ'
 չափել>Սչ. չափել, և՛. չափելու
 չէ>Սչ. և՛. չէ
 չոր>Սչ. չօր, և՛. չօր, չըր, չվըր
 չորք>Սչ. չօրս, և՛. չօրս, չըրս
 չուան>Սչ. և՛. չովան:

— Բառամիջու՞մ՝

ամաչեի>Սչ. ամբնչնալ, Լհ. ամունչնալու

ամաչկոտ>Սչ. ամբնչգոդ

աչք>Սչ. Լհ. աչք, հգ. աշվի, աշվրներ

դիպչեի>Սչ. բրբշեի

թռչիլ>Սչ. թռչել (չկա թռել ձևը, իսկ Լհ. թրոչլու)

թռչուն>Սչ. թրոչուն, Լհ. թրոջ'ուն

ինչպէս>Սչ. ինչքէս (իսկ Լհ. ինցոյ առաջացել է ինչ+թրք.

soy «ցեղ, սեռ» բառերից, որից երևում է որ շս>ց)

խաչակնքեի>Սչ. խաչագրներեի

խաչվառ>Սչ. խաչվառ

կանաչիլ>Սչ. գանանչել

կանչեի>Սչ. գանչել «կոչել»

հանգչիլ>Սչ. հանգ'չել, Լհ. հանգ'չ'ելու

հառաչեի>Սչ. հառչել

ճանաչեի>Սչ. ջանջն'ալ, Լհ. ջանջ'նալու

ճանաչւոր>Սչ. ջանջ'ֆօր

մինչև>Սչ. ինչֆանի, Լհ. ինչվան

ոչինչ>Սչ. վօշինչ

ոչխար>Սչ. Լհ. օշխար

չարչարեի>Սչ. շարշարել

պոռչեի>Լհ. բ'օռջ'ելու

փախչիլ>Սչ. փախչել, Լհ. փախչելու

փչեի>Սչ. փչել, Լհ. փչելու «երգել, նվա-

գել», փրշել «երգ»:

— Բառավերջու՞մ (դնում եմ բոլոր օրինակները).

դունչ>Սչ. դ'ունչ

թարթիչ>Սչ. բարբիչ

ժամակոչ>Սչ. ժանգօշ

ինչ>Սչ. Լհ. ինչ

լուսաւորիչ>Լհ. լուսավօրիչ

խաչ>Սչ. Լհ. խաչ

խառնիչ>Սչ. խառնիչ «խառնակիչ (մարդ)»

կանաչ>Սչ. Լհ. գանանչ

մանչ>Սչ. Լհ. մանչ «սպասավոր»

ոչ>Լհ. օշ

ոչինչ > Սչ. վօշինչ
 չամիչ > Սչ. շամիչ
 քիչ > Սչ. լհ. ֆիչ
 քուրչ > Սչ. Ռմ. քուրչ «գգեւտ», լհ. գ'ուրջ:

Դանթ.—1. Հանուշը շատ անգամ չ-ի դեմ գրում է ջո՛ւ ինձ էլ պատահել է լսել
 Սուչավայի բարբառով ջո՛ւ փոխանակ չ-ի՝ ինչ. ճանաչել > ջանջ'մալ. Հա-
 նուշը գրում է մինչև անգամ xɑʒ=խաջո՛ւ, իմա խաչ, kidz=գ'իջ, իմա
 ֆիչ. այս ձևերը ես համարում եմ գրության կամ լսողության վրիպակ:

Դանթ.—2. Վերը տեսանք ի՞նչպէս բառի դեմ ինցօյ, իբր թրք. ինչ+սօյ, որից
 եզրակացրինք չս>ց. սրա համար հմմտ. Հմշ. ի՞նցօ «ինչպէս» (տես
 «Քնն. Համշէնի բարբ.», էջ 168), բայց Համշէնի բարբառում կենդանի է
 դեռ ի՞նքնօ միջին ձևը: Առտիալի բարբառում նման միջին ձև գոյու-
 թյուն չունի:

Դանթ.—3. Ուրիշ բարբառներում գտնում ենք բաղաձայնից առաջ չ բաղա-
 ձայնը օ դարձնելու երեւոյթը. հմմտ. մինչև անգամ աչք > Պլ. ափէ:
 Նման երեւոյթ չկա Առտիալի բարբառում, ունենք միայն Սչ. խաշլու
 «կնքահայր» և խաշլումար «կնքամայր», որոնք համարում եմ խաչ+
 թրք. -ւս ձևից, ճիշտ ինչպէս ունենք լհ. ուժլի «ուժեղ» և ձուժլու
 «ծծմայր»: Այս երեւոյթի մասին հմմտ. նաև ծ, ց, ջ:

Գ

Ամեն դիրքով էլ դառնում է բ. այսպէս՝

— Բառասկզբում՝

պագանել > Սչ. բաքնել, լհ. բաքնէլու
 պակաս > Սչ. լհ. բագաս
 պահել > Սչ. բահել, լհ. բահէլու
 պաղ > Սչ. լհ. բաղ
 պառակել > Սչ. բառգել, լհ. բառգէլու
 պատ > Սչ. լհ. բադ
 պատարագ > Սչ. բադարաք, լհ. բադրաք
 պատկեր > Սչ. բադգեր, լհ. բադգէրք
 պար > Սչ. լհ. բար «երգ»
 պինդ > Սչ. լհ. բինդ
 պղինձ > Սչ. բըղինձ, լհ. բըղընձ
 պորտ > Սչ. բօրդ, լհ. բըրդ
 պստիկ > Սչ. լհ. բիգդիգ և այլն:

— Երկու բառ կա, որոնց նախաձայնն այ փոխված է. առաջինն է՝

պոսակ, որ ինչպես այլուեր, նույնպես Սչ. Լհ. դարձել է փսագ, որից էլ բայն է Սչ. փսագել (Հանուշը, էջ 167, նախաձայնի փոփոխությունը փեսայ բառի ազդեցությամբ է համարում):

Երկրորդն է պոռչել, որի Լհ. բ՛օռչելու ձևի մեջ նախաձայնը դարձել է բ՛.— իսկ պալատ>Սչ. բ՛ալաղ՝ օտար փոխառություն է:

— Բառամիջում՝

այնպէս>Սչ. Լհ. ամբէս

ապրանք>Սչ. Լհ. արբանք

ապրիլ>Սչ. արբել, Լհ. արբելու

ապուր>Սչ. Լհ. արուր

դէպի>Սչ. դ՛էրի

դիպչել>Սչ. թըբչել

դպրատուն>Լհ. դ՛ըբրադուն

եպիսկոպոս>Սչ. յէբիսգօբօս

ինչպէս>Սչ. ինչբէս

լապտեր>Սչ. լարդեր

խծպել>Սչ. խըճբել, Լհ. խըճբելու

կապել>Սչ. դարբել, Լհ. դարբելու

կապոյտ>Սչ. Լհ. գարուդ

կապոց>Սչ. գարօց, Լհ. գարըց

կերպարանք>Սչ. գերբարանք

կոպիտ>Սչ. գօբիդ

հանդիպիլ>Սչ. հանդըբել, Լհ. հանդըբելու

հապա>Սչ. հարա «այն»

հպարտ>Սչ. Լհ. հարարդ

մայրապետ>Լհ. մարաբէդ՛գ՛ա

նապաստակ>Լհ. լարէսդ՛ադ՛

շապիկ>Սչ. շարիդ, Լհ. շարիդ

պապանձիլ>Սչ. բարընձել

պարպել>Սչ. բարբել

պլպլալ>Սչ. բլբլալ (լույսի)

վարդապետ>Սչ. Լհ. վարդ՛արեդ, վարբեդ

վարժապետ>Սչ. վարժարեդ

տապակել>Սչ. դարդել

տպել>Սչ. դըբել

— Բառամիջի այ գտնվելով և բաղաձայնից հետո, դառնում է բ'։ օրինակներն են՝

ապսպրել > Լհ. արբսբ'էրէլու (թեև Սչ. արբսբըրել)

սպանել > Սչ. ըսբ'անել, Լհ. ըսբ'անէլու

սպունգ > Սչ. ըսբ'ունգ։

թերևս օտար ազդեցությամբ էլ՝

տիպար > Սչ. դ'իբ'ար, իսկ Լհ. թիփար։

— Միանալով հաջորդ հ բաղաձայնի հետ դառնում է փ՝

ամպնովանի > Սչ. ամփովանի բառում։

— Ազդվելով հաջորդ ց բաղաձայնից, դառնում է բ' հետևյալ բառի մեջ։

կպիլ, պտճ. կպցնել > Լհ. գըբ'ցէնէլու,

թեև Սչ. ունենք գըբել, գըբչել և պտճ. գըբցընել։

— Ինչպես ամեն տեղ, նույնպես և այստեղ, «ճանապարհ» բառի մեջ այ դառնում է փ. այսպես՝

ճանապարհ > Սչ. Լհ. ջամփա

ճանապարհորդ > Սչ. ջամփօրթ, Լհ. ջամփօրդ։

— «Կողպէք» բառի մեջ (Սչ. գըմղազ) մ փոխարինում է այ կամ բ ձայնին։

— Բառավերջում այ նմանապես դառնում է բ. եղած օրինակներն են՝

կապ > Սչ. Լհ. գաբ

կերպ > Սչ. գերբ

կոպ > Սչ. գօբ

պապ > Սչ. Լհ. բաբ

պարապ > Սչ. Լհ. բարար

ցուպ > Սչ. ցուբ.

Իսկ ամպ սովորական իմաստով Սչ. ամբ, Լհ. ամբ', սակայն «սպունգ» իմաստով Լհ. ամբ.

2

— Բառասկզբում շ դառնում է շ'։ Եղած օրինակներն են՝

ջահ > Սչ. ջ'ահ

ջաղացք > Սչ. ջ'էղացք, Լհ. ջ'աղացք

Զանգ > Սչ. Զանգ
 Զիդ > Սչ. Զիդ
 Զուր > Սչ. Լհ. Զուր
 Զրեւ > Սչ. Զ'ըրեւ
 Զրի > Լհ. Զ'ըրի «Զրաւի»
 Զրհեդեդ > Սչ. Զ'ըրեդեդ
 Զրհոր > Սչ. Զ'ըրհոր, Լհ. Զ'իշվոր
 Զրվաթ > Սչ. Զ'էրէվադ' «մեդ»։

Միայն ջուխտ բառն է, որ խաչաձևամբ դարձել է Սչ. ջուֆդ', Լհ. ջուվդ'։

— Բառամիջուկ զ դառնում է չ կամ ջ' օրինակներն են՝

աղջիկ > Սչ. ախչիք, Լհ. ախչիդ
 առաջի > Սչ. առաչը, առչի
 առաջին > Սչ. առաչին, առչինը
 եղջիւր > Սչ. յէխչիուր (պտուղը)
 զղջաւ > Սչ. զխչաւ
 թրջել > Սչ. դ'ըրջ'ել, Լհ. թըրջ'ելու
 իջանել > Սչ. ընչնել, Լհ. ընջ'նելու
 իջեցուցանել > Սչ. ինչէց } նել
 խնջել > Սչ. խմչել, «քիթը մաքրել»
 հաջել (շան) > Սչ. հաջ'ել, Լհ. հաջ'ելու
 մէջք > Սչ. մէչդ, Լհ. մէջ'ք
 յաջողիւ > Սչ. աչողել, Լհ. աչողելու
 յօրանջել > Սչ. օրընջդաւ, Լհ. դօրօնջ'գըդաւու
 ողջացուցանել > Սչ. վօխչընցընել
 ոջիւ > Սչ. Լհ. օջ'իւ
 ոջլոտ > Սչ. օջ'լլօդ
 տանջել > Սչ. դանջել։

Օրինակներից երևաց, որ խից հետո ունենք չ (4 օր.), երկու ձայնավորի միջև՝ չ կամ ջ' (6 օր.), ոնգականից հետո՝ չ կամ ջ (5 օր.), րից հետո՝ ջ' (1 օր.), և քից առաջ՝ չ (1 օր.)։

Այն օրենքը, որով զանազան բարբառներում բաղաձայնից առաջ չ դառնում է ջ, ընդհանրապես չի պահպանված այստեղ։ Կա միայն մէջդ'եղ «մեջտեղ»։

— Բառավերջում ջ ֆնում է ջ, կամ դառնում է ջ', շ. եղած օրինակներն են՝

ականջ>Սչ. Լհ. անգաջ
առողջ>Սչ. առօխչ, Լհ. առօխջ'
(յ)առաջ>Սչ. առաչ, Լհ. առաջ'
արջ>Սչ. Լհ. արչ
մէջ>Սչ. մէչ, Լհ. մէջ'ը
մուկ>Լհ. մուկջ'
ողջ>Սչ. վօխչ, Լհ. վըղըջ'
քաջ>Լհ. քաջ':

Խ

Վերևում ասացինք, թե Հանուշը լեհահայ բարբառի ու և ք՝ ձայների միջև խտրությունն չի գտնում և երկուսն էլ հավասարապես նշանակում է ք, բացի զառն բառից, ուր գտնում է վերջածայն ու (karr):

Ըստ այսմ ֆնում է միայն Սուչավայի բարբառը, որի մեջ պահված է ու և ք ձայների խտրությունը:

Նախածայն ու չգտնվելով մեր լեզվում, ֆնում են բառամեջն ու բառավերջը:

Երկու դեպքումն էլ ու ֆնում է ու. ինչ.

Բառամիջում՝

ագռալ>Սչ. աքռավ
ակռայ>Սչ. Լհ. ագռա
առանց>Սչ. Լհ. առանց
առաւօտ>Սչ. առվադու, Ռմ. առվադանց
բոնել>Սչ. բ՛րոնել, Լհ. բ՛րոնելու
գոռգոռալ «ամպի որոտալը»>Սչ. գ՛ոռգ՛ոռալ, Լհ. գ՛ոռգ՛ոռալու
դառնալ>Սչ. դ՛առնալ, Լհ. դ՛առնալու
թոչել>Սչ. թոչել, Լհ. թրոչելու
խառնել>Սչ. խառնել, Լհ. խառնելու
ծառայ>Սչ. Լհ. ծառա
կեռաս>Սչ. Լհ. գեռաս
կոխ>Սչ. Լհ. գոխ
ձեռք>Սչ. ձ՛եռք, Լհ. ձ՛եռ

մեռանիլ>Սչ. մէռնել, և՛. մեռնելու
մոռանալ>Սչ. մօռնալ, և՛. մօռնալու
ուռիլ>Սչ. ուռել, և՛. ուռելու
քառասուն>Սչ. և՛. քառսուն
քեռի>Սչ. և՛. քէռի և յայլն:

— Բացառություն են միայն երկու բառ, որոնց մէջ ո
դառնում է ք. սրանք են պատահել>Սչ. բադրել, կրկ. բադրը-
ղել, և պոռնկ>Սչ. բըրունգ «շուրթն»:

— Բառակերջում ո նույնպես մնում է ո. օր.

աթոռ>Սչ. աթօռ, և՛. աթրօ
ամառ>Սչ. և՛. ամառ
դառ>Սչ. և՛. դ'առ
դէռ>Սչ. և՛. դ'էռ
դուռ>Սչ. և՛. դ'ուռ
թառ (հավի)>Սչ. քառ
թոռ>Սչ. քօռ, և՛. դ'ֆուր, դ'ֆըր
լեառ>Սչ. և՛. լէռ
ծառ>Սչ. և՛. ձառ
ծռռ>Սչ. և՛. ձռռ
ձմեռ>Սչ. ցմէռ, և՛. ձ'ըմէռ
փուռ>Սչ. և՛. փուռ և յայլն:

— Միայն առնել բայն է, որ միջին հայերենի համաձայն
ո կորցնելով դառնում է Սչ. անել, և՛. անէլու:

Ս

Ամեն գիրքով մնում է ս. աջսպես՝

— Բառասկզբում՝

սալոր>Սչ. սալօր, և՛. սալըր
սանարել>Սչ. սանդրել, և՛. սանդրէլու
սատանայ>Սչ. և՛. սադանա
սաւան>Սչ. և՛. սավան
սեաւ>Սչ. և՛. սեվ
սիրտ>Սչ. սիըրդ, և՛. սիըդ
սոխ>Սչ. սօխ, և՛. սըխ

սուտ>Սչ. Լհ. սուդ
սուր>Սչ. Լհ. սուր և այլն:

Բացառությունն է միայն սրբել>Սչ. զբրբ'ել, թեև արմա-
տը՝ սուրբ>Սչ. սուրփ, Լհ. սուրբ:

— Բառամիջու՞մ՝

անասուն >Սչ. Լհ. անասուն «թռչուն»
սպսպարել>Սչ. արբբբբել, Լհ. արբբբ'էրէլու
ասեղն>Սչ. ասելս, Լհ. ասեղ
աստուած>Սչ. ասված, Լհ. ասդ'ված
արտասուք>Սչ. արդասունք, Լհ. արդուսունք
դուստր>Սչ. դ'ուսդրը
երեսուն>Սչ. Լհ. էքսուն
իննսուն>Սչ. նքսուն, Լհ. նուսուն
լուսնկայ>Սչ. լուսնիգա, Լհ. լուսնրգան
լսել>Սչ. լսել, Լհ. լքսելու
խորիսխ>Սչ. խօրխ
խտոր>Սչ. սրխդ'օր, Լհ. սրխդ'ըր
հասանիլ>Սչ. հասնել, Լհ. հասնելու
հիւսել>Սչ. հուսել, Լհ. հուսելու
յստակ>Սչ. իսդագ, Լհ. իսդ'ագ՝
նապաստակ>Լհ. լաբէսդ'ագ՝
ոսկի>Սչ. Լհ. օսգ'ի
ոսկր>Սչ. օսգ'օր, Լհ. օսգ'ըր
պսակ>Սչ. Լհ. փսակ
փեսայ>Սչ. Լհ. փեսա
քառասուն>Սչ. Լհ. քառսուն և այլն:

Դիտ.— Ուշ ժամանակի հյ. պստիկ բառի մեջ ս գտնվելով
պ և տ>բ և դ երկու թրթռուն բաղաձայնների միջև, նրանց
ազդեցությամբ դարձել է գ, Սչ. Լհ. բիզդիգ:

— Բառավերջու՞մ՝

աղուէս>Սչ. աղվէս, Լհ. աղվես
ամիս>Սչ. Լհ. ամիս
ափսոս>Սչ. ամիսս
ի դուրս>Սչ. դ'ուրս, Լհ. դ'ուս
ես>Սչ. Լհ. յես

Երես>Սչ. Լհ. էրես
 լոյս>Սչ. Լհ. լուս
 կեռաս>Սչ. Լհ. գեռաս
 կէս>Սչ. Լհ. գէս
 հարսն>Սչ. Լհ. հարս
 միս>Սչ. Լհ. միս
 ի ներքս>Սչ. ներս
 փոս>Սչ. փոս, Լհ. փոս, փրս և այլն:

վ

Սնկախ ձևի տակ գտնվում է բառակզրում, ուր միշտ
 ֆնում է վ. ինչ.

վաթսուն<Սչ. վացուն, Լհ. վաթսուն
 վաստակ>Սչ. Լհ. վասդ'ադ
 վերայ>Սչ. Լհ. վրա
 վեց>Սչ. Լհ. վեց
 վիզ>Սչ. Լհ. վիզ
 վկայ>Սչ. Լհ. վրգա և այլն:

— Բառամիջում գտնվում է միշտ ո ձայնավորից հետո
 և այս դիրքով՝

1) կամ գտնում է օվ. ինչ.

բոլորովին>Սչ. բ'օլօրովին
 գովասանք>գ'օվասանք
 գովել>Սչ. գ'օվել, Լհ. գ'օվէլու
 ժողովուրդ>Սչ. Լհ. ժօղօվուրդ՝
 խոստովանանք>Լհ. խօսդ'օվանանք
 հովանալ>Սչ. հօվնալ.

2) կամ ո-ի կորուստով ֆնում է վ. ինչ.

խորոված>Լհ. խօրված
 խորովել>Սչ. խօրվել, Լհ. խօրվէլու
 խորովուիլ>Սչ. խօրվրվել.

3) և կամ տեղափոխությամբ ֆնում է նորից վ. ինչ.

սովորիլ>Սչ. սօրվել, Լհ. սօրվէլու
 սովորոյթ.ք>Սչ. Լհ. սօրվուդ'ք:

սանտրել>Սչ. սանդրել, Լհ. սանդրէլու
 խտտել>Սչ. խօդօդել «խտուտ անել»
 կարօտիլ>Սչ. գարօդնալ
 կղմինար>Լհ. գողըմինդր
 կոտորել>Սչ. գօդրել, Լհ. գօդրէլու
 հեծկլտալ>Սչ. հէձգըդալ
 մատանի>Սչ. Լհ. մադնի
 մատղաշ>Սչ. մադղաշ
 մկրատել>Լհ. մըգըրդէլու, Սչ. մըգըրդվել «մազերը խուզել»
 մտանել>Սչ. մըգնուլ
 մտմտալ>Լհ. մըգմըդալու
 շխտ(ա)կել>Սչ. շըդգել, Լհ. շիդգէցնէլու
 պատկեր>Սչ. բադգեր, Լհ. բադգէրք
 սատակիլ>Սչ. սադգել
 վարտիք>Սչ. վարդիք և այլն և այլն:

-- Ս և շ բաղաձայններից հետո գտնված ժամանակ տ
 դառնում է դ'. այսպես են՝ (թե բառամիջում, և թե բառավերջը):

աստղ>Սչ. ասթիս, Լհ. ասդ'ըդ
 աստուած>Լհ. ասդ'վաձ, սեռ. ասդ'ուձու (իսկ Սչ. ասվաձ,
 ասդուձու)
 աստուածամայր>Լհ. ասդ'վաձամար
 աստուածասէր>Լհ. ասդ'վաձասեր
 բուշտ (մեղի)>Լհ. բ'ուշդ', Սչ. բուշդ
 դաշտ>Լհ. դ'աշդ', Սչ. դ'աշդ
 դատաստան>Սչ. դ'ադասդ'ան, Լհ. դ'ադըսդ'ան
 դուստր>Լհ. դ'ուսդ'ը, Սչ. դ'ուսդրը
 դգեստ>Սչ. ըսդ'եսդ' «եկեղեցական շոր»
 իմաստուն>Սչ. Լհ. իմասդ'ուն
 իմաստութիւն>Լհ. իմասդ'ութին
 խոստանալ>Սչ. խօսդ'անալ
 խոստովանանք>Լհ. խօսդ'օվանանք
 խոցտել>Սչ. խօսդ'ել
 խոցտուկ>Սչ. խօսդ'ուդ
 կշտանալ>Սչ. գիշդ'անալ
 կշտացնել>Սչ. գիշդ'ացընել
 կուշտ (յագ)>Սչ. Լհ. գուշդ'
 կուշտ (կողք)>Լհ. գուշդ'

հանգիստ>Սչ. հանգիսդ՝
 հանգստանալ>Սչ. հանգըսդ՝անալ
 հանգստութիւն>Սչ. հանգըսդ՝ություն
 հաշտիլ>Սչ. հաշղըլել
 հաստ>Սչ. Լհ. հասդ՝
 հաստութիւն>Սչ. հասդ՝ութուն
 հաստատ>Սչ. հասդ՝ադ
 հարուստ>Սչ. հարուսդ՝
 հարստանալ>Սչ. հարըսդ՝անալ
 հարստութիւն>Սչ. հարըսդ՝ություն
 հրեշտակ>Լհ. հրիշդ՝ադ, Սչ. հրէշդադ
 մուշտակ>Լհ. մըշդ՝ախ
 յստակ>Լհ. իսդ՝ադ, Սչ. իսղադ
 յստակել>Սչ. ըսդ՝ըգել
 նապաստակ>Լհ. լարէսդ՝ադ՝
 նստիլ>Սչ. նըսղել, Լհ. նըսդ՝էլու,
 որից Լհ. նըսդ՝օղադան Վնստակեցիլ»
 պաշտել>Սչ. բաշղել, Լհ. բաշդ՝էլու
 պաշտօն>Սչ. բաշդ՝օն
 պաշտօնեայ>Սչ. բաշղօնյա
 ստակ>Սչ. ըսդ՝ադ
 ստամոքս>Սչ. ըսդ՝օմաքս, ըսդ՝օմախ
 ստեղծել>Սչ. ըսդեղծել, Լհ. ըսդ՝էղծէլու
 ստորագրել>Սչ. ըսդ՝օրագ՝րել
 վաստակ>Սչ. Լհ. վասդ՝ադ
 վաստակիլ>Սչ. վասդ՝ըգել, Լհ. վասդ՝ըգէլու
 տաշտ>Սչ. դաշդ՝
 քրիստոնեայ>Սչ. քրիսդօնյա, Լհ. խրիսդ՝օնա:

Յուցակից երեւում է, որ լեհահայ բարբառը ավելի հաճախ տարիմ է օրենքին, քան Սուշավայի բարբառը, որ տեղ-տեղ դնում է պարզ դժբախտական դ՝ի: Կարծում եմ, սա գրական լեզվի արդեցությամբ է:

Նկատենք նաև, որ երկու դեպքում ց բաղաձայնն էլ վերածվելով ա-ի, ստացել է դ-ի տեղ դ՝:

Անաստուած>Սչ. աճասվաց բառի մեջ դ ընկած լինելով՝ փոփոխություն չկա:

— Պատիկ բառի մեջ ալ դարձել է բ, որի ազդեցությամբ էլ ա դառնալով գ, բաղաձայնը մնում է դ:— Իսկ ստախօս բառի մեջ

ը ձայնավորը ներմուծվելով՝ դ մնացել է առանձին և չի դարձել դ'։

— Գրականից ազդված բառերի մեջ դ դարձել է ք. այսպես են՝

անդադար > Սչ. անթաթար
անդամալոյծ > Սչ. անթամալուց
անդունդ > Սչ. անթունթ
արդար > Սչ. արթար.

խիկ ձանկոտեի > Սչ. ջանքըթեի (հմմտ. Պլ. ջանգառք «ճանկ, ճիրան») բառի մեջ ա > ք սաստկության համար է։

— Խուլ բաղաձայնի մոտ դառնում է դ', ք. այսպես՝
հոտոտեի > Սչ. հոդ'ֆըդալ
միտք > Սչ. միթդ', ևն. միդ'ք.

սրա բայը՝ Սչ. մըթքեի, ևն. մըդ'քէլու.

շխտի > Սչ. շըլըխդ'ի
ոտք > Սչ. ղոդ'դ' ևն. վըդ
ուխտաւոր > Սչ. ուխդ'ալօր
տախտակ > Սչ. ևն. դախդ'ադ
փտիլ > Սչ. փթեի, ևն. փըդդ'էլու
օգտիլ > ևն. դօդ'դ'իք «բավ է»
խստոր > Սչ. սըխդ'օր, ևն. սըխդ'ըր
փոնգոտալ > Սչ. *փըռընքթալ > փըռընթալ.

— Բայց կարող է մնալ նաև դ. ինչ.

հավատք > Սչ. հավադք, ևն. հավադ
յետք > Սչ. յէդդ'ը
գաղտուկ > Սչ. գ'ախդուգ
գաղտնի > Սչ. գ'ախդնի
պարտք > Սչ. բարդք, ևն. բարդ'ք
պէտք > Սչ. բէդդ', ևն. բէդդ'է։

— Բառավերջում ա դառնում է ընդհանրապես դ. այսպես՝

Ձայնավորից հետո՝

ազատ > Սչ. ևն. ազադ
ազոտոտ > Սչ. ադդօդ

աղքատ > Սչ. ախքադ, և՛. ախգ'ադ
 ամաչկոտ > Սչ. ամընչգօդ
 բորոտ > Սչ. բ'օրօդ
 խոտ > Սչ. և՛. խօդ
 խրատ > Սչ. և՛. խըրադ
 կապոյտ > Սչ. և՛. գարբուդ
 կարկուտ > Սչ. և՛. գարգուդ
 կարօտ > Սչ. դարօդ (եղկու իմաստով)
 կոպիտ > Սչ. գօբիդ
 կորկոտ > Սչ. գօրգօդ
 կուտ > Սչ. և՛. գուդ
 մարգարիտ > Սչ. մարգ'արիդ, և՛. մարգ'իդ
 մօտ > Սչ. և՛. մօդ
 հատ > Սչ. հադ
 հեւ > Սչ. հէդ, և՛. հեդ
 հոտ > Սչ. հօդ, և՛. ֆըդ
 շատ > Սչ. և՛. շադ
 սուտ > Սչ. և՛. սուդ
 փայտ > Սչ. և՛. փադ:

Օտար (եղրոպական) նոր փոխառութիւնն է՝

պալատ > Սչ. բ'ալադ', որ ունի վերջածայն դ', իսկ մայրա-
 պետ քառք ստանալով սլավոնականի իզականակերտ -ka մասնիկը
 դարձել է մարաբեդ'գ'ա (marabetka):

— Ու բաղաձայնից հետո, վերջածայնն ա դառնում է սովորաբար դ. այսպէս՝

աշակերտ > Սչ. աշագերդ
 գորտ > և՛. օգ'ըրդ
 հանդարտ > Սչ. հանգ'արդ
 հպարտ > Սչ. և՛. հաբարդ
 պորտ > Սչ. բօրդ, և՛. բըրդ
 սերտ > Սչ. սերդ «խիտ՝ սանտը» և այլն
 սիրտ > Սչ. սիըրդ, և՛. սիրդ
 ցուրտ > Սչ. և՛. ցուրդ:

Միայն սաղաւարտ > Սչ. սաղաւարդ՝ բառի մեջ բառա-
 յվերջի ա > դ':

— Բառավերջում, խուլ կամ խլացած բաղաձայնից հետո,
ունենք ա ձայնի հետևյալ օրինակները.

աղտ>Սչ. ախթ, սեռ. ախդի
անդունդ>Սչ. անթունթ
բախտ>Սչ. բ'ախ'դ «ամուսին»
ուխտ>Սչ. ուխդ'
ջուխտ>Սչ. ջուֆդ', և՛. ջուվդ':

Սրանց մեջ դստում ենք դ. դ', թ զանազան պատճառներով:

Բ

— Բառակզրում չկա:

— Բառամիջում մնում է միշտ բ. եղած շատ բազմաթիվ
օրինակներից հիշենք հետևյալները.

այրել>Սչ. էրել, և՛. էրելու
արծաթ>Սչ. և՛. արծաթ
արծակել>Սչ. արցագել, և՛. ացգ'ըրելու
բարձր>Սչ. բ'արցըր, և՛. բ'արձ'ր
բրդել>Սչ. բ'րդ'ել, և՛. բ'ըրդ'ելու
դրացի>Սչ. և՛. դ'րացին
երազ>Սչ. յերազ, և՛. էրաձ
երգնուլ>Սչ. էրֆընալ, և՛. էրդ'վընալու
երեկոյ>Սչ. և՛. իրգուն
էրէրալ>Սչ. էրէրալ
ընտրել>Սչ. ընդրել, և՛. ընդրելու
թըջել>Սչ. դ'ըրջ'ել, և՛. թըրջ'ելու
խորիսխ>Սչ. խօրիս
կարկուտ>Սչ. և՛. գարգուդ
կրակ>Սչ. և՛. գըրադ
համարիլ>Սչ. համրրել, և՛. համրրելու
հարիւր>Սչ. և՛. հարուր
հարսանիք>Սչ. և՛. հարսնիք
հօրաքոյր>Սչ. և՛. հօրքուր
մարգարիտ>Սչ. մարգ'արիդ, և՛. մարգ'իդ
ցորեան>Սչ. և՛. ցորեն և այլն

— «Ուլուր»> և՛. ուլուր բառի մեջ զույգ բ-երից առաջի-
նը տարանմանության դարձրել է լ.

— Զրհոր բառը թեև Սուչավայի բարբառում մնում է չ'ըր-
ևօր, բայց լեհահայ բարբառում դարձել է չ'իշվըր, ուր կրկին
ք-երից առաջինը դարձել է շ:

— Բառավերջում ք նմանապես մնում է ք՝ առանց բացա-
ռություն. բազմաթիվ օրինակներից հիշենք հետևյալները.

ալիւր>Սչ. և. ալուր, Ռմ. լուր

ամուր>Սչ. և. ամբուր

եղբայր>Սչ. և. ախր'ար

եղջիւր>Սչ. յէխշիուր (պտուղը)

թանձր>Սչ. դ'րանձը, և. թանձր

թուր>Սչ. և. թուր

խմոր>Սչ. խմօր, և. խըմէր

խնձոր>Սչ. խընձօր, խընձըր, և. խընձըր

ձանր>Սչ. ձանդրը, և. ձանդր

կերակուր>Սչ. գերագուր, և. գիրագուր

կոյր>և. գուր

հազար>Սչ. և. հազար

հայր>Սչ. և. հար

մանր>Սչ. մանդրը, և. մանդր

մեղր>Սչ. մեղրը, և. մեղր

մօրաքոյր>Սչ. և. մօրքուր

նոր>Սչ. նօր, և. նըր

ոչխար>Սչ. և. օչխար

ոսկր>Սչ. օսդ'օր, և. օսդ'ըր

ջուր>Սչ. և. ջուր

աագր>Սչ. դաքրը

քոյր>Սչ. և. քուր և այլն:

Հունգարահայոց բարբառում գտնում ենք գրծ. թոօվ չթու-
քով:

Պանոթ.— Ըստ Հանուշի՝ լեհահայ հնչման մեջ ք և ռ տարբերություն չու-
նեն. այս մասին տե՛ս ձայնախոսություն հիշ:

3

— Բառասկզբում ց մնում է միշտ ց. այսպես՝

ցած>Սչ. ցաձ, և. ցաձ'

ցանել>Սչ. ցանել, և. ցանէլու.

ցաւ>Սչ. և. ցազ
 ցեղ>Սչ. Ռմ. ցեղ
 ցորեան>Սչ. և. ցօրեն
 ցուրտ>Սչ. և. ցուրդ
 ցուցանել>Սչ. ցըցընել, և. ցըցնելու և այլն:

(ցանցառ բառը, որ Սչ. ունի ցանցառ ձևը, Հանուշը արձանա-
 դրում է և. ձ'անձ'առ ձևով, բայց չի հիշում Lautlehre, 61).

— Բառամիջում ց մնում է նմանապես ց. բազմաթիվ
 • լրինականերից հիշենք՝

դրացի>Սչ. և. դ'րացին
 զրուցել>Սչ. զուրուցել, և. զուրուցելու
 իմացուցանել>Սչ. իմաց/նել, և. իմացնելու
 կացին>Սչ. և. գացին
 հրամ(այ)եցէք>Սչ. և. հրամէցէք
 ջրաղացք>Սչ. ջեղացք, և. ջ'աղացք
 ցուցանել>Սչ. ցըցընել, և. ցըցնելու
 քաղցած>Սչ. և. քախցած
 քաղցը>Սչ. քախցըրը, և. քաղցը
 քացախ>Սչ. քացախ և այլն:

— Ձայնական այն օրենքը, որով ուրիշ բարբառներում
 բաղաձայնից առաջ ց դառնում է ա, կա նաև այստեղ. օրինականե-
 րը երկու են.

խոցտել>Սչ. խօսդ'ել
 խոցտուկ>Սչ. խօսդ'ուկ.

Բայց այդ ընդհանուր չէ, և դուրս են մնում՝

մուրացկան>Սչ. մուրացգան
 երէցկին>Սչ. իրիցգ'ին
 տղացկան>Սչ. դըղօցգան
 քացախիլ>Սչ. քացխիլ:

— Բառավերջում ց մնում է ց. ինչ.

բաց>Սչ. և. բ'աց
 դիմաց>Սչ. դ'իմաց
 թաց>Սչ. և. թաց
 լաց>Սչ. և. լաց
 ծոց>Սչ. ձօց

կամաց>Սչ. դամաց, Լհ. դամաձ! (gamadz)

կապոց>Սչ. դարօց, Լհ. դարբց

հաց>Սչ. Լհ. հաց

վեց>Սչ. Լհ. վեց և այլն:

— Ճրագալոյց բառը, որ գրական փոխառությամբ մնում է Սչ. ջրաքալոից, ժողովրդական ստուգաբանությամբ էլ դարձել է Սչ. ջրաքալուիս:

Ոսկից «Ռրտեղից» մակերայր դարձել է Լհ. ուսգ'իդ, որի մեջ վերջաձայն ց>ղ ձայնափոխությունը ըստ իս լեհ. skąd հոմանիշի նմանությամբ է:

Փ

— Բառասկզբում մնում է փ. հիշենք այստեղ մի քանի օրինակ (մյուսները տե՛ս բառացանկում).

փաթաթել>Սչ. փաթել, Լհ. փադդ'ելու

փախչիլ>Սչ. փախչել, Լհ. փախչելու

փայլիլ>Սչ. փայլել, Լհ. դի փայլէ, «փայլատակում է»

փայտ>Սչ. Լհ. փադ

փեսայ>Սչ. Լհ. փէսա

փռչիլ>Սչ. Լհ. փռչի

փոս>Սչ. փօս, Լհ. փօս, փըս

փոր>Սչ. փօր, Լհ. փըր

փուռն>Սչ. Լհ. փուռ

փչել>Սչ. փչել, Լհ. փըչէլու

փտիլ>Սչ. փթել, Լհ. փըդդ'ելու:

— Երեք բառ (փառք, փլիլ, փնտռել) թեև Սչ. ունեն փ նախաձայնը (փառք, փլել), բայց լեհահայ բարբառում ունեն բ' նախաձայնը (park', բ'ըլէլու, բ'ըլցընէլու, բ'ընդրէլու):

— Բառամիջում նմանապես փ մնում է փ. եղած օրինակներն են՝

ափսոս>Սչ. ափսօս

գաղափար>Սչ. դաղափար «գրատախտակ»

եփել>Սչ. յէփել, Լհ. էփէլու

թափել>Սչ. թափել «թափ տալ», որից կրկ. թափթրփել

«փռչին թափ տալ»

Թափօր>Սչ. Թափուր
 Թեփոտ>Սչ. Թէփօդ (ցորեն)
 Խփել>Սչ. Խփել «աչքերը փակել»
 Ծեփել>Սչ. ձեփել, Լհ. ձէփէլու
 շամփուր>Սչ. շամփուր
 շփել>Սչ. շփել
 Հափել>Սչ. Հափել, Լհ. Հափէլու, որից կրկ. Սչ. Հափչըփել
 սարսափել>Սչ. սարսափել:

— Բառավերջում եղած օրինակներն են.
 ափ (ձեռքի)>Սչ. Լհ. ափ
 Թեփ>Սչ. Թեփ (ցորենի), Թէփուգ (գլխի)
 ծեփ>Սչ. ձեփ
 Հափ>Սչ. Հափ, Լհ. Հաբ'!

Ք

— Բառասկզբում ք մնում է ք. օր.

քաղաք>Սչ. Լհ. քաղաք
 քաղցր>Սչ քախցրը, Լհ. քաղցր
 քամել>Սչ. քամել, Լհ. քամէլու
 քամի>Սչ. Լհ. քամի
 քայլել>Սչ. քալել, Լհ. քալէլ «քայլածք»
 քանի>Սչ. Լհ. քանի
 քառասուն>Սչ. Լհ. քառսուն
 քար>Սչ. Լհ. քար
 քարշել>Սչ. քաշել, Լհ. քաշէլու
 քեռի>Սչ. Լհ. քէռի
 քիթ>Սչ. Լհ. քիթ
 քոյր>Սչ. Լհ. քուր
 քիրան>Սչ. քըրդինք և այլն:

Մի քանի դեպքում, բառասկզբի ք թեև մնում է Սուչափայի բարբառում, բայց Հանուշը գրում է գ' (k), որ ըստ իս շփոթած պետք է լինի kh-ի հետ: Այսպես են՝

քահանայ>Սչ. քահանա, Լհ. գ'ահանա
 քաղել>Սչ. քաղել, Լհ. գ'աղէլու
 քաղցած>Սչ. քախցած, Լհ. գ'ախցած

քիչ>Սչ. քիչ, Լհ. գ'իջ'
քսան>Սչ. քսան, Լհ. գ'սան.

(Առաջինը հաստատվում է Ալշ. Ախց. գ'ախանա, Նեխ. (գեղջկան-
կան) գ'ախանա ձևերով, վերջինն էլ Վն. կսան ձևով):

Պետք է հիշել նաև քրիստոնեայ>Լհ. խրիսդ'ոնա, ուր ք>
խ օտար ազդեցության արդյունք է:

— Բառամիջում ք մնում է նմանապես ք. եղած օրինակ-
ներն են՝

աղքատ>Սչ. ախքադ, Լհ. ախգ'ադ

թքանել>Սչ. թըքնել

խաչակնքել>Սչ. խաչագընքել

խելքով>Սչ. խէլքօւ, Լհ. խըլգ'ով

խնքոտ>Սչ. խլինքօդ

կայծքար>Սչ. գաձքար

կնքամայր>Սչ. գընքըմար

կնքել>Սչ. գընքել

հօրաքոյր>Սչ. Լհ. հօրքուր

ձեղքել>Սչ. ջըխքել

մօրաքոյր>Սչ. Լհ. մօրքուր

ներքսն>Լհ. մէգ'սեմ «ստամոքս»

շաքար>Սչ. Լհ. շաքար

չորեքշաբթի>Լհ. չօրօք!

ստամոքս>Սչ. ըսդ'օմաքս, ըսդ'օմախ (եվրոպական ազդե-
ցությամբ)

տաքանալ>Սչ. դաքնալ

տքալ>Սչ. դըքալ (հիվանդի)

ցամաքիլ>Սչ. ցամքել

*քաքել>Լհ. քաքէլու

քրքրել>Սչ. քրքրել:

— Հետաքրքրական ձև է կնքահայր>Սչ. գընդըհադ, ուր
ճ-ից հետո ք դարձել է գ. միջնդեռ կնքամայր>Սչ. գընքըմադ
բառի մեջ ք մնում է. ճիշտ նույնն է նաև Պոլսի բարբառում.
Կրկույթը անբացատրելի է:

— Բառավերջի ք-ի համար նախ պետք է հիշել գրաբարի
անեզական բառերը, որոնք բարբառներում եզակի դառնալով
պահում են ընդհանրապես իրենց ք վերջաձայնը: Ահա նրանց
ցուցակը Առտիալի բարբառում:

աղիք>Լհ. աղէք „saucisson“
 աղօթք>Աչ. Լհ. աղօթք
 անէծք>Սչ. անէցք
 անխելք>Սչ. անխէլք
 աշխարհք>Սչ. աշխարք
 աչք. >Սչ. Լհ. աչք
 ապրանք>Սչ. Լհ. աբրանք
 արևելք>չՍ. Լհ. արեվելք
 արտասուք>Սչ. արգասուէք, Լհ. արդուսուէք
 բաղանիք>Սչ. բ'աղնիք
 բամբասանք>Սչ. բ'ամբասանք
 բանալիք>Սչ. բ'ալլինք, Լհ. բ'ալինք
 գիրք>Սչ. գ'իբրք
 գովասանք>Սչ. գ'ովասանք
 գծովք>Սչ. գ'ըծովք
 եռք>Սչ. յէռք
 երեք>Սչ. Լհ. իրեք
 երկինք>Սչ. յէրգինք, Լհ. էրգինք
 զարդարանք>Սչ. զարդ'արանք
 զարմանք>Սչ. զարմանք
 ղըոյցք>Լհ. զուրուցք
 ընտանիք>Սչ. ընդանիք

իրք>իք, որ ուրիշ բարբառներում գործածական է, իսկ
 այստեղ կա միայն Սչ. Ռմ. Լհ. իքմընա ճոչինչ, ոչ մի բան»,
 որ համառոտված է ի ք մըն ալ ճբան մըն ալ» ասուծթյունից:

լիցք>Սչ. լիցդ' ճհալի փորլից»
 խաղալիք>Սչ. խաղալիք
 խելք>Սչ. խելք, Լհ. խէլք
 խլինք>Սչ. խլինք
 խնդիրք>Սչ. խընդ'իրք
 խոստովանանք>Լհ. խօսդ'ովանանք
 խօսք>Սչ. խօսք
 ծալք>Սչ. ձալք (անկողնաշարք)
 ծնողք>Սչ. ձընօխք, Լհ. ձէնօխք
 կամք>Սչ. գամք
 կեանք>Սչ. Լհ. դյանք
 կերպարանք>Սչ. գերբարանք

կշիռք>Սչ. գըշէոք
 կողպէք>Սչ. գըմղագ!
 կողք>Սչ. գողք
 կուրծք>Լհ. գըուծ'ք
 հայրենիք>Սչ. հայրենիք
 հարկիք>Լհ. հարդիք «հարկինք»
 հարսանիք>Սչ. Լհ. հարսնիք
 հաւատք>Սչ. հավադք, Լհ. հավադ
 հեւք>Սչ-հեֆք, Լհ. հեւք
 հրամանք>Լհ. հրէմանքըդ «դու»
 հրաշք>Սչ. հրաշք
 ձեռք>Սչ. ձ'էոք, Լհ. ձ'էո
 մեղք>Սչ. մեխք, Լհ. մեղք
 մէջք>Սչ. մէչգ, Լհ. մէջ'ք
 միտք>Սչ. միթգ', Լհ. միդ'ք
 մօրուք>Սչ. միբուք, Լհ. միբուգ
 յետք>Սչ. յէդգ'ը
 յօնք>Սչ. Լհ. օնք
 նշխարք>Սչ. նշխարք
 շարք>Սչ. շարք
 շէնք>Սչ. շէնք
 շնորհք>Սչ. շնօրք
 շրթունք>Սչ. շրթունք
 ոտք>Սչ. վօդ'գ', Լհ. վըդ
 ուռուցք>Սչ. ուռացգ'
 պատանք>Սչ. բադանք
 պարծանք>Սչ. բարձանք
 պարտք>Սչ. բարդք, Լհ. բարդ'ք
 պէտք>Սչ. բէդգ', Լհ. բէդ'գ' (betk)
 ջրաղացք>Սչ. ջ'էղացք, Լհ. ջ'աղացք
 ջանք>Սչ. ջ'անք
 սովորոյթք>Սչ. սօրվուդ'գ', Լհ. սօրվուդ'ք
 վանք>Սչ. վանք
 վարդենիք>Լհ. վարդ'էնիք «վարդ»
 վարձք>Սչ. վարցք
 վարտիք>Սչ. վարդիք
 վճարք>Լհ. վիջարք
 տարիք>Սչ. դարիք

տիպար>Սչ. գ'իբ'ար, Լհ. Թիփարք
 փառք>Սչ. փառք, Լհ. բ'առք
 փշրանք>Սչ. փշրանք
 փորձանք>Սչ. փօրցանք
 քրտինք>Սչ. Լհ. քըրդինք
 օրէնք>Սչ. օրէնք:

Այս բոլորի մեջ նկատելի է, որ երբ ք գտնվի ձայնավորից, նայերից (լ, մ, ն, ր) և խ, ո, ս, շ շփականներից հետո, մնում է ք, իսկ գտնվելով ց, չ, դ, փ բաղաձայններից հետո, ստանում է մի այնպիսի անորոշ հնչում, որ լսողները մերթ զգում են ք, մերթ գ' և մերթ նույնիսկ զ:

Պատճ. 1.— Կողպէ (Պլ. գըղբանք, գըղբաք) բառը երևի իր վերջավորութիւնը շփոթել է փաղաքշական -ակ մասնիկի հետ և դարձել է Սչ. գըմգազ:

Պատճ. 2.— Երևի նույնպիսի վիճակի է ենթարկվել միտուբ բառը և, վերջավորութիւնը նույնացնելով -ուկ փաղաքշական մասնիկի հետ, դարձել է միբուգ:

Պատճ. 3.— Նաւակոսիք բառը ոչ թէ միայն փաղաքշական -իկ վերջավորութիւնը համարվելով, այլ և հյ. զատիկ բառի հետ կապակցվելով (հմմտ. հանրածանոթ առածը՝ «տարին մի զատիկ, էն էլ նաւակատիկ»), ստացել է այս բառի -տիկ > դիգ հանգը:

— Սանդուղք բառը (որի գրչութիւնը անորոշ է, բայց ըստ իս ծագելով հնգ. skand արմատից՝ -ուղ մասնիկով, հենց սանդուղք անեզական ձևն ունի) ժողովրդական ստուգաբանութիւնը կապակցվելով Սանդուխտ անվան հետ, ինչպես ուրիշ բարբառներում, նույնպես և այստեղ ստացել է Լհ. սանդուխդ՝ ձևը:

Պատճ. 4.— Կան բառեր էլ, որոնք գրաբարում անեզական չեն, բայց այստեղ անեզականի ձև են առել. ինչ.
 պատկեր>Սչ. բազգեր, Լհ. բազգէրք
 օդ>Սչ. օթք
 աշուն>Սչ. Լհ. աշունք:

— Վերջաձայն ք-ի անկախ ձևեր են ներկայացնում հետևյալ բառերը.

բուք>Սչ. բ'ուք, Լհ. բ'ուգ՝ «ձյուն»
 Թանաք>Սչ. Թանաք
 Թուք>Սչ. Լհ. Թուք

Ինքն>Սչ. Լհ. ինքը
 Կնունք>Սչ. գընունք
 հրամայեցէք>Սչ. Լհ. հրամէցէք
 Խելօք>Սչ. Խելօք, սրա նման էլ՝
 Նշանօք>Սչ. շանվօք «նշանտօք»
 շուք>Սչ. Լհ. շուք
 պատրիարք>Սչ. բարդիարք
 տաք>Սչ. Լհ. դաք
 ցամաք>Սչ. ցամաք
 քաղաք>Սչ. Լհ. քաղաք
 քաք>Լհ. քաք:

ՍՂՈՒՄ

Ձայնավորների սղման դեպքերը նշանակված են վերը՝ ամեն մի ձայնավորի քննության շարքում: Այստեղ ավելացնում ենք մի խումբ այլ կարգի սղման դեպքեր.

ա.—այն ատենը>Լհ. անդեմը «յայնժամ»
 այ.—ծառայութիւն>Լհ. ձառութիւն
 հրամայեցէք>Սչ. Լհ. հրամէցէք, Սչ. բամէցէք
 աւ.—առաւօտուն>Սչ. առվադուն, Ռմ. առվադանց
 է.—ամէն>Լհ. ամէն, ամֆօլ, ամըն-մէգ
 ի.—բարի երեկոյ>Լհ. բ'ար-իրգուն
 դաս մի>Լհ. դ'ասմ «մի քանիսը»
 լեղիութիւն>Սչ. լէղություն
 կտոր մի>Լհ. գըդըմ
 ե.—ունենալ>ուննալ

ԱՆԿՈՒՄ

Բաղաձայնների անկման օրինակներ՝ այբուբենական կարգով.

Բ.—Թամբք>Սչ. Լհ. Թամք
 Գ.—կանգնել>Սչ. գաննել, Լհ. գաննէլու
 փոնգտալ>Սչ. փրոընթալ
 Դ.—երդնուլ>Սչ. էրֆընալ, Լհ. էրդ'վընալու
 Վ.—Սչ.—սուտուրուց փխ. սուտզուրուց (Հուշարձ., էջ 362)

- լ.—հեծկլալ>Սչ. հէձգըդալ
շնորհակալ>Լհ. շնահագա
- խ.—խորիսի>Սչ. խօրիս
- կ.—աղջիկ-աղայ>Լհ. ախշիդգա
անկանիլ>Լհ. քննէլու
բռնկցնել>Լհ. բ'ըռընցնէլու
զարկանել>Սչ. զարնել, Լհ. զաբնէլու
մէկմէկ>Սչ. Լհ. մէմէգ
- հ.—դէհ «կողմ» բառից Սչ. մէգ'թի
հրամեցէք>Սչ. բ'ամէցէք
- դ.—խղճմտանք>Սչ. խըխջմըդանք, Լհ. խըջմէդանք
շաղախ>Լհ. շախ
ողկոյզ>Սչ. գուզ
- ւ.—զարուհի>Լհ. առջ'ի-գ'արու
նշանվել>Սչ. շանվել
նշանտուք>Սչ. շանվօք
- շ.—ինչպէս, թրք. ինչ սօյ>Լհ. ինցօյ
- պ.—այդպէս>Սչ. աթբէս, Լհ. ադէս
սպիտակ>Սչ. ըսդ'ադ «ստակ»
- տ.—աստուած>Սչ. ասված
պատճառ>Սչ. բաջառ
պարտք>Հնգ. բարք
- բ.—արժան>Սչ. աժան
արժել>Սչ. աժել, Լհ. աժէ
դուրս>Սչ. դ'ուրս, Լհ. դ'ուս
երանի>Հնգ. էնէկ «երջանիկ», էնէկություն «երջանկու-
թյուն» (ՀԱ, 1897, էջ 281)
երբ>Սչ. յէփ, Լհ. յէբ'
երթալ>Սչ. էրթալ, Լհ. էթալու
խարշել>Սչ. խաշել
կարժ>Լհ. գաժ
կտոր մի>Լհ. գըդըմ
ներքսի>Լհ. մէգ'սեվ «ստամոքս»
շնորհակալ>Լհ. շնահագա
տարգալ>Լհ. դ'իգ'ալ
քարշել>Սչ. քաշել, Լհ. քաշէլու
- ց.—առանց ճոթ>Լհ. առանջօդ'
- ք.—ներք>Սչ. ներք

Առնել «անել» բայը միջին հայերենից օկսած կորցրել է իր-
ն բաղաձայնը և ամեն տեղ դարձել է անել, էնել, ընել: Բաղա-
ձայնի անկման լավ օրինակ է Հնգ. սնդուկ բառի հոլովմունքը,
սեռ. սնկիւն, բցո. սնկէն, հգ. սընկընէրը (արեւմտյան տառագար-
ձությամբ կ'պիտի կարդալ գ):

Բաղաձայնից առաջ կիսապայթականի կրճատման օրինակ է՝
արսթէ > արծաթէ
արսթեղէն > արծաթեղէն (Բազմ., 1873, էջ 127):

Մարգարիտ բառի տեղ ունենք Լհ. և Հնգ. մարգ'իտ, որից
էլ մարգ'տեղէն «մարգարտեղեն», բայց արդյոք սա լեհերենից
փոխառութիւնն չէ՞:

Այժմ հավաքում եմ այստեղ բառերի մեծ հապավումները,
որոնք են.

հօրեղբայր > Սչ. Լհ. հօր'ար
ճանապարհ > Սչ. Լհ. ջամփա
ճանապարհորդ > Սչ. ջամփօրթ, Լհ. ջամփօրդ'
մարգարիտ > Սչ. մարգ'արիդ, Լհ. մարգ'իդ
չորեքշաբթի > Լհ. չօրօք:

Իսկ կօշկար > Լհ. գօշգ'ար, որ նաև գործածական է Ջթ. և
Սչ. ինչպես և մհյ. գրականության մեջ, ո'չ թե պրս. کاشگار kafšgar
ձևից է, ինչպես կարելի էր կարծել, այլ սղված է կօշկակար բա-
ռից՝ միասության օրենքով (haplologie):

Բաղաձայնի անկման լավ օրինակ է Լհ. չիդիմ «չգիտեմ»,
ուր գ ընկել է բառի հաճախակի գործածման պատճառով.

մըրէ Հնգ. «մտիկ ըրէ» (ՀԱ, 1898, էջ 48):

Հաճախակի գործածության պատճառով սղված ձև է Սչ.
ձ'երմանքը, ձ'երմանօցը «Դուք, Ձեր, Ձեզ», որ գործածական է
քաղաքավարի խոսակցության մեջ (Հուշարձ., էջ 362):

«Շնորհակալ եմ» բառը՝ զանազան կրճատումներ է ստացել,
որոնցից մեկն էլ է Հնգ. իշնական իմ (Բազմ., 1922, էջ 283):

ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ամենաշատ ք ձայնն է, որ տեղափոխվում է. օրինակներն են՝
արձակել > Սչ. արցագել, Լհ. ացգ'ըրէլու
դուստր > Սչ. դ'ուսդրը, Լհ. դ'ուզդ'ը

բայց նաև Սչ. դ՛րուսդ, սեռ. դ՛սդեր, դ՛րսդեր
 Թանձր>Լհ. Թանձր, Սչ. դ՛րանձր
 Թանձրանալ>Սչ. դ՛րանձանալ
 Կուրծք>Լհ. գրուձ՛ք
 սովորել>Սչ. սօրվել, Լհ. սօրվէլու
 սովորոյթ>Սչ. սօրվուդ՛դ՛, Լհ. սօրվուդ՛ք
 Հնգ. քուրֆ «նախատինք» (ՀԱ, 1898, էջ 105)>արար. kufɾ.

Ուրիշ բաղաձայններով են՝

աղանջ>Սչ. Լհ. անգաջ
 խոր-ունկ>Լհ. խըրուգն
 փետուր>Լհ. Թէրուր (բաղաձայնների աստիճանների էլ
 փոխանակությամբ):

խստոր>Սչ. սըխդ՛օր, Լհ. սըխդ՛ըր:

Վերջինս, որ բնդհանուր է համարյա բոլոր բարբառներին, իմ
 կարծիքով ծագել է սոխ բառի ազդեցությամբ. միշտ ասել են
 սոխ-խստոր, որով և շարքը դարձել է սոխ-սխտոր:

ՀԱՎԵԼՈՒՄ

Ամենաշատ և բաղաձայնն է, որ ավելացած ենք գտնում
 բառերի մեջ կամ նաև վերջը.—այսպես՝

ամաչել>Սչ. ամընչնալ, Լհ. ամունչնալու
 ամաչկոտ>Սչ. ամընչդօդ
 արտասուք>Սչ. արդասունք, Լհ. արդուսունք
 բանալիք>Սչ. բ՛ալլինք, Լհ. բ՛ալինք
 դարիվայր>Սչ. Լհ. դ՛արնիվար, բայց և Սչ. դ՛էրիվար, իսկ
 դարիվեր>Սչ. դ՛էրիվեր. անշուշտ և որոշիչ հոդ է, որ ապա ար-
 մատական է համարվել.
 դու>Սչ. դ՛ուն (բայց Լհ. դ՛ու)
 լի>լիք, ապա լիքն, ապա լինքը, Լհ. լինք
 կանաչ>Սչ. Լհ. գանանչ
 կանաչիլ>Սչ. գանանչել
 կրուկ>Լհ. գըրունգ:

Օտար բառերում՝ Թրք. suč «մեղք»>Լհ. սունջ՛ պրս. šaf-
 tālu «գեղձ»>Լհ. շար՛թալուն:

Ուրիշ բաղաձայններով ունենք՝

- բ.—ամռան>Սչ. ամբռան
ամուր>Սչ. Լհ. ամբուր
համարել>Սչ. համբրել, Լհ. համբրելու
թմրիլ>Սչ. թըմբրել
ձմռան>ձմբռան
հիմի, հիմա>Սչ. Լհ. հիմբի
դ.—բողարած>Սչ. բ'օզբրած
ծանր>Սչ. ձանդրը, Լհ. ձանդբ
մանր>Սչ. մանդրը, Լհ. մանբ
թրք. sus «լուռ»>Սչ. սուսդ՝
հ.—ազանիլ>Սչ. հաքնել, Լհ. հազ'նէվէլու
ամբար>Սչ. ամբար, համբար
արբենալ>Սչ. հարփել, Լհ. հարբ'էլու
լու>Լհ. լուհ, հգ. լըվեր
ուռնդ>Սչ. Լհ. հուռնդ:

Բառասկզբում միջին հայերենի նման ավելացել է ն ձայնը
Հնգ. հաբեղա բառի մեջ (ՀԱ, 1898, էջ 47):

Կարևոր է հիշել կնկողին ձևը փխ. անկողին (Բագմ., 1873.
էջ 128), ուր նախաձայն կ հավելված է:

- բ.—դուստր>Սչ. սեռ. դ'սդեր, դ'քսդեր:

Անսովոր հավելումներ են՝

- լ.—եղիճ>Սչ. լէղիջ (տես ե)

- կ.—եռալ>Սչ. գէռալ (տես ե)

- ի.—գալ>Սչ. իգ'ալ, Լհ. իգ'ալու (բայց տալ, լալ չունեն այս
հավելումը)

- օ.—գորտ>Լհ. օգ'ըրդ:

ԿՐԿՆԱԿ ԲԱՂԱՁԱՅՆ

Առտիալի բարբառը երբեմն ընդունում է բաղաձայնների
հրկնությունը, երբեմն էլ մերժում: Այսպես կրկնակ են՝

ամէն>Սչ. ամմէն, բայց Լհ. ամէն

անալի>Սչ. ալլի

բանալի>Սչ. բ'ալլինք, բայց հգ. բ'ալըսդան:

Մի քանի տեղ երբ երկու և պատահում են իրար կողքի, մեկը ջնջվում է. այսպես՝

անուն>Սչ. և՛. անուն, հգ. անըներ! Հնգ. աննուն, գրծ. ան-
նընով

անօրէն>Լհ. անօրէ! հգ. անօրէներ!

արթնանալ>Սչ. արթընալ (նչ արթըննալ)

եղանել>Սչ. յէլել, և՛. էլէլու (ոչ էլլել)

լինել>Սչ. ըլալ, իլալ, և՛. իլալու (ոչ ըլլալ)

լման Սչ. լըմընալ «վերջանալ» (ո՛չ լըմըննալ)

հասունանալ>Սչ. հասընալ (թեև և՛. հասըննէլու)

խալիին>Սչ. և՛. խալգին. հգ. և՛. խալգըներ

փաթաթել>Սչ. փաթել (ո՛չ թե պարզական արմատից, այլ

նախ փաթթել, ապա մի ք զեղչելով փաթել՝ ինչպես ցույց է տա-
լիս իր համարժեք և՛. փաղդէլու ձևը:

փտիլ>Սչ. փթել, և՛. փըդէլու

ընդհակառակը զույգ և պահված՝

կանգուն>գանգուն, գանգըններ

թրք. miskın>մըսքին «խեղճուկրակ», մըսքըններ

բանտուն>բ՛ան-դուն, բ՛անդըններ «Փարբիկա»

չուան>չուվան, չուվըններ

սաւան>սավան, սավըններ

yorğan>յօղրան «վերմակ», յօղըններ

դերձան>դ՛էրձ՛ան, դ՛էրձ՛աններ

դրացի>դ՛րացին, դ՛րացըններ

թռչուն>թռջ՛ուն, թռջ՛ըններ

տուշման «թշնամի», հգ. դուշմըններ

մարմին հգ. մարմըններ:

ՆՄԱՆՈՂՈՒԹՅՈՒՆ

Ձայնավորների ներդաշնակության օրենք չկա Առաիալի
բարբառում, եթե չհաշվենք ը ձայնավորի հարմարումը ու-ի հետ,
որի օրինակները տես ը ձայնի տակ:

Երևի նմանողության օրենքը պահանջում է նաև, որ երբ
ը ձայնավորը գտնվի ու ձայնավորից առաջ, գառնա օ. սրա
օրինակներն են՝

եղունգ>Սչ. օղունգ, և՛. օհունգ

ուղեղ>Լհ. օղուղ

բոնկիլ>պոնձ. և՛. բ՛ըռընցնէլու, բ՛օռունցնէլու:

Վերջին օրինակում ունենք թե՛ ք-ով և թե՛ օ-ով ձևը, ինչ որ ցույց է տալիս, թե նախորդ երկուսն էլ անցած պետք է լինեն նույն ճամփով (այն է՝ ըզունգ, ըզուդ):

ման գալ > չնգ. մամ ի գալ (ՀԱ, 1898, էջ 48) վերջաձայնը նախաձայնի նմանողությամբ:

Ձորեքշաբբի բառը, որ սղմամբ դարձել է իհ. *չօրեք, հետո էլ ձայնավորների նմանեցմամբ դարձել է չօրօք:

ՏԱՐԱՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս ձայնական երևույթի համար ունենք միայն մի օրինակ, որ է՝

ուրուր > իհ. ուլուր «արծիվ»:

չնգ. կա քըլլետեի «քննել» (ՀԱ, 1898, էջ 105), որ անշուշտ ծագած է քննտել ձևից:

Տարօրինակ կազմություն ունի չնգ. մըրջբբուն «մրջյուն» (ՀԱ, 1898, էջ 48), որ անշուշտ մրջբոյն «մրջյունի բույն» բառն է՝ նշանակությունը փոխված:

Ձայնական օրենքներին չենթարկվող բառերից մեկն է իհ. ձրննեղը՝ «ծիծեռնակ», որ Հանուշը, էջ 48, գրբ. ճննդայ բառի հետ է կապում: Ըստ իս այս բառը հյ. ցննդուկ > Սշ. իհ. ջունջուլուխ ձևի նմանությամբ է կազմված՝ խաչաձևվելով ծիծեռնակ բառի հետ, որից մնացել է միայն նախաձայնը և վերջաձայնը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Առտիալի բարբառում ձայնավորները ընդհանրապես անփոփոխ են մնում, ե շեշտի տակ ստանում է երկրաբբառային հնչում, իսկ շեշտից առաջ դառնում է է. միավանկ բառերի սկզբում հնչվում է յե, իսկ բազմավանկերի սկիզբը մերթ յե, մերթ է. — ի ձայնավորը շեշտի տակ, բայց միայն ք բաղաձայնից առաջ, Սուշավայի բարբառում ստանում է երկրաբբառային իը հնչումը. — ո ձայնավորը միավանկ բառերի սկիզբը դառնում է վօ, իսկ բազմավանկերի սկիզբը՝ օ. — բառամիջում երկրաբբառային հնչում չունի. — վերջավանկում, շեշտի տակ, շատ անգամ դառնում է ը. — եռավանկ բառերի միջին և ձայնավորը հաճախ սղվում է, բայց մյուս ձայնավորները՝ քիչ անգամ:

Երկրաբբառները, ինչպես ուրիշ բարբառներում, նույնպես

և այստեղ, դառնում են կամ ձայնավոր և կամ կազմում են ձայնավոր-բաղաձայն խմբեր: Հետաքրքրական է, որ աւ երկբարբառը բառավերջում հաճախ պահում է իր երկբարբառային աւ (au) հնչումը. այսպես նաև իւ երկբարբառը (իու):

Բաղաձայններից՝ հին թրթռունները (բ, գ, դ, ձ, ջ) դառնում են շնչեղ թրթռուն (բ', գ', դ', ձ', ջ'). պարզ խուլները (պ, կ, տ, ծ, ճ) դառնում են պարզ թրթռուն (բ, գ, դ, ձ, ջ), իսկ թավերը (փ, ք, բ, ց, չ) մնում են անփոփոխ: Կան դեպքեր, երբ շնչեղ թրթռունները (բ', գ', և այլն) շփոթվում են թավերի հետ (փ, ք...):

Մյուս բաղաձայնները ընդհանրապես անփոփոխ են մնում:

Այն ձայնական օրենքը, որով կիսապայթականները (ծ, ծ, ց, ջ, ճ, չ) բաղաձայնից առաջ վերածվում են իրենց մասերին, (ս, գ, ժ, շ) քիչ է նկատվում այստեղ:

ՉԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՈԳՆԱԿԻԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Թե՛ Սուշավայի, և թե՛ լեհահայ բարբառում հոգնակի կազմելու համար բառի ծայրին ավելացնում են -եր կամ -ներ մասնիկը. առաջինը միավանկ բառերի համար, երկրորդը բազմավանկ բառերի համար. օր.

Սչ. լհ. հաց, հացեր

ձագ>Սչ. լհ. ձագ, ձագեր

ձայն>Սչ. լհ. ձան, ձաներ

ցաւ>Սչ. լհ. ցավ, ցավեր

չափ>Սչ. լհ. չափ, չափեր

չար>Սչ. լհ. չար, չարեր

սոխ>Սչ. սօխ, սօխեր, լհ. սըխ, սըխեր

թոռ>լհ. դ'ֆուր, դ'ֆըր (tfur, tfər), հգ. tfurier, tfurier

թուղթ>լհ. թուխթ, թըխթեր (դրված t'əxtier)

դար>լհ. դ'ար «լեռ», դ'արեր «լեռներ»

(Անկանոն է լու>լհ. լուհ, հգ. լուվեր):

Բազմավանկ բառեր

արածող>լհ. արձող «հովիվ», արձողներ

ոսկր, ոսկոր>լհ. օսգ'ըր, օսգ'ըրներ

աթոռ>լհ. աթըռ, աթըռներ

աղուէս>լհ. աղվես, աղվէսներ

արդարեղ>լհ. արդ'արեղ, արդ'արեղներ

պատկեր>լհ. բադդէրք, բադդէրքներ

տղայ>Սչ. դղա, դղաներ

ճանահւոք>Սչ. ջանջ'ֆօր, ջանջ'ֆօրներ:

Մեկեկես վանկանի բառերը մերթ ստանում են -եր և մերթ
-ներ մասնիկը, օր.

ասող>լհ. ասդ'ըղ, հգ. ասդ'ըղեր

ոսկր>լհ. օսգ'ըր, օսգ'ըրներ:

Հոգնակի կազմելու համար օտար բառերն էլ ընդունում
են -եր, -ներ մասնիկները. օր.

miskin>մըսքին «խեղճ ու կրակ», մըսքըններ

yoryan>յօղրան «վերմակ», յոգրըններ

bayča>բախչա «պարտեզ», բախչըններ

գ'ուրգ'ան (ռում.) «պալատ», գ'ուրգ'ըններ

jepure (ռում.)>յէբ'ուր «նապաստակ», հգ. յէբ'ուրներ

թրք. özge>օզգա, օզգաներ

թրք. adat>ադաթ «սովորույթ», ադաթներ

թրք. ayača>աղաչա «պարոն», աղաչաներ

թրք. araba>արբա «սայլ», արբաներ

ռում. berbeč>բէրբէջ «ոչխար», բէրբէջներ

թրք. bela>բէլա «փորձանք», բէլաներ

ռում. ban «փող»>լհ. բան, բաներ

ռում. тѣсѣ>լհ. մըձ'ա «կատու», որից և.

մըձ'իգ «փիսիկ», հգ. մըձ'իգներ

թրք. soy>լհ. սոյ «ազգական», հգ. սոյեր:

Երբ օտար միավանկ բառը սկսվում է երկու. բաղաձայնով,
հայերենում բնականաբար համարվում է երկավանկ (ըստ որում
երկու բաղաձայնների միջև ավելացվում է ը ձայնավորը), բայց
լեհահայ բարբառը գրանք համարում է միավանկ և հոգնակի
կազմելու ժամանակ դնում է -եր մասնիկը: Այսպես՝

սնօր' (լեհ. snop) «խուրձ», հգ. սնօր'եր.

գ'րուգ' (լեհ. kruk) «ազոավ», հգ. գ'րուգ'եր.

հրիբ (ռուս. hryb) «սունկ», հրիբեր

հրուբ (ռուս. hruba) «վառարան», հրուբեր

stol>սգ'օլ «սեղան», սգ'օլեր:

Կան մի քանի դեպքեր, երբ միավանկ բառը լեհահայ
բարբառում ստանում է -ներ մասնիկը. ուրիշ դեպքերումն էլ,
ընդհակառակը, բազմավանկ բառն ստանում է -եր մասնիկը. Այս-
պես՝

Միավանկ (-ներ)

քիթ > քիթ, քրթներ
քոյր > քուր, քուրներ
փոր > փըր, փըրներ
էշ > էշ, հգ. էշներ (Հանուշ, էջ 53):

Բազմավանկ (-եր)

բրինձ > բ'րինձ, բ'րինձեր
սօլօվիյ «սոխակ» > սոլս. СОЛОВЕЙ, հգ. սօլօվիյեր
մէգսէվ «ստամոքս», հգ. մէգսէվեր
բարեկամ > բ'արէգամ, հգ. բ'արէգամեր:

Առանձին պարագա է այն, երբ և վերջացող մի բառ՝ հոգնակիի -ներ մասնիկն ստանալու ժամանակ սղում է մի և, կըրկնակ և-ից խուսափելու համար, օր. լհ. անուն, հգ. անըներ:

Գրաբարում և վերջացող բառերից մի քանիսը հոգնակում կարող են պահել իրենց և վերջավորությունը (որով թվում է, թե միավանկ բառի հոգնակին կազմվում է -ներ մասնիկով): Այսպես են՝

ձուկն > լհ. ձ'ուկ, ձ'ըզներ
հարսն > լհ. հարս, հարսներ
դուռն > լհ. դ'ուռ, դ'ըռներ
մուկն > լհ. մուկ, մըղներ
եզն > լհ. յէզ, յէզներ
գառն > լհ. գ'արը (karr), հգ. գ'առներ
լեռն > լհ. Սչ. լէռ, լէռներ:

Միջին հայերենից մնացած, այժմ անսովոր մասնիկներ են հոգնակիի համար՝

-ան

ձի > լհ. ձ'ի, ձ'իան
խոտ > լհ. խօդ, խօդան
գիւղ > լհ. գ'էղ, գ'էղան:

-տաք, -տիք

հեծելուոր > լհ. հէձէլվըր «գինվոր», հգ. հէձէլվօրդաք
ոսկոր > լհ. օսգ'ըր, օսգ'ըրներ, օսգ'ըրդիք

կին>Սչ. Լհ. գընդգ, հգ. գընդիք, Հնգ. գնդոց
եղըայր>Սչ. Լհ. ախր'ար ախր'ըրդիք (նաև Հնգ.)
քոյր>Սչ. Լհ. քուր, Սչ. հգ. քըրվըդիք
ընկեր>Սչ. ընգեր, հգ. ընգէրդաք
կօճկըտիք Հնգ. «կոճակներ»
Հնգ. խապրտիք «լուրեր» (Բազմ., 1893, էջ 578):

-օրանք

Այս մասնիկով գտնում եմ միայն՝

բերդ>Լհ. բ'երդ' «բաղ», հգ. բ'երդ'եր, բ'ըրդ'օրանք
տեղ>Լհ. դեղ, հգ. դէհրանք «անկողին»
Հնգ. դ'եղրանք «դեղ» (ՀԱ, 1897, էջ 281)
Սրանցից էլ՝ -նք մասնիկով Լհ. քօվրանքներ «կողքերը»:

-նի

Հոգնակի -նի մասնիկը չի գործածվում այժմ, բայց տեղ-
տեղ իր հետքերը թողել է. այսպես Լհ. օդվէն ու հագ'նիչ «կոշիկ,
ոտնաման» ծագում է օդվընի «ոտներ» ձևի սեռականից: Հնգ.
անընի, որ և անըներ «անուններ»:

Սուչավայի և լեհահայ բարբառներում մարմնի անդամ
ցույց տվող բառերը կարող են ստանալ հոգնակիում -վի, -վըներ
մասնիկը.

ոտն>Լհ. վըդ, օդվըներ, Սչ. վօդ'դ', հգ. վօթքեր, վօդվըներ
մատն>Լհ. Սչ. մադ, մադվըներ
ձեռն>Լհ. ձ'էո, ձ'էովըներ
աչք>Լհ. աչք, աչվի, աչվըներ, Սչ. աչվըներ
ծունկ>Լհ. ձոնգ, ձոնգվի, Սչ. ձընգվըներ
եղունգն>Լհ. օնոնգ, օնոնգվըներ
յօնք>Լհ. օնք, օնքվի, Սչ. օնք, օնքֆի, օնքֆըներ
ականջ>Սչ. անգաջ, ագընջվըներ
մէջ>Հնգ. մէջվըներ (մեջերնին):

Սրանցից դուրս կա նաև դուտար բառը, որ հոգնակին կազ-
մում է վի+ք մասնիկով.

դուտար>Լհ. դ'ուսդ'ը, հգ. դ'ըսդ'ըրվիք, Հնգ. դ'սդ'ըվիք:

Այս ձեերը չեն խանգարում, որ բառը նաև սովորական ձևով հոգնակի ունենա. օր. Սչ. աչք, աչքեր, աչվըներ, — վօգ'դ', վօթքեր, վօդվըներ, իսկ ձեռք՝ Սչ. ձ'էռքեր, չկա ձ'էռվըներ, որ գիտեն լեհահայերը:

ք ձևով հոգնակի

Լեհահայ բարբառում կենդանի մնացած ք ձևով հոգնակիները հետևյալներն են.

դ'ադըսդ'անջի «urędnik, officier (civil)», հգ. դ'ադըսդ'անջիք
մարդ > մարդ', հգ. մարդ'իք, մարդ'իզներ
դաշտ > դ'աշդ', հգ. դ'աշդ'ունք, դ'աշդ'եր
ոտնաւոր > օդըմվըր «garçon de noccs, հարսանիքի ազարները», հգ. օդըմվըրաք
որդի > օրդ'ի, օրդ'իք
տղայ > դըղա, դըղաք:

Սուշավայի բարբառով՝

աշակերտ > աշագերդ, աշագերդաք
բարեկամ > բ'արեգամ, բ'արեգամաք, բ'արեգամներ
թագաւոր > թաքավօր, թաքավօրաք
վարդապետ > վարդ'արեդ, վարդ'արեդաք
հարսնեւոր > հարսնավօր, հարսնավօրաք
տիրվրտանք Հնգ. «տերեր», Հնգ. տէրքերը
«տերերը»:

-վանք ձևով հոգնակի ունենք լեհահայ բարբառով՝ միայն գրգրըվանք «կտորտանք»:

Լեհահայ բարբառում շատ սովորական է -ստան ձևով հոգնակին, որ ըստ ձայնական օրենքի հնչվում է -ըսդ'ան և որին հետևում են բոլոր ի վերջացող բառերը, առանց բացառության: Ահա օրինակները.

ազի > Լհ. ազ'ի, ազ'ըսդ'ան
տարի > Լհ. դարի, դարըսդ'ան
կաշի > Լհ. գաշի, գաշէսդ'ան
կիւրակէ > Լհ. գիրագի, գիրագըսդ'ան

հայելի>լհ. հայլի, հայլըսդ'ան
 գինի>լհ. գ'ինի, գ'ինըսդ'ան
 գօտի>լհ. գ'օդի, գ'օդըսդ'ան
 քամի>լհ. քամի, քամըսդ'ան
 քեռի>լհ. քէռի, քէռըսդ'ան
 մայրի>լհ. մօրի «անտառ», մօրըսդ'ան
 ոսկի>լհ. օսգ'ի, օսգ'ըսդ'ան
 փռշի>լհ. փօշի, փօշեսդ'ան
 մատանի>լհ. մադնի, մադնըսդ'ան
 ալգի>լհ. էգ'ի, էգ'ըսդ'ան:

Նույնիսկ օտար լեզուներից փոխառյալ բառերը, եթե վերջավորվում են ի, հոգնակիում ստանում են -ստան մասնիկը. ինչ.

լհ. խամջ'ի «մորակ», խամջ'ըսդ'ան
 լհ. ուսգ'ուլի «վուշ» (փոխ. ռումիներենից),
 հգ. ուսգ'ուլըսդ'ան
 չնգ. կալածի «խոսք», կալածըստան (ՀԱ,
 1898, էջ 46)
 չնգ. հարսնսդ'ան «հարսնետուն»
 ռախի «օդի» (<թրք. րազ), հգ. ռախըսդ'ան
 սիլի «ապտակ» (թրք. sille), հգ. սիլըսդ'ան:

Նույնիսկ այնպիսի բառեր, որ նախապես վերջավորվել են ի, իսկ այժմ բարբառում տարբեր վերջավորություն են ստացել, դարձյալ ստանում են -ստան մասնիկը: Այսպես են՝

բանալի>լհ. բ'ալինք, բ'ալըսդ'ան
 ուտելիք>լհ. ուդէլու, ուդէլըսդ'ան
 հարսանիք>լհ. հարսնիք, հարսնըսդ'ան:

Ընդհակառակը դրացի բառը այժմ ստացած լինելով և հանգը (լհ. գ'րացին), հոգնակին կազմում է -նեք մասնիկով՝ գ'րացններ:

Այս բոլորից դուրս ունենք երկու բառ, մեկը բնիկ, մյուսը օտար, որոնք թեև տարբեր վերջավորություն ունեն, բայց հոգնակիում ստանում են -ստան մասնիկը: Սրանք են՝

լեզու>լհ. լիզու, լիզուսդ'ան
 յէմիշ (թրք. yemiş) «պտուղ», յէմիշեսդ'ան

Սուշավայի բարբառով այս կարգի հոգնակիներէց ունենք՝

բանալի > բ'ալլինք, բ'ալլըսդան

հարսանիք > հարսնիք, հարսնըսդան, հարս-
նըսդաններ

մատանի > մագնի, մագնըսդան

գետին > գ'էդին, գ'էդնըսդան:

2. ՀՈԼՈՎՆԵՐ

Կը ճյուղի բոլոր բարբառների նման Առտիալի բարբառն էլ ունի 6 հոլով՝ թէ եզակի և թէ հոգնակի. սրանք են՝ ուղղա-
կան, սեռական, տրական, հայցական, բացառական և գործիա-
կան. Չկա ներգոյական հոլով:

Սրանց գործածության մեջ պետք է նկատել որ՝

1) ուղղականը գործածվում է նաև իբրև կոչական. 2) հայ-
ցականը թէ որոշյալ և թէ անորոշ, թէ շնչավոր և թէ անշունչ
առարկաների համար նույն է ուղղականի հետ. 3) տրականը
թէ որոշյալ և թէ անորոշ նույն է սեռականի հետ. 4) հայցա-
կանը գործածվում է նաև իբր նախադրիվ հայցական և իբր
ներգոյական. օր.

Սչ. բէդգ' է էրթամ բ'օշդ'ան.

Սչ. բադրիարքարանը դ'էլէգրաֆագ' ունինք.

Սչ. բ'ախդը դուն գուգ'ա (ամուսինը տուն է գալիս).

Սչ. գէրթան հարսնիքին դունը.

Լհ. հայէրը գի նըսդ'ին հիմբիգ Գալիձ'իան, Բուգ'օվինան
ու Բասարարիան (երեքն էլ ներգոյական). Չամփա գանին բա-
սարարիան համ Մօլդօվը (երկուսն էլ նախադրիվ հայցական):

Հայցականը ուղղական դարձած՝

Հնգ. հոգսն անել «հոգալ»

Հնգ. էրկուսում «երկրորդ»:

Ձ. ՆԱԽԴԻՐ

Առտիալի բարբառում կենդանի է գեռ զ նախդիրը հայ-
ցականի վրա. հաճախ ասվում է ըզ, նունիսկ ձայնավորով
սկսվող բառի վրա: Օր. ըզընկերը (Հնգ.): Գրաբարի ձևով նախ-
դիրը կարող է անցնել խնդիրներից առաջ. օր. ըզո՞ւմ հացը կու-

տիմ «որի հացն եմ ուտում», ըզնարա անունը կի իշիմ «նրա անունը հիշում եմ»: Նույնիսկ կա ըզայս: Հնգ. ըզարանց խրէրի ելած ժըլէրն «առանց հրամանի հեռացած բնակիչը» (Բազմ., 1893, էջ 477):

3. ՀՈՂՈՎՈՒՄ

Առտիալի բարբառում գոյականները, ինչպես նաև գոյականաբար առնված ածականները ունեն 7 հոլովում, հետևալ ձևով.

Առաջին հոլովում

Այս հոլովման վերջավորություններն են՝ սեռ. տր. -ի, բցռ. է, գրծ. օւ, հոգնակիում՝ սեռ. տր. -էրո, -նէրու, բցռ. -էրէ, -նէրէ, գրծ. -էրօւ, -նէրօւ. օր.

(Սուչավայի բարբառով).

Ու. հաց	հացեր
Ս. Տ. հացի	հացէրու
Բ. հացէ	հացէրէ
Գ. հացու	հացէրօւ:

Որոշյալ հայցականում գրվում է միշտ գ, ըզ նախդիրը, ինչ. չհ. գ-ձ'էռք գի բաքնիմ.

Սչ. գուզէ ըզհարսը բ'էրէ.

Սչ. խըրգէ ըզվերի գ'օգ'օրը.

Սչ. բէդգ'է խընդ'րինք ըզքահանան.

Սչ. հաքի'ըր ըզիւրըրցի'ըրը.

Բայց կարելի է նաև առանց նախդիրի ասել՝

Սչ. ուժէ ջիւրախները գի փօխին.

Սչ. յէւ ամմէն բ'անը բազմինք:

Ծանոթ. 1.—Այս հոլովման ժամանակ բառավերջի ու դառնում է վ. ինչ, լեզու > Սչ. լիզու, սեռ. լէզվի, բայց մեզու բառը, որ դարձել է մէզում, սեռ. լինում է մէզունին:

Ծանոթ. 2.—Կաթն > Սչ. գաթը բառը դառնում է սեռ. գաթնի:

Երկրորդ հոլովում

Այս հոլովման վերջավորություններն են եզակիում՝ սեռ. տր. -ու, բց. -է, գրծ. -ու. հոգնակին նման է առաջին հոլովման, օր. ջամփա «ճանապարհ».

(Սուչավայի բարբառով)

Ու. ջամփա	ջամփաներ
Ս. Տ. ջամփու	ջամփանէրու
Բ. ջամփէ	ջամփանէրէ
Գ. ջամփու	ջամփանէրու:

Սուչավայի բարբառում, զանազան բառեր՝ որոնք հետեւում են այս հոլովման, ներկայացնում են զանազան շեղումներ: Այսպես՝ մարդ բառը լինում է սեռ. տր. մարդ՝ու, բցո. մարդ՝ոււմէ, Հնգ. մարդ՝ըվէն, գրծ. մարդ ու, մարդ՝ըվու:—Աստուած բառը լինում է Սչ. աստուածու (Լհ. ասդ՝ուձու), Սչ. ասդըձու, բաց. Սչ. աստուծմէ, ասդըձվէ, գրծ. ասդ՝գձվու=Լհ. ասդ՝ըձվով (օր. գ՝ընա ասդ՝ըձվով «բարով երթաս»): Հնգ. բցո. աստուծոյվէ՛, Սչ. աստըծվէ (Հուշարձ., էջ 363): Կան բառեր, որ ուրիշ բարբառներում հետևում են առաջին հոլովման, իսկ այստեղ անցել են երկրորդ հոլովման. օր.

Սչ. թաթաւ «անձրե», սեռ. թաթֆու, բցո. թաթֆէ. գրծ. թաթֆու.

դար «բարձունք» > Լհ. դ՛ար «լեռ», որից սեռ. դ՛արու «լեռան». օր. դ՛արու էգև «լեռան ետեր»:

Սչ. քահանա, սեռ. քահանայու:

Ընդհակառակը կան բառեր, որ ուրիշ տեղ հետևում են երկրորդ հոլովման, իսկ այստեղ անցել են առաջին հոլովման. օր.

տղայ > Պլ. դղա, դղու, Սչ. դղի.

հայ > Պլ. հայու, Սչ. հայի: Այս բառը հին հայերենում հետևում է -ոյ հոլովման. հայոյ, հայոց, որի համար էլ լինում է Պլ. հայու, բայց Երև. լինում է հայի, ինչպես և Նոր-Նախիջևան. վերջինում ծաղրական է համարվում հայու ձևը, որ համեմատում են Թրք. այու «արջ» բառի հետ:

Ի վերջացող բառերի -ու հոլովման հետևելու օրինակ է՝
 Լհ. օդվէնու հագ՛նիչ «կոշիկ, ոտնաման», որ է ուղ. օդ-
 վէնի, սեռ. օդվէնու.

սակի>Լհ. օսգ՛ի, որից օսգ՛ու «ոսկյա»

կաշի>Լհ. գաշի, որից գաշու «կաշյա»:

Երրորդ հոլովում

Այս հոլովման հատուկ վերջավորություններն են՝ եզա-
 կիում սեռ. տր. -վան, բցո. -վանէ, գրծ. -ու. հոգնակին առաջին
 հոլովման նման է. ինչ.

(Սուչավայի բարբառով)

Ու. օր	օրեր
Ս. Տ. օրվան	օրերու
Բ. օրվանէ	օրերէ
Գ. օրու	օրերու.

Այս հոլովման հետևում են ժամանակ ցույց տվող բառերը.
 ինչ.

ամառն>Սչ. ամառ, ամառվանէ

գիշեր>Լհ. գ՛ըշեր, գ՛ըշերվան

Հնգ. գրակվան «կիրակի օրվա»

ձմեռն>Սչ. ցմէռ, ցմէռվանէ, ցմէռու

հէրու Սչ. հէրուս Լհ. «անցյալ տարի», սեռ. հէրովան

ցերեկ>Սչ. ցօրեգ, ցօրէգվանէ, ցօրէգու

հիմայ>Սչ. հիմբի, սեռ. հիմիգվան, Լհ. բցո. հիմբիգվէն:

Բայց այս և ուրիշ ժամանակ ցույց տվող բառեր պահում
 են նաև գրաբարի հոլովաձևը և հատկապես սեռականում. ինչ.

աշուն>Սչ. Լհ. աշունք, սեռ. աշնան, գրծ. Սչ. աշունքու,
 բցո. աշնանէն

ամառն>Սչ. ամառ, սեռ. ամբոռն

ձմեռն>Սչ. ցմէռ, սեռ. ցմբոռն (Լհ. ձ՛ւմբոռն), բց. ցմբ-
 ոռնէն:

Ջարմանալի է գարուն բառը, որ հետևելով թուրքերենին՝
 դարձել է Սչ. առչի գ՛արուն: Թրք. գարունը կոչվում է ilk ba-
 har, որ բառացի նշանակում է «առաջին գարուն», բայ որում

աշունն էլ կոչվում է son bahar, «վերջին գարուն»։ բայց հայերենում (Մչ. և հայեր), չկա «վերջին գարուն», այլ միայն աշուն կամ աշունք։ Ըստ այսմ «առչի գարուն» հորջորջումը բուրրովին ավելորդ և անմիտ է, սոսկ հետևողություն թուրքականի։ Բայց ավելի զարմանալին այն է, որ գարուն բառը բարբառից կորած լինելով, «առչի գարուն» "գաղափարը անըմբռնելի է և սուչավացիք էլ վերջաձայն և որոշիչ կարծելով՝ բառը հասկանում են առչի գ'արու, ուր գարու այլևս ոչ մի իմաստ չունի։ Լեհահայերը ասում են ուղղակի arçi-karû (առանց և վերջաձայնի) և դեռ վերջաձայն և ձայնավորն էլ նմանողությունով բառի վերջին ձայնավորի (arçi) դարձրել են և հնչում են առչի-գ'արի.—սուչավացիք բց. հոլովում ասում են առչիգ'արեն։

Թրք. (<արար.) sahat «Ժամ» բառն էլ, որ ուրիշ բարբառներում լինում է սեռ. սահաթվան, այստեղ լինում է բց. Մչ-սախթեն։

Չորրորդ հոլովում

Չորրորդ հոլովման վերջավորություններն են Սուչավայի բարբառում ուղ. -թյուն, սեռ. տր. -թյան, բց. -թենե, գրծ. -թյուն, իսկ լեհահայ բարբառում՝ ուղ. -թին։

Հոգնակին նույն է առաջին հոլովման հետ. օր.

Մչ.

Հհ.

Ու. հըբարդություն

հարարդութին

Ս. Տ. հըբարդության

Բ. հըբարդութենե

Դ. հըբարդությունու

Ռումինահայ բարբառով ունենք եզ. գրծ. -թենով. ինչ-իշխանութենով։

Հինգերորդ հոլովում

Այս հոլովման վերջավորություններն են սեռ. տր. -ան, բցո. -անմե, գրծ. -ու. հոգնակին հոլովվում է առաջինի նման։

Օր. Սուչավայի բարբառով՝ աղջիկ՝

Ու. ախչիք

ախչիգներ

Ս. Տ. ախչիգան

ախչիգներու

Բ. ախչիգանմէ ախչիգնէրէ
 Գ. ախչիգօւ ախչիգնէրօւ:

Այսպէս են հոլովում նաև՝

կին > Սչ. գընիգ, սեռ. գընգան, բցո. գընգանմէ
 ձուկն > Սչ. ցուզը, սեռ. ցգան:

Զարմանալի է նաև գիւղ, որի սեռական գէղան ձևը գործածվում է ինչ. «գեղջկական» իմաստով:

Վեցերորդ հոլովում

Վեցերորդ հոլովման մեջ սեռ. տր. հոլովաձևը կազմվում է ուղղականի շեշտյալ ձայնավորը դարձնելով օ, իսկ բց. և գրծ. հոլովները կազմվում են սեռ. տր. հոլովաձևի վրա ավելացնելով մե, մօւ մասնիկները: Հոգնակին նույն է առաջին հոլովման հետ: Օր. մար «մայր» (Սուչավայի բարբառով):

Ու. մար մարեր
 Ս. Տ. մօր մարէրու
 Բ. մօրմէ մարէրէ
 Գ. *մօրմօւ *մարէրօւ:

Այս հոլովման հետևում են բացի Սչ. ինչ. մար «մայր» բառից, նաև Սչ. ինչ. հար «հայր» և Սչ. ինչ. ախբար «եղբայր», ինչպէս նաև սրանցից կազմված մի քանի բառ, որոնք են՝

աստուածամայր > ինչ. աստվածամար
 կնքահայր > Սչ. գընգըհար
 սանահայր > Սչ. սանըհար
 կնքամայր > Սչ. գընքըմար
 սանամայր > Սչ. սանըմար
 հօրեղբայր > Սչ. ինչ. հօբար,

ինչպէս նաև Սչ. խաշլումար «կնքամար», որի առական է Սչ. խաշլու «կնքահայր», որ կազմված է հյ. խաշ բառից՝ թրք. -lu -աւոր մասնիկով.— բուն նշ. «խաչավոր» (հմմտ. այլ բարբառներով խաշեղբայր, որ կնքանոր օգնականն է):

Ծանոթ.— Վերի հոլովման մեջ բացառական մօրմէ ձևի փոխարեն գործածական է նաև Սչ. մօրը մօղէ մօր մօրից, իսկ գրծ. մօրմօւ և նմաններ բնավ գործածական չեն և նրանց տեղ ասվում է Սչ. մօրը հէղ մօրը հետաճայն: Ինչպէս Պոլսում ժողովուրդը գործ է ածում հօյրը, մօյրը իբր սեռ. տր., նույնը կա նաև Հնդ.՝ Սրանց մեջ յ ավելացել է հայր, մայր բառի ազդեցութիւնով:

Յոթերորդ հոլովում

Այս հոլովման վերջավորություններն են սեռ. տր. -օչ, բց. -օշըմէ. գործիականը չի գործածվում և նրա փոխարեն ասվում է սեռականով -օչ հէդ. հոգնակին նման է առաջին հոլովման:

Այս հոլովման տիպական օրինակն է՝ Սչ. Լհ. քուր «քուչը».

Ու. քուր	քուրեր
Ս. Տ. քըրօչ	քուրէրու
Բ. քըրօշըմէ	քուրէրէ
Գ. (քըրօչ հէդ)	քուրէրօւ:

Ուրիշ բարբառներում սրան են հետևում մի խումբ իգական ազգականական անուններ, բայց այստեղ ինձ ծանոթ է միայն Սչ. դալ, սեռ. դալօչ «տալ, տալով»:

Ծանոթ.—Ըստ Հանուշի, էջ 84, Բոյր բառի հոգնակին լինում է Լհ. Բուրմեր:

Գրաբարածե հոլովում

Լեհահայ բարբառում գրաբարից մնացած հոլովները հետևյալներն են՝

- ոտք>սեռ. օդից, նշ. «ոտքի վրա»
ձեռք.—աղէգնը ձէռաց «ճարպիկ»
ձէռաց գ'իր «ձեռագիր»
ձեռաց լալեխ Հնգ. «թաշկինակ»
հարսնից Հնգ. «հարսանյաց»
հարսնեցն Հնգ. «հարսնիքին»
տուն>սեռ. դանը, որից դանը մարդ՝ «տան տերը», դանը՝ դիգին «տանտիրին», դանըգիգնութին (Սչ. դան ձաձուգ՝ «ծածք»)
օր>սեռ. ավուր, որից գէս ավուր փայ «հարավակողմը»
արևելք>սեռ. արևելից փայ «արևելյան կողմ»
Հնգ. խօսօք «խոսքով»
ձմեռն>սեռ. ձ'ըմբռան «ձմռան»
զաւակ>Սչ. սեռ. զավագաց:

Սուչավայի բարբառում գրաբարածե հոլովման լավագույն մնացորդն է -աք, -տաք, -տիք մասնիկներով կազմված հոգնակի բառերի հոլովումը, որ հետևյալն է.

կին>հգ. գընդիք, գընդօց (նաև Հնգ.), գընդօցմէ
եղբայր>հգ. ախր՝ըրդիք, ախր՝ըրդաց (նաև Հնգ.), ախ-
ր՝ըրդացմէ

քոյր>հգ. քըրվըդիք, քըրվըդաց, քըրվըդացմէ
ընկեր>հգ. ընգէրդաք, ընգէրդաց, ընգէրդացմէ

բարեկամ հգ. բ՛արէգամաք, բ՛արէգամաց, բ՛արէգամացմէ

և այլն, և այլն:

Նույնիսկ օտար բառն էլ կարող է գրաբարաձև հոլովում ստա-
նալ ինչ. խասափչի «մասավածառ» հգ. սեռ. խասափչոցըն (Բազմ.,
1893, էջ 433):

Առանձնապես պետք է հիշել դուստր բառը, որ ինչպես
ինքը, նույնպես և իր հոլովումը գրաբարից ժառանգությամբ
պահպել է Սուչավայի բարբառում ուղ. դ՛ուսդըը, դ՛րուսդ, սեռ.
դ՛սդեր, դ՛րսդեր ձևով (Լհ. ուղ. դ՛ուսդ՛ր):

Սչ. ձ՛եր հրամանօց (Հուշարձ., էջ 362):

Մարդ բառի հոգնակին մարդիկ ստանում է Սուչավայի
բարբառում հետևյալ ձևերը.

Ու. մարդիք

Ս. Տ. մարդ՛օց, մարդ՛իքաց (նաև Լհ.)

Բ. մարդ՛օցմէ, մարդ՛իքացմէ, մարդ՛իքօցմէ

Գ. Լհ. մարդ՛իքըցմօվ:

4. ՍՂՈԻՄ

Սղումը, որ մի քանի հեռաբնակ հայ բարբառներում (ինչ-
պես Պոլիս) բոլորովին վերացված է, դեռ շատ կենդանի է Սու-
չավայի և լեհահայ բարբառի հոլովման մեջ:

Դնում ենք այստեղ մի քանի օրինակ հոլովական ձևերից.

ականջ>Սչ. սեռ. անգըջի

ակոայ>Սչ. սեռ. ագոի

աշխարհ>Լհ. աշխարք, սեռ. աշխըրքի

բամբակ>Սչ. բ՛ամբազ, սեռ. բ՛ամբդի

բերան>Լհ. բ՛էրան, գրծ. բ՛էրնօվ

թուղթ>Սչ. թըխթի

ծիծ>Սչ. ձըձի

կանաչ>Սչ. գանանչ, սեռ. գանչուն, բց. գանչէն, գրծ. գանչօւ

ձուկն>Սչ. ցուգը, սեռ. ցգան
 ստակ>Սչ. ըսդ'ազ, սեռ. ըսգ'ըգի
 վիճակ>Սչ. վիջադ, սեռ. վիջգի (համբարձման)
 տակ>Լհ. դագ, դըգին, դըգէն
 տաճիկ>Սչ. դաջիգ, սեռ. դաջգի
 փեսայ>Սչ. փէսա, սեռ. փէսի
 քաղաք>Լհ. սեռ. քաղքի:

Սղման օրենքը լայնորեն գործադրվում է նաև հոգնակիի կազմության մեջ: Ահա մի խումբ օրինակներ լեհահայ բարբառից.

Ի ձայնավորի սղումը

կօշիկ>գօշիգ՝ գօշըգներ
 խալկին>խալգին, խալգըներ
 միս>միս, մըսեր
 գիր>գ'իր, գ'ըրեր
 քիթ>քիթ, քըթներ
 հաւկիթ>հաւգեդ, հաւգըգներ
 տաճիկ>դաջիգ, դաջըգներ
 երկիր>էրգիր, էրգըրներ
 դրացի>գ'րացին, գ'րացըրներ
 շապիկ>շաբիդ, շաբըրներ
 վիզ>վիզ, վըզեր
 մարմին>մարմին, մարմըրներ
 մարգարիտ>մարգ'իդ, մարգ'ըգներ
 ամիս>ամիս, Լհ. ամըսներ
 թուր>չնգ. թուռ, թռով:

Ու ձայնավորի սղումը

պուտուկ>բուգուգ, բըգըգներ
 կանգուն>գանգուն, գանգըրներ
 կուրծք>գրուձ'ք գըրձ'քեր
 կուտ>գուդ, գըդեր
 մուխ>մուխ, մըխեր
 թոչուն>թոջ'ուն, թըոջ'ըրներ
 դուստր>գ'ուսդ'ր, գ'ըսգ'ըրվիք
 դուռն>գ'ուռռ, գ'ըռներ
 բուրդ>բ'ուրդ', բ'ըրդ'եր
 ունդ>հունդ, հընդեր

կծու > գուձու, գուձըներ
մուկն > մուղ, մըղներ
քուրջ > գ'ուրջ՝ «զգեստ», գ'ըրջ'եր
գլուխ > գ'օլօխ, գ'ըլխներ
բոյն > բ'ուն, բ'ըներ
սուտ > սուգ, սըղեր
սնդուկ > սունդուգ, սընդըգներ
սուրբ > սուրբ, սըրբ'եր
շուն > շուն, շըներ
տուն > դուն, դըներ
ջուր > ջուր, ջ'ըրեր

բ'ան-դուն «գործարան, ֆաբրիկա» (կազմված բան «գործ» + տուն բառերից), հգ. բ'ան-դըներ

ալի-ր > իհ. ալուր, ալըրներ
անասուն > իհ. անասուն «թռչուն», հգ. անասըներ
անուն > իհ. անուն, անըներ
արին > իհ. արուն, արըներ
պարկուճ > իհ. բառգուջ «պայուսակ» հգ. բառգըջներ:

Ա ձայնավորի սղումը

հալալ > հալվըներ, «վերարկու, redingote»
օտար > օդար օդար, օդըրներ
չուան > չուվան, չուվըներ
տախտակ > դախդ'ագ, դախդ'ըգներ
ճակատ > ջագագ, ջագըգներ
երազ > էրաձ, էրձներ
սաւան > սավան, սավըներ
հրեշտակ > հրիշդ'ագ, հրիշդ'ըգներ
քաղաք > քաղաք, քաղըքներ
գդակ > գ'ըգագ, գ'ըգըգներ
դարիվայր > դ'արնիվար, հգ. դ'արնիվըրներ
թաթաւ > թաթավ «անձրև», թաթըներ կամ թաթֆըներ
շաքար > շաքար, շաքըրներ
շարաթ > շար'աթ, շար'թըներ

Հնդհակառակը ա ձայնավորը պահված՝

գանակ>դ'անագ, դ'անդգներ
զաւակ>զավագ, զավրգներ
զանգակ>ժանգագ, ժանգրգներ
մատակ>մադագ «էգ ձի», մադրգներ
վաստակ>վասդ'ագ, վասդ'րգներ
ականջ>անգաջ, անգըջներ
ակոռայ>ագոռ, ագորներ
աման>լհ. աման, ամըներ
պատարագ>լհ. բագրաք, բագրքներ
դերձան>դ'էրձ'ան, դ'էրձ'աններ
կօշկակար>գօշգ'ար, գօշգ'արներ
բերան>բ'էրան, բ'էրաններ:

Ե ձայնավորի սղումը

ասեղ>լհ. ասեղ, հգ. ասըղներ
տաշեղ>լհ. դաշէխ, հգ. դաշըխներ:

Սղման հետ պետք չէ շփոթել այն երևույթը, երբ լեհահայ բարբառում վերջավանկի ո ձայնավորը դառնում է ը և այդ ը ձայնն էլ մնում է հոգնակիում. օր

աթոռ>լհ. աթրո, հգ. աթրռներ
պորտ>լհ. բըրդ, հգ. բըրդեր:

Ջարմանալի կերպով ե և ո սղվում են հետևյալ բառերում.

որբ>լհ. վօրբ', հգ. վըրբ'եր
բերդ>լհ. բ'երդ' «բակ», հգ. բ'ըրդ'օրանք:

Սղման ժամանակ օտար բառերն էլ կարող են կորցնել իրենց ի, ու, ա ձայնավորը. ինչ.

miskin>մըսքին «խեղճ ու կրակ», մըսքըններ
ořaq>օջախ «վառարան», օջըխներ
yoryan>յօղրան «վերմակ», յօղըններ
bayča>բախչա, բախչըներ «պարտեզ»
գ'ուրդ'ան (ռում.) «պալատ», հգ. գ'ուրդ'ըներ
բազրրգան «վաճառական», հգ. բազըրգըններ
գօշագ' «անկողին», հգ. դօշըգ'ներ

դուշման «թշնամի», հգ. դուշմըններ
մաջար «հունգարացի», հգ. մաջըրներ
ջարդախ «շտեմարան», ջարդըխներ
շարջա «պատուհան», շարջըներ (թրք. čerčive)
շուրուխ «գավազան», շուրըխներ
բազար «շուկա», սեռ. բազրի
առրա «սալ» < թրք. araba, գրծ. առբով
օրօգ Լհ. = ննխ. օոօք, Հմշ. ոօք «իւ, թեւ մանելու իւ» <
իտալ. rocca, թրք. «چا öreke», հգ. օրզգներ:
Ի ձայնավորը չսղելու, այլ պահելու օրինակներ են՝ լեհա-
հայ բարբառում, հոգնակիի մեջ.

կտրիճ > գրգրիջ, գրգրիջներ
կոիւ > գրոիւ, գրոիւներ
բրինձ > բ'րինձ, բ'րինձեր, բց. բ'րինձէ՛ արուր
անիժ > անիձ, անիձներ
աղջիկ > Սչ. ախչիք, սեռ. ախչիգան.

Ու ձայնավորը հոգնակիում չսղելու, այլ պահելու օրինակ-
ներ են՝ լեհահայ բարբառում.

մուր > մուր «ածուխ», մուրեր
ծունկ > ձունգ, ձունգի
քոյր > քուր, քուրներ!
գ'րուգ՝ «ագռավ» (> լեհ. krak), հգ. գ'րուգ'եր
շուք > շուք «ստվեր», շուքեր:

Այս բոլորը ցույց են տալիս, որ սղման օրենքը այս բար-
բառումն էլ սկսել է խախտվել, որի ավելի ուժեղ արտահայտու-
թյունն այն է, որ նույնիսկ բառակազմությունն էլ սկսել է
փոխվել, ինչպես տեսանք. Սրա համար այլ օրինակ է՝

խնքոտ > Սչ. խիխքօդ:

Ճ. ՀՈՒ

Թե Սուչավայի և թե լեհահայ բարբառում որոշիչ հոգն է
ե կամ ը, առաջինը ձայնավորով, երկրորդը բաղաձայնով վեր-
ջացող բառերի վրա. օր.

մարդ՝ը, շունը, և՛. Իլախի հայերը
և՛. գաջըզները զքաղաքը Անի բ՛ըլձ՝ուցիւ ին.
լեզուն>լիզուն, բցո. լիզվէն
հայերուն, աս օրերուն:

Հատուկ անունները ստանում են որոշիչ հոդ. ինչ. Գ՛օգ՛օքը
(Գրիգորը), Գալիձ՛իան, Բուգ՛օվիւնան, Բասարաբիան, Մօլբօվը:
Անորոշ հոդն է մը. ինչ. մարդ՛ մը, բայց կարելի է ասել
նաև մէգ մարդ՛ մը, մէգ շուն մը:

Առանց մը հոգի էլ բառը մնում է անորոշ. ինչ. մարդ Վ՛մի
մարդ»:

Լեհահայ բարբառը ունի որոշիչ հոգի գործածության
տարօրինակ մի ձև, այն է հոգը կրկնելով. ինչ.

Զ՛ըրին վրա Զ՛էրէմուշինը «Զերեմուշ ջրի (գետի) վրա»:

Գրլա ջանջ՛նալու թիփարքինը էրէսինը «երեսի տիպարիցը
կարելի է ճանաչել»:

Դի սիրին զերէնց գ՛էգինը մայրագանը «սիրում են իրենց
մայրենի հողը»:

Աղէգնը ձէռաց «ճարպիկ» (աղէգնը՝ երկու հոգով):

Բայց այսպիսի ձևերը, որոնք դրաբար մտածողությամբ
շատ հասկանալի են, ամենևին չեն բխում գրաբարից, այլ ան-
շուշտ նմանողություն են լեհերենի: Օր.

Լ՛ն. Զ՛րին վրա Զ՛էրէմուշինը. այստեղ գետի անունը (Զ՛է-
րէմուշ=լեհ. Czeremosz) սեռական հոլով է, և հոգ ունի, որով-
հետև ջրի՞ն նույնպես հոգ ունի. հոլովված է նաև լեհերենը՝ nad
wodą Czeremoszu.

Հուշարձ., էջ 368, գրված մի հատվածում («Սուչավայի բար-
բառ») կա մէկ բօտի մը վրայով մը Վ՛մի կամուրջի վրայով»,
ուր ոչ միայն անորոշ հոգը կրկնված է գոյականի վրա, այլև
նախադրության վրա, ինչ որ շատ անսովոր երևույթ է (ծանոթ.
Bittner-ի):

Հնգ. կարնու զֆըտը զձ՛ըկինը:

6. ԱՄԱԿԱՆԻ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

Դրական աստիճանը ածականի սովորական ձևն է: Հաճախ
այս ածականը ստանում է որոշիչ հոգ (ը կամ ն). օր.

Ս՛չ. բ՛արցըն է Քրարձր է»:

ԼՆ. ձանդրն է «ծանր է»
ԼՆ. աղէգնը ձէռաց «ճարպիկ»
ԼՆ. աղէքը գէղան «լավ գեղեր»:

Երևանի բարբառումն էլ հաճախ գործածվում է այս ձևը. օր-
փնչ մեծն է:

Բաղդատական աստիճանը կազմելու համար ածականի վրա
ավելացնում ենն ան «ավելի» բառը. օր.

ԼՆ. ան մեծ «ավելի մեծ»
ան անգ՛ան «ավելի ուշ»
ԼՆ. ան խօջա «ավելի հարուստ, շատ հարուստ»
ՍՆ. ան վեր «ավելի վեր»
ՍՆ. ան. չուսգ՛ «ավելի արագաշարժ»:

Գերադրական կազմելու համար համեմատական աստիճա-
նի վրա ավելացնում ենն ընգ՛ մասնիկը, որ համապատասխանում
է Ղրիմի էնգ և Պոլսի «է՛ն» համազոր մասնիկին և ծագում է թրք.
‡ éṅ (հին հնչմամբ éng) մասնիկից: Օր.

ԼՆ. ան շատ «ավելի շատ»
ԼՆ. ընգ՛ շաղ կամ նաև ընգ՛ ալ շաղ «ամենաշատ»
ԼՆ. ընգ՛ ալ մեծ «ամենամեծ»
Հնգ. ընք ալ:

«Ավելի» գաղափարի համար ասվում է ԼՆ. անա. ինչ.
ալա մեծ «ավելի մեծ»:

Գերադրականի այն ձևը, որ շատ սովորական է արևմտա-
հայ շատ բարբառներում (կաս-կարմիր, դեփ-դեղին և այլն) և որ
չկա Երևանի բարբառում, չկա նաև Առտիալի բարբառում:

7. ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Բացարձակ թվականներն են՝

1. մէգ
2. էրգու, էրգուս
3. իրեք
5. ՍՆ. չօրս, ԼՆ. չօրս, չըրս
5. հինգ
6. վեց
7. օխդ՛ը

8. ութը
9. ինը
10. դասը
20. Սչ. քսան, իհ. դ'սան (որ ըստ իս պետք է կարդալ քսան)
30. էրսուն
40. քառսուն
50. իսուն
60. Սչ. վացուն, իհ. վաթսուն
70. Սչ. օխթանասուն, իհ. օխդ'անասուն
80. Սչ. ուցուն, իհ. ութսուն
90. Սչ. նըսուն, իհ. նուսուն
100. հարուր
1000. հազար

(Ուր սր տեղը չէ նշանակված, պետք է հասկանալ Սչ. և իհ.):

Ծանոթ,— Նկատելի է որ 70, 80, 90 թվականները թուրքական ձևով չեն, ինչպես են Ղրիմ—նոր-Նախիջևան, Պոլիս և այլն:

Տասնավորների միացումը միավորների հետ կատարվում է հետևյալ ձևով.

1) տասնավորի և միավորի միջև դրվում է ը, որ ու շաղկապի ֆնացորդն է.

2) ձայնավորով սկսվող միավորների մոտ (2, 3, 9) դրվում է վ շաղկապը, բայց 7 և 8 թեև ձայնավորով են սկսվում, բայց նույն շաղկապը չեն ստանում, իսկ 9 կա երկու ձևով էլ: Ըստ այսմ ունենք՝

11. դասնը մէգ
12. դասվէրգու(ս)
13. իհ. դասվիրեք, Սչ. դասֆիրեք
14. Սչ. դասնը չօրս, իհ. դասնը չըրս
15. դասնը հինգ
16. դասնը վեց
17. դասնը օխդ'ը
18. դասնը ութը
19. Սչ. իհ. դասնըվինը, Սչ. դասնը ինը
21. քսանը մէգ
22. քսան վէրգու

23. ԼՅ. քսան վիրեք
 24. ՍՀ. քսանը չօրս, ԼՅ. քսանը չըրս
 25. քսանը հինգ
 26. քսանը վեց
 27. քսանը օխգ՛ը
 28. քսանը ութը
 29. ԼՅ. քսան վիրնը:

Ծանոթ. 1.— Վ. (ու.) շաղկապը ՍՀ. 13 բառի մեջ նախորդ ա-ի պատճառով
 թափանալով դարձել է Փ, բայց նույն փոփոխությունը տեղի չի ունե-
 ցել 12 բառի մեջ, իսկ ԼՅ. բարբառում նաև 13 բառի մեջ:

Ծանոթ. 2.— Լեհահայ բարբառում 18 ասելու մի ուրիշ ձևն է քսան բազան
 էրգու (20—2):

Դասականները Սուհավայի բարբառում, նաև Հնգ. (բացի
 առաջին-ից) կազմվում են -ում մասնիկը ավելացնելով բացար-
 ձակաների վրա:

- | | |
|--|---|
| 1. ՍՀ. առաչին, առչինը, առչի, ԼՅ. առաչի | |
| 2. էրգուում | էրգուումը |
| 3. իրէքում | իրէքումը |
| 4. չօրսում | չըրսում (այսպես ըստ Հանուշի) |
| 5. հինգում | հինգումը |
| 6. վեցում | վեցումը (ե-ով) |
| 7. օխնում | օխգ՛նումը (Laut. 89 գրում է օխգ՛մոռ
մը, որ թերևս վրիպակ է) |
| 8. ութնում | ութնումը |
| 9. իննում | իննումը |
| 10. դասնում | դասնումը |
| 20. քսանում | քսանումը |
| 30. էոսունում | |
| 40. քաոսունում | |
| 50. իսընում | |
| 60. վացընում | |
| 70. օխթանասունում | |
| 80. ուցունում | |
| 90. նըսունում | |
| 100. հարուրում | հարուրումը |
| 1000. հազարում | հազարումը |

Շանթ.— Դատական թվական կազմելու այս -ում մասնիկը ամենքս էլ համարում ենք պրտս -ԱՄ համանիշ մասնիկից փոխառյալ: Բայց ինչպե՞ս կարող էր Պարսկաստանից այնքան հեռու բնակվող մի ժողովուրդ (լեհահայ, սուչավացի, հունդարահայ և ղրիմեցի) այսպիսի կարևոր մի մասնիկ պարսկերենից փոխ առած լինել: Նոր-Ջուղան պիտի կարողանայինք ասել թե պարսկերենից է առել, բայց այդ էլ ճիշտ չէ, որովհետև Նոր-Ջուղան տարել է այն Հին-Ջուղայից, որ նմանապես Պարսկաստան չէ: Ուստի համարձակվում եմ առաջարկել այստեղ մի ուրիշ մեկնություն՝ առանց նրա ստուգություն վրա պնդելու:

Գրաբարում դասականները հոլովվելիս ստանում են -ում մասնիկը, որ արդի Արեւելյան հայերենի ներգոյական մասնիկն է: Օրինակ ասում ենք յեթներորդում ամեանն, ի վեցերորդում ամիկալն: Ներելի չէ՞ կարծել, որ այս բառերի միջից -երորդ մասնիկը կրճատվելով տվել է մեզ եօթնում, վեցում կալն և այդ էլ համարվել է դասական թվականի հատուկ ձևը:

Այս բացատրությունով -ում դասական մասնիկը հեռանում է պարսկերենից և երկուսի նմանությունը դառնում է բոլորովին պատահական:

Կարելի էր առարկել թե դասականների փոխառությունը օտար լեզվից՝ անսովոր չէ մեր արդի բարբառներում: Պոլսի և Տրապիզոնի հայ բարբառում փոխ են առել թրք. -իմջի մասնիկը, որ ուրիշ բարբառներում էլ դառնում է -իմջի: Բայց այս բոլոր բարբառներն էլ այնքան ողողված են թուրքական բառերով, որ այդպիսի մի մասնիկի փոխառությունը անհնար չէր: Իսկ Ղրիմի, Լեհաստանի և Հունդարիայի բարբառը պարսկերենից փոխառություն չունի, կամ եթե մի քանի բառ ունի, այն էլ թուրքերենի կամ թաթարերենի միջոցով է:

Միջին շարքերը լինում են՝

11-րդ Սչ. դասն մէգում, Լհ. դասն մէգումը և այլն:

Առաջին շարքը Սուչավայի ձևն է, երկրորդ շարքը լեհահայոց, որ տարբերվում է առաջինից միայն ը որոշիչ հոգի հավելմամբ:

Բաշխական թվականները կազմվում են երկու ձևով. 1) բացարձակ կրկնելով. 2) բացարձակի վրա ավելացնելով -ական մասնիկի սղված ձևը:

Կրկնությամբ

- | | |
|----------------|--------------|
| 1. մէմէզ | մէմէզ ԼՆ. |
| 2. էրգու-էրգու | |
| 3. իրեք-իրեք | |
| 4. չօրս-չօրս | չըրս-չըրս |
| 5. հինգ-հինգ | հինգ-հինգ |
| 6. վեց-վեց | |
| 7. օխդ'ը-օխդ'ը | օխդ'ը-նօխդ'ը |
| 8. ութնութը | ութնը-ութը |
| 9. իննինը | ինը-ինը |
| 10. դաս-դասը | դասը-դասը |

-ախան մասնիկով

2. Սչ. էրգուսգան, ԼՆ. էրգուսգ'ան
 3. Սչ. իրեքան, ԼՆ. իրեգ'ան
 11. Սչ. դասնըմէգագան, ԼՆ. դասնըմէկգ'ան
 12. Սչ. դասվէրգուսգան
 13. Սչ. դասֆիրեքան
 19. Սչ. դասնըվինագան, դասնըինագան
 20. ԼՆ. քսանագան
 50. Սչ. իսունական և այլն
 100. ԼՆ. հարուրագան
 1000. ԼՆ. հազարագան:

Ըստ այսմ, -ախան մասնիկը մերթ փնում է ամբողջ, մերթ կտրցնում է իր առաջին ա ձայնավորը, որի հետեանքով բաղաձայնների մոտ գ դառնում է գ', և կամ միասությամբ գ ջնջվելով՝ փնում է միայն -ան:

Քանի՞ հարցականից էլ կազմվում է ԼՆ. քանրգան:

Անձներական թվականները կազմվում են Սուչավայի բարբառում բացարձակի վրա դնելով որոշիչ հոդը (ն) և ավելացնելով ա ձայնավորը, որ ալ շաղկապի կրճատումն է. այսպես էրգոսնա, իրէքնա, չօրսնա, դսնա և այլն, որոնք նշանակում են «երկուսն էլ, երեքն էլ, չորսն էլ, տասն էլ» և այլն:

Չափական թվականները կազմվում են բացարձակի վրա դնելով -նօց մասնիկը, որ -անոց մասնիկի կրճատ ձևն է. այսպես՝ Սչ. մեգնօց, էրգուսնօց, իրէքնօց, չորսնօց, հարըրնըց (այս վերջինը ծագում է *հարուրնօց ձևից, ո>օ վերածելով ր-ի՝ հետևողությամբ նախորդ ր-ի):

8. ՄԻՋԱԿ ԱՆՈՒՆՆԵՐ

ամէն ինչ. «ամենայն», գրծ. ամնով, ամնովով, «ամենքով»,
Սչ. ամմէն

դ'ասմ, ինչ. «մի քանիսը» (ըստ իս<դաս մը)

հգ. դ'ասմօնք «մեկը. նաև Հնգ. դ'ասմի, դ'ասմօնք «մեկը,
մի քանիսը»

ինչ Սչ. ինչ բան

իքմբնա Սչ. Ռմ. ինչ. «ոչինչ, ոչ մի բան»

մարդ'ա ինչ. «ոչ ոք, ոչ մի մարդ»

մէգը Սչ. ինչ. «որեւէ մարդ, մեկը»

օչ-մարդ' ինչ. «ոչ ոք», որ և մարդ'-ա «ոչ ոք». օր. օչ-մարդ'
չի բէթա «ոչ ոք չպիտի երթա»

օչ-մէգ ինչ. «ոչ մի, ոչ մեկը». օր. օչ-մէգ դէրդէր «ոչ մի
քահանա», օչ-մէգ գընիգ «ոչ մի կին»

մէգալ ինչ. Սչ. «մյուս»

վծր Սչ. ինչ. վըր, հգ. վըրօնք, ֆր. որոնք», սեռ. վըրօնց
չիսդ'էվըր ինչ. «չգիտես որ, որ և է մեկը, ֆր. quelqu'un».

վօլ ինչ. Սչ. «ով». Սչ. վծ, հյց. Սչ. ըզվծ, բց. ինչ. ումէն

օզգա Սչ. ինչ. (<թրք. özge) «ուրիշ», հգ. օզգաներ

մէգըզմէգ Սչ. «իրար»:

Ըստ Bittner-ի, Հուշարձ., էջ 368, օզգա բառը, որ թուրքերե-
նից է փոխառյալ, հոլովվում է հետևյալ ձևով.

	եզ.		չոզ.
Ու.	օզգա	Ու.	օզգալոնք
Ս. Տ.	օզգային	Ս. Տ.	օզգալոնց
Գ.	օզգայով	Գ.	օզգալոնցմով
		Բ.	օզգալոնցմէ:

Հեղինակը ենթադրում է, որ կա և ուղղակիան՝ օզգալ, բայց
վասկածում եմ: Անշուշտ բառը ազդված է հոմանիշ մեկալ
«մյուս» բառից, որ նույնպես հանդում է կալ, որից ստացել է
ի՝ նմանաբանությամբ: Ուրիշ անճիշտ ենթադրություններ անե-
լու կարիք չկա:

ընդրէլ. Հնգ. «բոլոր, ամբողջ», +<վալաք (Այտըն., Գնն.
քեր., էջ 181)

հի վորն Հնգ. «որեւիցե անձ» (Բագմ., 1896, էջ 272)

հի վով Հնդ. «ամեն մարդ» (ՀԱ, 1898, էջ 47)

հիինչ Հնդ. «ինչ բան»

մէկնըվորը Հնդ. «մէկը, ոմն» (ՀԱ, 1898, էջ 48), նաև մէկ-
նիորը.

9. ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Սուշավայի բարբառում անձնական գերանուններն են՝

Առաջին դեմք		Երկրորդ դեմք	
Ու. յէս	մինք (նաև Հնդ.)	դ'ուէն	դ'ունք
Ս. գիմ	մեր	զքու	ձ'եր
Տ. ինձի	մէզի	քէզի	ձ'էզի
Հ. զիս	սմեզ	զքեզ, սքես, զձ'եզ	
Բ. զիմմէ	մէրմէ	զքումմէ	ձ'էրմէ
Գ. (ինձի հէդ)	(մեր հէդ)	(քէզի հէդ, քու հէդ)	

Երրորդ դեմք

Ու. նա	ինքը	իրենք, իրօնք
Ս.	իրեն	իրենց
Տ.	իրեն	իրենց
Հ. սնա	զինքը	զիրենք, զիրօնք
Բ.	իրէնմէ	իրէնցմէ
Գ.	(իրեն հէդ)	իրէնցմօւ:

Գրեթե նույն է նաև լեհահայ բարբառում. այսպես՝ Ա. դեմք՝ յես, զիմ, ինձի, հգ. մինք, մեր, մէզի. Բ. դեմք՝ դ'ու, դ'ուք (ս'չ թե դ'ուն, դ'ունք), սեռ. քուք, զքուք, սքուք, ար. քէզի, հյց. զքեզ. նույն են նաև ինքը, զինքը, մեր, ձ'եր:

Տարբեր է Գ. դեմքը, որ հարկովում է հեռակալ ձևով.

Ու. ինքը	հգ. իրօնք
Ս. իրեն	իրենց, իրմնց
Տ. »	» »
Հ. զինք(ը)	զիրօնք
Բ. իրմէն	իրմնցմէ ? , իրէնցմէ
Գ. իրմով	իրմնցմով, իրենց հէդ:

Սակայն հետաքրքրական է լեհահայոց մեջ Գ. դեմքի դե-
րանվան փոխարկումը Ա. և Բ. դեմքին՝ ս, դ հոգեւորով, ինչ որ
սլավոնական լեզուների ազդեցութեան եմ վերագրում. այսպէս՝

իրմէս «ինձանից»	իրմէդ՝ «քեզանից»
իրմովըս «ինձանով»	իրմովըդ՝ «քեզանով»
իրմընցմովըս «մեզանով»	իրմընցմովըդ՝ «ձեզանով»:

Կարեւոր է նաև հիշել ԼՏ. մէն «մենակ, միայն» հգ. մէներ,
որ Սուչավայի բարբառում ս, դ՛, ն հոգեւորով դառնում է՝

մէներս «միայն ես», մէներդ՝ «միայն դու»,
մէներ «միայն նա»:

— Հայերենի ցուցականների երեք աստիճանների (այս, այդ,
այն) շարքը Առաիալի բարբառում խախտւած է: Սուչավայի
բարբառը գիտե աս, ադ, ան, բայց հոգնակիւում գիտե միայն
ասօնք (չկա ադօնք, անօնք). գիտե դ՛ա, նա, բայց չգիտե սա:
Հոգնակիւում հոլովւում են դ՛ացա, նացա ձևերը, բայց չկան
դ՛աքա, նաքա ուղղականները. Ահա այս բոլորի հոլովական
տախտակը.

	աս	ադ	ան	ասօնք	—	—
Ու.	—	դ՛ա	նա			
Ս. Տ.	—	դ՛արա	նարա	դ՛ացա	նացա	
Հ.	—		սնա			
Բ.	—	դ՛արամէ	նարամէ	դ՛ացամէ (նաև Հնգ.)	նացամէ	
Գ.	—	դ՛արա հէդ	նարա հէդ	դ՛ացա հէդ	նացա հէդ	

Սուչավայի բարբառում կան նաև սեռ. անօր, ադօր ձևերը:

Ծանօթ.—Հնգ. նաքա, նացա, դաքա:

Լեհահայ բարբառը ունի աս, ադ, բայց չգիտե ան, որ ըստ
Հանուշի, էջ 25, գործածւում է միայն բարդութեանց մեջ (u nas
zwykle tylko w złożeniach), ինչ. ան-ադենը, կրճատ՝ ան-դենը
«այն ատենը», ան-ժամանագէն եայլն: Հոգնակիւում կան ասօնք,
ադօնք ձևերը, բայց չկա անօնք:

Թեև Հանուշը հերքում է ան ցուցականի գործածութիւնը,
բայց իր գրքի վերջում դրած լեհահայ նմուշի մեջ գտնում եմ.
ինչպէս՝ աս ժամանագին, ադ լիզուն, նմանապէս ան էրզըրներ
«այն երկիրները» (առանց որոշիչ հոդի)՝ ան ցուցականով:

Հնգ. ունի սի «այս, սա».

Ցուցականի երեք աստիճանների խախտումը և ձգտումը դեպի երկու աստիճան (նման Տիգրանակերտի և Մարաղայի բարբառների), արդյունք է լեհերենի և ուսերենի ազդեցութեան:

— Ստացական ածականներն են՝ Սուչավայի բարբառով զիմ «իմ», զքու «քո», մեր, ձ'եր, իրեն, իրենց: Գրեթե նույն է նաև լեհահայոց մեջ միայն թե Գ. դեմքի ստացականները գործածական են թե իրեն, իրենց և թե էրեն, երենց ձևով: Վերջին երկուսը ձևացած պիտի լինեն շեշտյալ ե ձայնավորի ազդեցութեամբ, նախաձայն ի դարձնելով է:

Դնում ենք այստեղ հաց բառի հոլովումը իր ստացականի հետ՝ Սուչավայի բարբառով.

Ու.	զիմ հացը	զքու հացը	իրեն հացը
Ս. Տ.	զիմ հացին	զքու հացին	իրեն հացին
Հ.	զիմ հացը	զքու հացը	զիրեն հացը
Բ.	զիմ հացէն	զքու հացէն	իրեն հացէն
Գ.	զիմ հացու	զքու հացու	իրեն հացու

Ու.	մեր հացը	ձ'եր հացը	իրենց հացը
Ս. Տ.	մեր հացին	ձ'եր հացին	իրենց հացին
Հ.	սմեր հացը	սձ'եր հացը	զիրենց հացը
Բ.	մեր հացէն	ձ'եր հացէն	իրենց հացէն
Գ.	մէր հացու	ձ'եր հացու	իրենց հացու:

Այսպես նաև զիմ հացերը, մեր հացերը ևայլն:

Լեհահայ բարբառով փոխանակ ասելու զքու, ասում են «ս-քուզ «քո»:

Նկատելի է որ եզ. Ա. և Բ. դեմքի վրա կպել է հայցականի գ (որ և ս) նախդիրը և գործածվում է բոլոր հոլովներով. օր. Սչ. զիմ գ'ըլխուս վրա: Հոգնակին և Գ. դեմքը գ նախդիրը պահում են միայն հայցականի վրա:

Ստացական, ինչպես նաև ցուցական ածականին հետևող գոյականի վրա դրվում է որոշիչ հոգ, բայց կարող է նաև չդրվել հետևելով լեհերենին, որ զուրկ է հոդից: Այսպես լեհահայ բարբառով (Հանուշի գրած նմուշից քաղելով)՝

ան էրգբրներ

զէրենց աղէքը գ'էղան «իրենց լավ գեղերը»

գէրենց լիզուէն, ադ լիզուէն
մեր հայեր, աս ժամանադին
էրենց զուրուցքը «իրենց խոսվածքը»
էրենց գընդիք «իրենց կանայք»
գէրենց գդաք, գէրենց գ'էդինը.

նաև ստացականը հետադաս՝

էրզան էրենց «իրենց տնտեսությունը»:

Ծանոթ.— Նկատելի է, որ ձայնավորով վերջացող բառերը պահում են իրենց հոգը (ն), իսկ բաղաձայնով վերջացողները չուտով կորցնում են (ը, հոգը):

Ստացական ածականը Առախալի բարբառում բայի հետ գործածվելով կարող է դառնալ ստացական դերանուն: Նույնիսկ այս դեպքում իմ ստացականը հոլովվելու ժամանակ պահում է գ նախդիրը անբաժան. ինչ. գրծ. գիմօլ (չուշարձ., էջ 365).

Բացի ստացական ածականներից, կան նաև ստացական հոգերը (ս, դ, ն կամ ը), որոնք կցվում են գոյականներին՝ ստացական ածականների հետ միասին կամ առանց նրանց օժանդակության: Օր.

Սչ. հացըս, հացիս, հացէս, հացերս, հացերդ', հացերը
բաշգօնըս, բաշգօնդդ', մեր բաշգօնները (չկան պոլսահայոց -նիս, -նիդ կայլն ձևերը): Գտնում ենք միայն Հնգ. տընմէրունմէ «տներից», բ'րօվիդորնունմէ, մէջվըներ «մեջերսին»

Սչ. լհ. աղաչաս «իմ պարոնը»

Լհ. գիմը սօյերըս «իմ աղգականները» (Հանուշ, էջ 111), որոշիչ հոգը ստացականի վրա ավելացրած:

10. ԲԱՅ

Լծորդություններ

Հին հայերենի 4 լծորդությունները (-ել, -իլ, -ալ, -ուլ) և նրանց երկրորդ տիպարները (-անել, -անիլ, -անալ, -անուլ) Առախալի բարբառում կրում են հետևյալ ձևափոխությունները.

Ա. լծ.	-ել	Սչ. -ել	Լհ. -ելու
Բ. լծ.	-իլ	Սչ. -իլ	Լհ. -ելու
Գ. լծ.	-ալ	Սչ. -ալ	Լհ. -ալու
Դ. լծ.	-ուլ	Սչ. -ուլ	—

Ներկրորդ տիպար

Ա. լծ.	-անել	Սչ.	-նել	Լհ.	-նէլու
Բ. լծ.	-անիլ	Սչ.	-նել	Լհ.	-նէլու
Գ. լծ.	-անալ	Սչ.	-նալ	Լհ.	-նալու
Դ. լծ.	-նուլ	Սչ.	-նուլ	—	

Օրինակ՝

սիրել >	Սչ. սիրել	Լհ. սիրէլու
խօսել >	Սչ. խօսել	Լհ. խօսէլու
խաղալ >	Սչ. խաղալ	Լհ. խաղալու
թողուլ >	Սչ. թողուլ	Լհ. թողէլու
պագանել >	Սչ. բաքնել	Լհ. բաքնէլու
ագանիլ >	Սչ. հաքնել	(Լհ. հաքնէլու)
մոռանալ >	Սչ. մօռնալ	Լհ. մօռնալու
առնուլ >	Սչ. առնուլ	Լհ. առնէլու:

Բայց թեև այսպես լծորդությունները բավական հարազատ ձևով պահված են, սակայն խոսարհումը շատ պարզված է. սրա պատճառը կատարյալի ջնջումն է:

Կատարյալի ջնջումը

Ինչպես հայտնի է, Սլավոնական լեզուների, ինչպես նաև գերմաներենի և անգլերենի մեջ բայերի անկատարն ու կատարյալը մի ձև ունեն: Բայի սրանից այդ լեզուներում հեռացնեն զարգանում է կատարյալը հարակատարով փոխանակելու ձևը: Օրինակ՝ ֆրանսերենում կատարյալի բուն ձևը՝

j'aimai	nous aimâmes
tu aimas	vous aimâtes
il aima	ils aimèrent

որ քերականության և գրական լեզվի մեջ հաճախ հիշվում է, 100 տարուց ի վեր ջնջված է ժողովրդական լեզվի մեջ: Դրա փոխարեն ժողովուրդը, նրան հետևելով նաև գրողները այժմ գործածում են հարակատարը՝ կազմված avoir «ունեմ» օժանդակով և բայի անցյալ գերբայի հարադրությամբ. այսպես՝

j'ai aimé	nous avons aimé
tu as aimé	vous avez aimé
il a aimé	ils ont aimé

Նույնը գերմաներեն՝

ich habe geliebt	wir haben geliebt
du hast „	ihr habet „
er hat „	sie „ „

Այս ոճով կազմվում է նաև Առաիալի բարբառում, ինչպես
կտեսնենք ստորև:

Բայց ինչպես որ ամեն մի հին կարգ ջնջվելուց հետո որևէ
հետք թողնում է, նմանապես և՛ կատարյալը:

Սուչավայի բարբառով գրված նմուշի մեջ ոչ մի կատարյալ
չկա, բոլորն էլ հարակատար են, իսկ լեհահայ բարբառով գտնում
եմ 26 օրինակ կատարյալի համար (Հանուշի բառացանկում):
Ահա դրանց ցուցակը.

աղալ (ցորեն) — աղցի > ախցի
ապրել — արբեցի
առողջանալ — առօխչա
ասել — ասեցի
արածել — արձեցի
արածեցնել — արձեցուցի
բերել — բ'էրա
գալ — էգա, էգան
գտանել — գ'գա
զարնել — զարգա
ծախել — ձախեցի
ծիծաղել — ձիձաղեցա
ծնիլ — ձնեցի
կապել — գարեցի
հարբել — հարբ'էցա
ճկել — ջիգեցի «ծռեցի»
նստիլ — նըսդ'ա
ուտել — գէրա (նաև Սչ. գերա)
պոռչել — բ'օրջ'էցի «բղավեցի»
տալ — դուլա «տվի»
տեսանել — դէսա
փիլիլ — բ'ըլեցի «փուլ եկա»
փնտռել — բ'ընդըեցի
փշել — փշեցի «երգեցի»
քարշել — քաշեցի
քշել — քշեցի

Կատարյալի կորուստից հետո Առտիալի բարբառի խոնարհումը՝ ազատվելով կատարյալի ներկայացրած դժվարություններից, չափազանց հեշտանում է: Խոնարհման հիմնական ձևերը մնում են ստորադասականի ներկան և անցյալը, հրամայականը և դերբայը: Առաջին երկուսը վերջավորություններով նույն են և տարբերվում են միայն վերջավորության ներքին ձայնավորով, որ բայի անորոշի ձայնավորն է հենց: Տարբեր ձևեր ունեն միայն հրամայականը և անցյալ դերբայը. այս վերջինն էլ ունի միայն երկու ձև, այն է -իլ և -ցիլ: Ահա թե ինչ է մնում գրաբարի ութ տեսակ զանազանակերպ խոնարհումից.

Ստորև դնում եմ նախ էական բայի խոնարհումը և ապա սիրել բայի հիմնական 4 եզրերի խոնարհումը (Սուչավայի բարբառով).

Էական բայ

Ներկա	անկատար
յէս իմ	էի
դ'ուն իս	էիս
ինքն է	էր
մինք ինք	էինք
դ'ունք իք	էիք
իրօնք ին	էին

Սիրել

Ստոր. ներկ.	Ստոր. անց	Հրամ.
սիրիմ	սիրէի	սիրէ՛
սիրիս	սիրէիս	սիրեցէ՛ք
սիրէ	սիրէր	գերբ.
սիրինք	սիրէինք	սիրօղ
սիրիք	սիրէիք	սիրած
սիրին	սիրէին	սիրիլ

Ծանոթ. — Անկատարի եզակի Բ. դեմքը վերջանում է միշտ ս (փոխանակ գրբ. ր), որ առաջացել է ներկայի եզ. Բ. դեմքի ս բաղաձայնի նմանությամբ: Լեհահայ բարբառում չկա անկատարի վրա ս և շարունակվում է ր ձևը (Հանուշ, էջ 73):

Սրա նման է նաև մյուս լծորդությունների խոնարհումը.

Ստոր. ներկ.	Ստոր. անց.	Հրամ.
նայիմ	նայէի	նայի՛րը
նայիս	նայէիս	նայեցէք
նայէ	նայէր	դերբ.
նայինք	նայէինք	նայօղ
նայիք	նայէիք	նայած
նային	նայէին	նայիլ

Ստոր. ներկ.	Ստոր. անց.	Հրամ.
հազամ	հազայի	հազացի՛րը
հազաս	հազայիս	հազացէք
հազա	հազար	դերբ.
հազանք	հազայինք	հազացօղ
հազաք	հազայիք	հազացիլ
հազան	հազային	

Զորրորդ լծորդությունը, որ իր երկու տիպարներով ջնջված է մեր արդի բարբառներում, Առտիալի բարբառում դեռ կենդանի է մնում: Բացի թողուլ բայից, գտնում ենք այստեղ անուլ, գ'դնուլ, մրդնուլ, դէսնուլ <(առնուլ, գտանել, մտանել, տեսանել)> բայերը և լեհահայ բարբառումն էլ հեծնուլ «ձի հեծնել», իսկ Հնգ. ցըցնուլ «ցուցանել», գումջնում «կիջնեմ» բայերը:

Դնում ենք այստեղ թողուլ բայի խոնարհումը.

Ստոր. ներկ.	Ստոր. անց.	Հրամ.
թողնում	թողնույի	թօխ
թողնուս	թողնույիս	թօղեցէք
թողնու	թողնէր	դերբ.
թողնունք	թողնույինք	թօղնուլ
թողնուք	թողնույիք	թօղիլ
թողնուն	թողնույին	

Մյուս բայերից հրամայականը լինում է՝

ա՛ռ, առեցէք
մըդիբրը, մըդեցէք
դէսի՛րը, դէսեցէք

Պակասավոր, զարտուղի և անկանոն բայեր

Առնել>անիլ, անիմ, անէ, անին, արիլ է, կտր. արի, արավ, հրամ. արա, անինք, արէ՛ք:

Առնուլ>առնում, առնուս, թռնու, կտր. առի, առավ, առին=առան, առիլ է:

Ասել>ասիմ, ասիս, կտր. ասավ:

Գալ>իգալ, գամ, գաս, գա. կտր. էգավ, էգան, էգիլ իմ, իգա, իգան՝ հրմ. օգօ (Հնգ. եգօ՝) օգօցէք:

Գնալ>մնում է այս բայից միայն մի քանի ձև, որոնք են՝ գնացիլ իմ, հրմ. գընա, գընացէք:

Գնել>գնիլ, գնիմ, գնիս, գնէ, գրիլ է, հրմ. գիր, գիրը, կրավ. գրուիլ:

Լինել>լիալ, լիամ, լիա, ըլար (անկ.), կտր. էղավ, էղան, էղիլ է:

Լսել>լսիլ, լսիմ, լսիս, կտր. լսավ, լսիլ ին:

Կամ, կաս, կայ>գամ, գաս, գա, գան:

Տալ>դամ, դաս, դա, դայի, դայիք, դար, կտր. դվան, դուվիլ է, չիմ դուվի «չեմ տվել», հրամ. դուր, դուվէ՛ք:

Հրամայական հոգնակի Բ. դեմքի բացառիկ օրինակներ են Հնգ. ելեցեք, եղեցէք, տարեցէք, փխ. ելք, եղք, տարեք (-էք վերջավորությունը վերածված սովորական -եցէք ձևին):

Լծորդության փոփոխություն

Նույնիսկ Մեսրոպյան դարից բայերի լծորդությունը սկսում է փոխոխվել. օր. բնակիմ բայը կա նաև բնակեմ ձևով և դրա համար կատարյալը յինում է բնակեցաւ և բնակեաց (երկուսն էլ Ս. գրքում):

«Լիակատար քերականության» է վերապահված տալ գրաբարի փոփոխված լծորդությունների ամբողջական ցանկը, ինչպես և որոնել փոփոխության պատճառները:

Այստեղ մենք առանց այդ մանրամասնությունների մեջ մտնելու, գնում ենք Առաիալի բայական լծորդությունների փոփոխության այբուբենական ցուցակը:

աղալ>Սչ. ախցել, Լհ. աղնալու

ամաչել>Սչ. ամընչնալ, Լհ. ամունչնալու

առնուլ>Սչ. առնուլ, Լհ. առնելու

արբենալ>Սչ. հարփել, Լհ. հարբէլու

արգելուլ>Սչ. արքիլել

դանգատիլ>Սչ. գանգրգվել

գիտել>Սչ. դ՛իգնալ, և՛. դ՛իգնալու
 դոտանել>Սչ. գըգնուլ, և՛. գըգնելու
 ելանել>Սչ. յէլել, և՛. էլելու
 երազել>Սչ. էրձել, և՛. էրձէվելու
 երգնուլ>Սչ. էրֆընալ, և՛. էրգ՛վընալու
 երևիլ>Սչ. էրէֆուալ, և՛. էրէֆուալու
 զարթնուլ>Սչ. զարթընել, և՛. զարգ՛ըվելու
 թողուլ>Սչ. թողուլ, թողնուլ, և՛. թողելու
 թռիլ>Սչ. ութֆէնալ, և՛. գուգ՛վի ինձի
 լիզուլ>Սչ. լըզել, և՛. լըզելու
 լնուլ>և՛. ըլինքցընելու, Սչ. լըցընել, և՛. լընէլու
 լինել>Սչ. ըլալ, իլալ, և՛. իլալու
 լրանալ>Սչ. լըմընալ
 լողալ>Սչ. լեղ գալ, և՛. լեղ գալու
 կակազել>Սչ. գագըզգալ
 կամիլ>Սչ. գամէնալ
 կլանել>Սչ. գուլ գալ
 համարիլ>Սչ. համարել, համբրել, և՛. համբրէլու
 հոտոտել>Սչ. հօգ՛ֆըզալ
 ճանաչել>Սչ. ջանջ՛նալ, ջանջ՛նալու
 մուրանալ>Սչ. մուրալ
 մտանել>Սչ. մըգնուլ
 մօտիլ, մերձենալ>Սչ. մօդէնալ
 յօրանջել>Սչ. օրընջգալ, և՛. գօրօնջ՛գըզալու
 ունել>Սչ. ունէնալ, և՛. ունէնալու
 պարծիլ>Սչ. բարձէնալ
 սպանանել>Սչ. բսբ՛անել, և՛. բսբ՛անէլու
 վախիլ>Սչ. վախնալ, և՛. վախնալու
 տեսանել>Սչ. գէսնուլ, և՛. գէսնէլու
 փլանիլ>Սչ. փլել, և՛. բ՛ըլէլու
 քնել>Սչ. քնել, քնանալ
 օծանել>Սչ. օձել:

Բաղադրյալ ժամանակներ

Մյուս ժամանակներից սահմանական ներկան կազմվում է
 թե՛ Սուչավայի և թե՛ լեհահայ բարբառում, ավելացնելով զի
 (>կի, կու) մասնիկը ստորագասական ներկայի վրա: Այսպես՝

գի սիրիմ	գի նայիմ	գի հազամ	գի թողնում
գի սիրիս	գի նայիս	գի հազաս	գի թողնուս
գի սիրէ	գի նայէ	գի հազա	գի թողնու
գի սիրինք	գի նայինք	գի հազանք	գի թողնունք
գի սիրիք	գի նայիք	գի հազաք	գի թողնուք
գի սիրին	գի նային	գի հազան	գի թողնուն:

Սահմանականի անկատարը կազմելու համար նույն զի մասնիկը դնում են ստոր. անցյալի վրա. այսպես՝

գի սիրէի	գի նայէի	գի հազայի	գի թողնույի
գի սիրէիս	գի նայէիս	գի հազայիս	գի թողնույիս
գի սիրէր	գի նայէր	գի հազար	գի թողնէր
գի սիրէինք	գի նայէինք	գի հազայինք	գի թողնույինք
գի սիրէիք	գի նայէիք	գի հազայիք	գի թողնույիք
գի սիրէին	գի նայէին	գի հազային	գի թողնույին:

Շարունակական ձև գոյութիւնն չունի:

Պարզ ապառնին կազմվում է Սուշավայի բարբառում ստոր. ներկայի վրա ավելացնելով բիդօր մասնիկը (որ միջին հայերէնի պիտի որ > պիտ'որ ձևի շարունակութիւնն է), իսկ լեհահայ բարբառում դնելով բի մասնիկը, որ պիտի ձևի կրճատումն է. Այսպես՝

Սչ.	Լհ.
բիդօր սիրիմ	բի սիրիմ
» սիրիս	բի սիրիս
» սիրէ	բի սիրէ
» սիրինք	բի սիրինք
» սիրիք	բի սիրիք
» սիրին	բի սիրին:

Անցյալ ապառնին կազմվում է անշուշտ Սուշավայի բարբառում բիդօր սիրէի ձևով, իսկ լեհահայ բարբառում՝ բի սիրէի ձևով: Բայց սրանց համար բնագրերում օրինակ չկա, ինչպես և Հանուշի բառացանկում: Այստեղ ունենք միայն մի օրինակ՝ քիլայի «պիտի լինէի», որ ապացույց է բի ձևով անցյալ ապառնիի գոյութեան՝ լեհահայ բարբառում:

Փալով Սուչավայի բարբառին, այստեղ գտնում եմ գուզէի
ձէձիւմ<կուզէի ծեծեմ «պիտի ծեծել» ձեւը, որ կարգը է ընդհա-
նուր եղած լինել նույն բարբառին: Ըստ այսմ՝

գուզէի ձէձիւմ>կուզէի ծեծեմ
գուզէիս ձէձիւս>կուզէիր ծեծես
գուզէր ձէձէ>կուզէր ծեծէ
գուզէինք ձէձինք>կուզէինք ծեծենք
գուզէիք ձէձիք>կուզէիք ծեծէք
գուզէին ձէձին>կուզէին ծեծեն:

Այս բոլորը՝ ենթադրաբար:

Մանթ.— Թե զի և թե քի մասնիկները ձայնավորով սկսվող բայերից առաջ
սղում են իրենց ի ձայնավորը. օր.

Լհ. գազադիւմ, գազադէի «կազատեմ, կազատել»

Լհ. գաղնամ «կաղամ (ցորենը)»

Լհ. գէրլիւմ, գէրէի «կայրեմ, կայրել»

Լհ. գաբլիւմ, բաբլիւմ «կթողնեմ, պիտի թողնեմ»

Լհ. բաբրիւմ «պիտի ապրիւմ»

Լհ. բանիւմ «պիտի անիւմ»

Հնգ. բ'անէ «պիտի անե», բ'անին «պիտի անեն, բ'իւան
«պիտի լինեն»

Հնգ. գ'ամիչնան «ամաչում են»

Սչ. գուզիւմ, գափսըսնամ «կափսոսամ», գաբրի, գէրթամ,
գբլա «կլինի»

Հնգ. բ'ասիւմ, բ'ասին:

Ձարմանալի կերպով «արձակել, ընծայել, ընկերել» բայերը
ձայնավորից առաջ չեն սղում գի, բի մասնիկների ի ձայնը.
այսպես՝

գի ացգ'ըրիւմ, բի ացգ'ըրիւմ

գի ընձայիւմ «կծնիւմ»

գի ընգէրիւմ «կօգնեմ»:

Այս երեք օրինակներն էլ պատկանում են լեհահայոց բար-
բառին (իսկ Հնգ. ունենք կի իջիւմ «կհիշեմ»):

Երեք միավանկ բայ (գալ, լալ, տալ) ստանում են կի մաս-
նիկի փոխարեն կու. այսպես՝ Լհ. գուգ'ամ, գուդամ, գուլամ (բայց
բի մասնիկը մնում է անփոփոխ. այսպես՝ բիգ'ամ, բիլամ, բի-
ղամ):

Լեհահայ բարբառում իջանել՝ ընջ՛նելու բայը ներկայում լինում է գունջ՛նում (իսկ հարակատարում՝ ընջիլ իմ): Ըստ իս. այս ձայնափոխությունը տեղի է ունեցել հետևյալ ձևով. նախ գի ընջ՛նում ձևից ի ձայնավորի սղումով ստացվել է գընջ՛նում, ապա ք ձայնավորը նմանությամբ ու ձայնավորի, վերածվել է ու-ի, որով ստացվել է գունջ՛նում:

Թուիլ «երևալ, այնպես կարծել» բայը Սուչավայի բարբառում դարձել է ութֆէնալ (<թուենալ), որից իբրև անդեմ բայ ունենք Սչ. գութֆի, Լհ. գուդ՛վի «կթվի, թվի թե, կարծես»:

Կարենալ «կարողանալ» բայը՝ ինչպես Նոր-Նախիջևանի բարբառում, նույնպես և այստեղ ստանում է ներկայում գի մասնիկը, որ ուրիշ բարբառներում չկա. այսպես՝ Լհ. գի գարնամ «կարող եմ» = Ննիս, գըգըրնամ = Պլս. գըրնամ:

Հունգարահայ բարբառով գտնում ենք նաև գու գ՛րիմ, գու ա(ր)նէիմ:

Հրամայականի Բ. ձև

Ներկայի ձևը կազմվում է ստոր. ներկայի վրա ավելացնելով թօխ մասնիկը: Սա ուրիշ բարբառների թող բառն է, ուր ղ՝ բառավերջում գտնվելու պատճառով և կամ խուլ բաղաձայնների մոտ դարձել է իս և ապա այդ ձևը ընդհանրացել է: Լեհահայ բարբառով սրանից օրինակ ունենք միայն թօխ իգ՛ա «թո՛ղ դա» և թօխ իլա «թող ըլլա, թող լինի» (երկուսն էլ ձայնավորի մոտ):—Բայց առանց թող մասնիկի կարելի է ասել ստոր. ներկայով. օր. Լհ. Ասդ՛վաձ բահէ ու ձաձգէ:

Հրամայականի անցյալի ձևը պիտի լիներ թօխ սիրէի, թօխ սիրէիս, թօխ սիրէր ևայլն, բայց այս կարգի օրինակներ չունենք բնագրերում:

Հարակատար և գերակատար ձևերը կազմվում են անցյալ դերբայի իլ, -ցիլ ձևի և էական բայի ներկայի և անկատարի հարադրությամբ (-ած ձևը չի գործածվում այս նպատակով):

Բայց ինչպես գիտենք, հարակատարի այս ձևը գործածվում է իբրև կատարյալ:

Այստեղ գտնում ենք երկու ձևերի խոնարհումը Սուչավայի բարբառով.

Հարակատար

սիրիլ իմ
սիրիլ իս
սիրիլ է
սիրիլ ինք
սիրիլ իք
սիրիլ ին

Գերակատար

սիրիլ էի
սիրիլ էիս
սիրիլ էր
սիրիլ էինք
սիրիլ էիք
սիրիլ էին:

(Այսպես նաև լեհահայ բարբառով, միայն գերակատարի Բ. դեմքը՝ սիրել էիր):

Մյուս լծորդություններից օրինակներ են ցաւիլ իմ, խնդա-
ցիլ իմ, ամանչէցիլ իմ, իմացիլ իմ, իմացուցիլ իմ:

Ուրիշ տեսակի բաղադրյալ ժամանակներ, ինչպես ունենք
օրինակ Պոլսի բարբառում (տե՛ս անդ, էջ 137), չկան Առտիայի
բարբառում:

Պատճառական բայ

Պատճառական բայ կազմելու համար գրաբարի -եցուցանել,
-ացուցանել վերջավորությունը միասության օրենքով դարձնում
են -ցընել (լեհահայ բարբառում -ցընէլու), որից առաջ հաճախ
դրվում է է ձայնավորը:

Երկու տեղ -ցընէլու մասնիկի մեջ ը ձայնավորը հետեւելով
հաջորդ է-ին՝ դառնում է նույնպես է. այսպես են լեհահայ բար-
բառի չէրըրցէնէլու «մաքրել» և գըր'ցէնէլու «կպցնել» բայերը:

Հաջորդ ցուցակում հավաքում եմ (Հանուշի բառարանից
քաղելով) այն բոլոր պատճառական բայերը, որ հիշված են այս-
տեղ՝ իրենց խոնարհման հետ միասին:

Պատճառական բայեր

արածեցնել>արձէցնէլու, գարձէցնում, արձէցուցիլ իմ, ար-
ձէցուցի

բռնկեցնել>բ'ըռընցնէլու, բ'օռուցնէլու «ճրագը վառել»,
գի բ'օռուցնում, բ'օռուցուցիլ իմ, բ'օռուցիր ջիրախ «վա-
ռիք ճրագը»

փլցնել>բ'ըլցընէլու, գի բ'ըլցուցում, բ'ըլցուցիլ իմ

ցուցնել>ցըցնէլու, գի ցուցնում, ցուցուցիլ իմ

«մաքրել»>չէրըրցէնէլու, գի չէրըրցուցում

չորացնել > չօրցընելու, գի չօրցունում
 մեծացնել > մեծցընելու, գի մեծցունում, մեծցուցիլ իմ
 մեկտեղցնել > մեգդըխցնելու «միացնել, կցել», գի մեգդըխ-
 ցունում, մեգդըխցուցիլ իմ
 վերցնել > վերցընելու, գի վերցունում, վերցուցիլ իմ
 գիրացնել > գերացնելու
 լցնել, լինքցնել > ըլինքցընելու, գըլինքցունում, ըլինքցու-
 ցիլ իմ
 աւելացնել > ավելցընելու, գավելցունում, գավելցունույի,
 ավելցուցիլ իմ
 ուտեցնել > ուղէցնելու, գուղէցնում, ուղէցուցիլ իմ
 իմացնել > իմացնելու, գիմացնում, գիմացնույի, իմացու-
 ցիլ իմ, բիմացնում, դ'ու ինձի իմաց (հրամայական ձև)
 լմնցնել > լըմընցընելու, գի լըմընցում, լըմընցուցիլ իմ
 «վերջացնել»
 կպցնել > գըբ'ցէնելու, գիգըբ'ցունում, գըբ'ցուցիլ իմ
 սորվեցնել > սորվէցնելու, գի սորվէցնում, գի սորվէցնույի,
 սորվէցուցիլ իմ
 սրել, սրեցնել > սըրէցնելու, գի սըրէցնում, սըրէցուցիլ իմ
 շարել, շարեցնել > շարէցնելու, գի շարէցնում, շարէցուցիլ իմ
 շիտկել, շիտկեցնել > շիդգէցնելու, գի շիդգէցնում, շիդգէ-
 ցուցիլ իմ
 դարձնել > դ'արցընելու, գի դ'աուցունում, դ'աուցուցիլ իմ
 խաղաղել > խաղավուցնելու:

Պատճառական բայեր

(Սուչավայի բարբառ)

ագանիլ—հաքցընել
 անցանիլ—անցընել (չեզոքն է անցնել)
 երկայնել—յէրգընցընել
 իմանալ—իմաց | նել
 իջանել—ընչէց | նել
 լաւանալ—լաֆցընել
 լնուլ—լըցընել
 կշտանալ—գիշդ'ացընել
 կորուսանել—գօրսընցընել
 կպչիլ—գըբցընել

հասկանալ—հասգ՝ըցնել
 հեռանալ—հեռացնել=Հնդ. հէռէձնէլու
 հնանալ—հընացընել
 ողջանալ—վօխչընցընել
 պաղիլ—բաղէցընել
 փախչիլ—փախցընել
 ուգեցընել Հնգ. «կերցնել»
 բաղեցընել Հնգ. «սառցնել»:

Սրանցից դուրս կա նաև տալ բայով պատճառական կազմելու ձևը. օր.

Լհ. բի դամ մանէլու «մանելու պիտի տամ»:

Բոլոր պատճառական բայերը վերջավորվում են ներկայի ժեջ -ցուցում ձևով և խոնարհվում են չորրորդ լծորդության համաձայն. օր.

ստոր. ներկ.	ավելցունում
» անց.	ավելցունույի
սահմ. ներկա	գավելցունում
» անկ.	գավելցունույի
ապառնի	բավելցունում
անց. ապ.	բավելցունույի
հարակատար	ավելցուցիլ իմ
գերակատար	ավելցուցիլ էի:

Կրավորական բայ

Կազմվում է ներգործական բայի վերջավորությունը վե-
 քածելով Սչ. -վել=Լհ. -վէլու ձևին: Օր. Սչ. խառնըվել, խօրվըվել,
 հաղօրթվել, մըգըրդվել «մազերը խուզել», բարբըվել:

Խոնարհումը լինում է հետևյալ ձևով.

ստոր. ներկ.	ստոր. անկ.	հարակ.	գերակ.
գախվիմ	գախվէի	գախվիլ իմ	գախվիլ էի
գախվիս	գախվէիս	գախվիլ իս	գախվիլ էիս
գախվէ	գախվէր	գախվիլ է	գախվիլ էր
գախվինք	գախվէինք	գախվիլ ինք	գախվիլ էինք
գախվիք	գախվէիք	գախվիլ իք	գախվիլ էիք
գախվին	գախվէին	գախվիլ ին	գախվիլ էին

սահմ. ներկ.	սահմ. անկ.	ապառնի	անց. ապառ.
գի գախվիմ	գի գախվէի	բի գախվիմ	բի գախվէի
		կամ	կամ
		բիգօր գախվիմ	բիգօր գախվէի

Ահա Հանուշից հավաքած օրինակներու.

խեղդուիլ > խըխդ'ըվէլու, գի խէխդ'ըվիմ, խէխդ'ըվիլ իմ
 յիշուիլ > իշվէլու, գիշվիմ
 ցցուիլ > ցըցվէլու, գի ցըցվիմ
 երազել > էրձէվէլու, գէրձէվիմ, էրձէվիլ իմ
 կախուիլ > գախվէլու, գի գախվիմ, գախվիլ իմ
 լուացուիլ > լըվացվէլու, գի լըվացվիմ, լըվացվիլ իմ
 հագնուիլ > հագ'նըվէլու, գի հագ'նըվիմ, գի հագ'նըվէլ
 հագ'նըվիլ իմ

խառնուիլ > խառնըվէլու, գի խառնըվիմ
 գրուիլ > գ'ըրվէլու
 զարթնուլ — զարդ'ըվէլու
 թրջուիլ — թացուդվէլու
 կարգուիլ — գ'արգ'ըվէլու
 ձկիլ — ջիգվէլու
 ուղղորդել — խօրդ'ըվէլու
 քաղել — քաղվէլու:

Այս ձեւերից մի մասը իրապէս կրավորական է, ուրիշները՝
 կրավորակերպ չեզոք (հագնուիլ, լվացուիլ), կա էլ որ՝ միայն չե-
 զոք (երազել):

Բացասական բայ

Բայերի բացասականը կազմելու համար 3 ձև կա.

- 1) Զայնավորով սկսվող բայերից առաջ դրվում է չ, օր-
 չունիմ, չունիս, չունի, չունին.—չուզիմ, չուզիս, չուզէ:
- 2) Բաղաձայնով սկսվող բայից առաջ դրվում է չի, ինչ-
 չի մօռնամ, չի մօռնաս, չի մօռնա.—չի բաղիմ, չի բաղիս, չի
 բաղի.—չի քամ, չի քաս, չի քա.—չիյգիմ, չիյգիս, չիյգէ (եբբ չի
 դիտեմ և այլն):

Զիլալ Հնգ. «չի կարող»

Զիպիկէ Հնգ. «պետք չէ» (ՀԱ, 1898, էջ 49):

3) Սկզբում գրվում է էական բայի բացասականը, իսկ բուն բայի վրայից հանվում է լ վերջավորությունը. ինչ.

չիմ թողու, չիմ անի, չիմ բ'օղջ'ի

չիս թողու, չիս անի, չիս բ'օղջ'ի

չի համբ'իրի, չի դարնա

չին էրթա, չին իմանա, չին գիտնու, չին լսի

չին գուզի, «չեն տվել»:

Հրամայականի բացասականը (որ է արգելական) կազմվում է մի մակբայով. ինչ.

մի թողնու, մի թողնուք

մի առնու, մի առնուք

մի ձէձի, մի ձէձիք

մի սիրի, մի սիրիք

մի հազա, մի հազաք

մի նայի, մի նայիք:

Bitner-ը, Հուշարձ., էջ 365, տալիս է էական բայի բացասականի ներկան հետևյալ ձևով. չիմ, չիս, չի, չիմք, չիք, չին: Բոլոր դեպքերում ե ձայնավորը դարձել է ի, նույնիսկ եզակի Գ. դեմքում (չի), որ դրականում ե ձևով է (է). ավելի կարևոր է գիտել այն, որ, ինչպես հեղինակն էլ գիտում է, հոգնակի Ա. դեմքը ունի մ բաղաձայնը (չիմք), մինչդեռ բոլոր մեր բաղառները ունեն ն (չենք, չինք):

Հունգարահայ բարբառով մի փոքր հատվածի մեջ գտնուի ենք շինք գիտիլ (Բազմ., 1922, էջ 279), ուր էականը ունի չինք. (և ոչ չիմք), իսկ բուն բայը գիտիլ (լ-ով) ձևը:

Կրկնավոր և հաճախական բայեր

բզզալ>Սչ. բրզբրզալ

գոռգոռալ>Սչ. գ'օոգ'օոալ, Լհ. գ'օոգ'օոալու

թափթրփել Սչ. «փոշին մաքրել»

թրթռալ Սչ. «թիթեռի և նմանների ձայնը»

խլխլել Սչ. «իրար ձեռքից հափշտակել»

ձադձրգել Սչ. «ծակ ծակ անել»

ծեծել>Սչ. ձէձգըվել «իրար ծեծել»

կակազել>Սչ. գագըզդալ, գըզըզդալ «կակազել, կմկմալ»
 կարկատել>Սչ. գարգըդել
 կոխոտել>Սչ գօխքըդել
 կոտրել>Սչ. գօդրել, հճխ. գօդըրդըվել
 կռուիլ>կրկ. Սչ. գըռվըդել, Լհ. գըռվըդէլու
 կտրել>Սչ. հճխ. գըզըրդել
 հոտոտել>Սչ. հօդ՝Ֆըդալ
 ճանկոտել>Սչ. ջանքըռթել
 մտածել>Լհ. մըդմըդալու
 յօրանջել>Սչ. օրընջդալ, Լհ. գօրօնջ՝գ՝ըդալու
 չարչարել>Սչ. չարչարել
 չափել>կրկ. Սչ. չափչըփել
 պահել>կրկ. Սչ. բահըդվել
 պատառել>կրկ. Սչ. բադըրդել
 պլպլալ>Սչ. բըլբըլալ
 վազել>կրկ Սչ. վազվըզել, Հնգ. վազվըրտել
 փսփսալ>Սչ. փսփսալ
 քաղել>կրկ. Լհ. գ՝ախգ՝ըդէլու
 քաշել>կրկ. Սչ. քաշքըշել
 քեքրտալ>Սչ. քէռքըրդ՝ալ
 քթուել>կրկ. Լհ. քէդ՝վըդվէլու
 պահըտուիլ>Հնգ. (կարդա՛ն բահըդվիլ) «պահվել»
 քննել>Հնգ. քըլընտել (քննտել)
 լիզել>Հնգ. լըզմըզիլ
 խօսել>Հնգ. խօսխօսվիլ «մեջերը կռիվ անել»։

Ընդհանուր ցանկ լեհահայ բայերի

Հանուշից քաղելով դնում եմ այստեղ լեհահայ բարբառի քուր բայերի այբուբենական ցուցակը՝ իրենց խոնարհական ձևերով, այնպես, ինչպես ավանդում է հեղինակը։

ազատել—ազադէլու, գազադիմ, դազադէի, ազադիլ իմ
 աղալ—աղնալու, գաղնամ, ախցի, ախցիլ իմ
 ամաչել—ամուչնալու, գամուչնամ, ամուչնէցիլ իմ
 այրել—գէրիմ, գէրէի, էրիլ իմ
 անկանիլ—ըննէլու, գըննիմ, ընգիլ իմ
 աշխատիլ—աշխադէլու, գաշխադիմ, աշխադիլ իմ

ապլել «թողնել»—աբլէլու, գաբլիմ, բաբլիմ, արլէի, գարլէի,
աբլիլ իմ

ապսպարել—աբըսբ'էրէլու, գաբըսբ'էրիմ, արըսբ'էրիլ իմ
ապրիլ—աբրէլու, գաբրիմ, գաբրէի, արբէցի, բաբրիմ,
աբրիլ իմ

առնել «անել»—անէլու, գանիմ, բանիմ, արիլ իմ, անրա
առնուլ «առնել»—առնէլու, գառում, առիլ իմ
առողջանալ—առօխչնալու, առօխչցա, առօխչիլ իմ, գա-
ռօխչնամ

ասել—ասէլու, գասիմ, ասէցի, ասիլ իմ
աբածիլ «խոտ ուտել»—աբձէլու, գարձիմ, արձէցի, արձիլ
իմ, արձօղ

արձակել—այգ'ըրէլու, գի այգ'ըրիմ, բի այգ'ըրիմ, այգ'ը-
րիլ իմ

աւելել—ավուլէլու, գավուլիմ, ավուլիլ իմ

աւելրել—ավէրէլու, գավէրիմ

բանալ—բ'անալու, բ'ացիլ իմ

բերել—բ'էրէլու, բ'էրա

գալ—իգ'ալու, էգիլ իմ, գուգ'ամ, բիգ'ամ, էգա, էգան, էգօ

«արի»

գնել—գ'ընէլու, գ'րիլ իմ, գ'րած

գէլէ (կծագի)
հլանել—էլէլու, գէլիմ, գէլէի, բէլիմ, էլիլ իմ, արիգ'ազը

հրդնուլ—էրգ'իլընալու, գէրգ'իլընամ, էրգ'իլընցիլ իմ

հրեիլ—էրէփալու, գէրէփամ

հրթալ—էթալու, գէթամ, գէթայի, բէթամ, գ'ընա

հփել—էփէլու, գէփիմ, էփիլ իմ

զարկանել—զարնէլու, գի զարնիմ, զարգա, հրմ, զարնէ',
զարգիլ իմ

ընծայել «ծնիլ»—ընծայէլու, գի ընծայիմ

ընկերել «օգնել»—ընգէրէլու, գի ընգէրիմ

թողուլ—թողէլու, գի թողում, թողիլ իմ, թօխ

իջանել—ընջ'նէլու, գունջ'նում, ընջ'իլ իմ

իմանալ—իմանալու, գիմանամ, իմացիլ իմ

լալ—լալու, գուլամ, բիլամ, լացիլ իմ

լինել—իլալու, գըլամ, բիլամ, բիլայի, իլայի, էղլը, էղիլ իմ

լնուլ—լընէլու, գիլնում, լըցիլ իմ

լոգանալ—լօգնէլու «լվացք անել», գի լօգնիմ, լօգնիլ իմ

խաբել—խափելու, գի խափիմ խափիլ իմ
խաղալ—խաղալու, գի խաղամ, խաղցիլ իմ
խառնել—խառնելու, գի խառնիմ
խմել—խրմելու, գի խրմիմ, խրմիլ իմ
խնդալ—խընդալու, գի խնդամ, խնդացիլ իմ
ծախել—ծախելու, գի ձախիմ, ձախէցի, բի ձախիմ, ձախիլ
իմ, ձախու (à vendre)

ծածկել—ծածկելու, գի ձածգիմ, գի ձածգէի, ձածգիլ իմ,
ձածգած

ծեփել—ծէփելու, գի ձէփիմ, ձէփիլ իմ

ծիծաղիլ—ծիծաղելու, գի ձիծաղիմ, ձիծաղէցա, ձիծաղիլ իմ

ծխել—ծըխելու, գի ձըխիմ

կախել—գախելու, հրմ. գախին զքեզ

կարդալ—գ'արդ'ալու, գի գ'արդ'ամ, գի գ'արդ'այի, գ'ար-
դ'ացիլ իմ

դահել մհյ.—գ'ահելու «ծեծել»

գիտեմ—գ'իդիմ, գ'իդէի, գ'իդացիլ իմ, բի գ'իդնամ

գտանել—գ'ըդնելու, գի գ'ըդնում, գ'ըդա, գ'ըդիլ իմ

ծծել—ծըծելու, գի ձըծիմ

ծնիլ—ծընելու, գի ձընիմ, ձնէցի, ձնիլ իմ

կայանալ—դէնալու, բի դէնամ, դէցիլ իմ, սոսս դէցիլ
«լուռ կաց»

կանգնիլ—գաննելու, գի գաննիմ, գաննիլ իմ

կապել—գարելու, գի գարիմ, գարէցի, գարիլ իմ

կարել (կար)—գարելու, գի գարիմ, գարիլ իմ, գարօղ

կարել, կարենալ—գարնալու, գի գարնամ, գարցիլ իմ

կթել (կաթ)—գըթելու, գի գըթիմ

կորուսանել—գօրսընելու, գի գօրսունում, գօրուսիլ իմ

կուռել, կուլտիլ—գըռվուդելու, գի գըռվուդիմ, գի գըռվու-
դէի, գըռվուդիլ իմ

կրել—գըրելու, գի գըրիմ, գի գըրէի, գըրիլ իմ

հազալ—հագելու, գի հագամ, հագացիլ իմ

համարել—համբըրելու, գի համբըրիմ

համբերել—համբ'իրելու, գի համբ'իրիմ

հանգչիլ—հանգ'ջ'ելու, հանգ'ջ'է'

հանգիլիլ—հանդըրելու, գի հանդարիմ, հանդուրիլ իմ

հանել—հաննելու, գի հանիմ, հանիլ իմ

հաջել—հաջ'ելու, գի հաջ'իմ, հաջ'իլ իմ

հասկանալ—հասգ՝ընալու, գի հասգ՝ընամ, հասգ՝ըցիլ իմ
հաստունանալ—հասըննէլու, գի հասըննամ, հասընցիլ իմ
հարբիլ—հարբ՝ելու, գի հարբ՝իմ, հարբ՝էցա, հարբ՝իլ իմ
հաւանիլ—հաւնէլու, գի հաւնիմ, հաւնիլ իմ
հաւատալ—հաւադալու, գի հաւադամ, գի հաւադայի, հա-
վադացիլ իմ

հեծանել (ծի)—հէձնէլու, գի հէձնում, հէձիլ իմ
հեալ—հէվալու, գի հէվամ, գի հէվայի, հէվացիլ իմ
հինել—հինէլու, գի հինիմ
հիւանդանալ—հիվանդացիլ իմ
հիւսել—հուսէլու, գի հուսիմ
հոտիլ «վատ հոտ արձակել»—հօդալու, գի հօդամ, գի հօ-
գայի, հօդացիլ իմ

ծայնել «կանչել»—ծէնէլու, գի ձէնիմ, գի ձէնայի՝ ձէնիլ իմ
ղորդել «շիտկել, ուղղել»—խօրդ՝ելու, գի խօրդ՝իմ, խօրդ՝իլ իմ
ծանաչել—ջանջ՝նալու, գի ջանջ՝նամ, ջանջ՝էցիլ իմ
ճարել «բուժել»—ջարէլու, գի ջարիմ
ձկել—ջիգէլու «ծռել», գի ջիգիմ, ջիգէցի, ջիգիլ իմ
մեռանիլ—մէռնէլու, բի մէռնիմ, մէռիլ իմ, մէռած
յօրանջել—գորօնջ՝գ՝ըդալու, գի գորօնջ՝գուդամ, բի գորօնջ՝
գուդամ, գորօնջ՝գ՝ըդացիլ իմ

ուզել—ուզէլու, ուզէնալու, բուզէնամ, ուզացիլ իմ
ունիմ, ունէնալու, գունէնամ, բունէնամ, գունէնայի, ու-
նացիլ իմ

ուղեորել—աղավըրէլու, գաղավըրիմ, դաղավօրիմ «ղրկել»
ուռչիլ—ուռէլու, ուռիլ է, ուռած
ուտել—ուդէլու, գուդիմ, բուդիմ, գէրա, գէրիլ իմ
չափել—չափէլու, գի չափիմ, գի չափէի, չափիլ իմ
չորանալ—չօրնալու, գի չօրնամ, գի չօրնայի, չօրցիլ իմ
չօքել (թրք.)—չօքէլու, գի չօքիմ, չօքիլ իմ
պազանել—բաքնէլու, գի բաքնիմ, գի բաքնէի, բաքիլ իմ
օր. զձէռք գի բաքնիմ

պակասիլ—բագ՝սէլու, գի բագ՝սիմ, բագ՝սիլ իմ
պահել—բահէլու, գի բահիմ, գի բահէի, բի բահիմ, բահիլ իմ
պաշտել—բաշդ՝ելու, գի բաշդ՝իմ, գի բաշդ՝էի, բաշդ՝իլ իմ
պառ(ա)կիլ—բառգէլու, գի բառգիմ, բառգիլ իմ
պստիկ(ա)նալ—բիզդիգնալու, գի բիզդիգնամ, բիզդիգ-
ցիլ իմ

վախենալ—վախնալու, գի վախնամ, վախացիլ իմ
 վերանալ—վերնալու «ցատկել», գի վերնամ, վերցիլ իմ
 տալ—դալու, գուդամ, դուվա «տվի», դուվիլ իմ, բի դամ
 տաշել—դաշելու, գի դաշիմ, գի դաշէի, դաշիլ իմ
 տեսանել—դէսնելու, գի դէսնում, դէսա, դէսիլ իմ
 ցանել—ցանելու, գի ցանիմ, գի ցանէի, ցանիլ իմ
 ցաւիլ—ցավելու, գի ցավիմ, գի ցավէի, ցավիլ իմ
 փլիլ—բ'ըլէլու «փուլ գալ», բ'ըլէցի «փուլ եկա»
 փտիլ—փըդդ'էլու, փըդդ'ած
 քայլել—քալէլու, հրմ. քալէ'
 օթել «օթեանիլ, դիշերել»—օթէլու, օթիլ իմ, քօթինք «պիտի
 գիշերենք»

օգտել «բաժել, բաժականանալ» (հմմտ. Պլ. օքդէլ՝ այս իմաստով), կա միայն Լհ. գօգ'դ'իք «բնով է» (Պլ. գօքգէ):

քաղցիլ—քախցէնալու, քախցիլ իմ:

11. ԴԵՐՔԱՅ

ա) Անորոշ դերբայ

Ինչպես վերևում տեսանք, Բ. լծորդության անորոշ դերբայը նմանվելով առաջինին, երկուսն էլ ստացել են -ել ձևը, թեև բայը խոնարհվում է -իմ ձևով: Օրինակները տես վերը:

Լեհահայ բարբառում բոլոր անորոշ դերբայները վերածվել են -լու ձևին, որ անորոշ դերբայի սեռականն է: Այս ձևափոխությունը ըստ իս առաջացել է հետևյալ ձևով:

Աշխարհաբարում հաճախ անորոշ դերբայի ուղղական ձևի տեղ կարելի է գործածել սեռական ձևը: Օրինակ՝ կարելի է ասել՝ միտք ունիմ երթալ կամ միտք ունիմ երթալու (հակառակ դիրքով կարելի է ասել միայն՝ երթալու միտք ունիմ, բայց ոչ երբեք երթալ միտք ունիմ):

Նոր-Նախիջևանի բարբառում ուզել և կրնալ բայերը սովորաբար վերցնում են սեռական հոլով անորոշ դերբայ. օր.

կուզիմ էրթալու, կուզիմ էրթալու.

կը կրնամ ուտելու, կուզիմ ասելու քի...

Այս ձևը կա նաև Սուչավայի բարբառում. օր. դուզէ մեր մօդ իզ'ալու.

չի դարնա զիրենք փսագէլու.
դուզիմ դ'էլէգրաֆադ՝ անէլու.
յէ՛փ բագասխանը գըլա իգ'ալու.
գի գըցին սգ'օլները փոէլու «սկսում են սեղան բաց անել».
մուզիգ'ը գըցիլ է փչէլու «երածշտուրթյունը սկսվել է (նվա-
զել)».

հիմքի գուզին մագուր խաղալու.

վալց գուզին խաղալու.

դ'ըուսգըս չուզէ էրթալու «դուստրս երթալ չի ուզում»:

Սեռական հոլովով դերբայ գործածելու այս ձևն է, ահա, որ
տարածվել և ընդհանուր է դարձել լեհահայ բարբառի մեջ:

Լեհահայ բարբառում անորոշ դերբայի պարզ ձևը (-ել, -ալ)
պահված է միայն իբր գոյական. այսպես, ըստ Հանուշի ունենա՛

փըչել «երգ»

քալել «քայլվածք»

ունէնալ «ինչք, ունեցվածք»:

Անորոշ դերբայը Սուչավայի բարբառում հոլովվում է երկ-
րորդ հոլովման ձևով. օր.

Ս. Տ. սիրէլու գ'ըրէլու

Բ. սիրէլէն գ'ըրէլէն

Գ. սիրէլօւ գ'ըրէլօւ

Թեև հոլովները այսպես որոշ են, բայց Սուչավայի բար-
բառը կարող է նաև սեռական-տրական հոլովաձևը գործածել
իբր բացառական. օր.

Թեև ասում են՝

շադ գ'րէլէն մագվըները գի ցալին,

բայց նաև՝

Ձի դ'ագ'րի ասէլուն.

Գ'րէլուն առաջ մըրթէ «գրելուց առաջ մտածիր».

կա նաև այսպիսի ձև՝

Ուղէվէն ասօրվան բ'ան չէմ հասգ'ըցի «այսօրվա ուտելի-
քից բան չեմ հասկացել»:

Գ) Ներկա դերբայ

Ներկա դերբայը կազմվում է -օղ, -ցօղ վերջավորությամբ. օր. խըմօղ, սօրվօղ, անօղ, բանօղ, գըդրօղ, և՛. համբիրօղ, գա-րօղ (որ կար է կարում), հազացօղ և այլն: Սրանք իբրև դերբայ՝ երբեմն ածական են, երբեմն գոյական. օր. և՛. արձօղ, որ զուտ գոյական է դարձել. «հոյվիվ» նշանակությամբ, և՛. գ'էդին-գըդ-րօղ «երկրագործ», էփօղ, «խոհարար», ընդէրօղ «օգնական»:

Գ) Անցյալ դերբայ

Վերջավորվում է -ած, -ցած. օր. խմած, գ'րած, գ'րած, ձած-գած, մէռած, լիդգ'ած (լիտած), մըգ'լած, ուռած, մօրթած, քախ-ջած և այլն:

Սրանք բոլորը չեզոք կամ ներգործական են:

Կրավորականի համար կա -ման մասնիկը, որով ունենք միայն մի օրինակ, որ է գ'ըրման : «գրված». կա նաև Հնգ. բ'ըռ-նըման «ըռնած», չօքման «չօքած», վառման «վառված»:

Դ) Ապառնի դերբայ

Վերջավորվում է -լիք. օր. աբրէլիք, հավադալիք և այլն:

12—13. ՆԱԽԱԳԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱԿՔԱՅ

աղամա Սչ. «ակամա»

ահա Սչ. «ահա»

ամէնէվին Սչ.

ավալդու և՛. «հին, վաղուցվա» (<թրք. *evvelki*)

ադ'խըդար և՛. «այգչափ»

այլվի Հնգ. «այլև, դարձյալ» (ՀԱ, 1897, էջ 186)

անգիցվէրէն «անկից ի վեր, այն ժամանակից ի վեր»

ասգ'իցի և՛. «այստեղից»

ասը'աս և՛. «իսկույն, այս պահուս»

անժումը Հնգ. «այն ժամանակ»

բէլքի և՛. «թերևս»

բ'արօվ հասնիք և՛.

գ'ըշէրօւ Սչ. «գիշերով, գիշերանց»

բ'օլըր և՛. «շուրջը, չորս բոլորը», օր. դ'արուն բ'օլըր «լե-
ռան շուրջը».

դա «բայց» և՛. չէ օ, դա դ'ես «ոչ միայն, այլ և».

դ'ես գու գ'աս և՛. էլի կգաս.

դ'իմաց և՛. «գեմը», դ'արուն դ'իմաց «սարի գեմը»

դարբա և՛. «անգամ» <արար. ամէն դարբա «միշտ»

զարթ և՛., Հնդ. «բացի, զատ»

ինցծյ «ինչպես» և՛. (<ինչ+թրք. soy կերպ) օր. ինցծյն է
«ինչպես է».

ինչծվ գէթաս և՛. «ինչով կերթաս».

ինչխար և՛. «ինչչափ» (թրք. qadar > խաղար ձևից կրճատ-
ված).

ինդաս և՛. «այստեղ». էգօ ինդաս «եկուր հօս, այստեղ արի»,
<ընդ այս, դէս.

ինչվան և՛. = ինչֆանի, Սչ. «մինչև ց»

ինչուհինդի և՛. ցայժմ.

ընդի, ընդը, ընդըր, և՛. «ինչպես» Հնդ. ընդոր, ընդըր, օր.
գը վէրնա ընդի աձ «կցատիկ ինչպես այժ».

չիմ ունացի ընդի
«միջոց չունեի».

<գրք. բնդ որ ձևից, որից և Պլ. ընդօր, ինդօր,
Ղրք. ընդի, ինդի, Վն. դճր:

գըգըմ և՛. «կտոր», ըստ իս կտոր մը՝ ձևից, հգ. գըգըրվանք
<կտորվանք.

համ և՛. «նույնպես»

հերգիս և՛. «երբեք» <պրս. ۛ> hergiz նույն նշ.

հէրուս և՛. = Սչ. հէրու «անցյալ տարի, հերուս» թեև և՛.
բառավերջում ունի ս, բայց սեռականում (հէրովան) կորց-
նում է.

հիմբի Սչ. հիմբի, հիմբիդ, նաև հիմդի «այժմ, հիմա, հի-
մի», անշուշտ հիմի, հիմիկ ձևերից առաջացած. վերջինը հա-
մարում եմ թրք. imdi, indi, şimdi հոմանիշները խաչաձևամաբ:

հօս, հօն, իհօս, իհօն «այստեղ, այնտեղ». օր. ինչֆանի շա-
ր'աթ օր գըլա բադասիսանը իլա ի հօս Սչ. «մինչև շաբաթ օրը
կարող է պատասխանը լինել այստեղ».— ինչպես նկատելի է,
պակասում է հոդ ձևը, այսինքն երեք դեմքերից մեկը կրճատ-
ված է. այս մասին տես ցուցական գերանվան մեջ:

մէմը և՛. «մի անգամ».

իսդ'ադ «հստակ, մաքուր», և՛. — իսդ'ադ իլախնադ «զուս
մաքուր լեներեն».

էդեւ ԼՅ. «հետեւը». դ'արու էդեւ «լեռան հետեւը», Սչ. յեզեւանց.
նումայ Սչ.=նումա, ԼՅ. «միայն թե» <ումմ. numai—նում-
մայ ր'ուրիջ'ները ինձի ր'օգ'օյ չին դուզի «միայն թե լուերը
ինձ հանգիստ չեն տվել»:

սլը>սւրուի Սչ., Ռմ., որից կրճատված է ԼՅ. ուլի, առա-
ջինն էլ կրճատված է ըստ իս սրտեղ, Պլ. վսւրգէդ, վսւրգէիս,
նիս. վըգէիս ձեից. օր. հիմրի սւրուի բիդօր էրթաս Սչ. «այժմ
սւր պիտի երթաս». սլի էդիլիք, ԼՅ. «սւր էիք»: Հմմտ. նաև
վըր դեիսը, ԼՅ. «սւր, սրտեղ».

վերայ>Սչ., ԼՅ. վերա. օր. ջ'ըրին վերա, բց. վըրայէն:

տակ>Սչ. դագ, դագը, ԼՅ. դագ, գըգին, գըգէն. օր.
ԼՅ. ձառին դագ «այն ծառի տակ», դ'արէրու դագ «լեռների
տակ»

քան դ>Սչ. քանց

քանիք>Սչ. ԼՅ. քանիք

քաշքա ԼՅ. երանի թե, իցիվ (<Պրս. օր. քաշքա դար Ասդ-
ված).—քով>Սչ., ԼՅ. քով «կողքին, մոտը». օր. դանը քով,
ան քովը, մէգալ քովէն «մյուս կողքից», հգ. քովրանքներ
օրընձեդ' Սչ., ԼՅ. «յետս յետս, դեպի ետ»

աթրէս Սչ. ադէս ԼՅ.

ալվը ԼՅ. (<մհյ. ալլուի) «նորից»

ԼՅ. ան ադենը, կրճատ' անդենը «յայնժամ»

ամրէս Սչ. ԼՅ. «այնպես»

ասրէս «այսպես»

անագան «ուշ»>Սչ. ԼՅ. անդ'ան (չկա ուշ)

առանց>Սչ., ԼՅ. առանց, որից վերջաձայնի կրճատումով

ԼՅ. առանջօթ «անձայր»=ճոթ «ծայր»

առվագու(ն) Սչ. առվագանց Ռմ.

առաչը Սչ. «առջեւը»

առաջ' ԼՅ. «նախ»

ր'ավագան Սչ.

ր'օլօր Սչ. ր'օլըր «շուրջը» ԼՅ.

ր'օլօրովին Սչ. «ամենևին»

ԼՅ. ր'ուլ>գ'ըշէրն ի ր'ուլն «ամբողջ գիշեր», դարին ի ր'ուլն
«ամբողջ տարին»

դ'արնիվար. դ'էրիվար Սչ.=դ'արնիվար ԼՅ., դ'էրիվեր Սչ.
դեռ>Սչ., ԼՅ. դ'էռ

Գէպի՝ Սչ. դ'է'րի
 դ'էմլուս Լն. «լուսադեմին»
 դ'իմաց Սչ. Լն. «գեմը»
 դ'ուրս Սչ. «1. դուրս. 2. զատ, բացի» = Հնգ., Լն. դ'ուս
 երբ՝ Սչ. յէփ, յէփօր, որից Լն. յէր' «երբօր», յէր' ու յէր,
 «երբեմն», չուհիմ յէր' «ժամանակ չուհիմ» (= ուսու. мнѣ не-
 когда), յէփմըս «էր երբեմն, հին ժամանակ». վերջինը կազմը-
 ված է -մըս մասնիկով որ հանված է այժմս ձևից. այսպես և
 ցիծումըս «այն ժամանակ» և Լն. ցէրնու «հերու».
 իրգըսդ'էմ, էրգըսդ'էմ Լն. «երեկոյան դեմ»
 զարդ' Լն. «զատ, բացի»
 զուրի Սչ. «զուր, իզուր»
 Լն. նիծումըս «այժմ» (տես երբ), «այն ժամանակ»
 ինչպէս՝ Սչ ինչբէս, Լն. ինցօյ (ինչ + սօյ)
 գամա — ագամա Սչ.
 հազառագ Սչ.
 համար Սչ., Լն. «վասն» = Հնգ. սեր
 Հնգ. զօրօք «բոնի»
 հաքա Սչ. «այն» (չկա հն)
 հեռի՝ Սչ. Լն. հէոու, իսկ Հնգ. հէրուվի «հեռվանց»
 հեռ «միասին»՝ Սչ. հէդ, Լն. հեդ
 հերու՝ Սչ. հէրու, Լն. հէրուս (տես երբ)
 հիմա, հիմի՝ Սչ. հիմրի, Լն. հիմրի, հիմրիդ նաև հիւդի,
 որ համարում եմ թրք. imdi, Հնգ. հիմիդուցէն «այժմվանից»
 indi «այժմ» հոմանիշի հետ խաչաձևված: Հնգ. ունի հինգիգուց
 «այսուհետև և այժմեն» և հինգիգուց ինգան «սրանից հետո»:
 Հնգ. ասկից ինգան «այսուհետև»
 Հնգ. մէնէնակ «մենակ»
 մինչև՝ Սչ. ինչֆանի, Լն. ինչվան
 մի՝ Սչ., Լն. մի (արգելական)
 մէջ՝ Սչ. մէչ, Լն. մէջ'ը, Լն. մէջդ'եղ «մեջտեղ»
 մէգ'թի Սչ. «մեկգի, մի կողմ»
 մէգգեղ Սչ. «միասին»
 մէմէգ անգ'ամ Սչ. «երբեմն»
 մէմէգ Լն. «մի մի հատ»
 մօա՝ Սչ. մօդ, մօդիդ, Լն. մօդ, մօդիդ, մօդիդը
 հանգարձ, հանգարձագի Սչ.

առաջ Սչ. «նախ, հառաջ»
յէդ Սչ. յէդէվ Սչ.=էգէ Լհ.
ներս Սչ.
շադ Սչ. Լհ. «հույժ»
վըր դերսը Լհ. «ո՛ւր, ո՛րտեղ»

ուսգ՛իդ Լհ. «ուսկից, սրտեղից» (դնում եմ Լհ. skąd հո-
մանիշի հետ խաշաձեւած)

ուրուխ Սչ., Ռմ.=Լհ. ուխ «յո՞, սուր»

չէ Սչ. Լհ. «ոչ»

վադիւ>Սչ. վաղը, Լհ. վաղ, որից Սչ., Լհ. մեզալ վաղը
«մյուս օր», Լհ. վաղուցու «վաղուցվա»

վար Սչ., Լհ. «ի վայր», վարին Լհ. «ցածրի»

վեր Սչ.=Լհ. վեր, վերը «ի վեր»

վրա Սչ. Լհ. «ի վերայ»

տակ>Սչ. դագ, դագը, Լհ. դագ, դեգին, դեգէն

քան դ- >Սչ. քանց

քանի՞>Սչ., Լհ. քանի՞

քիչ>Սչ. քիչ, Լհ. քիչ, ալ քիչ, դէն ալ քիչ

քօվ Սչ., Լհ. «առ երի, կողքին»

առջիմէկուտալ Հնգ. «նախ և առաջ» (ՀԱ, 1897, էջ 187)

ասկից ինտան Հնգ. «սրանից հետո» (ՀԱ, 1897, էջ 187)

գուդըր Հնգ. «միշտ»

ետեմ Հնգ. «ետքը»

ինդաս—ինդան Հնգ. «այստեղ, այնտեղ»

խով Հնգ. «ինչ տեսակ, ինչպիսի», թրք. ինչ սոյ

խով մը Հնգ. «կերպով մը»

իրեքմըն Հնգ. «տեղ մը» (ՀԱ, 1897, էջ 282)=գրբ. ուրեք
հարա թէ Հնգ. «յետ այսորիկ»

էդեմ Հնգ. «յետ այսորիկ» (ՀԱ, 1898, էջ 47)

մէկսոյ Հնգ. «միատեսակ, միակերպ»

մէնը Հնգ. «անձամբ, իսկ»

միջոը Հնգ. «մեջ, միջև» (ՀԱ, 1898, էջ 48)

յէդգ՛ը Սչ. «ետք» ստանում է սեռ. հլ. խնդիր. ինչ. փէ-
սային յէդգ՛ը, քու յէդգ՛ը, իրեն յէդգ՛ը:

պալմալ (կարդա բալմալ) Հնգ. «նորերս, մոտերս, նոր»=
ննխ. բամալ «քիչ առաջ» (ՀԱ, 1898, էջ 49)

քիչէնը Հնգ. «կամայ կամաց» (ՀԱ, 1898, էջ 105)

Պլ. լալէն, ողբալէն մակրայաձեւերին նման կա Հնգ. լալէնը «լաց լինելով», Սչ. թռչելէնը «թռնելով» և այլն, Հնգ. քաշելէնը Հնգ. իծօլ (= ուժով) «յոյժ» օր. իծօլ աղէկ նայիլ «շատ լավ նայել»:

Հնգ. օր. զաւուր «օրրստօրե»

Հնգ. ալալ «այլեւ, ոչ ևս». օր. ալալ չի բիւամ:

Լեհահայ նախագրութիւններին մեջ Հանուշը, էջ 109, հիշում է սէբ (seh) «համար, զրա» նշանակութեամբ. սա նաև գոյական է «հաշիվ» իմաստով և փոխառյալ է արաբ. حساب hīsāb «հաշիվ» բառից: Հանուշը տալիս է նաև ժողովրդական մի առած այս բառով. «յէբ՝ գու դ'ա սէբ սէբին մօդ, չի դ'ա օչ բան, օչ շահ, օչ վասդ'ազ» (այստեղ բան ուսմանական փոխառութիւն է և նշ. «փող, դրամ» (ban): Սէպը ձևով գտնում ենք նաև Հնգ. «համար» իմաստով (ՀԱ, 1898, էջ 50-ի բառացանկում):

Հնգ. իքմի մը սէբ «մի բանի համար»:

14. ՇԱՂԿԱՊՆԵՐ

և>յէւ (yeu) , յօւ (you), յօ Սչ.

թէ>լհ. թէ

եթէ>թէ օր, թէվօր Սչ.

կամ>Սչ. լհ. գամ

• լհ. «որ, որպեսզի»

ու Սչ. լհ. «և, ու»

ամէնը Հնգ. «սակայն» (ՀԱ, 1897, էջ 186):

Թուրքերենի միջոցով փոխառյալ է Հնգ. համ... համ «թե... թե», կամ նաև հէմ...հէմ, դարը, դարըմ, Հնգ. «բայց, սակայն» (ՀԱ, 1898, էջ 50):

Հնգ. հաթէ «այլև, նաև» (<հապա թէ) օր. հաթէ որդին ալ այլ>ալ, ա, օր. մինք ալ, մինք ա:

15. ԶԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ափսօս Սչ.

բարեւ Սչ. լհ.

ձօ Սչ. լհ. (աղաներին կանչելու համար)

մեղանք՝ Սչ. մեղա
քան Լհ. (աղջիկ կանչելու համար):

Բարդ բառեր

Քաղուսմ և հավաքում եմ այստեղ, այրուբենական կարգով,
այն բոլոր բարդ բառերը (հին թե նոր), որոնք պատահում են
իմ բառացանկում:

Ականջապուր, աղաման, առուտուր, աստուածամայր, աստ-
ւածասէր, արդարեղ, արեւելք, արեւմտելք՝ բարեկամ, բողաբած,
գարիջուր, գարնիվար, գարնիվեր, գպրատուն, երիցկին, թերա-
հաւատ, ժամկոչ, խաչակնքել, խաչվառ, խղճմտանք, ծաղկազարդ,
կայծոռիկ, կայծքար, կառավարել, կերակուր, կէսօր, կնիկմարդ,
կիսակատար, կնքահայր, կնքամայր, հաւկիթ, հօրաքոյր, հօրեղ-
բայր, ձուածեղ, ճրագալոյց, ճրագկալ, մայրապետ՝ ka, մարդասէր,
մեղադրել, մէկգի, մէկտեղ, միամիտ, մօրաքոյր, շնոր-
հակալ, ոտնալուսայ, որբեայրի, ուղարկել, ուղևորել, ջրաղացք,
ջրհեղեղ, ջրհոր, ջրվաթ, սանահայր, սանամայր, սիրահարվել,
ստախօս, ստորագրել, վատուծ, վարդապետ, վարդավառ, վար-
ժապետ, տանտիկին, տղամարդ, քարկոծել, օրհասարակ:

Մ Ա Ս Ն Ի Կ Ն Ե Ր

Առտիալի բարբառը հարուստ է մասնիկների կողմից. այս-
տեղ հավաքում եմ ամբողջ բառացանկում գտնված բառերի
մասնիկները՝ հին թե նոր, մեռյալ թե կենդանի:

-ախան (ամսական, բուսական, գիտնական, ֆնացական, մու-
րացական, նստողական, շաբաթական, պատվական, պարտական,
պիտվական, սիրական, վաճառական, տարեկան, օրական):

-անք.—ապսպրանք, ապրանք, բամբասանք, գովասանք,
գարդարանք, գարմանք, խղճմտանք, խոստովանանք, պարծանք,
պատանք, փշրանք, փորձանք:

-աստան.—գատաստան, Հայաստան, տեն և հոգնակիի մաս-
նիկների շարքում, էջ 133:

-արան.—աւետարան, խաղրան, կերպարանք:

-վածք.—բայից կազմում է գոյական և ցոյց է տալիս այդ
գործողությունը. ինչ.

ԼՆ. գրքված՝ ք «սկզբնավորութիւն» (գրքել «սկսիլ» բայից),
ԼՆ. քալվացք «քալվածք»:

-անակ.— առաջին ձայնավորի սղումով դառնում է -նակ >
-նագ, որ կցվելով զանազան ազգ ցույց տվող բառերի, կազ-
մում է լեզու նշանակող բառ. ինչ.

ԼՆ. հայնագ «հայերեն» նաև Հնգ. օր. գիգիս հայնագ, մա-
ճոնակ «հունգարերեն», ԼՆ. իլախնա գ «լեհերեն» ԼՆ. բրզքնագ
«ռուսերեն» և այլն:

Հմմտ. Ննիլ. հայնակ, ոռւսնակ, ֆռանցուզնակ և այլն:

Կա նաև ԼՆ. վախնագ «վախ», որի հետ հմմտ. Մշ. վախե-
նակ «վախից առաջացած հիվանդութիւն»:

-ան նախամասնիկը թե՛ Սուշավայի և թե՛ լեհահայ բար-
բառում կազմում է ըացասական և իբրեւ կենդանի մասնիկ՝ կա-
րող է կցվել նաև օտար բառերի վրա: Օր.

Մշ.

անաստուած > անասվաց

անգին > անգին

անդագար անթաթար

անիրաւ անիրավ

անխելք անխէլք

անհամ անհամ

անհամբեր անհամփեր

աննման աննման

անօրէն

Լեհահայ բարբառից օրինակներ են՝

ան-հարգէվօր «անարժան»

անհավագ «անհավատ»

անհավագութին «անհավատութիւն»

անօրէ «անօրեն»

անհընարի «անհնարին» (այս և նախորդը

զուրկ են վերջածայն ն-ից)

անխըսմաթ «անբախտ»

անխըսմաթութին «անբախտութիւն»

-ոտ.— աղտոտ, բորոտ, թեփոտ, թացոտել, խլինքոտ, կրա-
կոտ, հիւանդոտ, ոջլոտ, որդնոտ, սրտոտ.

—որդ.—ճամբորդ.

—ոց, նոց.—արտաքնոց, ծածկոց, ծառնոց, կտխնոց, կապոց, հազարնոց, հնոց, վզնոց, տառնոց.

† —ուրիմ.—աղքատութիւն, առողջութիւն, բնութիւն, գէրութիւն, գիտացութիւն, գեղնութիւն, գրացութիւն, զօրութիւն, ընկերութիւն, թողութիւն, իմաստութիւն, իշխութիւն, լայնութիւն, լեզութիւն, լմանութիւն, խաբէութիւն, խաղաղութիւն, խնամութիւն, խոնարհութիւն, ծանրութիւն, ծառայութիւն, ծերութիւն, կարնութիւն, կծուութիւն, հաղորդութիւն, համբերութիւն, հանգստութիւն, հաստութիւն, հեծելութիւն, հաւատութիւն, հարստութիւն, հրեանդութիւն, հրկութիւն, հպարտութիւն, ճարտարութիւն, մթութիւն, մունջութիւն, շէնութիւն, շինութիւն, ողորմութիւն, որսութիւն, ուրախութիւն, վկայութիւն, քաղցածութիւն:

Այս մասնիկը, որ շատ կենդանի է թէ Սուչավայի և թէ լեհահայոց բարբառում, առաջինում հնչվում է —ուրյուն (նման գրականին), իսկ երկրորդում՝ —ուրիմ (նման Պոլսի, Խրիմի, Նոր-Նախիջևանի և ուրիշ շատ բարբառներին):

Ահա օրինակներ լեհահայ բարբառով.

աչքչքութիւն «ագահություն»

դանը-գիգնութիւն «տանտիկնություն»

գիրութիւն «արգարություն»

գըղայութիւն «աղայութիւն, մանկություն»

ձառութիւն «ձառայություն»

անհավաղութիւն «անհավատություն»

նաև օտար փոխառությունների մեջ. ինչ.

չէրրութիւն «մաքրություն»

անխրամաթութիւն «անբախտություն»

սուսդ'ութիւն «լռություն» (արմատն է սուսդ՝

«լռու», որ է թրք. سوس sus):

Հանուշը (Laut. 31) հայտնում է թէ լեհահայ բարբառում —ուրիմ մասնիկը դառնում է երբեմն նաև —ուրուն՝ եկեղեցական լեզվի ազդեցության տակ, բայց օրինակ չի տայիս:

—ուրք.—սորվութք.

—ուկ.—բանուկ, քաղտուկ, թեփուկ, խոցտուկ, խորուկն (=խորունկ), կռճուկ.

ումն.—գոռգոռում, գատտում, երդում, թաղում, շարժում, փայլում.

-ում.—ածուն, զարթուն, գիտացուն, թռչուն, իմաստուն, կանգուն, հասուն, մածուն, սիրուն, ցոլուն, փայլուն.

-ուսա.—հազուստ, հարուստ (նաև հանգիստ).

-ութս.—մանրութս.

-վածք.—էրվացք, բռնվածք, լվացք, համրվածք, շինվածք, քայլվածք, խնդրվածք.

† -վարի.—մարդավարի.

-ցի.—գեղացի, գրացի, խելացի.

-ցու.—տիրացու, փեսացու.

-օք.—խելօք, (ն)շանվօք:

Այս մասնիկներից մի քանիսի մասին ստորև տալիս ենք հավելվածական տեղեկություններ: Այն մասնիկները, որոնց մասին կան այդպիսի տեղեկություններ, վերևում նշանակված են խաչանիշով:

Առտիալի բարբառը ունի նաև մի քանի օտար փոխառյալ մասնիկներ, որոնց մասին էլ խոսում ենք հատվածիս վերջում:

Ավելորդ է ասել, թե հայ մասնիկներից մի քանիսը կարելի է կցել նաև օտար բառերի վրա. ինչ. է՛ն. խըսմըթվր «բախտավոր» (թրք. qəsmet > Պլ. խըսմէթ «բախտ» բառից, է՛ն. մըձ'իգ < ուում. Тѣбѣ > է՛ն. մըձն «կատու» բառից:

-աւոր.—բանւոր, գլխաւոր, երկնաւոր, թագաւոր, լուսաւորիչ, կամաւոր, կարգաւոր, հարկւոր, հարսնաւորաք, ձիաւոր, հեծելւոր, հոգւոր, ձայնաւոր, ճանչւոր, ճգնաւոր, մեծաւոր, մեղաւոր, նշանաւոր, շնորհաւոր, ռոտնւոր, ուխտաւոր, ուղևորել (խավրել), ունաւոր, պարտաւոր, սգաւոր, փառաւոր:

գիւ.—ահաքին.

եայ.—պաշտօնեայ, քրիստոնեայ.

-ելի.—ահուելի, գարշելի, երևելի, հայելի, ողորմելի, պատվելի, սիրելի.

-եղէն.—ոսկեղէն, մարգտեղէն, «մարգրտեղեն», արսթեղէն «արծաթեղեն», հագստեղէն (Բագմ., 1879, էջ 127).

-եմիք.—հայրենիք, վարդենիք.

-ի.— աղի, ջրի.

-իկ.—աղվենիկ, բոբիկ, գառնիկ, լիլիկ, կայծոռիկ, կնիկ,

կլորիկ, հատիկ, հաւիկ, Մանուշիկ, մերկիկ, մօտիկ, շնիկ, պարկ-
ճիկ, պստիկ, տոտիկ, խոզիկ «խոճկոր», Հնգ. քթառնիչ «բազմա-
կալ մկրատ».

-իչ.—գրիչ, թարթիչ, լուսաւորիչ, խառնիչ. Լհ. օդվէնու
հագւնիչ «կոշիկ, ոտնաման».

† -ով.—բարով, գինով, խելքով, համով, ուժով.

-կոտ.—ամաչկոտ, վախկոտ, պարծենկոտ.

-ման.—լման, լինցնել, չոքման Հնգ. «ծուներ չոքած».

-նի.—գաղտնի, յայտնել.

Բացառականը գործածվում է ցույց տալու համար, որ այն
նյութից է պատրաստված. օր. բրինձէ արուր Լհ., յէրգըթէ
«երկաթյա». սուլույէ հաց Լհ. (սուլու «վարսակ»).

-ով գործիականը նշանակում է նաև «այն բանը կրող՝ ու-
նեցող» և այս իմաստով բառեր է կազմում. օր.

Լհ. սունջ'ով «մեղավոր» (Լհ. սունջ' «մեղք» բառից, որ
փոխառյալ է թրք. suç հոմանիշից):

-ուրիւն մասնիկով կազմված բառերից մի քանիսը արժանի
են առանձին ուշադրութեան: Այսպես՝

Լհ. իշխութիւն «համարձակություն» ոչ թէ կրճատված է իշ-
խանութիւն բառից, այլ նոր կազմված է իշխել Սչ. Լհ. «համար-
ձակվել» բայից:

Սչ., Ռմ. լմանություն «իրավունք» կազմված է ոչ թէ լման
«նման»՝ձեից, այլ Սչ., Լհ. լման «ճշմարիտ, արգարացի» բառից,
որ ծագում է լի «լիքը, ամբողջական» արմատից:

Լհ. գարնութիւն «կարողություն» ոչ թէ սղված կամ ձևա-
փոխված է կարողութիւն բառից, այլ Սչ. գարնալ, Լհ. գարնալու
«կարենալ» բայից, նոր կազմություն է՝ արմատը համարելով
կարն (ոչ թէ կար):

Լհ. հուդութիւն «խոնավություն» կազմված է Լհ. հուդ' «խո-
նավ» բառից, որ գրբ. հիւք բառն է՝ ձեն ու իմաստը փոխած:

Թրք. le, li, lu «-ավոր» մասնիկով կազմված են Լհ. ուժլի
«ուժեղ, ուժով», Լհ. ձուձլու «ծծմայր», Սչ. խաշլու «կնքահայր»,
խաշլումար «կնքամայր» (խաշ+lu):

Թրք. ٧ jî (արհեստ ցույց տվող) մասնիկով կազմված ու-
նենք Լհ. դ'ազըսդ'անջի «urzędnik, officier civil».

Փոխառյալ մասնիկների մեջ կարևոր է հիշել լեհահայ բար-
բառի գ'ա մասնիկը, որ ծագում է սլավոնական -ka ձեից և որ

իգական կազմող մասնիկն է՝ իբր հյ. -ուհի, հմմտ. ոռւս. ар-
мянка հայուհի, грузинка վրացուհի, турчанка թրքուհի, ку-
харка խոհարարուհի, крестьянка գեղջկուհի, мещанка մեշչա-
նուհի և այլն։ Այս մասնիկով են կազմված՝

Լհ. թագավորդ՝ա «թագուհի»

Լհ. միլադ՝գ՝ա «գեղջկուհի», որ իգականն է Լհ. միլադ՝
«գեղջուկ» բառի, իսկ այս էլ ծագում է թրք. (արար.)
эм millat «ազգ, ժողովուրդ» բառից։

Լհ. իլախդ՝ա «լեհուհի»

Լհ. մաջարդ՝ա «հունգարուհի»

Լհ. մարարէդ՝գ՝ա «մայրապետ» (որ արդեն իգական լինե-
լով, զուր է ստացել -ka մասնիկը)։

Սրանց հետ հիշենք նաև Լհ. դէրդէրէխա «երիցկին, տե-
րերի կինը», որ կազմված է ոռւս. -ха մասնիկով. հմմտ. куп-
чиха «վաճառականի կին»։

Լեհերենից փոխառյալ բառեր

(լեհահայ բարբառում)

բըընձա «ոչխարի պանիր»<լեհ. bryndza

բուլդ՝ա «սպիտակ հաց»<լեհ. bułka

ձ՝ար՝ «խոյ, բուծ»<լեհ. cap նույն նշ.

ձօրօգ՝ «կառույց»<լեհ. dzióbek

գ՝ար՝ուսդ՝ա «կաղամբ»<լեհ. kapusta.

հուձ՝ուլ «կարպաթցի լեռնական»<hucul.

գ՝իշգ՝ա (kiška) «աղիք»<լեհ. kiszka

գ՝ովադլա «գարբրինի սալ»<լեհ. kowadlo

գ՝րուգ՝ «ագռավ»<լեհ. kruk

գ՝ուլադ՝ «բռունցք»<լեհ. kulak

լուրդ՝ա «սիրուհի»<լեհ. lubka

մօզձիը «սանդ»<լեհ. moździerz

արադ՝ անէլու «հերկել»<լեհ. orati

Ռումիներենից փոխառյալ բառեր

(լեհահայ բարբառում)

բէրնըվաք «շալվար»<ռում. berneveči «մի տեսակ շա-
լայն շալվար»

բօլդի՛, հգ. բօլդի՛եր «խանութ» <bolta^y
 ջէրբ «եղջերու» Լհ. <սում. ճerb
 ջ'օգ՛ան «մութճ» <սում. ճokan
 դօմնա «տիկին» <սում. domna
 ձէր «սառույց, gelée» <սում. dzer
 ջուգ «լուծ, joug» <սում. žug
 ջունգ՛ «ցուլ» <սում. žunk
 ջուրուիդ՛ «խոստում» <սում. žuruit
 ֆուրգ՛ուլիճ՛ա «պատառաքաղ» <furkulica^y
 գինդա «գեղձ» <սում. ginda^y
 գրէրէնօս «կուղ, սապատողն» <սում. grebanos
 գրրմադ «խումբ, բազմություն» <սում. gr̥mad
 յէր՛ուր «նապաստակ» <սում. jepure
 արուգ՛ուր «արտորայք» <սում. ar̥tur, aratura
 բարաբուլ «գետնախնձոր» <սում. barabula

Ռուսերենից փոխառյալ բառեր

(լեհահայ բարբառում)

բէրէզա, բէրէզինա «կեչի՝ ցարասի ծառը» <սում. берёза,
 березина
 բօլօթա «ցեխ, ձահիճ», հգ. բօլօթաներ <սում. болото «ճա-
 հիճ»
 բօրօնա «ցաքան», բօրօնաներ <սում. борона նույն նշ.
 բօժ անէլու «նեքել» <սում. божиться, побожиться
 «նեքել» (Հանուշ, էջ 36)
 բուրյա՛ «փոթորիկ» <սում. буря.
 բուրյան «մոլախոտ» <սում. бурьян.
 բուժէն «աղած, ծխած ու չորացրած միս» <սում. буженина
 (Հանուշ, էջ 37)
 բրրավու «ծակիչ գործիք, գայլիկոն» <սում. бурав
 ջէրէվիդ՛ «կոշիկ» <սում. черевик
 ջուգնիգ՛ «ծաղրելի» <սում. чуд...
 չուլուվ «մեղու» <սում. пчела
 ջէվօրօնգ՛ա «արտույտ թռչունը» <սում. жаворонок
 չուսագ՛ «արու սաղ» <սում. гусак

Թաթարական փոխառյալ բառեր

(Լեհահայ բարբառում)

բիքա «աիկին, խանում»

բեխ, հգ. բէխէր «ընչացք»

բօլ «շատ» <թրք. bol

բուրյազ՝ «երիկամունք» <թրք. böyrek

ջ'իջ'աղ «ծաղիկ» <թրք. چيچك čičeg

ջ'օրլու «անիծյալ» <թրք. çor. ժանտախտ + Լս «-ավոր»

մասնիկով

ջ'ուսզ՝ «արագաշարժ» <թրք. պրս. çust

շուբուխ «ցուպ, դավադան»

շուրուզ «վատ», օր. շուրուզ արիլ իս «վատ ես արեի» <

թրք. چورچو çürük «փամած»

դօշազ՝ «անկողին» <թրք. döşek

ջիգար «թոք»

լալէխ «թաշկինակ» <թրք. ياغلغ yaglax

էլ «ժողովուրդ»

գալաջի, հգ. գալաջէսզ'ան «խոտք, բառ»

խաշիշ «փոկ» <թրք. قايش qayəş

խամջի «խարազան» <թրք. قامچى qamçə

յափընջա «յափուենջի» <թրք. yapunja

յարա «վերք» <թրք. يارا yara

դ'օրուլազ՝ «թիթեռնիկ» <թրք. kebelek

շէբար Սչ. Լհ. «մաքուր, զուտ»

շէբըբընեկ Սչ. մաքրեկ

սուսզ՝ «լուռ»

սըսզ'ըվեկ «լռել»:

Լեհահայ բարբառը ունի նաև գերմաներենից փոխ առած բառեր, որոնք կարող են նաև լեհերենի միջոցով առնված լինել, որովհետև գտնվում են նաև լեհերենում. Այսպես՝

Լհ. դախ «կտուր, երգիք, տանիք» <գերմ. Dach, որ և լեհ. dach.

Գավառական բառեր

կրիտ > գըթիդ ԼՏ. «մեջը կաթ կթելու դույլ»

հագ՝նիչ (օգվընու) «կոշիկ»

հագ՝նուման «հագած»

խուձաձ «չարաբարո»

խնթել «choyer, mignarder»

յէրգա (yerga) կարդ, խնամք, հոգատարություն», յէրգայօվ «խնամքով», դանը յէրգան «տնտեսություն, տան կառավարությունը», յէրգա անէլու «կարգի բերել»:

լցած «saucisson», հգ. Լցածներ

խոզի մանդրու «խոզի միս» (Հանուշը դնում է հյ. մանր > մանդր բառից):

mekşev (կարդս մէգ՝սև, Տ իբր քմային), հգ. մէգսևեր «ստամոքս». (Հանուշը ոչ մի բացատրություն չի տալիս սրա ծագման մասին). — Ըստ իս պետք է դնել նեքսև «ներսը» բառից.

արևմըդելք «արևի մայրամուտը», որից փայ արևմըդելքի «արևմտյան կողմը»

մըխիչ (məxič) ծխամորձ, «la pipe» (մուխ բառից)

օրամ, հգ. օրմըներ «փողոց». ծագումն անհայտ

օթման «օթկան, gîte».

բ՛ան-դուն (իմս բանտում) «Փարբիկա, գործարան».

բ՛առնալ, հգ. բառնալներ «վաճառատուն, magasin» (Հանուշը հանում է հյ. բառնալ բայից):

փազ (փակ) «բանտ»

սուլուր «սուր, սրածայր»

դէմլուս (հնչվում է դ՛էմլուս) «արշալույս, առավոտադեմ, լուսադիմին»

թապլել (> թարլէլու) «զցել, նետել»

ուշբ՛ան (ušpan), հգ. ուշբ՛ըններ «առյուծ»

վատուժ (հնչում են վադուշ) «տկար»

վէսդ՛իդ՛ (vestit) «նշանավոր, երեկի, հռչակավոր»

դուրուցան «շատախոս»

ժաժայել «պատժել»

խուրուդ «նուրբ կանաչիներով հարած մածուն, որ ականջապուրի հետ ուտում են». Լեհերեն ևս churut.

աջակողել Հնգ. «աջակցիլ, օգնել» (ՀԱ, 1897, էջ 187)
առհրվիլ Հնգ. «զարհուրիլ» (ՀԱ, 1897, էջ 187)
աւերկիչ Հնգ. «մսխող, շռայլ» (ՀԱ, 1897, էջ 187)
արթմուխ Հնգ. «քսակ, սլայուսակ» (ՀԱ, 1897, էջ 187) ծա-
գումը?

բըտբըտիք Հնգ. «լոբ, լոբամարգի» (ՀԱ, 1897, էջ 249)
Հանուշ լեհացու գըքում կան մի խումբ բառեր էլ, որոնց
ծագումը ինձ հայտնի չէ: Հիշում եմ այստեղ այդ կարգի բառերը.
Բուծանելլու «սնուցանել», բուծանած «գիրացրած». Հանուշը,
էջ 37, այս բառը գնում է գրք. բուծանել բայից, որ թեև իմաս-
տով հարմար է, բայց ձևով ոչ. լեհահայ բառը ենթադրում է
պուծանել ձևը, որ չգիտենք այլուստ.

բ'ալուր «խանձարուր»

ջ'օջ'իա «խողի ձագ»

դալալուր «պնակ, ափսե, assiette»

դար'չուն «անկողին»

ջուլունջուխ «թռչուն»

բ'ազ „cave, նկուղ, մատան»

բ'արբ'արութին «հանդիսավորություն, solennité»

բ'ուձ'ան (pucan) „membre virile“

բ'գ'իգ' (pətik) «կառու»

վարնուք «ոտքով, հետևակ»

աչըչըլած (<-լած) «ազան»

Գավառական բառեր հունգարահայ բարբառով
ծարբբվոր! Հնգ. «ծառա» (ՀԱ, 1897, էջ 304)
ծիճովի? Հնգ. «սկալառակ» (ՀԱ, 1897, էջ 304)
կարկատ Հնգ. «կապերա» (ՀԱ, 1898, էջ 47)
կարկատը զկարկատը կ'ուտէ «կապերա՝ կապերտի վրա» (ՀԱ,
1898, էջ 47)

կցել Հնգ. «սկսել»

կցուածք Հնգ. «սկիզբն, սկզբնավորություն»

կուլուկ Հնգ. «փոքր շուն» (ՀԱ, 1898, էջ 47)

հունել Հնգ. «գոհ լինել» (ՀԱ, 1898, էջ 47)

նեքմակ Հնգ. «կաթնեղեն» (ՀԱ, 1898, էջ 47)

նըմբուխը Հնգ. «պանիր» (ՀԱ, 1898, էջ 48)

նիւ Հնգ. «ճյուղ» (ՀԱ, 1898, էջ 48)

նոդել Հնգ. «հանձնել, նվիրել, տալ» (ՀԱ, 1898, էջ 48)

նունկ Հնգ. «եղիկ!» (ՀԱ, 1898, էջ 48)

մաշելիք Հնգ. (տպված է մաղելիք) «տրտում, տխրություն» (ՀԱ, 1898, էջ 48)

մըխլվիլ Հնգ. «մտնել, ընկղմիլ» (ՀԱ, 1898, էջ 48)

մըխրոտես Հնգ. «ծխել» (ՀԱ, 1898, էջ 48)

միամիտ Հնգ. «միաբան, իրարու հետ» (ՀԱ, 1898, էջ 48)

մորի Հնգ. «անտառ» (ՀԱ, 1898, էջ 48)

նուշի կուտ Հնգ. «նուշ» (ՀԱ, 1898, էջ 48)

շահածու Հնգ. «տնտես, կալվածատես» (ՀԱ, 1898, էջ 48)

շաղը Հնգ. «մտածություն, խորհուրդ» (ՀԱ, 1898, էջ 46)

շաղըշել Հնգ. «մտածել, խորհիլ» (ՀԱ, 1898, էջ 48)

շնկեր Հնգ. «տենդ» (ՀԱ, 1898, էջ 48)

ուղաւորել Հնգ. «ընկերանալ» (ՀԱ, 1898, էջ 49)

շիւ Հնգ. «ճյուղ» (ՀԱ, 1898, էջ 49)

պէրնէվաք Հնգ. «անդրաւարտիք» (ՀԱ, 1898, էջ 49)

պէքըրարվիլ Հնգ. «մոնչել, բառաջել»

բըրտըրտել Հնգ. «բզիկ բզիկ անել»

գարաղի Հնգ. «սիրուն, սիրելի» (ՀԱ, 1897, էջ 249)

գետնի կալուկ Հնգ. «գալուկն» (ՀԱ, 1897, էջ 249)

գէշ բոնել Հնգ. «պարսափել, եպերել, պատժել» (ՀԱ, 1897, էջ 249)

երէցք Հնգ. «ամոթ» (ՀԱ, 1897, էջ 281)

բնտրուքս Հնգ. «տարբերություն, ընտրություն»

բացոտել Հնգ. «թըջել»

լըզմըզվել Հնգ. «շողոթորթել» (ՀԱ, 1897, էջ 282)

խմիշ Հնգ. «ծխափող», տնս վերը՝ մխիշ

խուծած Հնգ. «չար, գեշ»

խուծածություն Հնգ. «չարություն, գեշություն»

խօստուկ Հնգ. «կողքի ցավ»

փորիշ Հնգ. «բահ, բրիշ» (ՀԱ, 1898, էջ 105)

փրփրան Հնգ. «շատախոս» (ՀԱ, 1898, էջ 105)

քաշել Հնգ. «գծադրել» (ՀԱ, 1898, էջ 105)

քաշվածք Հնգ. «գիծ» (ՀԱ, 1898, էջ 105)

քարածակտիք Հնգ. «քարայր» (ՀԱ, 1898, էջ 105)

քըլընհակ Հնգ. «քննել» (ՀԱ, 1898, 105) անշուշտ քննտել ձևից:

քթառնիշ Հնգ. «բազմակալ, մոմի վառած պատրույգը կտրելու մկրատ» (ՀԱ, 1898, էջ 105)

քիին Հնգ. «լոբի» (ՀԱ, 1898, էջ 105).— ծագումն անհայտ, օտմը է.

օրամ չնգ. «փողոց» (ՀԱ, 1898, էջ 105)—ծագումն անհայտ,
եթե վրիպակ չկա:

մխանք չնգ. «ծխնելույզ»

սև տաւար չնգ. «գոմեշ» (ՀԱ, 1898, էջ 50)

սրտոտ (սխալ գրված չնգ. սորտուր) «ցասկոտ, բարկացող»
(ՀԱ, 1898, էջ 50)

սրտոտիլ > սորտոտիլ չնգ. «բարկանալ»

վատրժնալ չնգ. «վախնալ, նիհարել»

վատուժ չնգ. «վախտ, նիհար»

տաշտով դորտ չնգ. «կրիա» (ՀԱ, 1898, էջ 50)

հեծեմած? չնգ. «չափազանց, արտաքու կարգի շատ» (ՀԱ,
1898, էջ 47)

տար չնգ. «հոգի, ոգի»! (ՀԱ, 1898, էջ 50)

տարիով չնգ. «տարեկան» (ՀԱ, 1898, էջ 50)

տէին չնգ. «հունդարացի» (ՀԱ, 1898, էջ 50)

փայտփորիչ չնգ. «փայտփոր, ծառկըտուտ» (թռչունը)

փարտընկել չնգ. «անընդհատ դուրս թափել» (ՀԱ, 1898,
էջ 105)

ծայնել (ձէնել) չնգ. էն. «կանչել, հրավերել»

հասութք, չի հասութք չնգ. «հաս, չհաս» (ամուսնության
համար) (Բաղմ., 1896, էջ 272)

փոս փորելէքն չնգ. «գերեզմանափորի վարձ» (Բաղմ.,
1896, էջ 273)

հաց կցօնք չնգ. «հարսանիքի հաց թխելու արարողություն-
նը» (Բաղմ., 1896, էջ 273)

գրորէնք չնգ. «ամուսնության պայմանագիր» (Բաղմ.,
1873, էջ 126)

երեսջուր չնգ. «փեսի ծնողների տված դրամը հարսին»
(Բաղմ., 1873, էջ 126)

բարձերեսք չնգ. «բարձի երես»

չնգ. խածնըվիլ «իբար կծոտել, խածնել»:

Ջարմանալի բառերից մեկն է Kabzan, որ նշանակում է
«հայ». ըստ Հանուշի, էջ 76, այս բառը ծագում է արաբ. թրք.
kabza «poignée» բառից, կամ լեհերեն kabza «porte-monnaie,
դրամապանակ, փողի քսակ» բառից: Lautlehere, էջ 14 համա-
րում է թրք.:

Բացի բառերի փոխառությունից, կան նաև լեհական, ռու-
սիական և գերմանական ասության ձևեր: Այս կարգի երևույթ-

ներ բնական են հարեան ժողովուրդներէ միջև: Շատերից տա-
լիս ենք այստեղ մի քանի օրինակ.

էթալու ձիավոր Լհ. «ձիով երթալ»=լեհ. jechać konno,
դէթամ ձիավորը

դի ձըխիմ լուլա «ծխամորճ եմ ծխում».

գէթամ ջամփա «ճանապարհ եմ գնում».

գէրէ փուռ «փռան մեջ այրվում է».

գէրէ դուն «տունը այրվում է».

էթալու առթով «սայլով գնալ» >լեհ. jechać wozem.

խօրօզ կի խօսէ

բի դամ մանէլու ուսգ'ուլի «վուշը մանել պիտի տամ»=
լեհ. dam prząść len (նույն շարքով՝ անհող)

շուրվա մըսիյէ «մսով ապուր»=լեհ. rosół=miesem

գառնում շահու բան «մի բան (զրամի անուն է. ուում.
ban) եմ վերցնում իբր տոկոս».

չունիմ աղեն «ժամանակ չունիմ» (փխ. ասելու «ատեն չու-
նիմ» շարքը փոխած ըստ լեհականի).

արիգ'ազը մարը գի դ'ընէ «արեւը մայր է մանում». ան-
սովոր ոճ է հայերենում. կարող է լինել օտար ոճ. Հանուշը չի
նշանակում համապատասխան լեհերեն մի ձև.

աղէգնը ձէռաց «ճարպիկ»=լեհ. dobry w reku

ունենալը Հնգ. «ունեցած, ինչք» (ՀԱ, 1898, էջ 49):

Հոնգարահայոց բարբառից փոխառյալ բուրբական բառեր

Ագտրել վշտացնել (այսպես ունի ՀԱ 1897, էջ 186). ագտ-
րըվել նեղանալ, սրգողիլ որ հանում է թրք. ագտըրմազ բառից:
Բայց թրք. azdərmaq նշ. «կատաղեցնել», իսկ ezdirmek «ճըն-
շել».

հայտնի չէ թե սրանցից որն է ակնարկում):

անխարէն Հնգ. այնչափ (ՀԱ, 1897, էջ 186)

գոպոլաք Հնգ. թիթեռ (ՀԱ, 1897, էջ 249)

ինչխարէն Հնգ. «որչափ»

պարբխատ (կարգւ բարըխաղ) «ցորենեղենք» (ՀԱ, 1898,
էջ 49)=կարծում եմ արաբ., թրք. barakāt:

Օտար բառերը այնպես են մերվել լեհահայ բարբառում,
որ բնիկ հայ բառերի նման հոլովվում են, խոնարհվում և մաս-
նիկներ ստանում. Օր.

Թրք. yapa ۱۰: բառից «վերք»՝ և՛. յարայրդ «վիրավոր», յարայրդէլու «վիրավորել, վերք հասցնել», գի յարայօդիմ «վիրավորում եմ», յարայօդիլիմ «վիրավորեցի»:

Թթր-թրք. փոխառությամբ կա և՛. բաշխըշ, որից էլ բայաձե բաշխըշէլու, ներկ. գի բաշխըշիմ և այլն: Սրանց հին հայկական ձևն է և՛. բաշխէլու < գրք. բաշխել, ներկ. գի բաշխիմ, կտր. բաշխիլ իմ:

Թաթարական շէբաբ «մաքուր» բառից սեննք և՛. շէբուքին «մաքրություն», չէբբըցէնէլու «մաքրել», ներկ. գի չէբբըցունում «մաքրում եմ»:

Թրք. suç «մեղք» բառը դարձել է և՛. սունջ՝ «մեղք», որից էլ սունջօվ «մեղավոր» ճիշտ հայերեն բառի նման:

Թրք. բիրաշ «կիր», որից և՛. քիրաշէլու «կիր քսել»:

Հնգ. վեճին (=լատ. veninum, ֆրանս. venin), որից վեճիտոտել «թունավորել» (ՀԱ, 1898, էջ 50):

Թուրքերենի պատճենով կազմված բառերից է Հնգ. տաշտով գորտ «կրիա» (ՀԱ, 1898, էջ 50), որ անշուշտ կազմված է Թրք. qurbaya «գորտ» և tosbaya «կրիա» բառերի պատճենով, երկուսն էլ կազմված baya անգործածական արմատից:

Ն Մ Ո Ւ Շ Ն Ե Ր

(Լեհահայ, հունգարահայ, ռումինահայ, Տրանսիլվանիայի,
Բուկովինայի և Սուչավայի բարբառներով)

Լեհահայ բարբառով գրված նմուշների մեջ ամենահինն է լեհ իշխան Հովսեփ Լյուբոմիրսկու հրովարտակի հայ թարգմանությունը 1751 թվից: Տպված է Բժշկյանի «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» (Վենետիկ, 1830, էջ 165—183): Բայց այս գրվածքը հարազատ բարբառով չէ, այլ գրաբարախառն աշխարհաբար, որի մեջ խառն են նաև լեհահայ ձևեր: Մի քանի տեղ գտնում ենք -ում ներգոյականը և -ից բացառականը, ուստի պետք է ասել, որ թարգմանիչը Ում ճյուղի անձ է, որ երկար ժամանակ ապրելով լեհահայոց մեջ, սովորել է նաև նրանց բարբառը:

Բոլորովին ավելորդ համարելով ամբողջություն մեջ բերել նույն գրությունը, հավաքում եմ այստեղ բոլոր լեհահայ ձևերը, նրանց հետ գնելով նաև այն ձևերը: (-ում, -ից և այլն), որ մատնում են թարգմանչի բուն բարբառը:

բէռնել «բռնել» 165, 180

պի լան «պիտի լինեն» 165, պիլայ 168

տասպերկու 165

քաքսուն (40) 165

աղբարանցմոջի 165

հաւանութենով 165

վճրէ 166, «վճռե», վճրեն 167

պիգրէ «պիտի գրե» 166, 171

ուրուխ 166

պիտան «պիտի տան» 166, 167, 177 (3 անգամ), 181

պիտայ «պիտի տա» 166, 168, 181, 183 (6 անգամ)

չի պիտան «չպիտի տան» 166, 168

հայանց «հայոց» 167

կու պահեմ 167

ֆողին «հողին» 167, ֆողին 168, ֆողի 168

Ռաշքովում 167, 168, 181

սընգկից կու հանեն 167

պի խարճին 167, 171, պի խարճեն 167

պի հասկընայ 167
 պիտոր տան 167
 գեղրանքնուն 168
 չիպի արգիլէ 168
 ինծանէ 168, 180, յինծանէ 180
 կու կապվիմք 168
 ամպրացուցանել 168
 քաղաքում 169, 180
 օրովմ առաջ 169
 պիզտի 169, 173, 182
 չորսում (4-րդ) 170
 կի դէնին «կդնեն» 170
 պի հոգայ 171
 տալեց! «տալու» 171
 դուս «դուրս» 171, 173
 չիբէքնօղայ «չբոնողների» 172
 հէչ չիլալ «բնավ չի լինիր» 172
 իլայ «լինի» 173
 դէնեն «դնեն» 173
 հասգըցած 173
 կու վէճոէ 173
 վիճարէ «վճարե» 173, 179, վիճարել 180, 182
 չի իմանվալ «չիմացվիլ» 173 (Երկիցս)
 ման պածէ «պիտի ման ածե» 177
 երկուսքան «2-ական» 177
 չորսում պորտից դուս 178
 կի հասնի 178
 երկուսում օրն 178
 հէռչակեն, հէռչակվի 178
 ոտընվոր 178
 երկուսում 178
 կտրիճվորաք 178, 182
 խաշու 178, 179
 իրեքում 179
 ոտընվորաք 179
 'իյածվէ «աստուծուց» 179
 չիբէնօղն «չբոնողն» 180
 պի խրկեն 181

պի պահեն 181, պի պահին 182
 իլայ քլինի» 181
 նոր տարում 181
 դէնեն «դնեն» 182
 կի բանին 182
 կօշքարաց 182
 չի պի խարճեն 182
 պիլայ «պիտի լինի» 182
 պի ընտրեն 182, 183
 պի կառավարվին 183
 պի խոստովանվի 183
 պի հաղորդվի, պի խոստանայ 183
 չի բէրնէ «չբռնե» 183
 կի հասնի 183
 պի փակվի 183:

Հունգարահայ բարբառով վենետիկում 1793 թվին տպված է «Գիրք աղօթից», որ չեմտեսել: Այս գիրքը մասամբ լատինատառ արտատպել է Patrubby-ն իր հանդեսում: Որովհետև գրքի մեծ մասը գրաբար է և շատ քիչ բան կա բարբառային, ուստի մենք էլ չվերցրինք:

Լեհահայ բարբառով

ՀԱ, 1895, էջ 203—207 տպված է Խ. Հովհաննիսյանցի մի հոդվածը, ուր մեջ է բերվում մի քանի հատված Կամենեց-Պոդոլսկի դատական վճիռների ժողովածուից: Ժողովածուն գտնվում է այժմ Կիևի համալսարանում և բաղկացած է 32 հատորից: Հատվածները ընդհանրապես գրաբար են: Բավականա՜նում ենք արտատպելով այստեղ միայն մի հատված, որ ամենից ավելի աշխարհիկ ոճ ունի:

Քաղուած Բ.

Եկավ Յովաննէսն Եօլուշին ի Ճարգոյ վոյթին առջեւն եւ կլէյ (գանգատ) արաւ Գրիքային վրայ, եթէ պարտի Յովաննէսին փեսին Այլպլէյին որչափ եւ է, ուստի զարիս (Запись) տվեր է Գրիքային իւր վրայ: Եւ Գրիքային ասաց, եթէ պարտեմ նմա. բայց այդչափ ոչ յունիմ, որ զամէն վճառեմ. եւ երբ ժը.

սոմ եւ ետուր վոյթին եւ դատաւորացն ձեռն. եւ վոյթն առին
եղին ի մէջ սնդուկին, մինչեւ որ Այիզպէյն կայ:

Լեհահայ բարբառով

Mámo, lúbko, gi merním,
Karkevelu jes guzím;
--Poję, o'rti, bi mernás,
Karkevelu buzenás.

Մամո, լութք'օ, գի մէռնիմ,
Գարգ'էվէլու յէս գուզիմ.
—Բոյէ, օրդ'ի, բի մէռնաս*,
Գարգ'էվէլու բուզէնաս:

(Հանուշ, էջ 91)

Լեհահայ բարբառով

Իմաստութիւն Իլախի Հայէրուն սէրը (Տեղեկութիւն Լեհաս-
տանի հայոց մասին).

Իլախի հայերը գիւնըսդ'ին հիմբիդ ընգ'ալ-շադ Գալի-
ձիւն, Բուգ'օվինան ու Բասարարիւն: Էդան իրօնք Հայաստ'ա-
նէն ան էրզըրներ դ'էո դասնըմէգումը գյանքին (դար) մէջ'ը,
յէր' Դաջըգները զքաղաքը Անի Բ'ըլձ'ուցիլ ին:

Ալ-խօջաները ունին գ-էրենց աղէքը գ'եղան հավիդյան,
գի-բ'անին հաց ու գի-մէձցունուն դավար. ալ-մէշդ'էղիձէոք
հայը առդուր գ-անին. Գ'ըլխավօր քաղաքը բազըրգան հայէ-
րուն Գ'ուդ'եր-ին, նըսդ'օղագան-ին ջ'ըրին վըրա Ջ'էրէմուշինը:

Նըսդ'օղագան-ին համ Իլախները ու Ըրզըները (Ուկրաի-
նացի ոռուս), վըրօնք գիւր'անին ավէլի փէշա (արհեստ) ու գ'էդին
գի-բ'անին, համ Ջըվդ'ները, վըրօնք առդուր գ-անին համ
դավրօվ, համ օջ'խըրօվ, համ մանդըր Բ'անէրօվ:

Ժողովուրդ' հայի քաղաք Գ'ուդ'երը գի-սէրվէ (կհաշվի)
հազար չըրս-հարուր հօգ'ի, վըրօնց մէջ'ը գի-համբըրվին ինջ'-
վանը հինգ հարուր հօգ'ի, վըրօնք գի-գուրուցին հայնագ': Գ'ադ-
քի հայերը գ-աղավօրին գ-էրենց լիզուն ալ-շադ առդըրին

* Թեւ Հանուշը գրում է մէոնաս և էջ 91-ում ասում է, թե ապառնի ձեւը
լինում է բի մէոնիմ կամ բի մէոնամ, բայց կարծում եմ թյուրիմացութեան
մէջ է. հիշալ բառը ըստ իս պետք է կարգալ բի մէոնաս:

մէջը. գիւղուրուցին բարդագոյն լիզվով, օ մարդ՛ա գիրօնք չի հասգ՛ընա: Ընգ՛շագ գիւղուրուցին իլախնագ՛ համ ըղզընագ՛:

Իրօնք քրիսդ՛օնաք ին ու ունին բաղրաք Հայօց ժամը հայնագ՛. Ադ լիզուն թըխդ՛ավօր ամբէս գիւցըցվի, օ մարդ՛ա գինք չի հասգ՛ընա: Յէր՛մբս գիւփըջ՛ին բաղրըքին հայի աղօդ՛ք, դա քարօզը, խօսդ՛օվանանք համ փըջ՛էլ ժամին իլախնագ՛: Աս ժամանագին հայի լիզուն Գուդ՛երը ունէ շագ գալաջիք իլախի համ ըղզի. օչ ձ՛առնձ՛առ գալաջէսդ՛ան գաջդի համ օլախի գիւ հանդըրին էրենց զուրուցքին մէջը: Հիմրիգվեն գրամագ՛իդ՛ան շագ բ՛աժնաձ է հին լիզվէն. Մեր հայեր չին հասգ՛ընա շագ օչ գաջդի Հայեր, օչ դ՛է Բէլըսիայի Հայերը:

Ալ-շագ մեր Հայեր ջամփօրդ՛ին. ջամփա գանին ամէն-մէգ Բասարարիան համ Մօրդօվը. իհօն դի-գ՛ընին օջ՛խար, բէրբէջ (ռում. berbeç «ոչխար») համ խօզեր, ու գ-աղավօրին գ՛էրը Բէջը համ Բրուսիան ձախու: Շաղօնք գիւվասդ՛ըզին, շագօնք գիւզէնին-ա:

Էրենց գընդիք գան-գիգնութին գանին գանը քօլ ու գ-է-րենց դըղաք գիւմէձցուռուն համ գիւսօրվէցնուն, համ գիւր՛ըռ-նին յէրգաջօլ վազուցու յէրգան էրենց:

Առաջի ուղէլըսդ՛ան Հայերուն՝ գանջաբուրն է խուրուդ՛օվ, բ՛րինձէ աբուրը համ ավալգու բուժէնը (ծխած միս). Հայ իլախ-ներ գըլա ջանջ՛նալու թիփատդ՛ինը էրէսինը համ գ՛ըլխու սեվ մագէրունը:

Գան իրօնք հարգէվօր մարդ՛իք, համ ասդ՛վաձասեր, համ դ՛ադօղ (աշխատասեր), համ լըման էրենց առըդրին մէջը. գի սիրին գ-էրենց գ՛էդինը մայրագանը, վըրդեխը ընձայիլ ին:

(Հանուշ, էջ 128—9)

1886 թ.

Հայնակ և մաճառնակ այր ու բենի թուղթ, շարադրած ՚ի հայաքաղաքն Դրանսիլվանիայ, և տիպեցուցած իւր քաղքին խարճովն, վասն պիտոյութեան հայ արդոց. ի Վեննա, 1834.

Կարճագոտ խրատք

Դասըրութիւնը ամէն չարութեան կըցւածքն է:

Չար օրինակը կի ավըրէ զբարի վարքովներն ալ:

Ով շատ կի կուրուցէ, կամ շատ գիտէ կամ շատ սուտ կասէ:

Մի խօսի այնպէս բան, ինչ հաստատ չիտիս:
Մի հաւատացվի թէ որ տօլվըթով իս:
Անխըսմըթութեանը մէջ մի յուսահատովի:
Մի խոստանա այնպէս բան ինչին տէրը չիս:
Դապար տղան ամէն մարդու գիմաց ատերի է:
Ով զօգկան կի խարէ, ակ շատը ինքը կի խարվի:
Ով մէկ անգամ մը սըտի մէջ գըտած է՝ կորուսաւ զյարկիքը:
Ով օգկային տակը փըս կի բորէ, ինքը կըննի մէջը:

ԽՕՍԵՑՆԵԼՈՒ ԿԱՐՃ ԱՌԱԿՆԵՐ

ԾԵՐ ԵՎ ՏՂԱՅ ՄՈՒԿԸ

Ծեր մուկը կի խաղար հետ իւր ձագերն մէկ սընկիմը տակ,
զով գուսէն տեսնելով կատուն, և մուտ անելու չի կարնալով
սընկին տակը, այսպէս գուրուցեց հետը.

Կատուն.—Եկո՛ մօտս ով գուն ըռինտ անասնիկ, որ լըզմը-
զիմ գըեզ, գէրամ անպատմելի զոր կի սիրիմ գըեզ:

Ծեր մուկը.—Որգի, մի հաւատա իրեն, կի խարէ, ես զայն
խրատը կուտամ քեզիկ, որ սընկին տակէն դուս չի ելիս, գէրամ
պի տփսուսաս:

Կատուն.—Իքմալ մի վախնայ սիրուն, եկո՛ որ նուշի կուտ
տամ քեզի, թէ որ թողուս որ մէյմը պագիմ գըեզ:

Տղայ մուկը.—Մամա, միայն լսէմէ, ինչ ըռինտ կի գու-
րուցէ, ինչ կի խոստանայ: Հոն կերթամ:

Ծեր մուկը.—Մըրէ մամաիդ, ու մի երթա:

Կատուն.—Համ շաքար կուտամ քեզիկ, թէ որ մօտըս գաս:

Տղայ մուկը.—Թող մամա, որ երթամ մօտը:

Ծեր մուկը.—Մի երթա, թէ որ զագէկզ կուզիս նայ:

Տղայ մուկը.—Նայէմէ ինչ բարեկամարար, ու խոհեմ կի
նայի վըրաս. ընտոր կի խնդայ վըրաս:

(Ու զայս ասելով, սընկին տակէն տղայ մուկը կի փախչի
գուս կատունն մօտ, զով կատուն խըլելով, այսպէս կի կանչէ.)

Մի թողու մամա վահ, կի սպանէ գիս այս անիրաւը:

Ծեր մուկը.—Անգան է ուժեմ, թէ որ ինչ վաս չիս մըրի
նայ: Ով որ խըրատի չի ընդունի, նայ ողորմելութեան մէջ
կըննի:

Այս հեգիագրը կի իւրբատէ գայնպէս տըղաք, որոնք ծերե-
րուն չին հնազանգի, և այսպէս իւր գենէրովը կի սորովին, բայց
անգան:

ԷՇԸ ԵՒ ԻԻՐ ՏԷՐԸ

Փախուստական էշը պատահամար գըտաւ մօրին մէկ առիւծի
կաշի մը, որին մէջ փաթթըվելով, կի գըրվի կատղած. կի բօրջէ,
կի փարտընկէ, կի վազվըրտէ այնթուրֆանը, որ վայրենեըրը ա-
րըվելով, և իրենց քարածակտիքնուն մէջ պահըտվելով, ոչ երե-
րալու, ոչ գգօլիւրնեըրը վեր վերցընելու իշխէին:

Ասեղով կի հասնի իւր տէրը, ով որ գինքը վաղուց կի
հայէր, ու էշը տեսնելով գաղաշան, գեր (իմա գեռ) ալ գօր կի
պէքըրտըվի կի վազէ, որ գնայալ խարելու կարնայ:

Բայց աղաշան այսպէս ձան կուտայ գինքը: Զիս խաբի
գիս, կի ճանչնամ գքեզ էշակ իմ, նի առիւծի կաշուն մէջէն դուս
կաննած անկըճվըրներդ վըկային ինչ առիւծ ըլաս:

Եւ այսպէս, կապելով, և ծեծելով գինքը, տուն կի տանի:

Այս օրինակը զնոքա կի հասկըցնու, որոնք արժանաւորու-
թեանէ ի վեր պի կամենային ալ մեծեր, ու ալ առջիներ ըլլալու:

ՄԸՐՋԸՐՈՒՆԸ ԵՒ ՃԸՐԸՄՉՈՒԽԸ

Մըրջըրուները մեծ ձըմբան ժամանակը արեգըկուն տաքուն
կի չորցընուն գիրենց ապրելիքը: Զայս տեսնելով ճըրմճուխը,
խոնարհ կի խնդրըվի իրենց, որ անին աղէկութիւն, և տան իրեն
իքմը ողորմութիւն, գէրամ սովուն կի սատկի:

Ում մըրջըրուները այսպէս կի պատասխանին: Ճըրմճուխ
քուրուկ մինք ամալը, ու ամբան տաք արեգըկուն շատ աշ-
խատիլ ինք, վեր ու վար գաշտըրը քաիլ ինք, մինչև քըր-
տընքով գայս ապրելիքը մեզիկ քաղիլ ինք, Հապա դուն գթանկ
ժամանակը ինչով անցուցիլ իս դապրութեամբ, քնով, կամ ան-
շահ քալելով:

Որոնց պատասխանեց ճըրմճուխը:

Պար ասիլ իմ:—Թէ որ ամառը պար ասիլ իս, նա ձմեռը խաղցիր ճըրմէջուխ, պատասխանեցին մըրջըրուներ, ու ամէնը քեզիկ իքմալ չիպիտանք:

ԽՐԱՏ

Այս օրինակը կի խըրատէ դայն տըղաքը, որոնք զթանկ ժամանակը խաղով կի տնցնուն, և մեծնալով իքմա գիտութիւն չունին:

ԱՂՎԷՍԸ ԵՎ ԱԳՌԱԻԸ

Ագռաւը թըռելէնը կի տանի բերանը մէկ լօղմամը պանիր, զորնոր տեսնելով խալպ աղվէսը, զագըրվին ըրընտութիւնը զօր կի գովէ, ասելով, թե թըռչուն չիկայ ալ շատ ագռավին նըման ըրինտ. պի սիրէր լըսելու համ զեղանակը, որնոր թէնոր գօրայ ըլար մարմնոյն ըրընտութեանը, նայ զամենայն անասընները պը անցընուր:

Զայս մեծ գովասանքը ագռաւը լըսելով, հըպարտ կի կըցէ գըրըիգ անելու, ու այսպէս զպանիրը բերնէն կի ապլէ: Զորնոր աղվէսը խըլելով, կի ծիծաղի զհըպարտ ագռավին անխելքութիւնը:

ԽՐԱՏ

Նշանած ու խալպ մարդիքաց որոնք զսուտ ըռինտ կասին մի հաւատալք տըղաք: Բայց ոչ մի հըպարտնայք, զէ պի ամըն չէցվիք:

ԽՕՍԵՑՆԵԼՈՎ ՏՂՈՑ ԺԱՄԱՆԱԿ ԱՆՑՆԵԼՈՒ ԲԱՆԵՐ

1.

ԾԱԾՈՒԿ ԽՕՄԲԵՐ

ա.

Տասվերկու որդիկաց լըման լագիր հայր իմ, դասմոնց երսուն թոռ, կամ ալ շատ ալ ունիմ. դոքա ամենեքեան ընդիւրնծայեցին. դասմոնք դացա մէջէն ճերմակ, դասմոնք սև ին. մինչև ի մահ մէկտեղ միամիտ կի ապրին և մէկումը հետըս ամէնքը պիմեռնին:—Շաղըշէ, թէ ինչ կի նշանակէ այս:

Բ.

Ոչ լիզու ոչ մարմինն չունիմ,
Ամէնը զրմանը կասիմ:
Ի՞նչ է ան:

Գ.

Անդադար անհանգիստ իմ,
Ու շատ տարտերու մէջ իմ.
Թէպէտ որ շահ չիմ բովի,
Ձուարը սիրտըս կի մաշվի:
Ի՞նչ կի նշանակը աս:

Դ.

Ձամէն բանին գունը ես մէնըս կի փոխիմ.
Թէ որ զնայութովըս ես սերտ սերտ բոլորիմ.
Ուխ հայրըս կի գըտվի, ալ առաջ ես հոն իմ.
Բայց առանց աթախ աշխարհըս տեղ չունիմ.
Աչվընուա արարեսունք կըսկըծով կի հանիմ.
Բայց երբոր զգըլոխըս ոտօքըս կի փոխիմ,
Ձմարդ, զտավար, զանասուն զամէնրան կեակրիմ
(իմա կերակրիմ).
Շահ, խնդում և տրտում շատոնց կի պատճըռիմ:
Ի՞նչ կի նշանակէ այս.

ԸՌԻՆՏ ՕՐԻՆԸԿՆԵՐ ԴԱՍԽԸ ԲԱՆԻ ՎԵՐԱՅ

ա.

ԸՆՏՐԵԱԼ ՀՈՎԻԻ

Ըզգայլը ոչխըրնուդ,
Ձաղվեսը խաղերուդ.
Դիր հովիւ գառներուդ.

Ըզ ածը պաղչէպան,
Գիր զխալպը օգնական.
աղէկիդ պահապան.

Ի՛

ՈՎ ԶՕԶԿԱՆ ԿԻ ԽՐԱՏԻՍ, ԴՈՒՆ ԶՔՈՒ ՄԷՋ ԶԱՌՆԻՍ

Ովոր օրինաց տըվողնիս,
զօրէնքը կի կոխկըրտիս.
Ովոր զմեղքը կի սաստիս,
դուն մեղաց մէջ առջինն իս:

Կամ

Խրատըդ ընդունելի չէ.
Զի մեղք ընդդէմ քեզ կանչէ.
Շատոնք ըզմեղքը կի սաստին,
Որ են թարկը տալու չուզին:

Գ.

ԶԱՆԱՐԺԱՆԸ ՀԱԳՅԸՆԵԼՈՒ

Գիտիմ կի զարնըվի լման
Խոզին քըթինը մանեկան:

Դ.

ԱՆԱՐԺԱՆԻՆ ՊԱՇՏՕՆ ՏԱԼՈՒ

Դիւր զաղվէսը քարոզիչ,
Անասըննուդ ուսուցիչ:

Է.

ՅԱՂԹՈՒԹԵՆԷ ԱՌԱՋ ՊԱՐԾԵՆԱԼՈՒ

Կըլաս յաղթըվելու, մի ասի յաղթեցի.
Երբ կըլլաս ծեծվելու, մի ասի ծեծեցի:

Ը.

ԶԿՈՒՇՏ ՄԱՐԴԸ ՀԱՐԿԵԼՈՒ

Ըզ ծովը ջըրեքով ի՞նչ կի աւելցընուս.
Ըզ խօճան շատ գանձով ինչո՞ւ կի խօճացնուս:

կամ

Ովոր ալ շատ գանձ ունի,
Նա պաշխը՝ կի գընալով:

է.

ԵՐԵՄՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Թէոր կամիս գովելու,
Եւ սիրելի դառնալու,
Դարձիր մեծ երեսպաշտ,
Զէ պիլաս բարեպաշտ:

կամ

Սորվէ զսեվը ճերմակ
Դարձընելու իսկակ.
Աշխը՛րհ սիրելի
Պի դառնաս զարաղի:

1	տարպա	1	կանէ	1
2	»	2	»	4
2	»	3	»	6...

Ծածուկ խօսքերուն թարգմանութիւնը այս է.

ա. Տարին ունի 12 ամիս, ամսընէր 30 կամ 31 օր.

բ. Խըճճըտանքը կասէ զլըմանը.

գ. Բախիլ մարդը չունի շահ, ու ամէնը բախելով կի մաշվի:

դ. Այբ գիրը իրեք քաշվածք ունի ումեմնէ. թէ աստուած,
թէ աշխարհ ա գրով կի սկսվի կապվելու. համ ամէն, համ
բուն խօսքի մէջ կայ ա գիրը:

ե. Մուր-խում:

ՀՐԱՄԱՆԱԳԻՐ ԿԵՐԼԱՅԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ 1813 Թ.

Գիտութիւն կու արվի եւ կու հրամայվի ամէն մէկին, թէ
որովհետեւ Զգեստատունը մարդ ինչ նայելու բան չունի քան
միայն Պատվելի Քահանայքը, եւ գպրութիւն անօղ Տիրացուները:
Այսուհետեւ յիշեալ Տիրացունուն ի դուս օգկան ոչ մարդ ալ
ալ շատ, արանց լման (իրավացի) պատճըրի, ամենեւին Զգես-
տատունը չիգա ու չիգտվի: Տիրացունուն կի հրամայվի, օր զան-
պէսները, որոնք արանց լման պատճըրի Զգեստատունը կի քաղ-

վին (ժողովի, քովեքովգալ) ու կի նըստին, Ջգեստատանէն դուս-
վարին եւ դուս հանին, ի հօն, ուրուխ օր է տեղը ջերմերանտու-
թեամբ, ահօլ ու երկիւղիւ սուրբ Պատարաք լսելուը. թէ օր
մէկնիրտը անհընազանաք այս Պատվելի Գլէրին, եւ սուրբ Աթո-
րին հրամանին ու Արգիլմունքին (ինչպէս եկեղեցական Առաջ-
նորդաց հրամանի) գլօխ ճիկէլու հնազանդէլու. եւ Ջգեստատու-
նէն դուս էլէլու չի ուզէնար. Տիրացուն կամ լույսարարը պի-
ռենենա վեր նիշանէլու զայսպիսի անխոնար և չիհնազանդ անձը,
զորնոր անոր էտէվանց Պատվելի Գլէրին եւ սուրբ Աթորին եկե-
ղեցական Ֆիշգուզը (իշխանություն, վարչություն. լատ. Fiscus)
պարտական պիլա. Պատվելի Գլէրին եւ սուրբ Աթորին գիմաց
ձիգադ (citate) անէլու, եւ արաջ ձէնէլու, օր տայ զպատճառը
իբեն չիհնազանդութեանը, եւ օրինաւոր կերպիւ պատճրվի: Հաս-
տատեցաւ այս Պ. Գլէրին սուրբ Աթորէն, եւ զըվեցաւ Կերլան-
9-ին Յունիսի 1813:

Անփոփոխ արտատպւած ՀԱ, 1888, 84 էջից:

ԱՂՎԷՍՆ ՈՒ ԲՐՕՍԿԸ (ՀՈՒՆԳ. PAROSZT—ԲՈՐՈՍԿ.— ԳԵՐԼԱՅԻ, ՇԻՆԱԿԱՆ) ԿԵՐԼԱՅԻ ԲԱՐԲԱՌՈՎ

Կի տեսնու աղվէսը, որ մէկ բրօսդ մարդ մը կի տանի ճամ-
բունը մէկ առապա ըլինք ձկովը: Կարնու զՓըտը զձըկինը, ու
զալգուլաթ (հաշվել) կանէ թէ աճապ իսով պի կարնա՞ր հասնելու
նիսթին որ ուտէ ան ըսինտ ձկնէն: Ոչ կի դնէ ու ոչ կի վերցը-
նու. կի կըցէ վազելու այգեստաննուն մէջէն ու առանց որ բրօս-
դէն տեսնըվի՝ կեթա ալվըշ ան ճամբունը ուրուխ որ բրօսդը կու-
գար, կի պառկի վար ու կի դրվի սատկած: Կի հասնի բրօսդը ու
կի տեսնու մէկ աղուէս սատկած: Մեծ ուրախութենով կինջնա.
վար ու սեպելով թէ մէկնիվոր եակէրը ըսպանած է ըզաղվէսը՝
կի դնէ առապինը, ձկնուն վրա: Աղվէսը մէկմէկի էտէվանց կի
թապլէ վար ճա(մ)բունը ըզձըկները, ու երբ կի շաղըշէ թէ ուժեմ
տեսթուլ եղիլէ, ինք ա՛կի թապլըվի վար: Բրօսդը կի հասնի գեղ-
րանը, ու արմընալով կառնու սէպը թէ ոչ աղվէս ոչ ձուկ:

Անփոփոխ արտատպւած ՀԱ, 1888, 85—86 էջից:

ԱՌԱԾՆԵՐ ԿԵՐԼԱՅԻ ԲԱՐԲԱՌՈՎ

Ովոր շատ կի զուրուցէ,

Կամ շատ գիտէ, կ'ամ շատ սուտ կ'ասէ:

Ոչ զօր քաղցր լըզելու,
Ոչ զօր լեզի թփնելու:
Խոզերուն վայումը,
Ու աղջիկնուն խնտումը:

Մանթ.—Սոփոքութիւն է հոս ծննդեան եւ բարեկենդանի օրերն այսպէս բացա-
տրել: Այս օրերուն մէջ խոզեր կը մորթուին, աղախինք կը փոխուին,
եւ աղջկանց կարգուելու առիթ կը հանդիպի:

Տուր զպանը (հին դրամի անուն)
Երթամ բանը:

Մանթ.—Ստակս տուր որ երթամ: Կը գործածուի՝ աճապարէ, շուտով նշանա-
կութեամբ:

Խօճի խոստում,
Խլի խնդում
Քու շունդ զքեզ կի խարէ:
Մեծցու զկըլկընները (շան լակոտ), որ զքեզ խաբին:
Բոտուլայի խարախի:

Մանթ.—Խարդախ՝ անօրէն մարդն Բոտուլայի գող կ'անուանեն Դրանտիւռա-
նիայի հայերն:

Կուշտը քաղցածին մանր կի բրդէ:
Ասողին՝ լսող:
Շուն քաշէ, բան (փող) վաստըկէ:
Անփոփոխ արտատպւած ՀԱ, 1888, 86 էջից:

ՀՈՒՆԳԱՐԱՀԱՅ ԲԱՐԲԱՌՈՎ

Մաճառստանցոց լեզուին օրինակ.

Գիտնա հիվոր մէկը որ խօսեցնու զաս, որ Աստեալի հայերը
հայասէր ին, ջերմեռանդ աստուածապաշտք ին, ու չին սիրի ան-
խար օտար նաձիանու հետ խնամութիւն անելու. հայը հայի հետ՝
ալ աղէկ կըլա կասին. խօթում կնտիքը՝ ալ զօռ ին ատոր մօտ:
Բնութեամբ չին թապար, առուտուրի ու պազրկանութեան տրըված
չն. թէ պօլթով ու թէ շաթնայով շօքօտօլները արընծին կիքալին.
առողջ ին բնութեամբ ու ամպուռ. չին կորած, դատանքէ չին

փախչի. ու որոնք ալ հեծելուոր էզիլ ին՝ աղէկ անուն ունացիլ ին, և ատ պատճառաւը, ու խօթում քաղքի կառավարութեանը ու եուշին սէպ աղէկ րուրդատ ըլալնուն՝ բախլութիւն մտած է մաճրոնուն մէջ, խօթում՝ ալ մօտիկի քաղքընուն: Ու համ սէս նայելով, ամէն նաձիանուն մէջ կան նիպէս իս ամպուռ մարդիք, տարը դացա մէջ՝ որ իժով շատ հայեր չին՝ ալ շատ ին աւտէս զօռ ամպուռ մարդիք, ու որ տէսթուլ անինք զաս գիրը խօսեցնողնուն հետաքրքրութեանը, պի պատմինք մէկ օրինակ մը:

Քրջմայի մը մէջ ի Պաշպալովը կիմտնուն երկու մաճառք, մէկը թրաւոր՝ ու մէկալը քաթանի կացնով: Էզիլ ին ի հոն մէկ երկուս հայեր ալ, ու ալ շատը օզկա նաձիանէ: Ընտոր կըլա՝ կիխօսխօսվին, կոիւ կըննի՝ մէջվըները, ու դաքա մաճրոները թըրով ու կացնով կիվերնան վրաները. հապա ի հոն օրամը գտվելով անգուման Անդոնը Պիաթան, որ կենօքը՝ վախը ինչ ասիլ է չո՛ւնացի, կիվերնա ու կիմտնու երկու մաճրոնուն միջորէ, ու կիխըլէ զկացինով մաճառը, ու կիզարնէ գետինը, ու կիբարտէ մէջը, ուսի մէկալ ձեռօքը տէկրապը զնի մէկալ մաճոին թուրը կիխըլէ ու կիբոնէ, որ կօլխուն հասուցիլ էր որ երկուս ձեղքէ գիրեն կօլօխը, ու անրէս մը խլելով զան մարդը կիզարնէ գետինը, որ ընտըր մեռած մը կիմնա գետնին վրա: Էկեօ հասնելով պըրկարները ու ալ մարդիք, զգաքա ոտվընուն քաշքըշելով տարին փակը դրին. զէ չէին կարնա քալելու: Շատերը արած ունի ատ Անդոնը Պիաթան. տարը ինքը անուշ լիզուով մարդ էր, ու կիսիւեցնուր զինքը. ու խասապճի ըլալով՝ զտալընուն ոսկորտանքը կիկտրէր ընտոր զմիսը:

Ծանօթ.—Աս ոճով է ընդհանրապէս նաև լեհաստանցոց ու խրիմցոց հայերէնը. բայց ասոնք այսչափ խառնուրդ չունին օտարազգի բառերէ, մանաւանդ ուլահի՛ մաճառի՛ լատինի ու նեմցէի խօսքերէ, ասոնց տեղը լեհաստանցիք աւելի լեհերէն կը բանեցընեն, խրիմցիք ալ թաթարերէն՝ տաճկերէն ու ռուսերէն:

Արտաստալված է Բազմալէպ ամսագրից, 1843, էջ 110—1, ուղղագրությունը պահելով անփոփոխ:

ԴՐԱՆՍԻԼՈՒԱՆԻՈՅ ԵՂԻՍԱՅԵԹՈՒՊՈԼԻՍ ՔԱՂՔԻՆ ՀԱՅՈՑ ՕՐԷՆՄԻԻՐ ԻՇԽԱՆՈՒԹԻԻՆՆ (ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ)

Որհուրդ եղաւ, մեր գըլնաճը, որ վօվօր նատ քացայ (հունգարերէն բառ է. կընշանակէ, էղեգէ գաւազան) քալցընու ձեռն, նայ անպատճառ տա ա. օսգի պիրովին ձեռն, ու վօվօր չիտա

նայիակ էրթա, եա զնատ բացան ձեռնէն վար դընէ, ու օչ աս-
տեղն ոչ աս երկրին մէջ ունէնա քալցընելու. եւ զանհընազանդը
անպատճառ պատիժն քաշէ եւ զճուրղումն կամ օսգին աղանուեն
է. ու ամէն տարի ունէնա ան ան օսգի տալու տայիս հախ. ան ան
օսգի: Դարձեալ գիտացվի օր վովօր քալցընու նատ բացա, նա
պիտոր ունենա դիսդուիւն (Tisrt.—պաշտօնատէր), այսինքն
ընտոր պիրօֆն ու աղաներն ու նօգարիուշներն ու սարըսդան
(Սարսդա. Դրանսիւվանիայի հայոց լեզուովը կը նշանակէ ընկե-
րութեան մը—մուշտակակարաց, խաղախորդաց—գլուխ): Վատահ-
ներոֆն (վատահ՝ գործակալ, ծառայ), պաշ վատահներն կտրըճ-
նունը հոս քաղթին մէջ ունենան քալցընելու: Դարձեալ գիտացվի
օր զան. օսգին առաջ պի առնու մեծ դըլնաճը ու թէ որ կէնա
մարդ օր ուզէնա քալցընէլու տայեալս նա դըլնաճին կա-
մօքն պի հաշդըվի հետ սարըսդին ու պի քալցընու ինչու անի
սպրի նայ:

(1729 նոյ. 7)

2.

Խորհուրդ դըլնաճէն այսպէս էղաւ, օր գրչմայէն (korcsma,
հունգ. բառ է, կը նշանակէ պանդոկ, գինետուն) մերը, օգկայ
տեղ ալ գրչմայ ըլլա նայ ունենա ծախելու գինի, ինչվան ի օր
զանգակ քաշվի չրեշտակ տեառն, էտեւ անոր էտեաւնց վօլնի
չիլա օչ մէկ գրչման ալ մարդ գինի խըմէլու քշերով. վով ուզէնա
անոր հետեւ գինի խըմէլու նայ, արնու ըլօսգային՝ մէջ ու տունը
տանի. չէ գտվի ու իմացվի թէ մարդ կա գրչման զանկակ քա-
շէլուն էտեւ, նայ ունէնա ճուրղում տալու 3 մաճրի (ստըկի տե-
սակ մըն էր, շուրջ 40 սանգիւմի հաւասար), գինի ծախօղն ան-
պատճառ:

(1730 նոյ. 20)

3

Խորհուրդ էղաւ Պատուելի դըլնաճըն, օր այսուհետեւ հի որ
մէկ աղան արանձ պիրովի խըրէրի (թուրք. բառ է, և կը նշա-
նակէ՝ հաւանութիւն, որոշումն) դըլնաճէն դուս էլէ ու տուն
էրթա, կամ հի որ մէկ աղային մօտ էրթա պըրկար (քաղաքա-

¹ Flasko=մեծ շիշ, կուժ:

բաշխութեան—municipio—ծառա) ու սէպ չի դընելով օր դա
 դըլնաճըն կամ օգկայ տեղ ուրուխ որ ձէնվի նայ, պի տա ճու-
 բում արանձ միոյ պատճառի 3 մարիաշ. ու ժամէն ալ էլէնա
 գիտնա օր դըլնաճըն տեսնէ նայ նես մըտնու չի մըտնելով պի
 ճուրումվի. բայց թէ որ մէկնիստ Աղան իքմը պատճար կամ բան
 ունէնա նայ գա ու թօղութիւն առնու պիրովէն, ետեւ պի էրթա,
 եւ զայս բանին էղան պատճարն Ա. Մարտիրոս Բաղրուպանի
 եւ Ա. Դօտէր Վարդիկի Շիմիւօլցունց, օր գընացին տուն Պ. դըլ-
 նաճէն արանց հըրամանի և տվան զճուրումներն. նայ ամէն
 մէկ աղան ինմէտիարէ տա զճուրումն:

(1751 յուլիսի 21)

4

Խորհուրդ եղաւ—1755 Նոյ. 18-ին—Պատուելի Աղաչանուն
 մէջ, օր մէկ օր մը ընտրեն. այսպէս ընտրեցին ամէն շաբդին
 մէջէն 3 շաբդի օրն 9 սահգեն, պատուելի սարըսդին Աղաչանէ-
 բօփն մէկտեղ, օր իք մը հասդատութիւն կամ պաքսութիւն ըլար
 Պ. քաղքին նա հասդատվի վասն քաղքին պիտվականութեան
 համար. պրկարն Պ. Ա. պիրովին հրամանօվըն իմաց անելօվ
 Աղաչանուն՝ չի հնազանդօղըն ինչխար $\frac{1}{4}$ սահգեն օր ուշացվէր,
 մէկ մէկ կրօշ (հունգ. garas. այլեայլ արժէք ունեցող փոքր դրամի
 տեսակ մըն էր: Արժէքը միշտ 2—5 քրայցէրի, կամ 4—10 սան-
 դիմի հաւասար էր) ճուրում պի տա:

(1755 Նոյ. 18)

5

Գօնֆիրմագ էղաւ 1756 Յունիսի 8-ին—զ1755-ին Նոյբրի
 18-ին եղած խորհուրդն վասն քաղքի պիտվականութեանը որ
 իրեքշաբդին կու քաղվին. նախ աս ալ գիտացվի օր մէկնիօր
 Աղաչան ուզէնար երթալու իրեքշաբդին տանէն. նայ ունէնա
 իմաց անելու Պ. Ա. Պիրովին և առանց հրամանի չի երթա, զէրա
 երթար նայ պիտա մէկ մաճրի ճուրում:

(1756 յունիս 8)

6

Աստուծոյ ողորմութեամբն 1757 ունվարի 13.—վասն, Պատ-
 ւելի Աղաչանուն քաղվելովն եղաւ խորհուրդ Պատուելի Աղաչայ

Պիրոֆու Ա. Անկսէնտ Մանուկի Իսիգուցեանց իրեն հրամանոցն աղաչանէրօֆու և Ա. Սարըսդան Ա. Խաչգօն Սնբէգրեանց իրեն հրամանոցն Աղաչանէրօֆու հասգատեցին, որ հիմիկուց ինտան երբոր հրամայէ Պ. Ա. Պիրոֆու իմաց անէլով քաղքի ծառայօֆու թէ ֆալան սահգեն ունէնան Աղաչանէրն քաղքին տունը քաղ-
 ւելու վասն խորհրդի նայ ունենա ամեն մէկն գալու. զէրա թէ օր չիգար ան սահգենը և քանի սահգի ֆրդար անցնէր նայ՝ անխտար կրօջ ունենա ճուրում տալու. եւ երբոր ինմետիադկ վար դընէ գճուրումն գրածին գօրայ, նայ բարի է, և թէ օր չի զընէր՝ նայ պի արվի մէկ տէֆդէրն, ուրուխ պիլա ամէն աղաչանուն աննը-
 նէրն գրած. եւ այս տեղն պի գրվի մէկ կրօջին տեղն երկու կրօջ. որ ճուրումն պի առնու Ա. Պիրոֆու իրեն հրամանոցն աղանուն մօտէն եւ Ա. Սարըսդան պի առնու իրեն հրամանոցն Աղաչա-
 նուն մօտէն և փայ պի անէ, Ա. Պիրոֆու զԱղաչանուն ճուրումն Պատուելի աղանուն, և Ա. Սարըսդան նմանապէս փայ պի անէ հետ իրեն հրամանոցն Աղաչանուն. Գարձեալ վասն իրեք շար-
 դնաւոր որ հասգատած է 1755-ի նոյի. 18-ին. նմանապէս գօն-
 ֆիրմօվադ 1756-ին ունիսի 8-ին, նայ հիմիկ ալ գօնֆիրմօվադ եղաւ որ մնա հասգատ որ իրեք շարդին ոչ աղաներն եւ ոչ սա-
 րըսդի աղաչաներն դուս չի ելեն քաղքէն առանց Ա. Պիրօվին հրամանին՝ եւ ով որ երթար արանց հրամանի նայ այնպիսին ունէնա ճուրում տալու մէկ մաճրի. այս է պատուելի հասարա-
 կին կամքն:

(1757 յունիս. 13)

7

1738-ին ունվարի 30-ին

Ինչպէս որ խորհուրդ արին Պատուելի աղաչաները ու կա-
 պէցին ի ներքոյ հրամանի տակ՝ տէսնէլով օր քանի կիրթա նայ աւելօք նոր նոր հազըստներ արաչ կի բերին ու կանին, նա
 վալսնի (Wallis ըսուած. ասոր սեռականն է վալսընի) դողնակ չէփէչին համար օր ափսօլուդէյ արգիլած ըլա, որ օչ տունը ոչ
 օրամը քալին անպէս չէփէչօվ, զէրա որ Պիքային դիօլը գըտվի
 նայ՝ չէփէչը պի արնըվի գլխուն, ու համ պի ճուրումվի այսչափ
 12 մաճրի անպատճառ:

(1738 յուն. 30)

Տեսնելով Պատուելի քաղաքը, օր քանի օր կերթա, ալ իժով մէկ քան զմէկ կու անցիլին հագուստ հագնելովը, անոր համար ութիւմ' Պ. քաղքին, օր ալ շատ հագուստնուն մէջէն զայս ալ վար գրած ու նիշանած հագուստը արգիլած ըլա որ ամենեւին մարդ չի հագնի կամ ըզիւր տըղան չի հագցընույ, չէ թէ որ գըտ-վէր մարդ օր հրամանին չի հընազանդէր նայ գիտնա ուրուի որ գըտվի թէ մարդիկաց մէջ ամօթը պիլա և անոր ետեանց պի-ճուրումվիալ:

Վասն որոյ այսուհետեւ կու արգիլվի, օր ամենեւին հէջ մարդու տղի-գիւսույ վերայալ հօրբուզըր (նորահար բառ մըն է կարծեմ, կէսը հունգարերէն (hay=մազ կէսը գաղղիերէն (poudre=փոշի) չի գըտվի, մանէլայ (չեմ գիտեր ինչ կը նշանակէ: Հաւա-նական է որ սխալ գրուած է, անշուշտ մանդէլա=mantille ըլ-լալու է), լանձուգ (պզտի շղթայ. l'anc հունգարերէն բառ է, որ կը նշանակէ շղթայ, ուզ, այսինքն ուկ նուազական մասնիկ է), մարգիտ, Պօկլար (հունգարերէն է, կը նշանակէ շրջանակի մէջ առնուած ակն պատդական) և օզկա զարդարանք գիւսուն վրա ամենեւին չի գըտվի զարտօր հարկէոր փարթայ, ու պըղնծէ ու պաղչի ջիչակ ըսլօպօտ (ներեալ, ազատ է, հրաման կայ) պիլա-բայց գօրօնայ որն որ գիւսուն վրա օր կու դընին նայ պըղընծէ ալ ըսլօպօտ չիլա ու թէվի կապնալ որն որ կու կապին ըզշա-պիքը թեվին մէջտեղը ան ալ արգիլած ըլա ու վօվ իրեն Աս-տուծմէ տված գիւսուն մաղով օգդըվի ավելօքը ճակատը մազ չի կապէ, զայս հրամանին չի հնազանդօղը պիտա ճուրում 24 մաճրի:

Ու վօրօվհետեւ աղջիկ աղոցը գիւսուն վրայէն կու արգիլվի զարդարանքը, այն ալիժօվ (այնչափ աւելի, մանաւանդ թէ) կընտոցը գիւսուն վրայէնալ արգիլած ըլա, որ չէփէչէն դուս ամե-նեւին օսգի, արծաթ, մարգիտ և ուրիշ զարդարանք չիլա ըսլօ-պօտ հագնելու ի ներքս վերո դրեալ գօնտիճիայէն և ճուրումին տակը և զայս բունդդէրուն վրա հասգատեց Պատուելի քաղաքը զՊատուելի Ա. Օվանէսն Օսգէրիչեանց տիրէգգօր օր իրեն հրա-մանքն ըզվօվօր տէսնուի հրամանին ընդէմ քալօվ կարենա ըզ-ճուրումը արնէլու, զոր ճուրումին գիրեքում փայը պիլա Ա. տի-րէգգօրինը և երկու փայը Պատուելի գըլնաճինը:

(1750 յունիսի 16)

Ողորմութեամբն Աստուծոյ եղև հասդատութիւնըս այս ի մէջ էիզարեդ քաղաքիս: Քանզի խնդրելով Պատուելի գըլնաճըն զԳերյարգելի Տեառն Տեառն Տեառն Մինաս Խնկանոսեանց Աստուածաբանութեան վարդապետ և Առաքելական Միսօնար, գանօնիգուս գերազանցեալ գարիգուլումին և առաքելական բրօգօնօգարիուս և արքիտիրագօնուս Հայոց ազգին, նայ և արժանաւոր բլէպանուսն քաղաքիս որ և իւր յարգելութիւնն ներկա գտվի այս հասդատութեանս որն օր անձըն առան և կամաւորեցաւ որ հասդատվին այս ալ վար դրած բունգգնեհն ըստ կամաց Պատուելի Աղաչանուն և Պատուելի քաղաքացոյց այսինքն վասն հագըստէղէնուն որ արգիլվին վասն շատ պատճառաց որն որ հօս միայն կարճարօտաբար զգտսմն կու յայտնինք:

1. Առաջին պատճառն այս է, որ որովհետև մենք ալ կու կամինք, որ օր ըստ օրէ կու ջանանք, թէ հասդատ քաղաք բըրնինք և կարաւարինք ինչպէս տան արդաք որպէս որ Աստուծոյ ողորմութեամբն ունինք ալ զինքն բրէվէլէկիումով զարգարած, նա կի ութվի թէ օգկա հնարով չիպի կարենանք կարաւարելու քանձ օր նայինք օր էգօյնօմիայ հասդատինք մեր քովը քաղքին մէջ:

2. Կու կամինք բարնալու մեր փոքըր քաղքին մէջէն զհրպարողութիւնը զփառամուրութիւնը և զաղքըտութեանըն պատճարներ, այսինքն զանկարք հագըստէղէնը, մանաւանդ վասն այս պատճառնի ալ, զէրոյ հիմիկէն ժամանակս այնքան բարձրացիլ է հպարտութիւնը, որ չինք կարենալ ընտրելու թէ որնէ աղքատ կամ որնէ աղքատոր. որովհետև որ աղքատին և խօճին հագուստն մէկ կերպիւ է:

3. Թէպէպ ասոր առաջ հասդատիլին մեր Պատուելի Աղաչաներն և գրիլին կարք թէ ընտոր հագնի աղքատըն և կամ աօլվադորն, բայց մեր ազգն անհընազանդ գըտվելով, ալմերիլին զհասդատութիւնըն որ հիմի կու հագնին մէկ ընտոր մէկալն, վասն այսորիկ ութվեցաւ Պատուելի Աղաչանուն որ հիմիկէն հասդատութիւնըն ըլա այս կերպիւս, որպէս հոս ալ վար կու գտվի գրած:

4. Որով հետեւ որ կու տեսնուն Պատուելի Աղաչաներն թէ կարք գնէին Աղաչանուն և քաղաքացոյց մէջ շատ պըղտորութիւն պի լինէր ի կողմանէ անհընազանդութեան, նայ կամեցաւ զտիշ-

քուդածիան (disputatio. վէճ, բանակոխ) վեցնելու և հասդատեց
որ այլ ալ վար գրած բունգգէրուն ունէնա հնազանդէլու թէ
Աղաչայ Պիրօլըն և իրեն հրամանոցն Աղաչաները և թէ օգկայ
բրիվագ քաղաքացի. մագար նէմիշ ըլար (թէ և ըլա ազնուա-
կան), և պատուելի քաղքին տէրէքձիտյին (directio) տակը գրտ-
վէր նայ ունենա հնազանդէլու, զէրայ թէ որ մէկնիորն ընդիմու-
թիւն անէր նայ պի ճուրումնի այն ճուրումովն որն որ հոս
ալ վար կայ հասդատած:

5. Ասոր համար ալ կուզինք որ այս բարի բանը հասդատվի,
զէրայ չափէ դուս հպարտ հագըստէղէն գտվելով մեր քաղքին
մէջ և զայս տեսնելով էրկըրին պարոնտանքըն մեծ ուրայ (ամֆթ,
խայտառակութիւն) կու բէրինք մեր վրա զորն դասմն անկըճնէ-
րօջն լսիլին և կու լսին հիմիալ, թէ հայերն անսէպ խոճայ մար-
դիգին, որ այսպիսի հագըստէղէն ունին. որն որ մենք ալ կու
տեսնունք, որ այս հագըստներն մէզի զօրայ չին. վասն այսորիկ
ութվէցաւ Պատուելի Աղաչանուն մէկ խորհուրդով և մէկ վօգու-
մով որ այս աւելի հագըստէղէնը պաքսի մեր փոքըր Քաղաքին
մէջէն որ մեր Քաղաքացիքըն ոչ հոս քաղքին մէջ, ոչ երկրին
մէջ և ոչ օգկայ երկիր այս այլ վար գրած կամ արգիլած հա-
գըստէղէնը հագնի զէրայ թէ որ հրամանի դէմ մէկնիորն հագ-
նէր նայ այլվի այլ գրած վինգուլումօջն (պատիժ, տուգանք) պի
պատժվի:

(1750 դեկտ. 28)

Այս 1—15 երեսները արտատպված են Բագմ. 1891 թվից,
ուղղագրությունը պահելով անփոփոխ: Շարունակությունը, ինչ-
պես և 1893-ի մեջ եղած վեց հոգվածները չենք արտատպում,
բայց նրանց մեջ գտնված կարևոր բառերն ու ձևերը մտցրել
ենք մեր ցուցակի մեջ:

Ռումիմահայ բարբառից նմուշ

Իքմընա «ոչինչ»
չի կայ իքմընա «հոգ չէ»
բրէչ «ամբողջ»
հայնակ «հայերէն»
մարդնակ «քաղաքավար»
կալաճի ընել «խօսակցիլ»

բանա ճօրիորդ»
 կտրիճ «տղայ, մանչ»
 պիքա «տիկին»
 օգկա «ուրիշ»
 աշեմ «տեսնեմ»
 դօր ոինդ «շատ լաւ»
 Ֆըզ «հոգ»
 լուր «ալիւր»
 լալելիս «թաշկինակ»
 մանչ «սպասաւոր»
 ուրուիս «ուր»
 ուրուիս եղել ես «ուր գացած էիր»
 սահաթ «ժամացոյց»
 քըրջեր «հագուստ»
 թանկ «սուղ»
 անժում «յայնժամ, այն ժամանակ»
 թաթաւ «անձրեւ»
 ցեղ «տեսակ»
 առուատանց «առաւօտեան»

լմանութիւն «իրաւունք» (անշուշտ ամբողջութիւն բառէն առնելով)

ըզքու որդին, ըզքու աղջիկ, զիմ մայր, զիմ դուստր և այլն։
 պի «պիտի». օր պի գայ, պի գրէ, պի լսէ, պի ասէ, պի
 այ «պիտի ըլլայ» և այլն։

Թրք. բառեր, ինչ. հալալ ըլլայ, տուկեան, պազար, ալըշ-վէրիշ, տօվլէթ, խօլայութիւն և այլն։

(Պ. քհ. Մամիկոնեան, Ռումանահայոց ներկայն և ապագայն, Կալաց, 1895, էջ 81—82. արեւմտահայ տառադարձությամբ, արտագրել եմ անփոփոխ)։

Այլ իժով պի սիրէի ըլալու հետ մսքին ղէնքերնունը՝ քան տօվլըքաւոր զիրկող պազըկննուն մօտը, որ անխաբը նացա հախին կի քաշին. խորդն որ շատ տաքտովը կի մաշվին, տարը չունեն իքմընա բախլութիւն օգկայի խօնութնայ վրայէ, գէ կասին թէ Աստված պաշխշիլ է զամէն մարդ իր փայովը՝ իր հալին գօրա, ու գրիլ է աշխըրքի մէջը սոյ սոյ մարդիքը՝ ընտը սոյ սոյ չիչակները պաղշանուն մէջը։ (Աւելի կընտրէի աղքատ գործաւորաց հետն ըլլալ՝ քան մեծատուն անիրաւ. վաճառակա-

նաց՝ որ այնչափ անոնց իրաւունքը կը զլանան. ստոյգ է՝ շատ վիշտերով կը մաշին, սակայն ուրիշի հարստութեան ամենեւին նախանձ չունին, վասն զի կ'ըսեն թէ Աստված ամէն մէկուն իր մասը պարգեւել է իւր վիճակին համեմատ, և զանազան կարգի մարդիկ գրեթէ աշխարհի վրայ՝ իրեւ տեսակ տեսակ ծաղիկներ պարտեզներու մէջ)։

Այտընեան, Քնն. քեր., էջ 234։

ՀԱՐՍՆԻՔ

(Սուշավայի բարբառով)*

— Բարի լուս, Բնչբէս էք։

— Շընօրհագալ իմ. աղէգ։

— Ի՞նչբէս, հանգչի՞լ իս աս գ'ըշէր։

— Զօր աղէգ բողբիլ իմ. նումայ բուրիջները ինձի բ'օ-գ'օջ չին գուվի. հիմբի (հիմի) ձւրուխ (ուր) բիգօր էրթաս. Բնչ բիգօր անիս աղէս (այգպէս) գանուխ։

— Թէգգ՝ է էրթամ բ'օշի'ան վօր գ'էլէգրաֆ անիմ։

— Ի՞նչ գ'էլէգրաֆ։

— Ներք'օ'ղս գ'ըրիլ է ինձի թէ աս օրերուն գուզէ մեր մօդ իգ'ալու. ու գուզէ համ ըզհարսը բ'էրէ վօր ասգեդ փսագվէն։ Դէրգէրը ինձի ասիլ է գ'օ չի գարնա զիրէնք փսագէլու, իլալու վօր ասքէր (ազգական) ին. հիմբի գուզիմ գ'էլէգրաֆադ՝ անիլու վօր չիքա, գուրի (իզուր) խարջ անէ մըսքիմը (խեղճ). գափսըս-նամ շադ վօր աթ խըղարը խարջ արիլ է, Բ'օլօր բ'անը հաղի'ըր էր. քըրչէրը հաղիըր էին, մուզիգ'անթները վարցած էին. բամէ-ցէթի բիլէդ'ները խըրգած էին. գարջ ասիմ ամմէն բ'անը հա-ղի'ըր էր։

— Յէս գի մրդքիմ վօր բարբիարքարանը գ'էլէգրաֆադ՝ անինք. յէւ խընգ'րինք վօր բ'օզվօլիդ՝ անին, յէւ ամմէն բ'անը բարգմինք գ'էլէգրաֆի մէջ. թէ բ'օլօրը հաղի'ըր ին. բ'օզվօլիդ՝ անէ քահանայուն վօր աս անգ'ամը փսագէ։

— Աղէգ է. անինք. Բնչ խըղար ժամանագի մէջ գըլա բա-դասխանը իգ'ալու օըրնձեդ՝։

— Ասօր հինքշափթի յէ. ինչֆանի շաբ'աթ օր գըլա բա-դասխանը իլա ի հօս։

* Պատրաստել եմ Սուշավայի քահանա Կարապետ Կայնայանի² հետ՝ գիտական ուղղադրությամբ։

Ուրբաթ իրգունը գը հանդըրին իրենք անվըշ:

— Բարիգուն է, ի՞նչ է խաբարը. բադասխան գըզընվի՞լ ի՞նչ:

— Հարա (այո). աղէ՞ք է. բադրիարքը բ'օզվօլիդ՝ արիլ է քահանայուն վօր փսագէ. հիմբի գէրթամ գ'էլէգրաֆագ՝ անիմ վօր իգ'ան:

— Ասա մէ ինձի. ձանուցումները յէ՞փ բիգօր անէ:

— Ագօր համար էգիլ իմ գ'ըբ'իգընիան. յէլ խընդ'րիլ իմ վօր բ'օզվօլիդ՝ անէ մէգ դարբա (անգամ) իրէքի համար. յօ խօսդացիլ է թէ բ'օզվօլիդ՝ գանէ, յօ քահանայուն գ'ըրօւ գիմացնու. հիմա մէգալ վաղը (միւս օրը) գիրագի է. առվադուն քահանան ձանուցումները գանէ, յէլ գեռավօր յէաւ փսագ:

— Զօր աղէ՞ք է. հիմբի նայէ նումայ վօր օզգա բ'աները հադի՛րը իլան. խաղալու սալօնը արանժնի՞ք է. բ'օդիալները վըգ'սուի՞դ՝ ին:

— Հարա. բ'օլօր բ'անը հադի՛րըին. նումայ չիյիմ ըզվօ խըրգիմ իրենց գ'իմաց վաման վօր նըգ'ըժիդ՝ չանին գիրօնք:

— Խըրգէ ըզվեքի Գ'օգ'օրը (Գրիգորը): Իլալօւ վօր ինքը քանջ'ֆօրներ ունէ:

— Աղէ՞ք գասիս. գինքը գը խընդ'րիմ վօր էրթա:

էրգուսում օրը՝ շաբ'աթ օր անվըշ գը հանդըրին:

— Բարի լուս:

— Բարի լուս. աչֆըները լուս. էգի՞լ ին հարսնավօրաքը:

— Էգիլ ին տա առվադու. հիմբի գըցիլ (սկսիլ) է բ'անը, գ'նա հօն՝ հօս. առ բէդգ՝ է, ան բէդգ՝ է. յօւ բ'օլօր բ'անը գիմ գ'ըլլալու վրա է. չուլիմ փօշ մէգ աժուդ'օր մը:

— Նումայ համբ'երություն, բարեգամ. բ'օլօր բ'անը գի գ'առնա. թօխ գամաց. քանսում սահաթն է փսագը:

— Վեցին:

— Բարիգ'ը (ամուսին) դուն գուգ'ա. յէլ գնգանը հէ՞ք աղէս գը զուրուցէ:

— Է՛ Ռուժիգ՝, հադրըվիլըր... հարսնիքը մ'նկրիգ'ը ուժի գի փչէ. բէդգ՝ է էրթանք:

— Յէս հադի՛րը իմ. գ'ուն ալ շուսդ՝ (շուտ) սև քըրչերըդ՝ հաքի՛րը. յէլ մընուչաները հանէ շուֆլաղէն. յէլ գ'իւրր գ'օնջուգը վօր չի մ'օռնաս:

— Ռնկիգ՝, գ'ուն վճր բօդ'իները գի հաքնիս... հաքի՛րըջէրմագ գագօւ (մետաքս). իլալօւ վօր ջէրմագ գագօւ օրօգ'լան հաքիլ իս. չի մ'օռնաս բըռօշը ու բրանգօլէդ'ան առնուս... օրօգ'իդ,

շէք՝ը շատ յերգան է, բէդգ՝ էր զինքը գ՝ոհոյդ՝օրին դաս վօր
դըդրէ:

Դ՛հն ինչ գ՛իդիս. ասքէս է մօգան. խըրգէ չուսդ՝ ֆիւ-
գ՛րիմ դէվանց վօր իգ՛ա:

— Բալէ՛, ֆիագ՛րը գի բ՛օնէ (սպասել):

Էրգուսն ա գի նըսդին ֆիագ՛րի մէջ, յէւ գէրթան հարս-
նիքին դուներ:

— Բ՛արօւ էգիլ իք:

— Դը շընաֆօրինք. Ասված դա խըսմբօս ու դօվբօս իլա:

— Շընօրհագալ ինք. դառօսը հէմ ձ՛եր զավագացը գ՛օլօ-
չ՛իմ... րամէցէք խընդ՛րիմ, րամէցէք ալ վեր, խաշլումօրը քօւ:

— Դ՛էս չի՛ն էրթա փըսագ:

— Ա՛ս բաս (այս պահուս) Յումայ քահանան իգ՛ա... հն,
քահանան էգիլ է. է՛, րամէցէք, դ՛ըրքսուրաները գօ բ՛օնին. առաշի
դ՛ըրքսուրային մէջ գէրթա քահանան, յէւ բիքա իրիցգինը. էր-
գուսումին մէջ հարսը խաշլումօրը հէդ. իրէքումին մէջ փէսա՛ն
խաշլուն հէդ յէդգ՛ը մէգալօնք. գի խընդ՛րինք վօր բ՛րէչ՛է դ՛ը-
քսուրաներօւ էրթան, գէ (զի) գան դիսդ՛ուլ:

Գամաց գամաց. սէրէ դասը գամ դասնըհինգ դ՛ըրքսուրա
աընդօւ ժամ գէրթան, յէւ փըսագը գի գըցէ. փսագէն ալվըշ
հարսինը դուներ գէրթան, յէւ հարգըվէլուն էգէվանց գի գըցին
սգօ՛լները փռէլու. յէւ գի դ՛ըրվին մուսաֆիրները սդ՛օյ. գի հաս-
գըցվի վօր հարսը յէւ փէսան սդ՛օլին ջագագը յէւ իրենց գէ-
վանց խաշլուն ու խաշլումարը. անօր գէվանց բ՛րէչ՛ը որնդօւ.
հիմբի գի գըցին բ՛արեգենացները:

— Զօր բիդօր անգ՛ընվի (ուշանալ) սդ՛օլը. քանի՞ յէ սա-
հագ՛ը:

— Ուժէ ինը անցիլ է:

— Բէդգ՛ է խընդ՛րինք զքահանան վօր ալ չուսդ՛ անէ-
սըլիդ՛ անէ բ՛արեգենացներօվը, իլալօւ վօր դըդաները ուժէ չու-
նին համբ՛երուծյուն:

— Ունին ժամանագ համ խագալու դիսդ՛ուլ, ինչֆանի առ-
վագու:

— Ա՛հ, աս է յէդգ՛ի բ՛արեգենացը. գի լըմընցվի սդօ՛լը:

— Շընօրհագալ ինք:

— Խընդ՛րիմ թօղուծյուն:

— Հիմբի ի՛նչ գանինք. գէրթանք սալօնը՝ մուգիգ՛ը գըցիլ
է փչէլու... դիսդ՛ուլ մեձ է սալօնը. ու ոինդ լումինագ՛ է. դառը

զօր դաք է. դղաները չին իմանա. գութֆի թէ չին (կթվի) դիսնու ու չին լսի օգգա բ'ան իքմընա (ոչինչ): Ասէս էն գղաները, գի բ'ըռնիւ միդըդ' յէփ դ'ուն ա դղա էիս. յէ գի խաղան յէփ վալց, յէփ գ'աղըիլ, յէփ հօ'րա: Հիմբի գուզին մագուր խաղալու. վօ՞ արանժադ' գանէ:

— Ինձի գութֆի թէ աղաշա Օվանէսը զօր ոինդ մագուր արանժադ' տրիլ է. դառը անվըշ վալց գուզին խաղալու. բէդգ' է անգ'ան իլա:

— Սահադ'ը չօրս է. յէ գ'ըռուդըս (դուստրս) չուզէ էրթալու. ամմէնը գի խընդ'րէ ալա (է'լի) քիչ մը, ալա քիչ մը ու զօր դ'ըռուդիդ' իմ:

— Աղէս գանէ համ օրդ'իս. յէփ գասիմ իրեն քալէ դուն, դիսդ'ուլ է, գի խընդ'րէ նումայ գաս գ'աղըիլը ալա. գ'օ անգաժադ' իմ. գ'աղըիլին դէվանց օգգա վալց ա օգգալը. յէ ս'ըվըրշիդ' չունի. հանա գի լուսանա... ուծէ շիրախները գի փօխին. դարը հիմբի գէթանք... նայեցէք, դղաք, հաքնըվէցէք աղէգ. փաթըվէ, Հըռէփսիա. ... Գարարեդ, հաքիբըր քիբըրցի'ըրը, վօր չի բաղիս. քըրդընաձ իս... հիմբի առնունք բ'արօւ մնա դան մարդ'իդ'օցը մօդէ... հանա, հօս ին... բ'արի գ'ըշէր, բիքա վարդ'էնիք. բ'արի գ'ըշէր, աղաշա Գյօրգէշ, աղաշա Լուսիգ:

— Բ'արի գ'ըշէր ձ'եր հրամանօցը:

— Ասվաձ դա դօվըթօւ ու խըսմըթօւ իլա:

— Շընօրհազալ ինք աշխադանքին:

Բառեր

Աժուդ'օր ոռւմ. ajutor օգնական

անվըշ ոռւմ. earasi դարձյալ

արանժադ' ոռւմ. aranjat կարգավորյալ

բիլէգ' ոռւմ. bilet տոմսակ

բիքա թթր. bika տիկին

բ'ուրիշ' ոռւմ. purici լու

բրանզօլէգ'ա ոռւմ. branzoleta ապարանջան

բ'րէջ'է բոլոր

բրօշ ոռւմ. brosu մանյակ

բ'օդ'օյ լեհ. pokoi հանգստություն

բ'օդիալ ոռւմ. podeal տախտակ

բ'օդ'ին ոռւմ. botin կոշիկ

բ'օզվօլիդ' լեհ. թույլատրել

ր'օշդ'ա ուում. posta նամակատուն
 գ'ըր'իդ'ընիա ուում. câpitania թագապետություն
 գ'օ ուում. câ թե, որ
 գ'օլօջ' գլուխ
 գ'օնջուգ դրպան
 գ'ոէօյդ'օր ուում. croitoriu գերձակ
 դառը, դարը ուում. dara բայց
 գ'էլէգրաֆ ուում. telegraf հեռագիր
 դիսդ'ուլ ուում. distul բավական
 դ'ըլսուրա ուում. trasura կառք
 դ'րուգիդ' ուում. truditu հողնած
 զօր թրք. zor շատ
 իբըրցիբը գերմ. überzieher վերարկու
 լումինագ' ուում. luminat լուսավոր
 խաշլու. կնքահայր
 խաշլումար. կնքամայր
 հադիբը թրք. hazər պատրաստ
 ֆնուշա ուում. manusa ձեռնոց
 մուզիգ' գերմ. musik նվագ
 մուզիգ'անթ ուում. musicant նվագածու
 նեք'օդ' ուում. nepot հորեղբորորդի
 նըգ'ըժիդ' ուում. necajit նեղել
 նումայ ուում. numai միայն թե
 շլէք' գերմ. schleppe քղանցք
 շուֆլագ ուում. sufladâ դարան
 ուժէ լեհ. uze արդեն
 ոընդ ուում. rându կարգ
 Ռուժիդ' լեհ. Ruza Վարդուհի
 սդ'օլ լեհ. stol սեղան
 սիդ' ուում. salit շտապել
 սվըրշիդ' ուում. sfarsitu վերջացած
 վամա ուում. vama մաքսատուն
 վերի ուում. ver հորեղբորորդի
 վըգ'սուիդ' ուում. vacsuit մոմած
 քուրջ. գգեստ
 օրընձեդ', ետ. յետս
 օրօգ'լան ուում. rochie շրջագգեստ
 ֆիագ'ը գերմ. fiacker կառք

Սուշավայի բարբառով
ՇՈՒՆ ՈՒ ԻՐԵՆ ՇՈՒՔԸ

Մէկ շուն մը կանցնի կտոր մը միւս բերանը մէկ բօտի մը վրայով մը, ու նստելով ջրի մէջ, կի տեսնու օգկայ շուն մը մըսով բերանը, անժումը կի թապլէ բօտի (ռում. կամուրջ) վրայէ շունը զիրեն կտոր միսը, ու կի վագէ մէկալ շընին ետեվանց ջրի մէջ ու կի մնայ արանց մըսի:

(Հաղորդելէ Կարապետ Կայնա սուշավացի և հրատարակելէ հայագետ Bittner-ը, Հուշարձ., էջ 368, որից արտատպում ենք ուղղագրությունը անփոփոխ պահելով):

Սուշավայի բարբառով
ՓԸԶՈՂ ԱԳՐԱԽԸ

Ուալ աղւէս մը կի տեսնու մէկ ագրաւ մը մէկ կտոր մը բերանը թռչելէնը, աղւեսը անժումը կասէ ագրաւին, ինչ բինա գիտիս փըշելու, թող որ լսիմ գըրաղցըտ ցանը. ագրաւը լըսելով զատ գովասանքը կի բանա զբերանը, օր փըշէ, ու կապլէ զկտոր միսը վար, աղւէսը կի խլէ զմիսը ու կուտէ զինքը:

(Հաղորդելէ Կարապետ Կայնա սուշավացին և հրատարակելէ հայագետ Bittner-ը, Հուշարձ., էջ 368, որից արտատպում ենք ուղղագրությունը անփոփոխ պահելով):

Հումգարիայի Կերլա հայաքաղաքի բարբառով

Զարկիլ է ուժեմ կենացս վերջին սըհաթը—կասէ հոգեարք հայրը էրկու որդուն:— Իմ էտէվանց միայն դուք կի մնաք: Ինչ որ քոյոր կենացս մէջ, հարկիւորութեամբ քաղիլ իմ նա՝ ձեզի կի թողում: Ապրեցէք միամիտ, հանգարտ ու մէկտեղ: Զի բաժնըվիք մէկը մէկալէն, գէրամ բաժնըված կարող չի պիլաք մեծ արուտուր անելու: Ըգձերը մի թողուք. ըգօգկայինը մի կամենաք: Կանուխ ելեցէք, արաջը ժամ գընացէք, պատարադ լըսելու: անոր էտէվանց բացէցէք պօլդ: Թէ որ մէկ օրը տասը կրօշ վաստըկիլ իք նա, միայն ութը խարճեցէք: Երբ շոգոտոլ (տօնավաճառ) երթաք, տարեցէք ձեր հետ ըգբադըրը (տէր ողորմեա) ու ամարը համպունետա (մուշտակ): Ճամբովը օտար մարդիկաց հետ մի բարեկըմվիք. ցանցառ մարդ ըլլա ում գիմաց ըզարտերդ բանաք: Սիրեցէք զԱստված, բըրնեցէք ըզիրեն

պատվիրանքները, եղեցէք ողորմասիրտ: Պահեցէք ըզիմ անունը ու յիշատակը. ու տէրն մէրը, ում գիմաց հիմպիկ կերթամ, պի-
•րհնէ զձեզ:

Ճորով թաղիլ ին ըզմեռածը, մեծ աղբարը մորցըվիլ է վո-
ղորմած հոգի հոյրը խօսքերուն վրայէն ու վարիլ է տանէն ըզ-
պիգտիկը: Չի տուվի իրեն իքմըն ալ, միայն մէկ կող մը: Քիչ
ժամանակի վրա զան ալ հտ ուզիլ է: Չի տուվի նա, գատըս-
տընով արիլ է. Հիմպիկ աղքատ աղբարը կառնու ըզաշխարհը
ափը. ու ճամփա կելէ: Կի երթա շատ ու քիչ: Կի կաննի ու
մէկ ծարի մը տակ կի հանգչի:

Կուգա էրկու ագրաւ ու ան ծարիւնը կի նրստին կի կըցին
զուրուցէլու:

— Ի՞նչ նոր կա ձեր էրկիրը:

— Կի մերնին մարգիթը ծարվուն:

— Եշտ (հեշտ) պիլար ատորը աջողելու [օգնել]. թէ ո՞ր
պապարը մէկ փըս մը փըրէին ու մէկ ձիաւոր մարդ մը զան
բողորէր նա, ջուր պի էլէր:

— Ու ձեր մօտ չիգամ իքմըն ալ նոր լրան:

— Թագաւորը զօր հիւանտ է ու չիտէ մարդ ա զինքը լաւ-
ցընէլու:

— Կա հարնին (ախոռ) սէմին տակը մէկ գորտ մը, թէ ո՞ր
անոր եղովը քըսէին զինքը նա, պի լաւնար:

Աղքատը, վով ծարին տակէն ամէն խօսք աղէկ կի լսէր,
ալ ինտան կերթա: Կի հառնի ան քաղաքը ուրուխ ջրի պաք-
սութիւն ունացիլ. ին: Կանէ մէկ ջիշվըր (ջրհոր) մը, որին մէջ
անխա ջուր քաղվիլ (հավաքվել) է որ դուս ալ վոթիլ է: Ընդու-
նած շատ պաշխըշովը, կերթա մայրաքաղաքը, ուր թագաւորը
բնակիլ է. Կի լաւցընու զինքը: Անխա գանձ կուտան իրեն, որ
ճորով կըլա տուն տանէլու:

Տանը մեծ աղբարը լըսելով թէ ինչ հեծեմած¹ բան բերեց
է, այց կարնու զինքը:

Ուխ իս գընտրվի, զատ շատ մալ ու գանձը.— կասէ:

Անորը ինքն ա ճամբա կելէ, շաղըշելով թէ ինքն ա անպէտ
պի քալէ. Կի կաննի ծարին տակը, բայց քիչ ժամանակի վրա
կուգան գողեր ու կի ըսպանին զինքը:

Ով ըզօզկայինը կարնու նա զիրենն ալ կի կորսընու:

1 Չափազանց, արտաքո կարգի շատ:

Պատժ.—Քաղեյ եւ Գովրիկեանի «Դրանսիլուանիոյ Հայոց Մեարոպոլիսը»
գրքից, էջ 312:

Նույն առակը տված է նաև Sprachwissenschaftliche Ab-
hand. հանդեսի մեջ, 1. էջ 117—8, եվրոպական տառադարձու-
թյամբ: Վերջինը թեև ավելի ստույգ է, բայց դարձյալ բոլորո-
ւորին ճիշտ չէ, ուստի հայերեն օրինակը անփոփոխ պահեցի:

ԻՐԵՔ ԸՆԳՈՒԶԸ

Անդօլվաթութիւն հասիլ է ըզհարգիվըր մարդ'ը. դունը, դե-
ղը ու ամեն բ'անը էրիլէ: Ինչու գարօղ ըլլան էրած յուրթին
վըրա նօր բ'ընագարան շինելու, նա վարցու դան մէջ գըրվիլ
ին: Զօր ախքըզցիլ ին, անօր համար գի հանէ գ'օնջուգէն էրիգ
մարդ'ը ըզմընացած քիչ ըսդ'ադը, գուգազան գընգանը ու գա-
սէ: Առօխջ' մարդ'ուն չի վայլի մուրալու, ագէս ագամըչնա ու-
գելու... ու յես վարք ասդ'ուծօ համ արօխջ' իմ, համ հայ իմ:
Ալէս ճամփա բելիմ, ու ըզ գօլվաթըս բի նայիմ. Թ'նչ էրգու ձե-
քօքըս գ'ադիմ նա, յես զան ձեզիգ բի բ'երիմ. Ու դ'ուս էլիլէ
դանէն, ջամփօվը մէգ մարդ'ումը հեդ գի հանդըրի.—Ո'ւլս գեր-
թաս, բ'արեգամ:—Ըզգօլվաթըս գի հօգ'ամ: Ալէս մըզիգ արա:
հօս է սի ընգըզի ձառը. ար մէգ քարմը: Բ'օյէ նայէ օր օչ ալ
շադ, օչ ալ քիչ, հադ'է իրեք ընգուզ զարնիս: Դ'իւր զանօնք
գ'օնջուգը, ու բի գ'ըգնուս ըզգօլվաթըզ: Իրեք հագ զարգիլէ:
Գ'օնջուգը դիդ'ընէ զանօնք ու գի շարունագէ ըզջամփան: Դի
հանդըրի իրեք դըղի հետ, վօրօնք իքմիմը սեբ գի գըրվըդին:
Ի'նչ զանիք գըզաք: Դ'ըգիլինք ըզ սի քարը ու յեփ էնգի դան-
ջըվինք, օր իրեն հի(?) մէջ բ'ածնինք, ու գարօղ չինք, գէրամ
քարը է բինդ. Ինձի դուվէք ու գ'ուք մէմէգ ընգուզ արէք: Արան
ու դըվան, ջամփօրդ'ը ուժէմ ալ ինգան գուգէր էրթալու քա-
րօվը յերփ միդը ընգավ, գէ ընգանեացը մօգէն բ'արօվ մընա
չաբի, յեդ գի դ'արնա: Իրգունը հասիլ է դուն: ուժէմ հադվիլ
էր ասելու ըզ օրնան բարձութիւնը, յերփ մէգ արբամը գի գան-
նի դանը դ'իմաց: Նես գի մըղնի մէգ բարօն մը.—Դուվէք մէգ
ջիրախմը, գէրամ ավըրվիլ է արարաս.—ջիրախ չունինք, գէրամ
ախքադ ինք: Բ'այց սի քարը բ'ավագան լուսավօրութիւն բի
ցէթէ (=պլ. ցաթէ, ցայտել).—Ի'նչ դամ վըրան.—Դուր անխա-
րը, ինչխա գաժէ.— ընդ'ունը իսունհազար Ֆիօրին էզիք խօ-
ջաեքանի (?).—բ'արօվ էրթաք բարօն: Մեձ հագ քարը--դիա-
մանդ' էղիլէ: Թէ օր անդօլվաթութիւն հասիլ է ըզքեզ, նա մէ-

դուժը գացի վիզըդ քզդ՝ րացիսդ՝ ան (դրացիներ), հագ՛է ր՛անէ, վագէ, դանջըմէ ու—քիօգնէ ասդ՝ վաճ:

(Տպված լատինատառ, SA 1, 185, տառադարձության պատճառով անշուշտ վրիպակներ կան):

ՄԱԼԱԽԸ

Բ՛անդընին գ՛իմացէն գանցնի իրեք խօջա մարդ՛: գի գաննին ու խօսք գի խարնին մէգ ր՛անվօրի մը հեգ.—

Հասդ՝ադ մարդ՛ իս ու գ՛եր Կմէնը չի՞ս ր՛անի քու ձ՛ե-րացըդ վըրա.

— Զիմ ունացի գօլվաթ.

— Ընդ՛ունէ ալէս ըզ չի իրեք հարուր օգդ՛ին (ուզդել օսդ՛ին) վըլս շա[ն] չի բէդք է մեզիդ, մէգ դարէն մը վըրա յեգ բի վիջարբա: Գարնու շնօրհագալու թեամբ՝ ըզ օսդ՛ըսդ՛անը, էրգուս գի փօխէ ու ըզմէգալօնք գ՛ըլխարդին ր՛աշդ՛ըը քընարին (եզերք) մէչ գի դընէ, գի գ՛ընէ հաց ու միս դ՛էբի դուն գեթա: Բ՛այց մըսին ֆօդունը մէգ հարըշդացօղ! Թըրչուն մը գի մօդիգնա, գի խըլէ ըզ գ՛ըլխարդը ու գի թըրի. Դուն գէթա բաշդը-շաճ մարդ՛ը առանց բաշիը—մըշխուլ: Գասէ գընդանը, թէ ինչ-բէս քալիլէ: Բ՛անօլ գի հայի ասօր էդեվանց ալ ըզ իրեն ու ըզ ընդանեացը ամէն ալուր հացը: Մէգ դարէն մը վըրա նույն խօջա մարդ՛իքը ալվըշ ր՛անդըն ին գ՛իմացին.— Շա՛ս իս վասդ՛ը-գի մեր ըսդ՛ըգօվը: Գի բագմէ բարօննուն, թէ... Հօս է օգդա իրեք հարուր օսդ՛ի, մըդիգ արա ըսդ՛ըգինը: մէգ դարէն մը վըրա ալվըշ ասդ՛ին բի քալինք: Շնօրհագալ գուգ՛ա: էրգու օսդ՛օլ գի ք՛ընէ քերագուր, քուրաշն(?) Դուն քէթա, ր՛այց քը-նիգը գունը չէ: գի բահէ ըզ օսդ՛ըսդ՛անը ֆօգդ՛օլ(?) սընդին (=սնդըկին) մէչ ու ինքը յեգ գէթա ր՛անդունը: Դուն գուգ՛ա գընիգմարդ՛ը—բ՛այց չիգէ թէ ր՛ախդ՛ը գունն էդիլէ—ու գի ձախէ ըզ ֆըղը սընգօվըն խդ՛օվօվը մէգ օդար տարոնջումը ըզ օվ հեգը ր՛երիլէ: Իրգունը գուն գուգ՛ա էրիգմարդ՛ը:—Դէ գը-նիգ, հիմըրիգ ունինք բօլ ր՛ան գուվիլ է Ասդ՛վաճ.—Ուլս է՞.— Աս հացին էդեվ, յերփ գ՛ուն չիս էչի գունը գունն քալիլմ ու ֆօգօվ սընդին մէչ էրգու հարուրնըսունը ութը օսդ՛ի բահիլ իմ Գընիգը գի մարի ու midiu (?) մէգ սագ՛էն մը (սահաթէն) գը-վանց (եաեանց) գարօղ է ասէլու, թէ ձախիլ է ըզ ֆօգօվ սըն-դուգը: Ախքադ գանցնին օրերը. Դարուն վերչը էրիգը ր՛անդը-

նին դ՛իմաց ավիլը գի հանդ՛ըրի խօջա լարօն դախը (տաք) հեզ.—Նա դ՛եր չիս խօջացի.—Գասէ լ՛անվօրը, թէ ինչ հանդ՛ըրիլէ... Գի դէսնում, թէ քեզի չօգ՛նի օսգ՛ին արծաթը, ար ալէս ըզ սի մալախը, այս յերանի լ՛անը ըզ քեզ: Գուն գի դանի: Այց գարնու զինքը գ՛ըրացի լ՛արեգամը.—Գուր ինձի ըզ մալախը; ձ՛ուգը բ՛ըրնիչ գանիմ, անօր մօզ բի շահեցնում(?); անօր համար քեզի գուգամ ըզ արչի ձ՛ուգը, ինչ բ՛ըրնիմ նա: Գ՛ըրացին օզգա օր գի բ՛ըրնէ ալ մէգ մեձ ձ՛ուգմը ու խօսդումին գ՛օրա (թրք. göra) լ՛անվօրին գուգա: Գընիզը դ՛անագ գարնու ու գըսբանէ ըզ ձ՛ուգը: Նեքսեվին մէչ մէգ քար մը գի գ՛ըզնու: Էրիզը գի ջանչնա ըզ բազմագան քարը, գի դանի գան օսգ՛երիչին մօգ; քսան հազար ֆիօրին գ՛ընդըվիլ է: Պարը գիսմանդ՛ էշիլէ: Հիմբիզ նօր դուն շինեցուցիլ է, լ՛անդուն գաննեցուցիլ է, շադ գըդըլջներ վարձ՛իլ է: Ադէզ գ՛ընացիլ է փէշան: Բարօնները ալվըշ այց գարնուն զինքը: Դիմացները գէլէ շադ շնօրհագալ մարդ՛ը.—Ասգ՛ուձօ էդեվանց ձ՛եզիզ բարեագան իմ ըզ յերանութիւնըս: Հիմբիզ այն գացության մէչ իմ, օր. ըզ բ՛արգ՛ըս (պարտքս) շահօվը գըլամ յեզ վիջարելու.—Մինք յեզ չինք ընդ՛ունի, լ՛այց դուր ըզգան ժամին ասգ՛ուձ փարացը:

(Մնացյալը գերմաներեն թարգմանությամբ է տրված առանց հայերենի): Տպված է SA 1, 185—6 լատինատառ և ինչպես երևում է, վրիպակներով:

Բիքան Արեւիստան հեա Բիքան Մարտիրոսային գանգըսվելով ու մխիթարվելով մեկը մեկալին հեա.—

Սիրուն քուրուկ զգանգատըս
 Էկո լըսիս ու տեսնուս զհալըս
 Զէ անհընարի է համբիրելու
 Ինչուրի մահ լըսելու:

Զէ անպատմելի ին ցավերըս
 Զէ շատ ին նըկազներո
 Ինչուրի էս տղա էի
 Նա մեծ տոմնայ էի:

Տեսիլ հիմբի զհարսներըս
 Գ՛ըտած(?) բիքայիս տունը
 Զամենին ատելի իմ
 Զերամ հիմբիկ ըրինա չիմ:

Ինչի տե՛ կարտի կանիմ.
Նայ հարսներու չի bigim
Հարսս դ'ուսանց աղէկն է
Կի սեպիս թէ մեծ սուրփ է:

Բայց երբ օր կի բարկանա
Սիրտըս մեջըս կի դ'ողա.
Հապա օրդ'իդ ի՞նչ կասէ,
Երբոր հարսըդ այդպէսն է:

Գիտիս օր ցուկը գ'ըլիուն
Կի հոտան չէ akun.
Օրդիս սուստ է ու ամեղ է
Անգէնը շան պէս մունջ է:

Կի վախնա օր մազերուն
Ձի խրվի իրեն գ'ըլիուն.
Հիմբիկ հարսրս ֆինջայովը!
Կի լարվի իբրիժներովը:

Անպակաս է կաֆեյը
Առանց banə շաքարը.
Ձիմ գիտացի զկաֆեյը
Ձիմ ճանչըցի զշաքարը:

Ըրախով ու գ'ինով
Ծերացա ալ շատ ջ'ըրով
Ինչոր հարսըս կի իւրմէ
Հային տեֆթերը գիտէ:

Ինչ օր հարսըս կի լեջգէ
Օրդուս սե սիրտը գ'իտէ
Կի շատնալ փիալաները
Կի պարպին բուռնէները:

Երբ անուշ բ'ան կուտին
Նա կամաց կի զուրույցին
Կամ զիս ծամ կի խրկիին
Օր չի լըսէ պարտովը:

Պարավը ծեր կախարդ է
Ձերամ մըտացը կասէ
Ընդոր... տըղոցը

Շատ քըշեր անքուն անցուցիլիմ
Ես զարթուն օր օրդ'իս
Աղէկ հանգչի? Իրեն պէս
Հողըն ləntri:

Սիրուն քուրուկ սըստըվէ,
Ու դուն քեզի տոչորվէ
Զէ պի գ'ա ժամանակը
Ու պի տանը զքեզ մահը:

Նա աջար գ'իտիս դ'ուն ičer
Ինչ հալիաներ(?) կուլ կու տամ
Gōnt'ōr? Գալաջ'իք
Կուտէ զիս շատ մաշելիքը:

Պի սիրեյի մեռնելու
Ու այս աշնըրհէ դ'ուս էլելու
Մէկ ամնի մը թաղվելու
Օր անդէ ծառվութեան
Պակութիւնըս չի տանիմ ես:

4.— Բամբասող լիզու
Վենիսոտ մեզու
Աղուով ծակող
Մեղրը ծըծող
Թանկ անընիս պես չի կա:

Զիս կի զուրուցիս
Զմիտքըս կի կըրծիս
Սիրտըս կի ճաթի ու կի մազմըզվի
Անկուշտ ուշպի բ'երնովրդ:

Վասն(?) սրտով կու լամ
Ու մաբած կու օղբամ
Անսկամ խօսքեր
Կըտրեող բրիչեր
Արդար էր այս ինչ է:

Այս ինչ լեղի է, այս ինչ մաղմաղ է
Օսգ'ին քսոն չըլա, այս ընդըր գըլա.
Բայց թե խորթն է թող դատվիմ:

Օսգի անունըս, անգիս դանձ մալըս,
 Hôdaç gəðôv tarcavu u
 Հող չար լեզվով
 Ու անկուման բարկութեան
 Անարգար լիզվով դաղված
 Ապրելով շատ ալ դիժար gəskəlayi է
 Քանց թե gərbôv խորվելով
 Անգութ բամբասով
 Մարդու միաք ուտող
 Թե օր չիս կարնալ զխորթն ուրանալ,
 Երբ պի խորթիս ըզիմ համարալ:
 Մարդակերպ բերան
 Գեշ լափիչ անվան
 Ձիս չիս մեղքընա
 Վով կի բարկանա
 Օր դադրիս զիս կրծելու:

Ալես դիր տեղը
 Ձկտորած անունը
 Ձէ թե օր չի tənea
 Ձէ դժոխքի փայ պըլաս:

Դուն անուն ուտող
 Մարդուն կյանք կրրծող
 Աջար ինչ ինչ կի շաղըչիս, թե
 Yaviur պապրիս
 Նայէ քո դժոխքի փայ իս:

(Տպված է SA 2, 8—9 լատինատառ, անշուշտ վրիպակներով,
 տեղ տեղ անհասկանալի):

SIEBENBURG-ի ԱՌԱՅՆԵՐ

1. Մարդ միայն նա է, վով խօսեցնելու գիտէ:
2. Յեր ծառը կիրբլի, նա կա բավական փառ կոտորող:
3. Թէ որ տեսնուս, թէ վազող ջուրը չի հետևի ըզքեզ, մի աղավորի ըզգան:
4. Ջրին մէջ ըննողը չի վախնա թաղվէն.
5. Ամպուր քացախը դավերէ ըզամանը:

6. Շընեբը իրենց մէջ կիրսածներին, բայց գալին ընդէմ կը ումիշդին:

7. Շատ յեղանակ կը ճանչնամ, բայց չիտիմ դարգալու (սերգել):

8. Զըրին մէջ ձուկը չունի արժէք:

9. Ինչ մեծը կասէ, զան պիզտիկը կիրքսէ:

10. Օսգին պիզտիկ է, բայց արժէքը մեծ է:

11. Վո՞վ բանի, ես ու դուն, վով ուտէ. ես ու դուն:

12. Սորոտուրը չուսգ կիծերանա:

13. Ա՛լ աղէկըն է խելքով թշնամին, քան անխելք բարեկամը:

14. Ա՛լ աղէկըն է մոտիկի վեշինը (ռում. vecin գրացի), քան հեռուի ազգակոներ:

15. Յեր արեգի՞դ՝ ունացիլ իմ, չիմ ունացի վիւալ. հիմպիկ փիւալ ունիմ ու արեգի՞դ՝ չունիմ:

16. Մէկ ձեռաց մէջ չիս կարնա էրկու սեխ* բըռնելու:

17. Ըզմունճը կիհասգընա Ասգ՝ված:

18. Ըզաղքըտին մըշխուլութիւնը միայն աղքատը կիհասգընա:

19. Վով պան ունի, խելք չունի, վով խելք ունի, պան չունի:

20. Ամէն դար ունի դարնիվար ալ:

21. Աշխըրհիս ունայնը կիմընա աշխարհը:

22. Թէ որ հավը գիւրանա, ալա չի ամի նա:

23. Կատուին խօղի է, մըկանը մահու է:

24. Ինչու կարմեր է, ըզէրկաթը ծեծէ:

25. Աշխարհը էսգարա (ռում. scara Leiter) է, վորին վըրա մէկը վեր, մէկալը վար կի քալէ:

26. Թէ որ ամէն ջըրի մէջ թըքնուս, նա ուսգից պի խըմիս:

27. Մէկ խելքը աղէկըն է, էրկուսը գեո ալաղէկըն է:

28. Ալ աղէկ է կորսընելու ըզ աչքը, քան ըզհարկիվորութիւնը:

29. Ինչու վատըմնա գէրը, կիմեոնի վատուժը:

30. Ինչ խարէն ալշատ քար թապլիս շանը էտէվանց, անխարէն ալշատ կիհաչէ:

31. Մեղրիս մօտ կուգա ճանճը հեռուվէն ալ:

32. Կըլաա բարեկ(ա)մութիւն կապելու հետ շանը, բայց ըզտայախը մի գընի ձեռքէտ:

33. Մէկը կիսիւրէ ըզվարգէնիգը, մէկալը ըզ մանուշակը:

* Բոլոր այն տառերը, որոնք նշեղատառով են զըված, կարգալ երկրարբառային ձեով:

34. Մարդ՝ ալ չիտէ, աճար՝ ինչու առվատու ճիւղալը պի
բ'ընէ:

35. Մէկ քաքոտ կսվ մը կի լողնէ ըզբ'ոլոր չուրտան (հունգ.
csorda նախիր):

36. Մըտիկ արա որ ոչ միսը, ոչ շամփուրը էրի:

37. Իսով ցանով զուրուցիս, ամպէս ցան պիլըսիս:

38. Պապը կերիլ է խակ խազոզ ու թոռին ակռըները էղիլ
ին գ'ըլիդ:

39. Տունը չարն է նա, դ'ուսը քահանա:

40. Թէ որ անժուամը թողուս ըզխաղը, երբ՝ ըզ ունենալուս
կէսը կորսուցիլիս—նա վասդ'ակ ունիս:

41. Վար ընչիլ է ցիուն վըրայէն ու էշինը նըսդ'իլ է:

42. Ինչ գ'իտէ էշը, թէ ինչ է չամիշը:

43. Առ առաչ ըզտայալը ու պի գ'իտնա թէ ինչ կուզիս
գ'ող շունը:

44. Մի հանի բզվըտըս յողբոնէն գ'ուս:

45. Ալ աղէկ է խելքովին հեա քար կըտրելու, քան անխել-
քին հեա փիլավ ուտելու:

46. Ան ուժէմ կալաք չէ, ինչին կէսն ալ լըման չէ:

47. Թէ որ Ասդ'վաձ տա, նա անժուամը էրկու ցեռքովը
կուգա:

48. Մի զուրուցի, ինչուրի ըզխօսքը բ'երնիտ մէջ չիս կըրծի:

49. Խօսգ'ով չի հատրըվի փիլավը, արգ'արյեղ ու բ'րինձ ալ
պէտգ' է անոր մօտ:

50. Սորված աղվէսը էրկու օտօքրն ալ կըննի գ'ուրսան:

51. Մըշխուլ է անզավակը, բ'այց հազար է նարա մըշխու-
լութիւնը, վով տըղաք ունի:

52. Խէվը մէկ քար մը ցըքիլէ ջիսֆըըը ու քառսուն խել-
քով չի գ'իտաց զան գ'ուս հանելու:

53. Լալէնը (լալով) կիմէձնա տըղան:

54. Ըզ վոր մատըս ալ կըտրիմ հինկէն, մէկսօյ կիցափի:

55. Թէ որ քուր աղբ'արը այնպէս աղէկ բ'ան է, Ասդ'վաձ
ալ պուննար գ'ունէ մէկ ք'ուրաղբ'ար:

56. Վով հեռու է աչգ'էն. հեռու է սըրտէն (SA 1, 108—9):

57. Կիսորտոտի արչը մորունը, ու մորին ասոր վըրայէն
իքմալ չիտէ:

58. Ըզընկերըս անժուամը կիճանչնաս, թէ օր հետը օխգ'ը
փուս հաց կերիլ իս:

59. Ծովէն խալըսիլ իմ ու մէկ դ'իգ'ալ մը շըրի մէջ կի-
խըխդ'ըվիմ:

60. Աղշիկը ծընողացը համար այնպէս գ'անծ է, ինչ օգկաին է:

61. Թէոր կուզիս գ'ովվելու, սորվէ ըզճերմակը սեվի գ'ար-
ջընելու:

62. Մի խընտա թէ ունիս ու մի վըղը'ա թէ չունիս տըղա:

63. Էրկան է յեզին լիզուն, բ'այց չի կարնա գուրուցելու:

64. Խեղը խեղ է գատկին կիրակին ալ:

65. Զիրախ կի վարէ աղքատ մարդը, որ համարէ ըզխոճին
ունենալը:

66. Մարդ՝ մարդ'ու բ'ան չիդէ, գէս գ'իշէրուն ժամ գիգանչէ:
Տուր բան խելին ու կըրակ կուտա տանդ:

Չամիչ գընա¹ ու կոկան դարձաւ:

Ծուռ նըստինք ու շիտակ գուրուցինք:

Մըխանքը կըլա ծուռ ա ըլալու, նմա² թէ մուխը ելէ շիտակ:

Ծուռ ծառին, ծուռ ճիւղ³:

Շուն զարկ ու պան վաստըկէ:

Քիչ բարձիր ու չուստ դարձիր:

Ինչուրի չի զարնըվի, չի արնըվի:

Քիչը կօգտի, շատը կերթա:

Կուշտը քաղցածին, մանտըր կի բըրդէ:

Ասողին լսող:

Լուքուցին շունը Լիրսքան⁴ գնացիլ է. ու ետընտըր շուա-
դարձիլ է:

Չուզիմ անպէս քալելու, ընտիր Պիադային շունը:

Գարդան⁵ անպէս կի համարէ, թէ իրեն վըրդին է ընք ալ⁶
ըրինա թռչունը:

Ամէն անտովաթութիւն, մէկ մէկ խրատ:

Անբան⁷ մարդը, երբ հաց կուտէ առողջ է, երբ բանի հի-
ւանտ է:

Ինչուր ի չի տեսնուս ըզջուրը, մի հանի գըաբուկը⁸:

Անցած բանի ետէվանց մի մըշխուլվի⁹:

Ալ աղէկն է արդար աչքը, քան մեղաւոր շաղըը:

¹ Գնեցի, վաճառեցի, ² նմա, Տրանսիլվանիայի բարբառով՝ միայն է
նշանակում. ³ ճյուղ. ⁴ Լայպցիգ քաղաքը. ⁵ ագռավ. ⁶ ամենից ավելի
⁷ առանց գործի. ⁸ կոշիկ. ⁹ տրտմիլ:

Թախուձուկին¹ կօգտի մէկ դաւաթմն ջուրը:
Առաջ գործէ, ետեւ պարծենցիր:
Քաղցածը՝ քընուն մէջ հաց, ծարավը՝ ջուր կի տեսնու:
Ինչ էշը կի գատէ նա, ձին կուտէ:
Ինչուր ի կուշտը քաղցածին տա, քաղցածը քաղցուն մեռ-
նելու կըլա:

Ըզում հացը կուտիմ, ըզնարա անունը կի իշիմ:
Լացիր հեռ լացողին, ու խնտացիր հեռ խնտացողին:
Խըրտտ խելին, սապըն սելին:
Կատուն, որը չի հասալ գմիսը, ասաւ. Ասոր ուրբաթ է:
Աս խօսքովը. հաց հաց, փըրը չի կիշտանա:
Էկիլէ, գնացիլէ, բայց տեղը չի մնացի պարապ:
Մի եփի միս ու ձուկը մէկ պակին մէջ:
Ճըրախը ըզծիրախքալը չի լուսաւորի:
Մարդ մարդու կըլա խաղող տալու, բայց պտղաբերութիւն
չի կարնա տալու:

Վով մեղըր կի ծախէ, ըզմատվըները կի լըզէ:
Շունը խասափը գնացիլէ, օր վըտ² բերէ ու հոն թողիլէ ըզվըտը
Վով չուստ, նա կուշտ:
Տասը տարպա չափէ ու մէմը կըտրէ:
Օզկային³ ձեռօքը դիծար է փուշ գուս հանելու:
Օզկային տղէն չի դառնա որդիդ:
Վով պարք⁴ ունի, խելք չունի, վով խելք ունի, պարք չունի:
Այ աղէկն է հոտած քան հատած:
Ծինկան⁵ պաշխը:
Հեռ ազգիդ կեր ու խըմէ, նըմա արուտուր մանի:
Ոչ խելք, ոչ մեղք:
Այ աղէկ աշվընուդ լուսը կորսըվի, քան հարկիքը բոլորվի:
Շունը չարեկին⁶ չի հասի, հօրը հոգուն կի թողու:
Ոչ զօր քաղցը լըզելու, ոչ զօր լեղի թըքնելու:
Թէ որ վեր թըքնում նա, զպեխերս կը լոզնիմ⁷, թէ որ վար
թըքնում նա, զմիւրուքս կի լոզնիմ:

¹ Չորացրած աղած ձուկ. ² ոտք. ³ ուրիշ. ⁴ այսինքն պարտք ⁵ Czigax
հունգ. բառ է. նշանակում է զնչու: ⁶ ոչխարի կամ այծի հեռեկ մասը,
ապուխտը: ⁷ կեղտոտել:

Ինչու՞րի կարմիր է, ըզերկաթը ծեծէ:
Հալատարիմ՝ մարդուն կուտա Աստված:
Կա մարդ, վո՞վ կաժէ հազար, ու կա մարդ, վո՞վ մէկ մըն
ա հաժէ:

Ա. ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐ
Պագըրկընուն վրա պար¹

Ամէն դիպց թէ օր նայիս.
աշխարհս ըսոր մասն թարթիս.
նա եկօ որ հիմպիկ լըսիս,
պագըրկընուն բանը ցաւիս:

Բեւին¹ դաս մը կի խօճանան.
բայց ալ շատը կի աղքատնան.
մագար² ինտաս ինտան³ դառնան
ամէնը չիտին բեփի բան:

Գիմ⁴ տեսդուլ⁵ ալ սըլիդ⁶ կանին.
ու պարէպար կի եծկըվին.
երկըրաց երկիր կի քալին,
որ հարկիրուր իրենք ապրին:

Դաս մը բուսդան⁷, դաս մը Պէչը
ալ շատը շօգօտօլները⁸
պօլդը⁹, օտար քաղքըները,
եւ գեղրանը, գիգիձարները¹⁰:

Երբ որ ճամբան ըուրչէս կանին,
իրենց տանէն կի բաժնըվին.
կէս կէս տարի կի անցընին.
ու տանէն իքմըն ալ չիտին:

Ձաւալիքը¹¹ ինչ կի քաշին,
կեանքերը ափը կի քալին.
ալ շատը չիտին թէ պի ապրին
որ մէ մալ տանը հանդըպին:

¹ Ստույգ, ճիշտ է. ² թեպետ. ³ այստեղ, այնտեղ ⁴ ստույգ է, թեպետ.
⁵ բավական. ⁶ ջանք, սըլիդ անել=ջանալ. ⁷ արոտատան, արոտական.
⁸ տոնավաճառ. ⁹ խանութ, կրպակ՝ երեք բառն էլ հունգարերենն է. ¹⁰ փե-
րեզակ, մանրավաճառ. ¹¹ խեղճ, զավալը բառի հոգնակին է:

Էրկըրոց երկիր քալելով,
քաղաքէ քաղաք ըտուրելով,
եւ գեղրանը մամ ի գալով¹,
կանցնի կեանքը մաշելիքով:

Ըրինտ բան է արուտուրը.
տարը նըգազով² է բանը.
շատ լեղութենով է խարը³
աղէկ գիտէ պազըրկանը:

Թաթվի, շախի, քամու, փըզի,
ընտոր գիտ⁴ պէտք է որ կաննի
ցրտի, տաքի ամէն բանի.
ու հազար սոյ նէվօլայի⁵:

Փամանակ չունին հանգչելու
կըտըր մը անուշ ուտելու,
մէկ սըհաթ մը քուն ըլալու
կամ թէ քիչ մը խէնթըվելու⁶:—

Ինչվան ասոնք խալճընե⁷րն,
թէ որ ալ մեծերը չիլային.
բայց պազըրկընե⁸րը գիտին.
ալէս⁸ նաքա որ շատ պարտին:

Լեղութիւննուն ու տաբէրուն⁹
վայ նըմա իրենց սըրտերուն.
կի լըսվի իրենց գանգըտնուն,
ընտոր կի վախնան պարտքերուն:

Խըմին, ուտին ու քուն ըլան.
կի շաղըշին ամէնը զան,
թէ երբ պիգան ու պուզին պան.
զուտը¹⁰ անովը կի լեզան:

1 Ման գալ, շուրջ գալ. 2 բայց տանջանքով, նեղությամբ. 3 խառն.
4 վաղաքերեն Շպատ, որմն. 5 հունդ. հիվանդություն տանջանք, նեղու-
թյուն. 6 ուրախանալ, վայելել. 7 կարկանդակ, պղակինդ (այսինքն մին-
չև հիմա ասվածները ոչինչ են). 8 միայն, արդ. 9 հոգ, մտաւորանքություն.
10 միշտ, միայն:

Ծարավ, քաղցած, շատ կի քալին.
պաղած դրջված կի պարկին.
մագար անժուժը հանգչէին.
բայց հարցու մէ պազըրկընին:

Կարկատը զկարկատը¹ կուտէ,
ու չիտէ թէ ինչ շաղըշէ.
շահով կարնա որ վիճարէ
ու զերեսը իստակ անէ:—

Հապա մըսքին² գիգիճարներ,
ինչ կի քաշիք դուք չօրուներ³.
փոշօմանիք⁴ դուք ատպէսներ,
որ չիք դարձի փէշաքարներ⁵:

Ձըմպրան չաթլամա⁶ ցըրտերը,
կի պաղեցնուն ըզսրտերը,
դանիգուլային⁷ տաքերը,
կի հալեցնուն ըզսրտերը:

Ղուրտա մուրտայ⁸ չարթիկներովը⁹
կի քալին իրենք գեղրանը,
որ ապրելիք բերին տունը
ու ապրըվին տղոցմովը:

Ճուեապ¹⁰ ունին իրենք տալու,
ըզչարթիկը վիճարելու.
նա կի կըցին խընդրըվէլու
եւ նըգագնուն մայ¹¹ թէ լալու:

Մըսքինները ինչ կի քաշին.
ու ինչերու կի համբիրին.
նմա¹² նաքա աղէկ գիտին.
որոնք ուժեմ¹³ բըծիդին¹⁴:

¹ Կապերտ՝ կապերտի վրա. ² ողորմելի, խեղճ ³ տառապյալ, խղճա-
լի. ⁴ փուշման լինել=ցավիլ. ⁵ արհեստավոր. ⁶ սաստիկ այրիչ. ⁷ շնիկ առ-
տըղ, սաստիկ. ⁸ մանր մունր. ⁹ կաշեղեն փոքր ապրանք. ¹⁰ հաշիվ. ¹¹ քրե-
թե. ¹² միայն, առանձինն. ¹³ արդեն. ¹⁴ փորձն առած և այլն:

Յապա գիմ գէձ այ աղէկ էր¹,
տաք տանը² մէջ ալ հանգիստ էր.
փէշային քով որ ապրըվէր.
ու համ ըզտըղաքը բըրնէր:

Նմա դաս մը կի շաղըշին,
թէ գիգիձայները կապրին,
եւ իրենք զօր³ հուզուը կանին.
բայց հարցու մէ գիգիձարին:

Շախոտ, պաւրած, առանց սանտրած,
շարաթը մէ մը լըվածված.
եւ աշխատանքնուն սովըրված.
ու հաշվէ թէ կէսը մերած:

Որ գին⁴ ալ որ իրենք դարնան,
նա նըգազի⁵ բաստը⁶ կուտան.
մագար⁷ տունը, մագար շաղրան⁸
ու ալ իժով իրենց ճամբան:—

Չարթը⁹ օր զաւուր կի հատնի
ժախսի պանը կի խարճըվի.
գէրմինին տտենն ալ կի հասնի.
ու չիտէ թէ ուսգից վիճարվի:

Պարապ կու գան արդմըխներով¹⁰,
տուն կերթան թեթեւ քսակով.
կէլէ գիմացը տղոցմով,
կընիկը դուս ու չէլէտով¹¹:

«Ձէյ այ ասու¹²» կ'ասէ բախտին¹³,
Ապրուստ, հագուստ հիմպիկ պէտք ին.
Ձէրամ կնտիքը հէջ չիտին,
թէ բախտերը ինչ կի քաշին:

¹ Այն ստույգ է, որ ազելի լավ է. ² սենյակ, խուց. ³ շատ հանգիստ են.
⁴ որ կողմն որ. ⁵ վտանգ, նեղութիւն, ⁶ բասդը տալ = հանգիստ, տեսնել.
⁷ թեպետ. ⁸ հունգ. է, տոկտրի վրան. ⁹ փոքր մաշկեղեն ապրանք. ¹⁰ քսակ,
պայուսակ. ¹¹ ծառա, աղախին. ¹² ամբողջ ասացվածք վալաքերեն է, նշ.
է՝ ինչ բերեք. ¹³ ամուսին, փեսա:

Ռաստը կուտա արտմըխին մէջ.
Քանի պան մը քրսակին մէջ.
Նա կի մըտու խարճերու մէջ.
որ կընկը չազարըվի¹ հէջ:

Սեւ սիրտը իրենը գիտէ.
թէ ինչ նըգազով քաղիլէ.
զան քիչ պանը² տուն բերիլ է.
ուժեմ³ ան ալ խարճըվիլէ:

Վաղը ալվը պիտոր երթա.
մագար⁴ ասօր եկիլէ նա.
սիրտը չի քաշի որ տուն իգա.
զերամ տունն ալ հանգիստ չիդա:

Տաբտերը մէկտեղ կի քաղվին
ու մէմէկի կի գանկըտվին.
քիչ քիչ գինի ալ կի խըմին.
որ ըզտարտերը խափխըփին⁵:

Բօզուլիով ու ըրախով.
գինով լավուչըստըններով⁶.
ըզտարտերը խափխըփելով,
այսպէս կանցնի ճորով ճորով⁷:

Յանցար ին աղէկ ծախսերը⁸.
ամէնը կըլան խարճերը.
կի մընան կօլ⁹ սընկընները¹⁰.
փուռտա, պարապ տէֆդէրները:

Իււշին¹¹ ալ դաս մը կի գպչին.
ու անկից ալ կի զըրկըվին.
անխըտարը գըդնիդ¹² կանին
որ հարկիւոր իրենք ապրին:

¹ Նեղանալ, սրգողել. ² փող. ³ արդեն. ⁴ թեպետ. ⁵ խաբէ, ⁶ երա-
ջշտուլթյուն. ⁷ հագիվ հաղ. ⁸ առեւտուր, բան ծախելը. ⁹ պարապ. ¹⁰ սնտուկ.
¹¹ յս, լատ. է, իրավունք, արդարություն. ¹² ճգնիլ, ջանալ:

Փախիլին ժամանակները
ալ վաղուցու ատենները.
քիչ ապրելիքով խարճերը.
ընտոր կանէին ծերերը:

Քալեցէք ու մըլըլվեցէք¹,
ըզգըլխըներդ գուք ծեծեցէք.
շատ արուտուրի մէջ մըտէք.
ընտոր ինչվաս, անպէս արէք:

Եւ ծանտորը չուծվի դասմօնց.
նա թող չի հաւատան ասօնց.
երթան խարնըվին հետ անոնց,
որոնք կի հաւատան ասօնց:

Օրգօր² մարդը ինչի խըլվի,
նա հարկիւոր ինքը ապրի:

Նույնը քիչ տարբերությամբ տպւած է SA 1,306—7:

Բ. ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԲՕՒԻՁԻԱՆՈՒՅ՝ ՎՐԱ ՊԱՐ

Վուվոր կուզէ սորվելու,
բօլիձիա գիտնալու,
նայի զայս թղթին մէջ.
թարթէ զայն երգին մէջ,
ալ շատերը պէրէվի⁴:

Աշխըրհիս հունարները⁵,
սատանին փէշաները⁶.
կի թըրին ծածկարար.
դուսանց խոնարխարար.
բայց վերջը մեծ գէնով է:

Կասէ քեզիկ բարեկամ.
երփուր քեզիկ է չար կամ.
գիմացդ պաղաչէ,
ետեւըդ կանիծէ.
ու դուն չիտիս իքմընա:

¹ Մտեք, ընկդմեցեք. ² Թեպետե, թող. ³ քաղաքավարություն, քաղա-
շաքագիտություն, ⁴ պիտի երեի. ⁵ հնարք, խարդախություն, ⁶ արհեստ:

Խէբուկանց նա գօրլիմէնդ¹.

կասէ գօրշօմատինէր².

բայց ըզքեզ սըրտին մէջ.

չընդունի մըտքին մէջ.

ընտօր խազը, ըզխազը:

Կալաճիքը³ ընտօր մեղքը.

կի վոթին⁴ բերնէն քաղցրը

բայց սիրտը վէնինով⁵

լի է խալպուկենով

դուն իստով⁶ կի հաւատաս:

Քեզիկ կուծի թէ աղէկ է.

ինչ ալ կանէ բարի է.

բայց պէտք է զբերանդ,

խափիս զաչվըներըդ,

որ չիւա թէ դայթազվիս:

Գարալուշով⁷ քալելու.

զըլուխը բաց ցըցվելու.

հիմպիկ նոր օրէնք է.

ու նացա մօտի⁸ է.

խընդրիմ չասիս մարդուեալ:

Ըզչէփէչը⁹ ցըդիլ է.

բախտին գլոխը դրիլ է.

ինքը գարալուշով,

ձմեռը մեծ գրտկով,

կի քալէ բուհաչի¹⁰ պէս:

Կիրակիքը ժամ կեթան,

ձեռքը ձեռքի բըրնման.

փըչված գուրգանու¹¹ պէս.

ձերմակ խազերու պէս.

իրենք աշվին ներկըվին:

¹ Գլուխը ծոկ, խոնարհեցնել. ² gehorsamster diener (ամենախոնարհ ծառայ)-ի աղավաղված ձևն է. ³ խոսք, բերան. ⁴ Թափել. ⁵ լեզի, դառնու-
թյուն. ⁶ բոլոր, ամբողջ. ⁷ գլխարկ. ⁸ = mode. նորաձևություն. ⁹ կա-
նանց հին գլխանոց, գլխադիր. ¹⁰ մեծ բու ¹¹ հնդկահավ:

Հագուստը ապրըշմէ.
կամ ալ շատը կըտաւէ.
բայց երեսը տապնէ.
միտքը բարուրայէ¹.
էրէցքը վոթի վըրան²:

Ժամը խիսդ չերմերանդ է.
շատ արտըսունք կի վոթէ.
ժամէն դուս չաղօթէ
ըզչարը³ կի պաշտէ.
ամէնը ինքը սուրբ է:

Հայը միտն սէպի է⁴.
մինչեւ քսակը լի է.
բայց եփ որ աղքատ իս.
մարդույալ չի պէտք իս.
չի գա ինչ տամղայելու:

Հաւատը խիստ պակաս է.
եկեղեցին թուլցիլ է,
օտից տակ քահանան.
սէպի չէ հափեղան⁵.
հա թէ ըրինտ գօգանան⁶.

Ըզդատերը ավըրիլին.
ըզփատը թանկցուցիլին.
օսգօրէ տուն կանին⁷.
կի խենդըցնուն զմարմին.
կի ծանրեցնուն ըզհոգին:

Կուզիս ալ եւ լըսելու.
բօլիձիտ գիտնալու.
էկօ գըմըլունկը,
երներուն ընդ ճօթը⁸.
ալ շատերը պի տեսնուս:

¹ Ծղեզն. ² ամօթ իրենց, խայտառակութիւն. ³ սատանա. ⁴ այն ժամանակ միայն հայը մի բան կարժե, ունի ազգեցութիւն. ⁵ արեղա, կըրոնափոր. ⁶ խոթուն, տիկին. ⁷ բանաստեղծը կանանց լանջապանակն է հասկանում, որ առաջնակարգ կետի առաձգական ատամներից են շինում: Ուստի հեզնելով ասում է, թե ոսկրե տուն են շինում ⁸ լեռների ամենավերջի ծայրը, որտեղ Գիմբուլունկ քաղաքն է:

Գ. ՊԱՐ ԿԵՐՂԱ ՔԱՂՔԻՆԸ

Հայոց քաղաք դուն մեծ Կերլա,
արանձ ինծի¹⁾ հիմպի²⁾ մընա.
դէ ես մօտէդ հէրու կերթամ,
հայոց ազգէ³⁾ կու հերենամ:

Ասոր համար բարով կեցիր.
ինձիմով ալ ալ քիչ եղիր
կերթամ մօտէդ օտար երկիր.
մագար¹ թէ դուն զիս հօս արիր:

Պէլքիմ պասիս ինչի⁴⁾ կերթամ,
մօտէդ հէրու կօտարանամ.
օգլա քաղաք մուտ ես կանիմ.
կէնալու տուն ինծի⁵⁾ կի նայիմ:

Ան ալ պասիս, աղէկ գիտիմ.
թէ ես մէջըտ ընծայիլ իմ²⁾.
տուն ու տեղով զիս արիլ իս.
ամէն բանը շարադրիլիս⁶⁾:

Ունի՞ս ալ ալ ինչ ասելու.
Կերլա քաղաք ինձ հայտնէլու,
ասա ինչիս կուզիս ինծի.
չէ ես պասիմ բարով կեցիր:

Թէ օր ան ալ դուն ինձ ասիս.
հայոց ժամէր թէ դուն ունիս.
դատաւըրաք, աղէկ հայեր.
խօճա պանով պազըրկըններ:

Ձուրի ինծի զասոնք կասիս.
պարապ կալաճըսդ՝ան³⁾ կանիս.
դէ ես զքումէ կի բաժնըվիմ.
էկօ նըմա որ համբուրիմ:—

1 Թեպետե, 2 ծնել, 3 խոսքեր:

Բայց ալ արաչ քանց օր երթամ
Կերլա, մօտէդ ես հերենամ.
լըսէ դուն զպատճըրներս,
սըրտիս շատ ցեղ կըսկըծներս:

Օտար երկիր ընտոր չէրթամ,
հէրու մօտէդ չի օտարայնամ.
երփ կի տեսնամ որ հէջ չիգան,
մարդ ալ մէջտ շատ չի կէնան:

Ամէնքը կերթան, կի հերենան.
ալ ասգերուն կի մօտիկնան.
մայրական տընմէրունմէ,
կի հրաժարին քաղքըցոցմէ:

Մեր ծերենուն թանկ եուրթերը,
պըտըտիլին¹ հէմէցները.
խօճա պապանց մեր տըները.
բօլորիլին մաճըրները:

Որ դին հայիս Կերլային մէջ.
օչ քիչ մաղէկ չիս տեսնու հէջ
ամէն բանը մօլորվիլէ.
ամէն կերպիւր դարձիլ է:

Ինչվան Կերլան թանկ աննընով.
կի ճարայգէր պայծաք լուսով.
անուշ Ֆըտով վարդէնիքներ.
ամէն գիհաց դեղեցիք էր:

Բայց հիմպիք այտէլի է
թանկ աննունը կօրուսիլէ.
օչ եուր ասգէ, օչ օտարէ
կի պաշտէ զինքը մաճարը:

Քանի տարօվ ալ ալ առաջ.
չի գար մէջը հուգ ու կանչ.
անուշ եխրայր սիրութիւնը.
կար մէջը օգնութիւնը:

¹ Կանգնած են, ապրում են:

Հիմալիկ եխրայր, օղկա եղրայր.
մէջըտ գարադի¹ հայր եւ մայր.
հաթէ ըլինքնին հարգիրներ.
չար սըրտերով մարգըրներ:

Կերլան աս ալ ինչվաս ունէր,
եռւր թըշնայմուն աղէկ կանէր.
բախուլթիւններ² ինքը չիտէր,
ամէն մարդու միայմիտ էր:

Տարըմ³ հիմալի սըլիդ⁴ կանէ,
օր թըշնայմուն խուծած աննէ.
գրօնֆը գրօնֆին⁵ օր վիճարէր,
եւ թըշնայմուն հախէն էլեր:

Կերլային մէջ կոյսութիւնը,
վեր կի կաննէր սըրբութիւնը.
աստուծոյ ահը եւ արժան սէրը,
ունէր մէջը եւ եղրարը:

Բայց հիմալի զսըրբութիւնը,
վար ճըգիլէ չարութիւնը.
աստուծոյ ահը եւ ամօթը,
կորուսիլէ կերպարանքը:

Կերլային մէջ աղէկ սըրտով.
քիչ կու գըտվին բարի հոգով.
օր մըշխուլվի հետ մըշխունուն⁶,
ուրախանա հետ ուրախուն:

Ինչ ալ առաչ բերիմ.
պատճըրներս քեզիկ ասիմ.
երփ կի տեսնում օր զուրի է.
այսօնց շահը իժով⁷ քիչ է:

Կերլա քաղաք ողորմելի,
մարդիքմօցվով վաղվուրելի.
թող զիս մօտէդ որ հերենամ.
օտար երկիր օր եւ հոգնամ:

¹ Սիբեի. ² նախանձ, ³ բայց, սակայն, ⁴ հետեից ընկնել, փնտալ.
⁵ նմանն զնմանը կոտրել, զարնել: ⁶ տրտմում է տրտմողների հետ. ⁷ շատ,
սաստիկ:

Գրունը երեսնուն գընացիլ է.
սըրտիս ցաւը ավելցիլ է.
երփ կի տեսնում ըզժամերը.
ոգորմելի տէրտէրները:

Բլէպանիան հայերունը.
եկեղեցին շիմայնունը.
երկու ժամն ալ ողորմելի.
մընացիլին ողորմելի:

Քահանայիցը մեծ պաշտօնը,
վայղուցու մեծ պարգեւը,
կի օտօրվին օրվըները.
կերլացոցը աղբըները:

«Հայոց քաղաք դուն մեծ կերլա» երգը տպւած է նաև Բանասէր, 1905 թ., էջ 255: Կան տարբերություններ մեր տպագրած բնագրից և մենք նշանակում ենք դրանք 1—6 թվահամարներով (բնագրի մեջ նշանակել ենք թվանշաններով՝ փակագծերի հետ):

1) ինծիկ, 2) հիմպիկ, 3) աշիշ, 4) ինչու, 5) հոն, 6) ամէն ցեղէ զարգարիլ իս:

Բանասէրի օրինակը ունի միայն 7 տուն, հրատարակիչն է Քաջատուր Աստուածատուրեանը, որ վերցրել է հունգարերեն «Arménia» ամսագրից:

(SA 2, 9—10 իւրի ծանոթություն գրւած է, թե այս երգի վերջում կա մի հավելւած, որ լատինատառ տառադարձությամբ հրատարակւած է նույն հանդեսում: Այդ հավելւածը դժնում ենք այստեղ լատինատառից վերածելով հայերենի):

Դարբմ տէր այս օչոփայէ(?) ըրադի (արաբ. rāzī «գոհ, շնորհակալ») էղիր օր խալլսիս

Յամաք դորան (թթր. toban «հարգ, դարման») զոր պի կանչիս

Բահանոցը մեծ պատիւը ընդ՝րէկ էրկիրը փըրմանը:

Դարբմ հիմբի զմեր աղբըները
Կի համբրին օղբաները

Երբ տէրտէրները կի քարոզին
 Կերլացիքը կի ծիծաղին
 Երբ իրեն կի ազաչին
 Դասմոք (Ռոմանք) կի քըրֆըդին
 Կերլացոցը խուժած կանին
 Ձժողովուրդը խուժած կանէ
 Ձէ ալ վաղուցու հայերունը
 Վար ընկիլ է բնութիւնը
 Ասոնց սեպը կասիս միամ
 Կերլա քաղաք, մեջդ միամ
 Օչ ժամեր, օչ տէրտէրներըդ
 Օչ աստված, ասէր հայեր
 Կերթամ մօտէդ, չէ կի վախնամ
 Հոդ ու մոխիր ես չի դառնամ
 Ձէ կերլացոցը բայցը ամբտութիւնը
 Կորուսիլ է զմեծութիւնը
 Ես ձեզիկ հիմբի զան կասիմ
 Եւ ձեզի գօռ կու խընդրըվին
 Օր փոխիք զձեր խուժած վարքը
 Գընդըվիք զերկնա[իւն] փառքը:

ՄԱՅՐԸ, ՈՐԴԻՆ ԵՒ ՈՒՇԱՅԸ¹

Որբովարի մնացիլ է կընիկը. վով որ ըզամէն յոյսը մէկ-
 հատիկ որդուն մէջ ձգիլ է: Ու չի խարվի. զէրամ մեծնալով ըզ-
 տարտը ունացիլէ մօյրը: Մարը իքմալ պաքսութիւն չի տեսի:
 Օրդին, երբ ազատ ժամանակ ունացիլէ նա, գնացիլէ մորին²
 վըրսալու³:

Մէկ անգամս մորին մէկ ըրինք շէն մը կի տեսնու. նես կի
 մըտնու. ուրուխ ուշաբնու հետ կի հանդիպի: Ձի արհըվի իրենց-
 մէ. հաթէ⁴ գուս կի քաշէ ըզթուրը ու կասէ. «Թուր կըտըէ». թու-
 րը կի բըրդըրտէ⁵ ըզուշաբները: Բայց ետքինը կը խընդրըվի, որ
 իրեն մարմնուն վրա գոնէ մէկ գլուխ մը թողու: Ջըրսացողը կի
 կատարէ ըզխընդիրը ու ողջ թողելով մէկ գլուխ մը, կի գոցէ ըզ-
 ուշաբը նեսի տունի մը մէջ.

Քիչ ժամանակի վրա այս շէնքին մեջ, որը ուշաբնունը
 էդիլէ, կի կըրվի հետ մօրը: Օրդին ասկից ալ կեթար վըրսալու.

¹ Վիշապ, հսկա. ² անտառ, անտառակ. ³ որսալ ⁴ մանավանդ թե, ընդ-
 հակառակն. ⁵ բզիկ բզիկ անել:

բայց մօրը ասիլ էր, որ չըլա թէ մըտնու նետի տունը, զէրամ վընաս կըլա հասնելու: Մարը ճորով բոյիլ¹ է ոչ հերենա որդին. մէկումը նայիլէ թէ ինչ կա տունին մէջ: Ճանչվըրվիլէ հետ ուշաբին ու անպէս հաստատվիլին թէ խով մը ըսբանին ըզօրդին:

— Մարը կի դըվիլ թէ հիւանդ է:— Օ'րդի, կասէ. զօր հիւանդ իմ: Բայց ինծիկ անպէս կուծվի, թէ թէ օր խոզիկի² միս ուտիմ նա, պի լաւնայի: Գընա ալէս, ուի գարերը կի զարնըվին, հոն կա մէկ խոզ մը, խըլէ³ անկից մէկ խոզիկ մը, ու բեր զան տուն:— Շաղըշիլէ⁴ մարը, թէ պի կորի անկից ալ ալ ետ չի պի դառնա:

Տըզան կի թամպէ⁵ ըզծին, վըրան կի դընէ ըզարթմըխնէրը ու ճամբա կելէ: Արիգակը իրեն բարեկամը եղիլ է: Անոր համար աըզան կի կաննի արեգըկուն դիմաց:

Ուի կեթաս, կի հարցընու արիգակը: Հետեւէ ըզիմ խըրատը: Երբ տասվերկուս ըլա սըհաթը, անժամը մուտ գարերուն միջօրէ. խոզը չի պըլա բունին մէջ, ու դուն հեշտ պի կարնաս մէկ խոզիկ մը խըլելու:

Տզան բարեւ կուտա ու ալ ինտան կեթա: Տասվերկուսին կի մըտնու դարերուն միջօրէ: Կի խըլէ մէկ խոզիկ մը, ու ետ կի դարնա: Ալվըշ կի կաննի արիգըկուն տանը դիմաց:

Մըտիկ արա, կասէ, արիգակը, զէրամ մամառ⁶ ըզգըլօխդ կուզէ ուտելու:

Տըզան տուն կի հասնի: Կի խորվին ըզխոզիկը ու կուտէ մարը մէջէն:

Օ'րդի, ալ ազէկ իմ:— Քիչ ժամանակի վըա ալվըշ⁷ հիւանդ է:

Օ'րդի, կասէ մարը, գընա ճաթէ⁸: Անպէս կուգա ինծի, թէ թէ որ խմէի այն ջիշվորէն, որուն մէջ ողչերուն ու մերածնուն ջուրը կա նա, պի լաւնայի:

Տզան ալվըշ թամպիլէ զծին, արիլէ ըզարթմըխներն⁹ ալ ու ճամբա ելիլէ: Կաննիլէ արիգըկուն դիմաց:

Ալվըշ խրկիլէ զքեզ ուրեք մը մամադ. կի հարցընու արիգակը:

Ասիլէ տզան թէ ուի կերթա:

— Մըտիկ արա, զէրամ միան տասվերկուսին կըլա ըզամը-

¹ Հազիվ սպասում էր. ² խոճկոր. ³ խոզի ձագ. ⁴ բոնե. ⁵ մտածել, ⁶ խորհել. ⁷ թամբ զնել. ⁸ մայր. ⁹ դարձյալ. ⁸ դեղ հոգա ⁹ քսակ, պայուսակ:

ներք լընելու: Ետեւ¹ երբ ետ դարնաս, նա կաննէ տանըս գիմաց:

Տըզան գընացիլէ, լըցիլէ ըզամըները եւ ետ դարձիլ է:

Արիգակը ուտելովով բօյիլէ² զինքը: Ինչուն ի կերիլէ նա, արիգակը պարպեցուցիլէ ըզամըները եւ անոնց մէջ հասարակջուր գրիլ է: «Քիչ ժամանակի վրա աղէկ պի բըրնէ այս ջուրը», ասաւ ինքը իրեն, ու նես մտիլ է: Տղան ըշնական³ եղիլ է հացին, ու ալ ինտան⁴ գնացիլէ:— Տունը հասնելով կուտա մօրը ջրէն մէկ գաւթով մը: Կի խմէ ու կի դարնա հիւընտութիւնը:

Տղան վար կի գնէ ըզթուրը ու կերթա վըրսալու: Մայրը դուս կապլէ զուշարը խուցէն: Եւ որովհետեւ ուխ ալ խըրկիլին ըզտըզան նա չի կորի. անոր համար, որ ազատվէր իրենմէն, այնպէս կի հաստատովին, թէ թէ որ տուն ի գա որդին, նա սրտնին ըզնա տուն թողած թըրովը:

Տղան տուն կուգա: Թուրը ուշարին ձեռն է: Հիմպիկ տեսնելով թէ վերջ է իրեն, նա կի խնդրըվի որ ըզըըրտըրտած մարմինը գնին արթմըխնուն մէջ, ու ապլին⁵ ըզձին, որ արթմըխնեւովը երթա, որ դին տանին աշվըները: Անպէս արիլին: Բայց ըզսիրտը պահիլին:—Ձին արիգըկուն տանը գիմաց կաննիլէ:

— Ասիլիմ, թէ մամատ կուտէ ըզգլոխտ:

Դուս բերելով ըզմերածնուն եւ ողջերուն ջուրը, կիքըսէ անովը զտըղին բըրդըրտած մարմինը ու անա ողջացուցիլէ զնա:

— Ինչ շատ քուն եղիլիմ կ'ասէ տղան:

— Ես ողջացուցիլիմ ըսքեց:

Հիմպիկ ամէն բանը աղէկ եղած պիլար, նմա թէ չի ունացի սիրտ:

Առ թուխի⁶ կերպարանք, կասէ արիգակը. ու գնա սի լաուշովը⁷ տուն: Հոն ատէս⁸ ալ հարսնիք է: Պի գնին որ փըշխ: Քիչ մը պի փըշխ, անոր էտէվանց պասիս թէ, տան իք մը, ինչով քսիս ըզաղիքը: Պի տան գըու սիրտդ ու դուն զան կուլ պիտաս:

Տըզան հետեւիլէ ըզխըրտաւ: Տունը չին ճանչեցի զինքը: Փըշիլէ: Անոր հետեւանց ձեռը տըւիլին ըզսիրտը: Ինքը ետ դարձիլէ ագէս թէ⁹ խորթ էր¹⁰ զլաուշին ու կուլ տըվիլէ ըզսիրտը: Հիմպիկ շատ ըրինա փըշիլէ: Հարսը ու փեսան կի խաղար:

¹ Նրանից հետո. ² սպասել, իմաստն է արեղակը, կերակուր պատրաստած, նրան է սպասում. ³ շնորհակալ լինել. ⁴ այնտեղ, ավելի առաջ. ⁵ թողնել, արձակել. ⁶ Գնչու. ⁷ քնար, ջութակ. ⁸ այնպես էլ. ⁹ իբրեւ թե. ¹⁰ շակել, լավացնել:

«Դիր վար ըզգի թուրը, մանի ատխա հուգ»¹ կասէ հարսը:
Փեսան կի հնազանդի. թուխը քիչ քիչէնը² կի մօտիկնա
թըրին, կի խըլէ զան, ու առաջը ըզմարը ու անոր էտավանց
ըզուշաբը կի բըրդըրտէ:

Անոր ետեւանց արիգըկուն մօտ գնացիլէ կենալու:

(Արտագրված Գովրիկեանի «Դրանսիլուանիոյ հայոց մեռ-
